ՄԻՀՕՍ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼՈՍ

ՎԱՅԵՐԸ

ΜΗΤΣΟΣ
ΑΛΕΞΑΝΔΡΟΠΟΥΛΟΣ

ΟΙ ΑΡΜΕΝΗΔΕΣ

Ταξίδι στη χώρα-τους
και στην ιστορία-τους

Μετάφραση
ΣΙΜΩΝ ΚΙΡΚΙΑΣΑΡΙΑΝ

ΕΚΔΟΣΙΣ «ΣΟΒΕΤΑΚΑΝ ΓΚΡΟΧ»
ΕΡΕΒΑΝ 1984

9(47.925)
Ա-29

ՄԻՀՈՍ
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼՈՍ

ՀԱՅԵՐԸ

Ուղևորություն նրանց երկրում
և պատմության մեջ

2031

Հունարենից թարգմանեց
ՍԻՄՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

ՀԱՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

ԳՄԴ 84 (4Հու)
Ա—296

Ալեքսանդրոպուլոս, Մ.
Ա—296 Հայերը: Ուղևորություն նրանց երկրում և պատմության մեջ / Հունարենից թարգմ. Ս. Գրքաշարյան.—Եր.: Սովետ. գրող., 1984, 240 էջ:

Հույն առաջադեմ գրող, գրականագետ Միքոս Ալեքսանդրոպուլոսը հայտնի է պատմվածքների ժողովածուներով, վեպերով և ռուս դասականներին նվիրված ուսումնասիրություններով:

1981 թ. ամռանը նա այցելել է Հայաստան, ոգևորվել մեր հանրապետության առօրյայով և իր տպավորություններն ամփոփել 1982 թ. Հունաստանում լույս տեսած «Հայերը» գրքում, ուր անդրադառնում է հայերի պատմական անցյալին, ներկայի դիտակետից իմաստավորում հայ ժողովրդի մշակութային արժեքները:

Հեղինակի տողերը տոգորված են ջերմ սիրով աշխատասեր ու ստեղծագործ հայ ժողովրդի հանդեպ:

4703000000 (108)
Ա 84 «Տ»
705 (01) 84

ԳՄԴ 84 (4Հու)
Ի (Հուն)

© ΕΚΔΟΣΙΣ „ΚΕΔΡΟΣ" ΑΘΗΝΑ, 1982
© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1984

Ճակատագիրը հայերին դրել է դժվար մի տարածքի վրա: Հենց մինչև մեր օրերը շատերը փորձեցին խժռել նրանց, և շատ անգամ խժռեցին, բայց բազմաթիվ շնորհներով օժտված այս արթուն ցեղը կարողացավ վերապրել: Բազում վտանգների դիմադրելիս, իրենց կրած տառապանքներով, իրենց ժողովրդին բնորոշ բնածին ազնվությամբ, իրենց աշխույժ հոգեկանով և բազմաթիվ գործնական ունակություններով ստեղծեցին գեղեցիկ մի քաղաքակրթություն և այդ ամենով, իրենց տառապանքով ու գործերով, պահպանեցին իրենց գույնը մյուս ժողովուրդների մեջ և ամեն անգամ շահեցին մեր համակրանքը: Այս երկրի որ մասին էլ դիպչելու լինես, այնտեղից հուզիչ պատմություններ կցայտեն:

Իմ գրով կաշխատեմ մի որոշ գաղափար տալ այդ ամենի մասին, օգտվելով այս տարի ամռանը Հայկական Սովետական Հանրապետություն իմ կատարած մի կարճ ճանապարհորդության ընձեռած առիթից: Այն ամենը, ինչ իմացա այդ երկրում, վերածեցի մի գրքի, որպես ինձ համար հոգեկան հանույք և անհրաժեշտություն: Հուսով եմ, որ այն ամենը, ինչ ասվում է այստեղ, ինչ-որ չափով կրնդարձակի մեր իմացության սահմանները՝ մի ժամանակ մեզ շատ մոտիկ, բայց այժմ հեռավոր, Հայաստանի մասին, ինչպես նաև մեր սիրո սահմանը այդ երկրի հանդեպ:

«Չի բէպէտ և եմ ածու փոխր, և բուով յոյժ ընդ փոխու սանմանեալ, և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ բազաւորութեամբ, սակայն բազում գործ արուբեան գտանին գործեալ և ի մեռում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի, զորոց և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

5-րդ դարի պատմիչ

«Արդեօք տեսի՞ց զբիւրակործան վնասեցեալս աճօր՝ կազմեցեալ»:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

10-րդ դարի բանաստեղծ

«Ու թէ հաշուես ի Պուղտանայ մինչև Ստամպօլ, պուրուն Ուռումէլիճ մինչև մեծն Վանատիկ, ևս չկայ բաղամ, գեղ կամ չիֆլիկ, որ ևայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս գիշոր. փառք Աստուծոյ»:

ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑԻ

17-րդ դարի պատմիչ

Ու մնաց երկիրն Աւարատեան ամայի և անմարդաբնակ: Վասնորոյ գազանք բազմացան յաշխարհիս, և կաղաղ առնալ ի գիտս և ի տունս բնակէին, և որջս արարեալ ծնանէին ձագս: Ու էին գազանքն՝ իձն, արջ, բորենի, գայլ, աղուէս, կուզ, ոզնի, և այլ այսպիսիք՝ մեծամեծք և մանուանք, և ոչ գոյր մարդ՝ որ ևալածէր զնոսա. և նոքա ևամարձակ և աներկիւղ կային և շրջէին: Իսկ գայլք առավել ևամարձակեցան քան զայլ գազանսն»:

ՂԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ

17-րդ դարի պատմիչ

ՆԱԽԱՊԵՏԸ

Այսօրվա Հայաստանը շատ փոքր մի երկիր է։ Մեր փոքր Հունաստանի մեկ քաղաքը կամ մեկ հինգերորդը, կարող ենք ասել՝ մի Պելոպոննեսոս (ավելի ճիշտ՝ մի Ալբանիա)։ Առաջին տպավորությունն այն է, որ ընկել ես փոքրիկ, միագույն և պարզ մի երկիր։ Եվ սա մինչև այն պահը, երբ նրանց պարզ նախադասություններն մեջ կսկսես կռահել նրանց առեղծվածները, որոնք շատ-շատ են։ Դրանք բազմաթիվ են, հինավուրց և առանձնապես շահեկան մեզ՝ հելլեններիս համար։ Հաճախ իրենց հնդինակներն իսկ իրենք իրենց հարց են տալիս, թե ո՞րն է իրենց հայրենիքի ճշմարիտ դեմքը։ Ինքը Նահապետը ևս Հայաստանի մասին գրած իր գեղեցիկ գիրքն ավարտում է՝ խոսելով այն չանքերի մասին, որ թափել է, հասկանալու համար իր երկիրը, պրպտելով Հայոց Մեծաց կենսագրությունները, շրջելով աշխարհով մեկ, Սինգապուրից մինչև Ամերիկա, այս ու այն տեղ սփռված հին գերեզմանատները, փնտրելով տներում, փողոցներում, այսօրվա հայկական պետության բարձր սարերում, նեղլիկ հովիտներում։ Փնտրեց ամենուր, բայց ոչինչ չգտավ. իր անցած բազում ճանապարհներում իր ունեցածն էլ կորցրեց։ Նոյի ժամանակներից այս առեղծվածների վրա ծաղկել է մի զարմանալի քերթություն, որը և շարունակվում է մինչև մեր օրերը։ Ինչպես նաև հիասքանչ մի պատմագրություն։ Մենք ևս այս ամենը պետք է դիտենք ավելի լավ։ Դրան ևս կավելացնեմ նաև հայ հայրենասերի նախանձախնդրությունը՝ գարերի հոլովույթի մեջ նրա հոգեկանի անքակտելի մասը, իր ազգային մշակույթի հանդեպ,

հատկապես իր լեզվի և գրի հանդեպ, իր հոգևոր հայրենիքի հանդեպ, որը շատ հաճախ եղել էր միակ հայրենիքը։ Ժամանելով այսօրվա Հայաստան, կանգնում ես ու նայում, ինչպես լեռան գագաթից, որտեղ նոր ես բարձրացել, ու տեսնում ես, որ դա դեռ գագաթը չէ. գագաթները շատ են և դրանք դեռ առջևում են։

— Դուք, հույներդ, ի՞նչ գիտեք մեր մասին,— ասաց Նահապետը մեր ծանոթության առաջին երեկոյան։— Վախենամ՝ քչից էլ քիչ բան։ Այդպես ասելու պատճառներ ունեմ։ Այս իմ երկիրը ես մի քիչ էլ գիտեմ իբրև հեղինե։ Այո, վախենամ դուք մնացել եք ձեր այն ժամանակվա իմացածով Դուրզուտիի և Քոքինիայի[1] հայերի մասին. դրան ավելացրու նաև, եթե հիշում ես, դերասան Սպարիդիսի Կարապետին, ինչպես նաև էժանագին պարբերականներում ձեր կարդացածները. պարբերականներ, որոնք անպակաս էին նաև մեր տներից Դուրզուտիում, Քոքինիայում, էրիթրեայում... Բայց ափսոս։ Հիմա ումից հարցնում եմ; շատ քչերն են հիշում Դուրզուտին և նման բաներ։ Եվ Քոքինիան էլ, ուր ծնվել եմ, այն չէ, ինչ եղել էր։ Հարցնում եմ նաև Սքիատոյի մասին, ուր խաղում էինք երեխա ժամանակ։ Սպիտակ տների մասին։ Այդ ամենը չքացել են։ Բայց հայերը մնացել են հույնի մտապատկերի մեջ... Այդ ժամանակ մեզ ուրիշ անունով էլ էիք կոչում, բայց այդ բառը չեմ ասի, ի սեր մեր կերած հացի։ Բացի այդ, դուք ձերոնց ևս, որոնք մեզ հետ նույն նավերով էին եկել, Թուրքածին չէի՞ք ասում։

Այս ամենը Երևանի սրտում։ Ամառային շոգ գիշեր, ժամը տասներկուսից մեկը, «Արմենիա» հյուրանոցի երկար ու նեղ պատշգամբ սրահում։ Մեր փոքրիկ սեղանի վրա, ուղիղ մեջտեղում, մետաղալարե փոքրիկ ձողի վրա ալիքվում է հունական փոքրիկ դրոշակը։ Չէր կարող չալիքվել։ Նահապետը ամբողջ գիշերվա համար իրար եռանից պատվերներ էր տվել նվագախմբին և երկու երգիչներին։ Սրանցից մեկը Կիպրոսից հայրենադարձված հայի որդի էր։ Մեր դ՚օթելը, Սալոնիկում ծնված, ժիր, համակրելի հիսունամյա մի տղամարդ, լավ զուգված իր սպիտակ օձիքով և թիթեռնաձև փողկապով, պատվիրեց բերել մի շիշ կոնյակ, ամենալավերից, հռչակավոր «Անի» մակնիշի։ Անին Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից է եղել, դեռևս արաբական խալիֆայության դեմ մղված պատերազմների ժամանակներից։ «Այս կոնյակն էլ մոտավորապես նույն տարիքի է», ասաց մեր դ՚օթելը, բայց և ավելացրեց. «Չերչիլն էլ էր դա շատ սիրում»։ Հենց որ այդ անունը տվեց, մեր փոքրիկ դրոշակը շնշահեղձ ցած ընկավ. կարծես թե երեկոն փչանալու էր։ Նա, ով կոնյակ բերեց, մի կարիճ մարդ Դուրզուտիից, գերմանական զավթիչների դեմ կռիվներում վիրավորված, իսկույն ասաց. «Նա շանսատակ պետք է լիներ»։ —«Արդեն մահացել է»,— ասաց նրան մեր դ՚օթելը։ «Ասում եմ շանսատակ լինի։ Մեկ մահը նրան բավական չէ»։ Այսօր Երևանում կարող ես առատորեն հույն խոսքը լսել։ Կարող է մի ամբողջ դահլիճ բռնկվի։ Բավական է միայն մի լուցկի վառես։

— Այս ամենը իբրև գանգատ չէ, որ ասում եմ,— շարունակեց Նահապետը։— Մենք գանգատվելու պատճառներ չունենք։ Հիանում եմ Հունաստանով, սիրում եմ և երախտապարտ եմ նրան։ Իմ ծննդավայրն է։ Բացի այդ, ամեն ոք այնտեղ վերածնվում է, եթե, իհարկե, բախտ է ունեցել աշխարհի պատմության մասին մի երկու բան սովորելու։ Ինձ, համենայն դեպս, մայրս ծնել է Հելլադայում։ Ես դրանով պարծենում եմ։ Իմ բոլոր գրքերում ես զանց չեմ առնում այդ մասին գրելը։ Հունաստանում ծնված լինելս ինձ օգնել և դեռ օգնում է ավելի լավ տեսնելու իմ երկիրը, նրա վերքերը և նրա պարծանքը, առաջիններն՝ այդքան շատ, երկրորդը՝ այնքան մեծ, ինչքան և ձերը...

Նահապետ հայերեն նշանակում է՝ ամենաառաջինը։ Նա երեցն է, ծերունիների ավագը և ցեղի տոհմապետը, ամենահմասուն գլուխը։ Երբ հայերենում լսում ես «պետ» վերջավորությունը, նշանակում է, որ մոտովդ անցնում է մի ականավոր անձնավորություն. վարժապետը ուսուցիչն է, վարպետը՝ առաջին հմուտը, վարդապետը՝ հոգևոր դաստիարակության առաջին մարդը, մտավորական հոգևորականը։ Սուրբ Մեսրոպը, որը ստեղծել է հայոց այբուբենը, ինչպես նաև վանքերի և հնագույն համալսարանների բոլոր մեծ իմաստունները եղել են վարդապետներ։ Այնուհետև, սպարապետը եղել է առաջինը զորավարներից, հայոց զորքի մեծ կատարյալը։ Եվ հազարապետն էլ հայոց արքունիքում եղել է առաջին բարձրաստիճան պաշտոնյան, արքունիքի լոգոթետը[1]։ Բայց մեր իմացած Կարապետն էլ նա է, ով գնում է առջևից և առաջնորդում է քարավանը։ Այս ամենն

[1] Դաղթակայաններ Աթենքում (ծ. բ.)։

[1] Բարձրաստիճան պաշտոնյա բյուզանդական արքունիքում (ծ. բ.)։

սկսեցինք կռահել առաջին իսկ երեկոյից, տեսնելով, թե ինչպիսի ուշադրությամբ հունարեն իմացող հայերը մոտենում էին լսելու սեղանի շուրջ Նահապետի ասածները։

— Մեր կրած տառապանքներն անպատմելի են։ Մեր պատմությունը պատկերացրու որպես մի ճամփորդություն անվերջանալի սիմպլիգադների միջով։ Հայաստանը միշտ գտնվել է մեջտեղում։ Այս և այն կողմից մեզնից շատ ավելի մեծ պատաններ։ Մերթ նրանք համաձայնում էին իրար միջև և մեր երկիրը բաժանում երկու մասի, մերթ այն ամբողջապես հափշտակում էր նրանցից առավել ուժեղը և դարձնում իրենը, մինչև որ այն վերստին խլեր մյուսը։ Մարդիկ և բնությունն այդպես են վերաբերվել մեզ հետ։ Տես, թե ինչպիսին է մեր երկրի աշխարհագրական դիրքը. հեռում՝ Կովկասը, իսկ մյուս կողմից՝ Արարատը։ Հենց որ այս երկու հսկաները փորձեն փոշոտել, քարը քարին չի մնա. այդպիսի հաջորդական աղետներ ենք մենք տեսել։

Եվ իսկապես. Անդրկովկասը, այն լեռնալանջը, որտեղ գըտնըվում է հայերի այսօրվա պետությունը, այլ բան չէ, քան արագ մի նավարկում. մի կտոր լավա, դուրս գալով Մեծ Կովկասի փոթորկված լեռնաշղթայից, թափվել ու հոսել է դեպի Իրան և Փոքր Ասիա։ Բայց շուտով, հանդիպելով հակառակ ուղղության լեռնային փոթորիկներից իջնող լավաններին, կիկլոպյան այդ իրադարձությունների ընթացքում սեղմվել ու մարմարացել է, մինչ այդ գագաթների, լանջերի և լեռնաշղթաների բարդ համակարգով երկիրը բաժանելով լեռնային նախարարություններին։ Ամբողջ Անդրկովկասն այժմ բաժանել են երեք փոքր պետություններ՝ Վրաստանը, Ադրբեջանը, Հայաստանը։ Վերջինս ամենափոքրն է, ամենալեռնայինը և ամենատառապյալը իր բնությամբ ու պատմությամբ։ Քսանից ավելի լեռնաշղթաներ մասնատում են այն՝ ուղղահայաց, հորիզոնական և շեղակի, և հարյուրից ավելի լեռնագագաթներ թույլ չեն տալիս, որ այդ մեծ փոթորիկը խաղաղվի։ Այդ ժամանակներից ասորեստանցիները ծնեցին բաբելոնացիներին, իսկ այս երկուսը միասին՝ մարերին ու պարսիկներին։ Այնուհետև՝ հաջորդաբար Մեծն Ալեքսանդրը, Սելևկյանները, Հռոմայեցիները, բյուզանդացիները, պոնտացիները, արաբները, մոնղոլները, թուրքերը... Ուստի և մարդ հեշտ է մոլորվում հայոց պատմության, ինչպես և այս լեռների միջև։ Նույնիսկ Նոյը, ինչպես պատմում են, մեծ դժվարությամբ կարողացել է գտնել Արարատը. մինչև այնտեղ հասնելը նա փորձել է խորխոր նետել այլ գագաթների վրա, բայց նույն իրենք՝ լեռները, տեսնելով նրա մոտենալը, ձայնում էին նրան, կոչելով. «Սխալվում ես, ոչ մեզ մոտ։ Դնա ավելի բարձր, դեպի մեր մեծ եղբայր Մասիսը. միայն նա չի խեղդվելու»։ Իրոք, լեռ բարեբախտություն է հանդիպել մի մարդու, որը առաջնորդի քեզ քո ուղևորության ընթացքում բանիմացորեն։ Նահապետն ունի այդ բանիմացությունը, նա տոգորված է մեծ սիրով և օժտված է իրերը պատկերավոր ու բյուրեղացած ներկայացնելու հրաշալի կարողությամբ։ Օժտված է լավ գրքի արժանիքներով։

Մեկ ուրիշ անգամ եղանք սարերում և գիշերեցինք մի հին իջևանատանը, մի պանսիոնում։ Երեկո էր, անձրևում էր, անձրևը փոխվում էր կարկուտի։ Այնտեղ առաջին անգամ տեսանք, թե ինչ տարօրինակ խաղեր են խաղում մեծ բարձրությունները գույների և լույսի հետ։

Մարդ բարձրություններին այստեղ ընտելանում է, ինչպես Բրջվածը՝ անձրևին։ Հայկական հողի վրա գտնվածդ պահից դու արդեն լեռան վրա ես։ Այստեղից այնտեղ տեղափոխվելը նշանակում է՝ ավելի բարձր կամ ավելի ցած գնալ, ելևէջել ինչպես քո տան աստիճանների վրա։ Հարյուր, երեք հարյուր մետրը՝ ոնց որ լվի ցատկ։ Հազար մետր բարձրության վրա ալիքվող մայրաքաղաքից մեկ ժամ զբոսանքի դուրս գալով, հասնում ես Սևանա լիճ։ Այստեղ արդեն հեծել ես երկու հազար մետրի վրա։

Այդ երեկո, ահա, Նահապետի հետ այդպիսի բարձրության վրա գտնվեցինք։

Լեռնային անձրև, իրար հաջորդող հորդառատ ալիքներ։ Տան կտուրին քավող ամպերը ոռնում էին ինքնաթիռի նման ու, թեև իրիկուն էր, և ամպրոպն էլ այնքան ուժեղ, ոչ մի րոպե չհանգավ ինչ-որ զարմանալի մի լույս, որը ողողել էր շրջակայքը, ասես արշալույսն էր բացվելու, այնքան, որ դեռևս երևում էին, գրեթե ցերեկվա նման, հորիզոնի կապտականաչ երիզի վրա հանդիպակաց լեռնալանջերի հստակ գծագրվող կաղնիները, իսկ ավելի աջ՝ կլոր, խաղաղ և ձվի նման լերկ մի բլրի գագաթի ուրվագիծը։ Մենք տեղ էինք հասել կեսօրին, և այդ պահից ի վեր չէի կշտանում դուրս գալով և այդ բլուրը դիտելով։ Փորձում էի

տարբերել նրա գույները։ Դրանք շատ շատ էին։ Եվ երբ արևը թեքվում էր, ամեն մի գույն, թվում էր, տարբրալուծվում էր երկու գույնի։

Նստել ենք տան պատշգամբում։ Նահապետն ինձ պատմում էր իրենց լեզվի մասին։ Հայոց լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, բայց և շատ խաչաձևումներ է ունեցել տեղական ցեղերի, հին Արևելքի՝ Ասորեստանի, քաղդեացիների, հրեաների, հետագայում՝ արաբների և թուրքերի հետ։ Ու ստեղծվել է լեզվական անասելի մի հրավառություն։ Հաճախ ձայնավորները խեղդվում են բաղաձայնների խճողման մեջ։ Այսուհանդերձ նրանց խոսքը հնչում է գեղեցիկ։

Նահապետն ուրիշ լեզուներ ևս գիտե։ Հունարենը չի մշակել։ Տիրապետում է թուրքերենին, շատ լավ գիտե ռուսերեն, անգլերեն, կարծեմ թարգմանում է նաև ֆրանսերենից։ Հայը,— ասում է նա ինձ,— այդ լեզուներին նախանձելու ոչ մի պատճառ չունի. մեր լեզուն արտահայտիչ է, ճկուն և բարեհունչ։ Մեծ թվով (մոտ երեսուն) բաղաձայնները չեն վնասում նրա բարեհնչունությանը, քանի որ դրանք ևս ինչ-որ պարզություն ունեն, չեն խռպոտում, չեն սղում կոկորդում և լեզվի վրա, առաջ են գալիս ու թրթռում ատամների մեջ և շուրթերի վրա։ Թող որ այնքան էլ շատ չեն, ինչքան թվում է։ Մեր այբուբենը ճշգրտությամբ արձանագրել է բոլոր հնչյունները, առանձին տառանիշ է սահմանել նրանց ամեն մի հնչերանգին, ուստի և, սովորաբար, հայերենի բաղաձայնը ունի եռակի արտասանություն՝ «հոյակ կյանք»։ «Եվ վերջապես, մենք ունենք մեզ անհրաժեշտ այն բոլորը, որպեսզի ապրենք և չկորչենք, ինչպես կորել են շատ-շատերը։ Հեռու չգնանք, ահա այս լեռները։ Ինչքան ցեղեր անցան այստեղից, սպանեցին և դուրս քշեցին մյուսներին, որոնք ավելի վաղ եղել էին այստեղ։ Արմատավորվեցին, իշխեցին, հետո եկավ մի օր, երբ նրանք ջնջվեցին քարտեզից։ Բայց մենք ապրում ենք։ Հակառակ մեր կրած տանջանքներին, մենք ներկա ենք, հարատևում ենք։ Խոսում ենք այն նույն լեզվով, որով խոսում էին մեր հայրերը, և դիտակցում ենք, որ այդ լեզվի շնորհիվ կարողացանք պահպանվել. նա մեզ տալիս էր այն, ինչ մեզանից խլում էին, կենդանի էր պահում հիշատակը։ Մեզ նորից հավաքում էր, երբ ուրիշները ցրում էին մեզ։ Այս է եղել մեր ճակատագիրը։ Դուք՝ հույներդ, նույնպես մեծ պատմություն ունեք և հիանալի լեզու։ Բայց դուք, թեև շատ տառապանքներ եք կրել, սա-

կայն ձեր երկիրը չեք կորցրել. ձեր գաղտնիքները թաքցրել եք ձեր հոգում։ Մինչդեռ մենք, բացի մեր լեզվից, ուրիշ ոչինչ չունեինք։ Մենք նրան էինք վերադառնում և ամեն անգամ հենվում շունչ քաշելու և կաղդուրվելու համար, նա էր մեր ուժը։ Պետք է կարդաս մեր բանաստեղծներին.

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ։

Բայց ինչպե՞ս կարդաս։ Մեր լեզուն գնահատելու համար պետք է կարդաս մեր բանաստեղծներին. բայց մեր բանաստեղծներին պետք է կարդաս մեր լեզվով։ Թարգմանությունները բացարձակապես ոչինչ չեն ասում. ամեն ինչ կորչում է թարգմանությունների մեջ։ Բայց փորձիր լսել մեր երգերը։ Առանց դրանց չես հասկանա մեր երկիրը։ Մեր պատմությունը մեր երգերի մեջ է, վերքերով լի մի պատմություն։ Այդ պատճառով էլ մեր լեզուն չի զանազանում երգը և վերքը, գրեթե չի տարբերում դրանք։ Վերքեր ու երգեր։

Մի հույս է կորչում, մի երգ է ծնվում։

Փառք աստծու, մեծ է նրա անունը, մեծ՝ մեզ շնորհված մեր լեզվի նման։ Աստծուն չեմ հավատում։ Բայց ինչ վերաբերում է մեր լեզվին, ուզում եմ, որ գոյություն ունեցած լինի մի աստված, որին շնորհակալություն հայտնեմ։

Ա Ր Ա Ր Ա Տ

Նահապետի հետ ինձ ծանոթացրեց ինձ Հայաստան հրավիրած ընկերը։ Առաջին իսկ երեկոյան նրան բերեց և ծանոթացրեց։ «Հույների և Հունաստանի հետ մարդ միշտ ծանոթանում է երկրորդ անգամ», ասաց Նահապետը։ Նա նկատի ուներ այն, որ Հունաստանին ծանոթ են դեռևս այնտեղ ճանապարհորդություն չկատարած։ Ինձ դա շատ դուր եկավ։ Պարզեցինք, որ դեռևս քսան տարի առաջ մենք Նահապետի հետ ծանոթացել էինք Մոսկվայում։ Բայց ծանոթությունները փթթելու իրենց ժամանակն ունեն։

Նահապետը այս օրերին է վերջացրել իր նոր գիրքը։ Ձեռագրերը հանձնել է հրատարակչություն և այժմ լիովին ազատ է ինձ ընկերանալու համար։ Հարցրեց, թե ի՞նչ եմ ուզում տեսնել։

Ասացի՝ բոլորից առաջ Արարատը։

Արարատը մշտապես առկա է հայոց լեզվում, հայի հիշողության, հայ քերթության մեջ, հայ կյանքում։ Բայց և այսօրվա հայկական պետության սահմանների մեջ չէ. գտնվում է գերության մեջ։

Իր ոտքերին մնացել է նրա ամենօրյա վերքը։

Որպեսզի մենք ևս հասկանանք, թե ի՞նչ է նշանակում հայի համար Արարատի ամենօրյա վերքը, վերցննենք մի օրինակ. պատկերացնենք, որ մեր սահմանները գծում ենք Ակրոպոլիսի փեշերին, նրա շուրջը, այնպես, որ ամբողջ Աթենքը դառնա մի ամֆիթատրոն, շրջված դեպի Պարթենոնը, բայց տաճարը, արձանները և մնացած բոլորը, ինչպես ասում էր Մակրիյաննիսը, լինի թուրքերի ձեռքում, դրանից այն կողմ ամեն ինչը թուրքական լինի, իսկ մենք լիննենք ամֆիթատրոնում և դիտենք այդ տեսարանը... Մոտավորապես վիճակն այստեղ այդպիսին է։ Հայը, բացելով իր դուռը, դիմացը տեսնում է Արարատը։ Տեսնում է և իսկույն մի նզովք է շպրտում դեպի այնտեղ, որտեղ պետք է շպրտել. նզովք նրանց, ովքեր գերության մեջ են պահում այն. նրանց, ովքեր նպաստեցին դրան. նրանց, ովքեր անտարբեր և անհոգ գտնվեցին. մի խոսքով՝ շատ-շատերին։ Պատմությունը երկար է։ Այսպես է նա սկսում իր օրը՝ նզովելով պատասխանատուներին և ողջունելով լեռը։ Այս գայթակղությունը մեծ է։ Որովհետև տեսարանը ևս եզակի է։ Ընդհանրապես, բոլորս մեր լեռների մասին ասում ենք՝ «ամենագեղեցիկը աշխարհում»։ Ամեն մեկն իր լեռան մասին։ Սակայն այստեղ այցելող օտարազգին ևս պարտավորվում է խոստովանել, որ Արարատը իրոք աշխարհի ամենագեղեցիկ լեռն է։ Դա ինչ-որ անմոռանալի բան է։ Այստեղ մարդ սոսկ մի սարալանջ կամ բարձր լեռնագագաթ չէ, որ տեսնում է։ Նա տեսնում է լեռն ամբողջությամբ, ստորոտից մինչև բարձրաբերձ գագաթը, հինգ հազար երկու հարյուր մետր։ Ամեն առավոտ հայն այս ամենը տեսնում է շարքում. իր Պարթենոնը, էրեքթեյոնը, պարիսպները, արձանները, եզակի մի համաչնապատակը, բոլոր գերիները շարված։ Փոքր Մասիսը՝ մի կատարյալ կոն ձախ ծայրում, մոտավորապես չորս հազար մետր բարձրությամբ, որի վրա այժմ, ամռանը, ձյունը իր բարակ և երկար երիզներով հյուսքեր է կապել ամենագեղեցիկ լեռնային գլխի շուրջը, որպիսին երբևէ կարող է մարդ երևակայել. եզակի և անմոռանալի։ Ճիշտ կողքին՝ Աղաւ Մասիսի հսկա զանգվածը, մեծ բազաթը։ Այն հա-

վերժապես ամպերի մեջ է, ձյունասպիտակ ամպերի։ Պետք է շատ բախտավոր լինես, պատահես պայծառ օրվա, որպեսզի տեսնես, թե մինչև ո՞ւր է հասնում և ինչպե՞ս է գծագրվում կապույտ երկնքում հսկայական լեռնադաշտի նմանվող նրա զանգվածեղ գմբեթը։ Դա բոլորովին էլ հեշտ բան չէ։ Երբ Նիկոլայ Ցարը այս հողերը գրավել էր պարսիկներից և կցել իր կայսրությանը, ժամերով կանգնել է լեռան դիմաց, բայց մինչև վերջ էլ չի կարողացել տեսնել Արարատի գագաթը։ «Դե՛ հանիր, վերջապես, քո գդակը և խոնարհվիր քո տիրոջ առաջ», գոռացել է Ցարը։ Բայց մեկնել է Ձեռնունայն։ Իսկ նույն այդ ժամանակ բանաստեղծ Պուշկինին Արարատը հայտնվել է անմիջապես։ Պետերբուրգից հեռացած Պուշկինը անցել է այս վայրերով և գնացել է Էրզրում, հետևելով հաղթական ռուսական զորքերին։ 1829-ի ամռանը, Ադրիանուպոլսի դաշնագրից երկու-երեք ամիս առաջ։ Այն դաշնագրի, որը խոշոր կնիքներով վավերացրեց նաև մեր ազատությունը։ Այս ճանապարհորդության ընթացքում Պուշկինը ներշնչվել ու գրել է իր վերջին ողջույնը վերածնվող Հելլադային։ Իր ուղեգրության մեջ նա իր թուրքիկ տպավորություններն է գրել առասպելական լեռան մասին.

> «Կազակներն ինձ արթնացրին լուսաբացին... Դուրս եկա վրանից առավոտյան մառուր օդի։ Աչքս էր ծագում։ Ջինջ երկնքում սպիտակին էր տալիս ձյունապատ, երկգլխանի մի լեռ։ «Սա ի՞նչ լեռ է»,— հարցրի ես, ձգելով մարմինս։ «Արարատն է»,— լսեցի պատասխանը։ Ինչ ուժեղ է երևակայության ներգործությունը։ Անհագորեն նայում էի բիբլիական լեռան. տեսա տապանը, որն իջել էր նրա գագաթին, վերանորոգման և կյանքի հույսով, դրա միջից բոչող ագռավն ու աղավնին, որպես դատաստանի և հաշտության խորհրդանիշ»։

Պուշկինը շտապում էր։ Այս մի քանի տողը նշեց իր օդոցատուրում և թռավ ձիու վրա, շտապեց հասնելու իր զորքերին, որոնք արդեն թուրքերից գրավել էին Կարսը, իսկ քիչ անց պետք է գրավեին նաև Էրզրումը, բյուզանդական Թեոդոսիուպոլիսը։ «Վերցրին այդ քաղաքները, բայց չպահեցին»,— ափսոսանքով գլուխն է օրորում Նահապետը։

Արարատը տեսնելու համար բարձրացանք հյուրանոցի տանիքը։ Մեծ Մասիսը շուրջն էր հավաքել մի ամբողջ գիրկ ամպեր և խորասուզվել էր իր լռության մեջ։ Փոքր Մասիսը լավ էր երևում։ Ջյունե ժապավենները մեկ առ մեկ պսպղում էին նրա կապուտակ կոնի վրա, կարծես դրանք փորագրել էր ճապոնացի վարպետ փորագրիչը։ Այս հիշողությունը պատահական չէ։ Հայկական սարը անմիջապես հիշեցնում է Ֆուձիյամայի գեղանկարչական գագաթը, այնպես, ինչպես այն մեզ հաղորդել է ճապոնական գեղանկարչությունն իր մեզմ գույներով և օդային գծերով։ Դեպի աջ, ամպերով ծածկված մեծ սարից շատ ավելի ցած, ինչ-որ կապտավուն կլոր գլուխներ փոքրանում են մեկը մյուսի հետևից։ Սրանք ևս շարված են դեմքները դեպի երևան։ Այստեղ է, որ ասում են՝ «Հայկական պարը», մենք կասեինք՝ ցամիկո կամ կալամատիանո[1]։ Եվ այսպես, լեռներն իրար ձեռք բռնած կորչում են հեռվում, այն ուղղությամբ, որտեղ մի ժամանակ բարախում էր Մեծ Հայքի սիրտը՝ Վանա լիճը, հինավուրց Տոսպը։

Այս գեղեցիկ լիճը և Արարատ սարը խորհրդանշում են հայերի կորած հայրենին։ Վանա լիճը տեսնողները հիացմունքով են նկարագրում։ «Երկնքում դրախտն է, իսկ երկրի վրա՝ Վանա լիճը»։ Իմիջիայլոց, դրախտն էլ տեղադրում են այս լճի շրջակայքում։

Հայաստանում լիանում ես լեռներից ու լեգենդներից։

Մինչ կանգնած էինք հյուրանոցի կատուրին, Նահապետը շրջվեց փոքր-ինչ դեպի արևելք և ցույց տվեց երկու ուրիշ սարեր, մեկը մյուսի դիմաց։ Մեկը Շամիրամն է (մենք ասում ենք Սեմիրամիդա), մյուսը՝ Աբա Դեղեցիկը, հայերի նախահայրերից մեկը։ Ասորեստանի այս թագուհին (մ.թ.ա. 8-րդ դարի պատմական անձնավորություն, որին ըրույցը պարտուել է աքադական դիցուհի Իշտարին վերաբերող առավել հին պատկերացումներով) արշավեց իր երկրից և կանացի համառությամբ հետապնդեց Արային, նրան ձեռք գցելու և բռնի կերպով իրենը դարձնելու համար։ Նա շատ էր լսել Արայի գեղեցկության մասին. այնքան, որ կորցրել էր իր հանգիստը։ Արան մերժեց Շամիրամին և ազատվելու

[1] Ցամիկո և կալամատիանո—հունական շուրջպարեր (Ծ. Բ.)։

համար քաշվեց լեռները։ Այնտեղ մոտերքում, ուր այժմ այդ երկու սարերն են, Շամիրամը հասնում է Արայի հետևից և, նրա բերանից լսելով վերջին «ոչ»-ը, սպանում նրան։ Ըրույցի առավել հին մի տարբերակը պատմում է, որ Շամիրամը, լաց լինելով Արայի դիակի վրա, կարողանում է հարություն տալ նրան (որևէմն, այս կերպարը խորհրդանշում է հավերժական գարունը), բայց հետագայում ըրույցի քրիստոնեական վերարտադրությունը ջնջել է պատումի ուրախ վերջավորությունը, ինչպես ջնջել է շատ ուրիշ բաներ, որոնց մասին մինչև այսօր ափսոսում են հայերը՝ իրենց պատմությունն ուսումնասիրելիս։ «Քրիստոնեությունը շատ չարիք հասցրեց մեզ», ասաց նույն օրն իսկ Նահապետը. բայց այդ միտքը մենք այդ պահին թողեցինք, որպեսզի ավելի ուշ, մեկ այլ առիթով վերադառնայինք դրան։

Շարունակեցինք ըրույցը Արարատի և Վանա լճի մասին։ Լճի կղզու հետ է կապված նաև արքայադուստր Թամարի մասին ըրույցը։ Սիրել էր նա մի կտրիճի։ Նրա հայրը չէր ուզում այդ երիտասարդին, և Թամարին փակեց փոքրիկ կղզու վրա գտնվող իր դղյակում։ Ամեն գիշեր լողալով այնտեղ էր հասնում երիտասարդը և հանդիպում աղջկան։ Նա լողում էր, առաջնորդվելով գիշերը Թամարի հավատարիմ ծառայի վառած կրակի լույսով։ Թագավորը, տեղեկանալով այդ մասին, հրամայում է սպանել ծառային։ Կրակը հանգչում է, և երիտասարդը, մոլորվելով ծովում, խեղդվում է։ Նա մահանում է՝ Թամարի անունը շուրթերին։ Նրա աղաղակը քարացել է կղզյակի վրա, և այդ օրվանից մարդիկ այն անվանել են «Ախթամար»։

Երևանից դուրս գտնվող տեղանքում ճարտարապետը կառուցել է մի կամար։ Այդ կամարը նվիրված է բանաստեղծ Սղիշե Զարենցին։ Կամարի վրա փորագրել են նրա բանաստեղծության երկու տողը, որտեղ խոսվում է Արարատի մասին։ Դրանց իմաստը այն է, որ աշխարհում չկա առավել տպավորիչ և առավել դեղեցիկ սար, քան այս։

Այդ մեր երկրորդ փորձն էր Արարատի գագաթը տեսնելու։

Ավտոմեքենայից իջանք և բարձրացանք մի փոքրիկ բլրակ,

2031
ՀԱՅԿ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ոդի վրա կառուցված է կարմիր տուֆից այդ կամարը։ Կածանը մեզ տարավ այն կետը, որտեղ բանաստեղծի կամարը փոխակերպվում է վարդե շրջանակի, ոդի մեջ հանկարծ ի հայտ է գալիս Հայաստանի երկգլխանի արծիվը։

Դժբախտաբար, մեծ սարը դեռևս իր ծածկույթի տակ էր։

Տեղանքը եզակի է այդ նպատակի համար։ Առաջին կարգի դիտակետ։ Երկիրը մեղմորեն փուլում է դեպի ցած և գնում հեռուն, որտեղ Արաքսը գծում է սահմանը նախ՝ Թուրքիայի, ապա՝ Պարսկաստանի հետ։ Տեսանելիությունը հիանալի է, այնպես, որ կարծես թե այնտեղ՝ դիմացը, տեսնելու ես թուրքերին իրենց արտերում։ Բայց Նահապետն ասում է, որ ըստ էության թուրքերը լքել են այդ վայրերը, չեն մշակում դրանք։ Եվ դրա ի՞նչ կարիքը ունեն։ Թուրքիայի համար ի՞նչ են այդ անջրդի լանջերը։ Մինչդեռ Հայաստանի տնտեսության համար հողը ոսկի է, իսկ Արաքսի ջուրը ոսկուց էլ թանկ։ Արաքսի հուչակավոր հովիտը ուրիշ ժամանակներում չէր բաժանում, այլ միացնում էր երկիրը։ Միացնում էր աշխարհներ, հեռավոր Արևմուտքը և հեռավոր Արևելքը, Եվրոպան և Ասիան։

Եվ իրոք, երբ նայում ես այս բարձունքից, կարծես տեսնում ես մի հսկա ձագար երկնքի և երկրի միջև, մի մեծ ճանապարհ, որը բացել է բնությունը, որպեսզի անցնեն ժողովուրդներ ու ազգեր։ Այսպես է եղել աշխարհաստեղծումից ի վեր։ Այդ վայրը լույս և տարածք ունի, մի մեծ ընդարձակություն։ Որ կետի վրա էլ նայվածքդ կանգ առնի, տեղանքի գծերը հանգիստ քեզ տանում են ավելի ներս, ավելի հեռուն։ Նույնիսկ հանդիպակաց լեռները, հակառակ իրենց բարձրության, դրանք ևս հորիզոնական են թվում, երկարավուն, փաղաքշված, ձգվում են ոչ թե դեպի վեր՝ այդ խաղը նրանք մի ժամանակ խաղացել են ու կըշտացել և դրա համար էլ կանգ են առել, այլ մի մասը դեպի արևելք, մյուսը՝ դեպի արևմուտք։ Նրանք ևս մարդկային ինչ-որ ուղևորության մեջ են։ Ուղևորության գաղափարը իշխում է ամեն ինչի վրա։ Եվ ձորը, իր գետակով, անարգել հանգում է հեռվում։ Այնպիսի զգացում է արթնացնում, ասես ինչ-որ այնտեղ մոտերքում լուսավոր ծովեր են, և այնտեղից դենը ճանապարհորդում են նավերով։

Անշուշտ, ծովերը հեռու են և բարձրությունը՝ մեծ։ Հազար մետրի վրա ենք։ Բայց Կովկասի լեռնային համակարգի կազմած պարսպից մինչև ներքև՝ Պարսից ծոցը, սա ամենամեծ

դարպասն է Արևմուտքի և Արևելքի միջև։ Ժամանակ ունենաս այստեղ փուլելու և թույլ տաս, որ հնագույն ժամանակներից քո առաջով քայլեն ցեղեր, զորքեր, անթիվ քարավաններ, որոնք անցել են այստեղով. հայ, պարսիկ, հռոմայեցի վաճառականներ. հայտնի և անհայտ ճանապարհորդներ. պարսիկ, արաբ, թուրք հարկահաններ. ասորի և բյուզանդացի վանականներ. Հերակլ կայսրը. նրա հետից, քիչ այն կողմ, Անտոնիոսի լեգեոնները, որոնք մտնում են Արտաշատ և ավերում այն. Քսենոփոնի բյուրը. վերջում նաև պատմահայր Հերոդոտոսը ուղտին նստած, և ընտրանին հայ հեծյալների, որոնք իջնում են գետը, մարերի բանակին միանալու և Արաքսի միջով անցնելուց հետո Բյուրակնի և Պոնտոսի լեռների վրայով մինչև Հելլեսպոնտոս և Թերմոպիլե գնալու համար։ «Բոլորն այստեղով են անցել, և չնեղանաս, մի ժամանակ նաև ձեր բանաստեղծ Կավաֆիսի՝ հայկական քթով նախահայրը։ Բայց այդ մեկը թողնենք։ Տես այնտեղ, հեռվում, այդ գորշ լեռներին, ուր շարքերով սևին են տալիս ինչ-որ մութ խորշեր։ Դրանք քարայրներ են։ Այստեղ էին թաքնվում այն ավազակները, որոնք կողոպտում էին քարավանները. նրանք այստեղերով առանց ուժեղ պաշտպանության անցնողների ահ ու սարսափն էին...»։

Բայց դա շատ հետո է եղել։ Այդ մասին նա մի քանի խոսք է ասում իբրև տեղեկանք։ Ու նորից շրջվում է դեպի այն կողմ, ուր նայում էինք քիչ առաջ. Արարատի և Թուրքիայի հորիզոնում ձուլվող մյուս, առավել ցածր, լեռնագագաթների գծանկարին։

«Հայաստանը դեռ այդտեղից էլ այն կողմն է, այդտեղից էլ սկսվում է։ Այստեղ մենք ինչ ենք։ Եթե ամեն մի երկիր պետք է կանոնավորապես գործի որպես ամբողջական մի օրգանիզմ, ինչպես, ասենք, մարդու մարմինն է, այսօր մենք այստեղ, մեր այսօրվա պետությամբ, այն ենք, «ինչ մնացել է», ամենաշատը՝ մի գլուխ միայն։ Դրանում դու հեշտ կհամոզվես, եթե մի աչք նետես քարտեզին։ Տես, թե ո՞ր են հասնում Հայկական լեռնաշխարհի սահմանները, որի ճիշտ կենտրոնում այդ սարերն են, Արարատի համալիրը։ Դա մի մեծ լեռնային երկիր է, բայց իր գետերով, իր ձորերով, հացի շտեմարաններով, արոտավայրերով, այն ամենով, ինչ անհրաժեշտ է իր ժողովրդին կերակրելու համար։ Մի տարածություն, գրեթե չորս հարյուր հազար քառակուսի կիլոմետր, հաշված նաև այս անկյունը, որն ընդա-

մենը երեսուն հազար քառակուսի կիլոմետր է։ Ահա, ուրեմն, մեր կորած հայրենիքը, Արարատից այն կողմ։ Հաշվիր դեպի աջ մինչև Եփրատի գետավազանը, համարյա մինչև այնտեղ, ուր գտնվում էր հին Կոմմագենեն, այնուհետև՝ ուղիղ գծով դեպի արևելք, Եգեսիայի լեռների վրայով և Տիգրիսի վերին հոսանքով մինչև Ուրմիո լիճը՝ հինավուրց Մատիանեն։ Այնտեղ մեր երկիրը սահմանակցում էր պարսկական բարձրավանդակին...

«Այնտեղ են մեր տաճարները, այժմ լռած մեր աղբյուրները. մեր ավերակված պատգամատները... Բայց թողնենք աշխարհագրությունը։ Հարցրու այստեղ եղող կենդանի մարդկանց։ Հարցրու ում ուզում ես։ Տասից միայն երկուսը քեզ կասեն, թե իրենց հայրը և պապը ծնվել են այստեղ, այսօրվա Հայաստանի ինչ-որ վայրում։ Սրիտասարդները՝ այո. բայց մենք, մեծերս, եկել ենք դրսից։ Մեծ մասս այստեղ մոտիկ գտնվող հայկական շրջաններից։ Մյուսները չհասցրին։ Նրանց խժռեց թուրքի և քրդի յաթաղանը, մյուսները կորան լեռներում և անապատներում»։

. . . . . .

Թղթի վրա ինձ համար գծել են մի գծագիր։ Մի քանի գիծ՝ առացվել է քառակուսի։

Հայկական բարձրավանդակն է։ Այն պահել եմ իմ ձեռքում, ինչպես հազվագյուտ մի լուսանկար։ Հիշում եմ տարեց մարդու ձեռքը, որը քաշում էր այս գծերը։ Այն, ինչ իր գրչով նշեց նա, կարդացվում են նաև այդ թղթի տակ դրված հինգ-վեց թերթերի վրա, ամուր փորագրված, այնպես, ինչպես դրանք կան այդ անուշ մարդու սրտում։ Հիշողությանս մեջ է այդ կեսօրը։ Նստած ենք պատշգամբում, և նա խոսում էր այդ հին բանների մասին, որոնք երբեք չեն ուզում ժամանակից խունանալ։ Գծելով իր հին մեծ հայրենիքի սահմանները, նա ոգևորվեց։ Կարուկ մի շարժումով ցնցվեց, նրա գլուխը դուրս եկավ ծղոտից հյուսված բազկաթոռի թիկնակից, ուժեղ զարկվեց պատի քարին։ Շատ տրխրեցի։ Իր տարիքից մի քանի անգամ նա մեծ թվաց ինձ։ Վախեցա, որ վատ բան չպատահի նրան։

Նորից այստեղ, այս նույն վայրում, նա մի առավոտ ինձ պատմում էր վերջին պատերազմում իր ունեցած արկածների մասին։ Պատերազմը վրա հասավ, երբ զինվորական ծառայության մեջ էր։ Առաջին օրերին նա գերի է ընկել։ Նրան տարել են Լեհաստան, համակենտրոնացման ճամբար, տանջել են՝ ընկ-

ճելու համար («Կային տարբեր մարդիկ։ Հայեր և ոչ-հայեր»)։ Մի օր հաջողվեց փախչել, և գարձավ պարտիզան Ուկրաինայում։ Այնտեղ էլ նա, մինչև վերջ, կռվում է որպես պարտիզանական ջոկատի հրամանատար։ Բայց գերությունը նրան չներեցին։ Իսկ մենք այդ պատմությունը չավարտեցինք։ Մի պահ, մինչ զրուցում էինք, նա կանգ առավ, ասես հանկարծ ինչ-որ ծանր բան վերցրեց, այնքան ծանր, որ չէր պատկերացնում։ Նրա ձայնը բեկվեց, դեմքի արտահայտությունը տարօրինակ կերպով փոխվեց. գարձյալ վախեցա, որ մի բան չպատահի նրան...



Քաղաք վերադարձանք հանկարծահաս անձրևի տակ։ Մեր բարեկամը հոգնել էր, տխուր էր երևում։ Վարորդը ուղիղ ընդ դեպի հյուրանոց։ Երբ կանգնեցնում էր մեքենան, նահապետը հանկարծ զարթնեց։ «Չէ, չէ», ասաց վարորդին և նրա կողմը թեքվելով, ցուցմունքներ տվեց։ «Ուզում եմ, որ մի բան ևս տեսնես»,— գարձավ նա դեպի ինձ։

Բարձրանում ենք կանաչ բլուրն ի վեր։

— Երբ Հունաստանից եկանք, այս ծառերը չկային։ Այստեղ համատարած քարակուտեր էին։ Մեզ, տղաներիս, բերում էին այս բլուրը, և մենք մաքրում էինք քարերը։ Փորում էինք, ջրում, տնկում այս քո տեսած ծառերը։ Մոռացել եմ, թե քանի՞ հատ տնկած կլինեմ իմ ձեռքերով...

Ջառիվեր անտառակ։ Հողը շատ կարծր է թվում։ Այս ու այնտեղ լերկ է, խոշոր քարե մակերեսներ կորշում են և գարձյալ հայտնվում. ծառերը դանդաղ են աճում։

Այս բլրի վրա է գտնվում մեծ եղեռնի հուշարձանը, ցեղասպանության, գենոցիդի հուշարձանը։ Ամենասահմռկեցուցիչ բառը հայերի բառարանում։ Այս բառը գիտեն բոլոր հայերը, մեծերը և փոքրերը, ինչպես ամեն մի բառ, որ լսել են իրենց մորից։ Երբ արտասանում են «գենոցիդ» բառը, այն երբեք չեն տարբերում իրենց մայրենի բառերից։ Հարցրի Նահապետին՝ իրենք իրենց այդպիսի բառերը չունե՞ն։ Իհարկե ունեն, և ավելիով։ Բայց «գենոցիդ» բառը չունեին։ Գենոցիդը եզակի է,

---

* Աստղանիշ կրող բառերը հեղինակը գրել է հայերեն՝ հունարեն տառերով (Ծ. Բ.)։

միակը, ողբերգական 1915-ը և 1916-ը, մեկ և կես միլիոնի կյանքը, հնձված ամենամեծ աղետի մանգաղով, հնձված սովից, յաթաղանից, ջարդված գանգեր ձորերում, Կոստանդնուպոլսի հայ մտավորականների կոտորած, դատարկված տներ, ամայացած հայկական տասներկու նահանգներ։ Դրանից առաջ եղածները շատ տարբեր բաներ էին՝ թալան, հալածանք, ջարդ, պոգրոմ։ Ջարդ էր, կոտորում, կործանում* և բաղում նման բաներ սարսափելի Աբդուլ Համիդի և հետո երիտթուրքերի օրոք, մինչև այս վերջին աղետը։

Հուշարձանը պարզագույնից էլ պարզ է։ Բայց դա հենց այն պարզությունն է, որտեղ արվեստը գեղեցկորեն միահյուսվում է ճշմարտության հետ։

Կլոր մի վայրում ենք, որը փակ է, բայց և միաժամանակ՝ բաց։ Շուրջբոլորը տասներկու հսկա մատներ մեզ ցույց են տալիս, թե ի՞նչ պետք է աննենք. առաջանանք մինչև կենտրոնը և լուռ խոնարհվենք մեղմ այրվող բոցի վրա։ Ես ասացի՝ մատներ։ Ճիշտն ասած, դրանք գրանիտե տասներկու խոշոր սալեր են, յոթ թե ութ մետր բարձրությամբ, մեկ սալ՝ յուրաքանչյուր ամայացած վիլայեթի համար։ Եվ ոչինչ չեն ցույց տալիս, ոչ էլ ասում են։ Այդ քարերը ևս մեզ նման երկրպագողներ են. ինչոր տեղից եկել են և կռացել այդ բոցի վրա։

Ամեն ինչ հաշվել են, ինչպես հաշվել գիտե լավ վարպետը։ Դրսից, քանի դեռ մոտենում ենք բլրակի գագաթին հրապարակի նման կառուցված բաց բացատից, այդ սալերը այնքան էլ խոշոր չեն երևում, ինչքան կան իրականում։ Մարդ չի էլ կարող ճշտորեն ընկալել դրանց թևքությունը, դրանց շարժումը։ Դրանց արանքից անցնելով, իջնում ենք մի քանի աստիճան։ Իջնելիս զգում ենք, որ այս հսկայական խաչքարերը առաջ են նետվում և կանգ առնում, ինչպես մարդ կռանում է՝ մի բան խնդրելու կամ մտածելու համար։ Ավելի նեղ իրենց վերևի հարթ մասում, քան իրենց հիմքում, այդ սալերը վերևում գծում են մի շրջանակ, որի միջից երկինքը ծածկում է մեզ, այդ անպատճառ կառույցի որպես գմբեթ։

Ուրիշ ոչինչ չկա. միայն մենք ենք և կրակը, անհամար զոհերի հավաքական հոգին։

Սիրտդ դողում է այն ամենից, ինչ մտածում ես, այն ամենից, ինչ եղել է։ Ու մտածում ես, խմիչիայլոց, թե ինչքա՞ն է արվեստը շահում, երբ նրան առաջնորդում է մեծ և պատաս-

խանատու զգացում։ Ճշմարտորեն աչքերդ լցվում են «Այդպես է կատարվում բոլորի հետ,— ասում է Նահապետը։— Բերել են անգլիացիների, ֆրանսիացիների, իտալացիների... Բոլորն էլ նույնը»։

Բարձրանում ենք աստիճաններով։ Քիչ այն կողմ մի քարն սկսք նետվում է բարձր, քառասուն-հիսուն մետր բարձր, որպես խորհրդանիշ վերացման և հարության։

Այս մյուս գաղափարի առջև նույնպես կանգնում ենք մի փոքրը, մինչև որ Նահապետը քաշում է թևից՝ «Գնանք»։

Ինձ տանում է մինչև հրապարակի ծայրը, այնտեղ, ուր գետինը մի տեսակ կտրուկ զառիթափ է կազմում։ Կանգնեցրեց ինձ երկու ծառերի միջև ու ասաց. «Հիմա այնտեղ նայիր»։

Երկինքը լրիվ պարզել էր։ Այնտեղ, բարձրում, վերջապես երևաց Արարատը։ Առանց ամպերի էր, միայն ձյուն։ Մեծ գագաթը անհավատալիորեն մաքուր էր մինչև վերև։ Նրա ամեն ինչը անհավատալի էր. բարձրությունը, զանգվածը, այն ձևը, որով այս ամբողջ զանգվածը, այս հսկա խաչքարը գծագրվում էր երկնքում հենց իր հավերժական ձյան շնորհիվ. այլ կերպ դժվար կլիներ զանազանել, թե որտե՞ղ է վերջանում սարը, և որտե՞ղ է սկսվում երկինքը։

Այն աննկարագրելիորեն հսկա է և տպավորիչ, ազդեցիկ։

Փորձեցի ինչ-որ բան ասել Պուշկինի և բիբլիական հին ավանդության մասին, ուզում էի հայտնել Նահապետին իմ մըտքում ծագած մի կարծիք. այսինքն, թե բիբլիական ավանդությունը ջրհեղեղի մասին պետք է ինչ-որ այստեղ ստեղծվեր, այն մարդկանց կողմից, որոնք հենց Արարատի այդ հսկան էին տեսել, դիտելով նրան այս կողմից, այս ցածր հարթավայրից, որտեղից ամբողջ սարը տեսնում ես ներքևից վերև, տպավորվում ես նրա բարձրությամբ և մեծափառությամբ...

Հանկարծ լսեցի նրա ձայնը. «Թող Պուշկինին և աստծուն»։

Բայց իրականում այդ չասեց. Պուշկինի մասին բոլորովին չխոսեց։ Նա մեկ ուրիշ բառ ասաց։ Հունարեն բառ։ Մի ածական՝ ուղղված աստծուն։ Նրան հայհոյեց ամենավատ խոսքերով։

Միանգամից չհասկացա։ Բայց քիչ անց հասկացել էի։ Շուռ եկա և նրան տեսա տարօրինակ դիրքում. կռացել էր և սուացել մի շատ տարօրինակ արտահայտություն։ Դեմքը անասելի կծկվել էր, պատրաստ ճչալու կամ երգելու տալը մարդու ձայնով։ Ուզում էր, որ իր ձայնը լսվի ցածից, լեռան ստորոտից և

ավելի մեծեր, կան նաև ավելի փոքրեր։ Ներքևում թողնված մի խոշոր ելուստով խաչքարը կանգնեցվում և ամրացվում է տապանաքարին, որպես կյանքի խորհրդանիշ։ Այն կարող է կանգնեցված լինել նաև որևէ ճամփաբաժան կետում կամ թե մեկ այլ վայրում՝ որպես այս կամ այն իրադարձության վկայություն, որպես տարեգրություն, կամ նույնիսկ պարզապես որպես զարդարանք։ Սալաքարը միաձույլ է, բավական մեծ՝ տասը-տասնըհինգ սանտիմետր խորությամբ։ Վարպետը սովորաբար մի շրջանակ է թողնում և դրա մեջ քանդակում է խաչը։ Շատ հաճախ վերևի մասը փոքր-ինչ թեքվում է դեպի ներս, ամբողջ ստեղծագործությունը պահպանող քիվի նման. բայց ոչինչ պարտադիր չէ, բացի խաչից և ծաղկման գաղափարը պարտադրող զարդաքանդակներից։ Բազմազան զարդանախշերի համադրումը ևս ներշնչված է նույն այդ գաղափարից։

Հատկապես հիանում ես, թե հայերը ինչպե՞ս են ապահովում ոճը, անհրաժեշտ համամասնությունները, առանց կրկնելու մանրամասները։ Այս հարցում նրանք առանձնապես հնարամիտ են։ Նրանք հետևողականորեն բազմաձևություն են հաղորդում հավասարակշռությանը։ Իրար դիմաց երկու փոքրիկ լուսամուտներ, աղեղով իրար միացած սյուներ, կտուցներով իրար դարձած երկու թռչնակ, միևնույն բույսի երկու տերև, նույն ծաղկի երկու թերթիկ պատկերելիս վարպետը կարողանում է այնպիսի մի մանրուք գտնել, որը տարբերի դրանք, մեկն այսպես է, մյուսն՝ այնպես, թեև դրանք երկվորյակներ են։ Շուրջը դիտելը վարպետին ճշտորեն համոզել է, որ կյանքում ոչինչ բացարձակապես նման չէ մեկ ուրիշ բանի, իրար նման չեն նույնիսկ մեր զույգ աչքերը. և իր այս դիտումը վարպետը այնպիսի հաղվադյուտ հնարամտությամբ կիրառում է իր գործի մեջ, որ հաճախ մեզ առաջարկում է հրապուրիչ և գեղաշնորհ խաղեր։

Քանի՞սն են խաչքարերը Հայաստանում։

Խիստ բազմաթիվ։ Մեծ մասը գտնվում է այնտեղ, ուր կանգնեցված է եղել հենց սկզբից, 5—10 դար առաջ։ Մի մասը կանգուն, մյուսները՝ խոնարհված։ Մայր տաճարի շուրջը ներկայիս կաթողիկոս Վազգեն Ա-ն հավաքել է դրանց մի քանի լավագույն նմուշները։ Նա իր վեհարանում, լայն աստիճանավանդակի վրա, տեղավորել է, եթե ճիշտ եմ նշել, 12-րդ դարի մի խաչքար։ Պահպանվել է նույնիսկ արվեստագետի անունը՝ Մոմիկ վարպետ, որը հայտնի է նաև իր կառուցած եկեղեցիներով։ Մեկ այլ խաչ-

գնա մինչև գագաթը։ Նա ինձ պատմել էր, որ Հայաստանում առաջին տարիներին, այլ գործերի հետ միասին, երգել է նաև Մայր տաճարում, երգեցիկ խմբում որպես բարիտոն։ Հայհոյանքը նա ասաց երգչի նման, որպես արևելքցի բարիտոն երգիչ։ Եվ այդ խոսքը հունարեն ասաց։

Մոտեցա, բռնեցի թևից. նստած էր խոտերի վրա և տակավին ձեռքերը խոսափողի նման պահել էր բերանին մոտ, պատրաստ նորից բռնկվելու։ Նրան բարձրացրի։

— Այ Նահապետ, ինչո՞ւ ասացիր։ Չէ՞ որ աստծուն չես հավատում։

— Չեմ հավատում։ Բայց երբ գալիս եմ այստեղ, ուզում եմ, որ աստված գոյություն ունեցած լինի, և ես հայհոյեմ նրան։ Ուրիշ ի՞նչ անեմ։

Հետո ավտոմեքենայի մեջ ավելացրեց.

— Բայց դուք, հույներդ էլ, սարսափելի հայհոյանքներ ունեք։ Փոքրիկ տղա էի, լսում էի այդ հայհոյանքները և հոգիս դողում էր։ Հիմա էլ չեմ կարող։ Ուզում եմ այնպես անել, որ դողա նաև աստծու հոգին, եթե նա գոյություն ունի, եթե նա ևս հոգի ունի...

. . . . . .

Շատ բան լսեցի և սովորեցի Նահապետից։ Ինձ մոտ մանրամասն նշումներ չեմ կատարել։ Միայն մի քանի բառ եմ խզմզել իմ ծոցատետրում։ Հայկական անվանումներ և զանազան ուրիշ գոյականներ։

Այժմ դրանք վերցնում և անց եմ կացնում այստեղ։

ԽԱՉՔԱՐ

Խաչքարը պարզապես քարե խաչ չէ։ Այն հայերի գեղարվեստական խորհրդանիշն է. դրա վրա դրոշմված է զարդարվեստի նրա ճաշակը, գեղեցիկի նուրբ զգացողությունը և ինչ-որ չափով նաև այդ ժողովրդի պատմությունը։ Վերցնում են խոշոր մի քարաբեկոր և այն դարձնում ասեղնագործ, գորգ, պարտեզ, երգ։ Մեջտեղում քանդակվում է սուրբ և կենարար խաչը, իսկ շուրջը՝ բույսեր, ծաղիկներ, մրգեր, մարդիկ, կենդանիներ, թռչուններ և երկրաչափական տարբեր զարդանախշեր։ Զարդաքանդակների նման, չափսերը ևս բազմազան են։ Սովորաբար հիմքում մեկ մետր լայնությամբ, իսկ բարձրությունը՝ մեկ և կես մետր. կան

քար գտնվում է Երևանի պատմական թանգարանում. հենց այդ խաչքարն էլ պատկերված է դրքիս կազմի վրա։ Դրանք հրաշալիքներ են, զարդաքանդակներով հարուստ հայ քանդակագործության Հերմեսները և Աֆրոդիտեները։ Այդ նմուշներից միայն մեկն իսկ տեսնելը բավական է համոզվելու համար, թե ինչքան է զարգացած եղել մանրամասի մշակումը, որը հիշեցնում է գերազանց փորագրություն փայտի վրա։ Հաճախ, խաչքարն ուշադիր դիտելիս, քեզ զգում ես անհավատ Թոմմասի դերում։ Ուզում ես փորփրել այդ նուրբ ասեղնագործը, ասես թե այն ոչ թե քարից է, այլ փափուկ և դյուրաթեք մեկ այլ նյութից։ Այս արվեստի տարիքն ինչքա՞ն կլինի։ Ասում են, թե 10-րդ կամ 9-րդ դարից հին չէ։ Այդ ժամանակ արաբներն ու նրանց մշակույթը, նրանց զարդարվեստը վաղուց էր հասել այստեղ։ Այստեղ, խաչքարը զուտ հայկական արվեստ է։ Ոչ մի առնչություն չունի արաբական զարդարվեստի հետ ոչ իր կատարման եղանակով, ոչ էլ, առավել ևս, իր գաղափարով և պատկերներով։

Արվեստը մարդկանց նման է։ Մեկը ծնում է մյուսին. ոչ ոք ինքնածին չէ։ Բայց երբ նույն ցեղի մեջ ինչ-որ տեղ կորչում է ծնունդների բնականոն շարքը, դա դեռ չի նշանակում, որ պարտադիր է ցամաքը դեպի դրսից, մեկ այլ մշակույթից նկող աղեցություններ. շարունակությունը կարող ենք փնտրել այստեղ, ավելի մոտիկ։ Այս ժանրի պատմությունն ավարտվելով միջին դարերից մեկում, մղում է մանրանկարչության առավել հին արվեստին։ Խաչքարը, շատ հավանական է, ծագում է խորանից։ Ծագումնաբանական այս առնչությունն ակնառու է։ Խորանը խորշն է, դուռը, Դեղեցիկ Դուռը, որով մտնում ես տաճար. խորան է նաև այն, ինչ մանրանկարիչները նկարում էին հին ձեռագրերի հենց սկզբում, հին ավետարանների «խորաններ»։ Զարդանախշը և ճարտարապետական այլ տարրեր քարից փոխադրվում են ձեռագրերի էջերը, քանդակագործությունից՝ նկարչության մեջ։

Խաչքարն էլ մի խորան է՝ հայ արվեստի աշխարհը մտնելու համար։ Բայց և մուտք, ինչպես արդեն ասել եմ, դեպի հայոց պատմությունը և կյանքը։

Այժմ, երբ փորձում եմ ի մի բերել Հայաստան կատարած իմ ճանապարհորդություններից ստացած տպավորություններս, տեսնում եմ, որ Հայաստանին ծանոթանալը պետք է սկսել խաչքարից։ Այնտեղ մարդ մի քանի կարևոր բանալիներ է գտնում,

նման նրանց, որ հնօրյա նկարիչը նշում էր մուտքի աղեղի տակ, օգնելու համար ընթերցողին՝ կողմնորոշվելու ձեռագրի լաբիրինթոսում։

Այս կանգնեցված նրբակերտ սալի վրա դրոշմված է հայի բնավորությունը, նկարագիրը, նրա աշխատասիրությունը, հնարամտությունը և արթունությունը, ամենանուրբ և բարդ չափերի մեջ չմոլորվելու, ճակատագրի դժվար շրջադարձերին չկորչելու նրա կարողությունը։ Իր սեփական խելքի հենքը։ Իսկույն նկատելի է նրա համառ կռիվը այն կարծր նյութի հետ, որի վրա նրան վիճակվել է ապրել, իր հաղթանակը նրա նկատմամբ։ Այդ սալը հայի աշխարհագրությունն է, նրա պատմությունը, մարդկային տեղանքը՝ աշխարհագրականի վրա, նրա առանձնահատուկ քայլվածքը՝ քարաշատ հողերի և պատմության դաժան ուղիների վրա։ Այսպիսի կարևոր բաներ են պատմում Հայաստանի այս տեղեկատու քարե մատյանները նրա արևի, անձրևների և արտասովոր լուսավոր երկնքի տակ։ Այս քարերն էլ խոսում են այնպես, ինչպես մեզ մոտ մի երկու առուակոսավոր ապիտակ սյուներ մի կտոր կապույտ երկնքի տակ։

Դեռ պետք է ուշադրություն դարձնել իր փոքրիկ տարածությունը բազմաթիվ և բազմազան բաներով լցնելու՝ հայի ծարավին։ Ծարավ և անհաղթահարելի անհրաժեշտություն։ Դա հատուկ է նաև նրա երկրին։ Ջանում է վերակենդանացնել մի մեծ պատմություն, սեղմված իր այս փոքրիկ երկրում, որը չի կարող միայն դեպի ետ նայել. այն ամբողջապես ներկայի ոգորումների մեջ է, տքնում է ու վազում, ինչպես ամեն մի ժողովուրդ, բայց և կրում է իր ուսերին հին բեռը, որը չի կարող վստահել մեկ ուրիշին։ Հայերի անցյալը հունական պատմություն չէ։ Հայերը բախտ չունեցան, որ իրենց անցյալը համատեղ բարձրացներ քաղաքակիրթ մարդկությունը։ Հայը գիտի, որ այս գեղեցիկ խաչքարը, 7-րդ դարի այս զարմանահրաշ մատուռը պիտի պահպանի ոչ այլ ոք, քան ինքը։ Մյուսները շատ-շատ պիտի անցնեն այստեղից ու տեսնեն։ Հայը իր անցյալը նույնիսկ մեկ րոպե մոռանալու հնարավորություն չունի։ Ու տեսնում ենք, որ հիասքանչ մի ձևով կյանքի հոսանքներն անցնում են այս երկրով և արթնացնում հին կերպարանքներ և կարոտներ։ Իրոք հիասքանչ են այսօրվա հայերը՝ նկարիչը, քանդակագործը, բանաստեղծը, շինարարը, արձակագիրը, այսօրվա հայը, որ ստեղծագործաբար մասնակցում է իր ազգային պատմությունը կերտելուն,

հիասքանչ են նրանք իրենց ստեղծած հնարավորություններով, որպեսզի չկորցնեն անցյալը և բաց չթողնեն ներկան։ Որպեսզի հետ չմնան աշխարհից, բայց և չկորվեն այն արժեքներից, որոնք ինչ-որ մեկը պետք է կրի։ Նրանք ևս այսպես հյուսում են իրենց խաչքարը։

Անկասկած, հին վարպետների ավանդները կենդանի են այսօրվա հայ ստեղծագործողի ենթագիտակցության մեջ։ Այս բանում ինձ բացարձակապես համոզեցին Երևանի ժամանակակից արվեստի թանգարան կատարած իմ երկու այցելությունները։ Բայց թանգարան այցելելուց դեռ շատ առաջ, ուրիշ առիթով, ես այդ հաստատել էի ինձ համար։

Մի օր բարձրացա լերկ սարը, որն ինձ մագնիսի պես ձգում էր իր գունավորումներով։ Առաջ գնացի ծառախիտ ձորի միջով։ («Քեզ ինչպե՞ս գայլերը չկերան»,— հետո ասաց ինձ Նահապետը)։ Ինչպես սպասում էի, իմ ակնկալածներից ոչինչ չգտա այնտեղ, ոչ գեղեցիկ գույներ, ոչ գեղեցիկ քարաշերտեր։ Ջորից դուրս գալուլ, ընկա խիտ խոտերի մեջ, որոնք դժվարացնում էին առաջընթացս։ Խոտը համարյա ինձ ծածկում էր։ Վաղուց քայլելու մեծ փորձ ունեմ՝ առանձին և խմբովին, լեռներում։ Ես ունեմ լեռների ղգացողությունը։ Բայց այստեղ հասկացա, որ կարող ես կորչել։ Կորչում ես, ինչպես ծովում։ Խոտ և երկինք։ Գնում ես մի փոքր ավելի ներս, և արդեն չգիտես, թե որտեղի՞ց այստեղ եկար, որտեղի՞ց մտար։

Կեսօրին էի դուրս եկել անից, և արդեն դիշերն իջնում էր։ Երբ հասա այնտեղ, ուր պետք էր և ստուգեցի իմ նշանները, տեսա, որ չպետք է ձորով իջնեի. հիմա արդեն մութ էր, ավելի զառիթափ։ Նախընտրեցի աջ գնալ, դեպի լեռնագծի աղեղը։

Առաջ գնացի, մինչև զգացի, որ անտառը բացվում է։ Երբ լույս աշխարհ դուրս եկա, տեսա բավական լայն մի բացվածք, որը բարձրանում էր դիմացի գետափից, հեծնում էր սարալանջին և թեքվում լեռան մյուս կողմը։ Համարյա մեջտեղում երկաթբետոնե ինչ-որ խոշոր սյուներ ձգում էին իրենց կնճիթներին ամրացված հաստ մետաղե ճոպանները, դրանք տանելով ճանապարհին զուգահեռ։ Քիչ այն կողմ տեսա ծուռ տեղադրված, ասես վերևից ցած ընկած, մի կողին հենված ցեմենտե մի տնակ, փոքրիկ լուսամուտով։ Ամենամոտիկ սյունից իջնող երկու էլեկտրալար անցնում էին լուսամուտից ներս։ Ուզում էի անց-

նել ճանապարհը, երբ մեկի ձայնը լսեցի։ Միայնակ ծառի տակ պառկած էր մի ծերուկ, գլուխը ավտոդողի վրա դրած։ Այս բոլորը շատ տարօրինակ էին՝ ցեմենտե տապանը, այս ավտոդողը, էլեկտրալարերը։ Ծառից մի քանի մետր այն կողմ ջրի մի ժապավեն էր ցայտում կարմիր պլաստիկատե ձագարի խողովակից և, փոքրիկ մի աղեղ գծելով, ընկնում էր ջրափոսիկի մեջ։ Այնտեղից ներքև քչքշալով գնում էր իր առվակով։

Այս ծերուկի հետ շատ զրուցեցինք։ Իմացա նրա անունը, նրա տարիքը, այն, թե ինչ է անում այստեղ վերևում։ Բացառիկ համակրելի էր, ուխտունհինգն անց։ Այդ որոշեցինք ամեն մի տասնամյակի համար ծալելով մեր մեկ մատը, ինչպես հաշվում էին Հայկ Նահապետի ժամանակները, այդ հին սերմնացանի, որը ծնել է բոլոր հայերին և որը նոյի թոռն էր։ Ծալեցինք մեր մատները բոլոր տասնամյակների համար և վերջում ավելացրինք կես մատ ևս։ Նրա գյուղը սարի հետևում է. այստեղ նա պահակ է կարգված ջրի վրա՝ «բասեին», ասաց նա։ Այնտեղ, նրա տապանից քիչ անդին, ջրամբարն է։ Ջուրը հեռվից են բերում խողովակներով և այստեղից է այն բաշխվում գյուղերը, առողջարանները և «սպորտբազան», որը մյուս լանջին է, այնտեղ, ուր գնում են էլեկտրալարերը։

Ձեռքին մի տարօրինակ գավազան ուներ, բարակ մի ձող շատ ամուր փայտից, երկաթե ծայրով։ Բանակը երկգլխանի արծվի նման է։ Գավազանի մի ծայրը, այն որ երկաթից է, եթե մի փոքր թափով իջեցնես, խրվում է նույնիսկ քարի մեջ։ Գրա մի ելրը տափակ շեղբ է ուրագի նման, իսկ մյուս ծայրը՝ սեպանմանև Ասաց, որ այն իր հետ վերցնում է վայրի խողերից, գայլերից և նման մեծ ու փոքր գազաններից պաշտպանվելու համար։

Այսպես շարունակելով մեր զրույցը, այս փոքրիկ վայրը բնակեցրինք բազմաթիվ տարօրինակ բաներով Հայկի ժամանակներից մինչև մեր օրերը, մի խաչքար հյուսեցինք ծերունու հետ։ Ռուսերենը վատ գիտեր, և այն էլ՝ մոռացած, հնուց հիշած ինչ-որ բառեր։ Երբ մեկ-մեկ վերագտնում էր ինչ-որ բառեր, մանկական ուրախությամբ ծիծաղում էր, ինչ էլ որ լիներ իր ասածը՝ ծիծաղելի կամ ոչ։ Եթե նույնիսկ որևէ գայլ ծառերի հետևից դուրս գալով նետվեր մեզ վրա, և ծերունին, եթե այդ պահին հիշեր, թե ռուսները գայլին ինչ են ասում, նախ պիտի ծիծաղեր և հետո վերցներ նախնադարյան սայրով իր գավազանը... Ունեցած տղաներից (չհաշվեցինք, թե նրանք քանիսն էին) այժմ

ունի 28 դավակներ ևս և սրանցից, այսինքն՝ թոռներից, առայժմ ևս տասներկու ծոռ։ Հետևաբար, նա իր պարտքը լիովին կատարել է հայրենիքի հանդեպ և հիմա արդեն հանգիստ խղճով (իր խոսքերն են) ամեն րոպե կարող է մտնել «խաչքարի տակ»։

Այս ամենից մի քանի օր անց իջանք Երևան, Նահապետի ընկերների մոտ։ Մի նկարչի արվեստանոցում ենք, կոնյակով և օղիով բեռնված սեղանի շուրջ։ Պետք է մեկ ուրիշ անգամ նկարագրեմ, թե ի՞նչ կա հայկական սեղանին, թեկուզև այն բացված է նկարչի արվեստանոցում։ Թե ի՞նչ տեսարան է ներկայացնում գունային և այլ տեսակետից, սկսած կանաչիների բազմազանությունից՝ սամիթ, կարոս, կանաչ սոխ, հազար, բողկ, ռեհան, դինձ, նեխուր, որոնք մատուցվում են հում, թել-թել. ամենադեղեցիկ և ամենաառողջարար խորտիկը։ Եվ վերջապես, այս ամբողջը նկարելով սեղանին, կրկին մի խաչքար ենք կերտում։

Այդ երեկո առաջին անգամ լսեցի մի զարմանալի հայ արվեստագետի մասին, որը մահացել է մի քանի տարի առաջ։ Ծնվել է այստեղ, Արևելյան Հայաստանում, սովորել և առաջին քայլերն արել է Թիֆլիսում, որտեղ և ցուցադրել է իր առաջին աշխատանքները, այնուհետև գնացել է Փարիզ, աշխատել է այդ ժամանակի Եվրոպայի մեծերի կողքին։ Նրա անունը շատ հայտնի է՝ Երվանդ Քոչար։ Եվրոպայում նա հայտնի է հատկապես իր ռելիեֆ նկարչությամբ, նկարչությամբ տարածության մեջ, պեյնտյուր դան լեսպաս։ Նրա գործերը այդ ժանրի լավագույն նմուշներ են և դրանցից կան Փարիզի ժամանակակից արվեստի թանգարանում։ Պատերազմից քիչ առաջ նա վերադառնում է Հայաստան և, ըստ երևույթին, անցել է կլիմայափոխվելու դժվարին մի փուլ։ Սակայն արվեստի լավան եռում էր նրա մեջ. նա պետք է նոր հուն բացեր իր համար. և դա գտավ քանդակագործության մեջ։ Քանդակագործությունը, արդեն, կար նրա արյան, նրա նկարչության մեջ։ Այդ երեկո մեր զրույցն սկսել էինք նրա երկու մեծ գործերի՝ Սասունցի Դավթի և Վարդան Մամիկոնյանի առիթով, որոնք կանգնած են Երևանի հրապարակներում։ Առաջինը հայերի Դիդենիս Ակրիտասն է, մյուսը՝ պատմական դեմք, Հերակլ կայսեր նման, այն պայքարում, որ 5-րդ դարում հայերը մղել էին պարսիկ Սասանյանների դեմ, վերապրելու համար։ Այս երկու բրոնզե հեծյալներն էլ, հատկա-

պես Դավիթը, թողնում են հանճարեղ արվեստագետի ձեռքից դուրս եկած գործի տպավորություն, մի հաղվագյուտ բանաստեղծի և ստեղծագործողի, որը կարող է ամեն ինչ ստեղծել, տալով գծին այնպիսի անակնկալ թեքումներ, որը քեզ իսկույն համոզում է իր ձեռքի ամենազորությանը, ինչպես գրվածքի ուժեղ մի հատվածում շատ հաճախ մեկ բառ, այն էլ շատ հասարակ, այնպես է մտնում, որ դառնում է լեզվի վրա անսովոր իշխանության մի նմուշ։ Փարիզում գտնված տարիներին իր հասուն շրջանում ստեղծած գործերից, եթե ճիշտ եմ նշել, Հայաստանում գտնվում է միայն մեկը։ Այն ցույց են տալիս ինձ մի ալբոմի մեջ։ Գործը կոչվում է համարյա այսպես. Արմատը և սերունդները։

Եվ ահա ձեզ մի օրինակ, թե ինչպես են հյուսվում նոր խաչքարերը։

Մերկ մի ծերունի պառկած է ոչխարի մորթու վրա, այնպես, ինչպես, ասենք, Հայկի ժամանակներում.

> «Փռեց գետնին տերևաշատ և հաստ ճյուղեր, որոնց վրա
> Մի hարայծի մորթի ծածկեց մեծածավալ ու բավամազ»։[1]

Նույնպիսի հնօրյա մի ծերունի է նաև թավ բեղ ու մորուքով այս մարդը, կենդանի այն ամենի մեջ, ինչ ինքը ցանել է և ծաղկել են իր հողում։ Առաջին պլանի վրա նրա ձեռքն է, ափը բաց, ինչպես արարող աղնիվ աշխատողի ձեռք։ Այս ափն է իր վրա վերցնում ամբողջ ծանրությունը, ինչպես հաղթանդամ մարզիկը մի թևի վրա օդում պահում է իր հինգ-վեց գործընկերներին, մի ողկույզ խաղողի նման։ Ձեռքից այն կողմ, սրունքների մեջտեղում ծվարած, երևում է խոփը, որով նա վարել է արտը։ Պառկած ծնողին ուղղահայաց բարձրանում են երկու երիտասարդ մարմիններ, տղամարդ և կին։ Բարեկազմության և մարդկային մարմնի գեղեցկության տեսակետից սրանք իրենց մեջ ամփոփում են աշխարհի բոլոր ուժեղ և գեղեցիկ մարմինները։ Նրանց մարմինները միանում են և կազմում մեկ ընդհանուր իրան, խաչի ուղղահայաց թևը։ Առավել լուսավոր ու մեղմ՝ կնոջ ճյուղը, առավել խիտ և մութ՝ տղամարդու բրոնզը։ Կնոջ գլուխը

[1] Հոմերոս, Ոդիսական, 14, 49—50։

թևքված է հորիզոնական դեպի աջ, կաղմելով խաչի մի թևը. մյուս թևը շարունակում է տղամարդու ուսը և ծալված արմունկը։ Նրանց միջև բարձրանում է խաչի գլուխը՝ համակ աչքեր ու հոնքեր տղամարդու դեղեցիկ դեմքը, և դրան կպած, ամբողջ բարձրությամբ, երեխայի արական մարմինը, նստած մոր շալակին, իր խոփիկն առաջին, իսկ ափերի մեջ մի աղավնյակ՝ գալիք ճյուղավորումների խոստումներով։ Գույները ևս խորհրդանշում են այս ամենը՝ կանաչավուն, սևավուն, կարմրավուն և ուրիշ գույներ, փոքր-ինչ առավել պայծառ, բոլորը տոգորված պղնձահուր մի արարչությամբ։ Նկարիչն այս գործը ստեղծելիս եղել է շուրջ 25 տարեկան։ Այդ ստեղծագործության առավել ճիշտ անվանումը կլինի՝ «Ծնող-սերունդներ»։

. . . . . .

Բայց ժամերն անցնում էին նկարչի տապանում, ինչպես ալիքները՝ ծովի մեջտեղում, անվերջ նավարկում էինք և ոչ մի տեղ չէինք հասնում. արդեն ամենուր ճանապարհորդել էինք և ամեն ինչ տեսանք սեղանի տախտամածից, ամեն ինչի առիթով կենացներ խմեցինք։

Բայց այստեղ այս ճանապարհորդություններից հեշտ չես պրծնի։

Հայերը հարուստ և լավ հումոր ունեն։ Դա նրանց ամենակարևոր արժանիքներից է և առանձնապես դրսևորվում է այսպիսի ուղևորությունների ընթացքում։ Երբ ճաշի են նստում իրենց բարեկամների հետ, սեղանը տեսնում են այնպես, ինչպես հմուտ վարպետը տեսնում է քարե սալը, որը պետք է ասեղնագործի։ Նրանք չեն հոգնում և շատ հնարամիտ են։ Նաև շատ հաճելի, որովհետև չեն համառում, բեռ չեն դառնում, ինչպես ուրիշները։ Քեզ առաջարկում են, որպեսզի դու ևս, եթե կամենաս, մասնակցես և այս խաչքարին մի ծաղիկ քանդակես։ Հայկի, Արայի և Շամիրամի կենացը խմելիս, հիշատակվեց նաև Պլատոնը։ Կա մի այսպիսի խնդիր։ Պլատոնն իր «Պոլիտեյա» գրքում ունի մի առասպել, նման Արայի և Շամիրամի մասին առասպելին, նրա հեթանոսական տեսքով, որտեղ Արան հարություն է առնում և վերադառնում է կյանք։ Այսպես է նաև Պլատոնի մոտ, որտեղ, սակայն, հերոսը կոչվում է Էռ և որդին է պամփյուլիացի Արմենիոսի։ Այսպիսով, երեք կենաց խմեցինք՝ Պլատոնի, Էռի և նրա ծնող Արմենիոսի։ Այնուհետև ասվեց հետևյալը. հայոց հնագույն թագավորներից մեկը, Տիգրանը,

մ. թ. ա. առաջին դարում մտածեց միաձուլել հունական և հայկական դիցարանները։ Նա վերցնում էր հունական արձանները և դրանք տաճարների միևնույն խորշում դնում էր համապատասխանող հայկական աստվածության հետ։ Հերակլեսին աստվածացնելով, նրան զետեղեց ռազմի աստված Վահագնի կողքին։ Քանի որ Վահագնը միաժամանակ արևի և կրակի աստվածն էր, մեկ այլ խորշում նրան զուգակցեց Ապոլոնին։ Բոլոր ճիշտ գաղափարների նման, Տիգրանի այս փորձը հետևորդներ չունեցավ, չշարունակվեց։ Այսօր այն շարունակեցինք մենք, միևնույն բաժակից խմելով Զևսի և Արամազդի, հետո՝ Անահիտի և Արտեմիսի կենացը. Հերմեսը կանգնեցվեց Տիրի կողքին, Աթենասը՝ Նանեի և Աստղիկը՝ Աֆրոդիտեի կողքին։ Վերադարձանք Հայկին, խմեցինք նաև Երվանդ Քոչարի և նրա նկարի անխոնջ ծերունու կենացը։ Այստեղ մենք ևս մի ծաղիկ քանդակեցինք, խոսելով մյուս ծերունու մասին, որն ապրում է ու ստեղծում Երևանում։ Դրանով փորձեցինք մի խաչքար հյուսել «Ծնողներ-սերունդներ» թեմայով։

Բանաստեղծուհի Գայանեն ասաց, թե իր տանը լավագույն խաչքարերի հիանալի լուսանկարներով արտակարգ ամերիկյան հրատարակություն ունի։ Այդ գիրքը հայտնի էր բոլորին, և բոլորը համաձայնվեցին, որ այն եղած հրատարակությունների մեջ լավագույնն է։

Բայց Վահեն, նկարիչը, որին պատկանում էր արվեստանոցը, ասաց.

— Ամենալավը ինձ մոտ է, այստեղ։

Նա զգուշությամբ դարակից վերցրեց մի երկար թղթապանակ, որի մեջ կային էսքիզներ և մի քանի լուսանկար՝ խաչքարեր և հին վանքերի մանրամասներ։

Ընտրեց մի լուսանկար։

Մի շատ հին խաչքար էր։ Միայն խաչը բռնել էր քարի ամբողջ մակերեսը, թողնելով բարակ մի շրջանակ։ Այդ շրջանակը կազմում են, շարունակելով իրենց պարզ խաղը, որթատունկի երկու ոստ, գծում են ամբողջ շրջանակը, բայց չորս կետում ամուր գրկվում են և, իրենց շփման ամենաջերմ կետում, նետում են մի քանի տերև և խաղողի ողկույզ։ Ջորս ողկույզ, յուրաքանչյուր կողմում մեկ հատ։ Եվ ուրիշ ոչինչ։

Խաչի չորս թևերը, բոլորը նույն մեծության, սկսում են կլո-

բրիկ սրտից և, լայնանալով, ծավալվում են դեպի եզրերը։ Այնտեղ բացվում և բաժանվում են աղեղնաձև եռանկյունիներ։ Ճիշտ այստեղ էլ նրանց մեջ քանդակված է ամեն մեկին համապատասխանող խաղողի ողկույզը։

Այս ամենը շատ համակրելի է իր պարզ գծերով և գաղափարով։ Այն շատ բնական եղանակով, որով թվում է, թե կենդանի ապրում են քարի վրա այդ տերևները, բարակ ոստերը, խաղողի հատիկները։

...Բոլորն սկսեցին ուշադիր դիտել։ Հավանեցին և գնահատեցին որպես մեծարժեք։ Ասվեց նաև, թե որտեղից է նկարված խաչքարը, որ վանքից։ Ասվեց նաև նրա թվագրման մասին։ Դատելով պարզությունից, համարեցին շատ հին։ Այս ամենի մասին մանրամասներ չեմ նշել։

Հանկարծ Վահեն խաչքարի թևերին քանդակված ողկույզների հատիկների վրա ցույց տվեց ինչ-որ բան և ասաց, որ դրանք դրեր են։

Այստեղից էլ սկսվեց այդ երեկոյի ամբողջ կարևորությունը։

Դրանք ի՞նչ դրեր կարող էին լինել և ի՞նչ էին նշանակում։

Վահեն, որ զբաղվել էր այդ առեղծվածով, ասաց, որ դրանք դեռևս ոչ ոք չի ընթերցել։ Եղել են տարբեր ենթադրություններ։ Ուսումնասիրողներից ոմանք ասել են, որ այդ խաչքարը վերաբերում է 6-րդ դարին և պնդել են, որ վրայի նշանները ցույց են տալիս հորիզոնի չորս կողմերը։ Հնագրագետները այդ չհաստատեցին։ Ուրիշներ դրանք կարդացել են այլ կերպ՝ կրակ, հող, օդ, ջուր. աշխարհի և կյանքի չորս տարրերը։ Այս համարվում է առավել հավանական և դարձել է քննարկման առարկա։ Բայց տարօրինակ է, որ հին փիլիսոփայություններից և կրոններից ծագող մի տեսակետ արձանագրված լինի խաչի վրա։ Բայց Վահեն ասաց. «Գուցեև բոլորովին քրիստոնեական խաչ չէ»։

Կա նաև մի բանաստեղծի կարծիքը։ Նա տալիս է մեկ այլ բացատրություն, նշանները կարդալով ոչ որպես բնագրագետ, այլ որպես պոետ, իր ներքին զգացողությամբ։ Նրա կարծիքով, այդ չորս բառերը հղչակում են հայոց ճակատագրի չորս նշանները, չորս կետերը։ Եվ Վահեն ասաց, թե որո՞նք են այդ չորս բառերը։

Դրանք ինձ այսպես բացատրեցին. «Ներքևում գրված է՝ Հիշողություն, իսկ վերևում՝ Հաց։ Խաչի մի թևի վրա՝ Տան, մյուս թևի վրա՝ Տաղ»։

Խնդրեցի Գայանեին, որ այդ բառերը իր ձեռքով գրի իմ ծոցատետրում լատինական տառերով այնպես, ինչպես հնչում են հայերեն և դրանք արտասանի դանդաղ, որպեսզի լսեմ և հասկանամ։

Դեռ այժմ էլ հնչում են ականջիս այնպես խորունկ ու մեղմ, ինչպես այդ երեկո նրա թավջութակի աղեղնակից.— Հիշողություն*, Հաց*, Տան*, Տաղ*։

Եվ սա այդ գեղեցիկ երեկոյի իմ շահն էր՝ այդ չորս ոսկեգրամը, որ ընդաց իմ քսակում։

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՄՏՈՐՈՒՄ*

5-րդ դարի պատմիչ Եղիշեի մոտ հայրենասեր Վաևոդ Սրեցը ջանում է հայ ռազմիկներին ոգևորել պարսիկների դեմ վճռական ճակատամարտից առաջ, ասելով.

> «Բոլորդ ևիշեցեք մեր առաջին հայրերին, որոնք նախկան Աստծու որդու ծնունդը (ապրել են) զանազան ժամանակներում»:

Մինչև այնտեղ է տանում հայը իր ազգային հիշողությունը, սկիզբների սկիզբը։

Հայերի բնության ու պատմության մեջ կան աղբյուրներ, որոնք անընդհատ ներշնչում են հավատարմություն հիշողությանը, հնագույն արարումներին։ Դա նրանց հոգեկան կլիմայի վրա իշխող զգացմունքն է, որը առաստրեն գունավորել է նրանց պատմությունը, նրանց արվեստը, նրանց հոգևոր մշակույթը, նույնիսկ հին ու ժամանակակից հայ հայրենասերի գործնական վերաբերմունքը։ Հպարտ և կենսունակ զգացմունք։ Շատ դեպքերում նաև տխուր։ Այսինքն, այդ զգացմունքն իր հպարտությամբ քաղցր է, բայց գլխավորապես տխուր, ինչպես այն երգը, որը երբեք թույլ չավին լրիվ երգել, և այն վերադառնում է երգչի հոգուն, դառնում հառաչանք, թաքնված գանգատ։ Հայը, որ գիտի և սիրում է իր պատմությունը, ուր էլ որ ապրելիս լինի, մտածում է այդ չասված երգերի մասին։ Նոր ժամանակների

նրանց լավագույն բանաստեղծներից մեկը, Ավետիք Իսահակյանը, որը, շատ երիտասարդ, բաժանեց թափառական հայի, Պանդուխտի ճակատագիրը և հիանալի երգեր է նվիրել դրան, իր հուշերում գրում է, որ Հայաստանը ուղեկցում էր իրեն ուր որ գնում էր.*

> «Հայաստանը ես միշտ և ճանապազ կրել եմ իմ ոգում: Նայել եմ Մոնբլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աբենիի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երերույքը և Հոխիսիմե տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց ճուզվել եմ մեր ժողովրդի երգով»:

Հայերի հիշողությունը մի տապան է, բնակեցված ցեղի սրբություններով և խարսխված հռչակավոր լեռան գագաթին։ Ջրհեղեղն այնտեղ շարունակվում է։

Նրանց բնության մեջ ապրում է նախասկզբնական մեկնարկի հիշողությունը։ Նրանց կյանքը, նույնիսկ մայրաքաղաք Երևանում, որն այսօր ժամանակակից արդյունաբերական խոշոր քաղաք է, չի կորցրել իր կապը բացօթյա աշխարհի հետ. հայերը չեն թողել, որ իրենց բնությունը ճմռթվի, նրանց սիրտը ցավում է, երբ որևէ մեկը վերք հասցնի բնությանը, որին տեսնում են ամեն օր, ապրում են, զրուցում նրա հետ։ Գուցե իրենց, հայերին, իմ այս խոսքը թվա չափազանցություն, գրոսաշրջիկային։ Բայց ես խոսում եմ իմ փորձի հիման վրա, իմ կատարած համեմատություններից ելնելով։ Կարծում եմ, որ հայկական բնությունը, բարեբախտաբար, ամենաղոր է այսօրվա Հայաստանի մտածող և արարող ոգու մեջ։ Նահապետը չի կարող մոռանալ, որ իր հայրը, մի կոշկակար Քոքինիայում, վերցնում էր իր երեխաներին ու կնոջը և գեռ լույսը չբացված, նրանց հետ բարձրանում էր Պենտելիի լանջերը։ Այնտեղ նստում էին և սպասում տեսնելու, թե ինչպե՞ս ծովից պետք է նորից ծնվի Վահագնը, նրանց ցեղի հնագույն աստվածը։ Հիմա գիտեմ, որ եթե այսօր նրանց երկրում ժամանակ առ ժամանակ արծարծվում է կրոնական զգացմունքը, դրա բացատրությունը գլխավորապես (գուցե կան նաև միլիոն ուրիշ պատճառներ) այն հատուկ փայլն է, այն հատուկ հաստատումը, որ կրոնը հաղորդում է հայոց պատմության հին և առանձնահատուկ լինելու մասին ըմբռնմանը։ Ես այդ նկատեցի այն ամենի մեջ, ինչ տեսնում էի և լսում։ Կարող եմ ասել, որ հայը գնում է եկեղեցի գլխավորա-

պես այն բանի համար, որպեսզի հավատարմություն հայտնի իր հայկականությանը...

Վերևում խոսել եմ այն ոգևորության մասին, որ գործում է հայկական լեռնային տեսարանը իր մեղմ գույներով, հանգիստ ռիթմով, իր մաքուր ուրվագծերով, այնպիսի մի լուսավորությամբ, որն իր մեջ ինչ-որ բան է պահում լուսարացից և ուղեկցվում է ներքին սպասումի ինչ-որ զգացումով։ Գրեթե ամենուր առաջին շփումը հիշեցնում է այն, ինչ գիտենք, ինչ լսել ենք բարձր և անմատչելի սարերի մասին։ Բայց այս կատարվում է շատ մեղմ ձևով։ Եվ շուտով գալիս է ու դրանք պարուրում է մի մշուշ և այդ ամենը դարձնում է շատ մատչելի։ Երկու հազար մետր բարձրություն ունեցող մի լեռան հետ, ասենք, ավելի հեշտ ես ընտելանում, քան ավելի ցածր մակարդակների վրա 100—200 մետր բարձրության քարքարուտների հետ։ Հեռավորի և բարձրի առաջին տպավորությունը հալվում է հաղորդակցման և բնականոն վայրէջքի համար մի փոխադարձ շարժման օգտին ներված առաջին իսկ նայվածքներից։

Մի գիշեր, կեսգիշերից շատ անց, այդ լեռներից մեկում գնացինք վայրի խոզ որսալու։ Նրա հետից էինք ընկել ջիպ մեքենայով։ Հիմա չեմ կարող որոշակի նկարագրել, թե այդ ինչպե՞ս պատահեց։ Ջեմ հիշում, թե ով առաջարկեց թողնել մեր սիրուն սեղանը 2800 մետր բարձրության վրա գտնվող մեր լեռնային ապաստարանում, ծաղկած Ծաղկաձորից վերև, որտեղ Սովետական Միության ամենաբարձրադիր գիշերային բարի տղաները, Վանիկն ու Վալիկը, անհավատալի վարպետությամբ մեկը մյուսի հետևից բացում էին շամպայնի շշերը. խցանները թռնում էին կարկուտի պես, բայց ոչ մի կաթիլ փրփուր չկորավ։ Ուրեմն, չեմ հիշում, թե ում գաղափարն էր՝ հանկարծ թողնել այս ամենը և նստել ջիպ մեքենա։ Մի խոսքով, գնացինք։ Ջիպը բակում կապված էր ցցին։ Արագ մտանք մեքենա, քանի որ ցուրտ էր։ Թեև օգոստոս ամիսն էր, և ներքևում քաղաքը այրվում էր։ Հիշում եմ Վանիկին, ջահել, ուշիմ, հաճելի մի երիտասարդ. նստեց և միացրեց մեքենայի շարժիչը։ Այդպես սկսվեց մեր գիշերային արշավը։ Գնում էինք հովիվների հոլիկները, շամպայն խմելուց հետո թարմ մածուն ուտելու, որպեսզի ցրվեր մեր ուղեղի գոլորշին. վերջում այդպես էլ եղավ։ Վայրի խոզը մի անակնկալ դիպված էր։ Նրան պատահեցինք քիչ այն կողմ։ Կուրացած ավտոմեքենայի լույսից, մի պահ կանգ առավ, դեպի մեզ

շրջելով գազանային ամենազարմացած մռութը, որը երբևիցե մարդ կարող է պատկերացնել։ Հետո իսկույն կռնակը դարձրեց մեզ և սկսեց վազել։ Վանիկը (ով իմանա ի՞նչ հին հեծյալի արյուն էր եռում նրա մեջ) ընկավ նրա հետից։ Ջանում էր անընդհատ լուսարձակների լույսի տակ պահել կենդանուն, և առջևից՝ խոզը, իսկ հետից՝ մենք, մի անհավատալի մրցավազք կատարեցինք սարերում, մինչև որ վարազը ծակամուտ եղավ ծառերի արանքում և փրկվեց. իսկ Վանիկը արգելակեց ուժեղ. արգելակները անհավատալի ոռնոցով կանգնեցրին մեքենան, ու փրկվեցինք նաև մենք։ Մյուս օրը համոզվեցինք, որ լրջորեն շեղվել էինք ճանապարհից, ընկնելով վտանգավոր արկածախնդրության մեջ, որից փրկվել էինք Վանիկի վարպետության, բայց և այն բանի շնորհիվ, որ, ինչպես ասել եմ, այստեղ լեռները քարքարոտ չեն, այլ խաղաղ, վստահ իրենց վրա, իրապես մեծահոգի լեռներ։ Այս ամենը՝ որպես փոքրիկ մի դրվագ, որին կարող եք հավատալ, եթե կամենում եք։

Վերադառնալով թեմային, ուզում եմ ասել, որ այս բարձրաբերձ, սակայն խաղաղ լանջերում, այս անանցանելի գագաթներում, այս անդորր երկարուկ գոյացումներում, որոնք քեզ ևս մղում են նման մի արարքի, բնության կուսականության մեջ շեշտված են նախասկզբնական մեկնարկի ակնարկությունները, ու թվում է, որ այս հանգամանքը ներգործում է զգացողության, ենթագիտակցության վրա, ծնում է գաղափարներ, երազներ, պատվասիրություններ, որոնք դարավոր պատմական կյանքի իրարահաջորդ հերքումների մեջ, բնական է, որ դառնային մըշտական վերքեր, մատնված երազներ, որոնք, այսուհանդերձ, չեն դադարում գոյություն ունենալուց։ Եվ այս ամենը մտնում է հայի ազգային գույնի մեջ որպես գլխավոր գաղափար։

Այս գաղափարն է փնտրում գտնելու հայը իր պատմության մեջ։ Գեղեցիկ մատուռը, պահպանված 6-րդ կամ 10-րդ դարից, հելլենական ոճի հնագույն տաճարը Գառնիում, հին ամրոցի ավերակները, հնագույն Ավետարանը, մեկ այլ մագաղաթ, այս ամենը նման են այդ բարձր սարին իր լեզենդներով, հուշարձաններ, որոնք փաստարկում են այս գաղափարը իր բազմադարյա հոլովույթի մեջ, հաստատում են նրա անաղարտությունը, նրա հնագույն ծագումը, նրա իրավունքները այսօրվա և վաղվա նկատմամբ։ Հաստատում են այս ամենը և ամեն օր զարթնեցնում դրանք։ Թույլ չեն տալիս, որ հեշտությամբ նահանջի հիշողության

իշխանությունը և ռոմանտիկ հավատարմության ոգին, որը կարող է արտահայտվել նաև որոշ չափազանցություններով, բայց անժխտելի է նրա կենարար ազդեցությունը մտածողության և, հատկապես, արվեստի վրա։ Հայ արվեստագետները, ուշիմ մի ցեղի աշխատողներ և նրա արտահայտիչներ, չեն կարող շփման մեջ չլինել ժամանակակից հոսանքների հետ, որոնք փչում են իրենց հայրենիքից շատ հեռու։ Այդ ուղղությամբ էլ նրանք պարզ գրույց ունեն։ Այս բանը հեշտ է տեսնել, մտնելով որևէ աշխատանոց, ժամանակակից թանգարան, կարդալով մի լավ բանաստեղծություն, մի լավ արձակ գրվածք։ Շատ անգամ, երբ գիտողը քիչ թե շատ նախապատրաստված է, դժվար չի լինում ինչ-որ ազդեցություններ շոշափելը, սկզբնօրինակներ նշելը։ Այս բոլորով հանդերձ, հայ ստեղծագործողները մնում են իրենց ազգային կլիմայի մեջ, պահպանում նրա նկարագիրը և, ընդհանրապես գնահատելով, հիացմունքի են արժանի իրենց ազգային կայունությամբ և հավատով։ Հնամենի Հայաստանը ապրում է լիարյուն կյանքով, այսօրվա արվեստով, միաժամանակ բավական առաջընթաց ապրելով ժամանակակից առաջնահերթ հետաքրքրությունների բնագավառում։

Մի քանի տարի առաջ մահացել է երիտասարդ նկարիչ Մինաս Ավետիսյանը։ Նրա մասին էլ լսեցի Նահապետից և ուրիշներից՝ «Մեծ հույսեր էինք կապում»։ Ինձ վրա մեծ տպավորություն գործեց, ինչպես և ուրիշ անգամ, երբ լսել էի վաղաժամ մահացած երիտասարդ ճարտարապետի և դարձյալ երիտասարդ հասակում մահացած օժտված բանաստեղծի մասին։ Ջեն խոսում որպես ընկերներ կամ արվեստագետների նույն խմբին պատկանող մարդիկ։ Խոսում են իրենց ազգի անունից, և երբ լսում ես այդ ամենը կրկին ու կրկին, քեզ վրա մեծ տպավորություն են գործում իրենց ստեղծագործական մտածողությամբ և հոգեկան կլիմայով։ Նրանք գույն ունենան, ապահովաբար ունեն, իրար բաժանող շատ բաներ, անձնական և ուրիշ, այսուհանդերձ, տարբեր առիթներով համոզվում ես, թե ինչքան զարգացած է նրանց հավաքական ղգացմունքը այն ամենի հանդեպ, ինչ առնչվում է իրենց երկրին, իրենց ազգային ժառանգության, իրենց ապագային իբրև քաղաքակրթություն, լեզու և ազգ։ Ու մենք չգիտենք ավելի մոլեռանդ մի մթնոլորտ, քան այն, որը ստեղծագործողին դնում է հնարավորին չափ բնդարձակ տարա-

ծության մեջ, դրդելով նրան հաղորդակից դառնալու մեծ ղգացմունքների և մեծ հարցերի, դուրս գալու սահմանափակվածությունից և ջանալու խոսել, ունենալով ազգային առավել ընդհանուր մի ըմբռնում. մի բան, որը ինքնաբերաբար նրան առավել մոտեցնում է համամարդկայինի, այսինքն՝ մարդկայինի։

Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում Ավետիսյանի գործերը զբաղեցնում են մի ամբողջ սրահ։ Նա այնքան երիտասարդ էր և բոլորը նրան կոչում էին իր անունով՝ Մինաս, Մինասի նկարները. այժմ էլ՝ Մինասի մահը։

Ուզում եմ ձեզ ներկայացնել նրա գործերից մեկը։ Այս գլուխը վերնագրելիս օգտագործել եմ նրա կտավի անվանումը։ Մտորում* նշանակում է՝ մտածել, մտածմունք, խորհրդածություն։ Կարող է նաև նշանակել հիշողություն և խորհրդածություն մարդու ապրած կյանքի մասին կամ այն կյանքի, որ նա ուզեցել է ապրել։ Մի սենյակ, մի սեղան, երեք մարդ։ Ձախում մայրն է, աջում՝ ամուսնական զույգը, երիտասարդ հայրը և նրա կինը։ Նրանց առաջ, սեղանի սպիտակ ծածկոցի վրա, արտացոլված են կապտավուն, նարնջագույն, դեղնավուն և այլ վառ գույներ։ Այդ գույների աղբյուրները պատերին են, լուսամուտներում, դրանց վարագույրներում, տարեց հայուհու գոգնոցում և գլխաշորում, տղամարդու սև մորուքի մեջ, կնոջ, այդ նկարած Տիրամոր սև մազերի, սև հոնքերի մեջ։ Այդ գույները կան նաև կտավից դուրս, Հայաստանի սարերում և դաշտերում, նրա երկնքում և ջրերում, ամբողջ բնության և հիշողության մեջ, կան նրա ճակատագրում։

Ու քանի որ այդ կնոջը անվանեցի Տիրամայր, լրացնեմ նշելով, որ Ավետիսյանի և շատ ուրիշ երիտասարդ նկարիչների ստեղծագործությանը բնորոշ է նոր ըմբռնումները ավանդականի հետ միաձուլելու ձգտումը. այն արտահայտվում է ինչպես գաղափարների, այնպես էլ բազում մանրամասների մեջ, այն միջոցների մեջ, որոնցով կերտում են, ջանալով անհրաժեշտ վերացարկման մեջ չկորցնել կոնկրետը, շոշափելին, բայց և այս վերջինի մեջ կուլ չգնան, զոհաբերելով իրենց ազատությունը, այն ազատությունը, որը նրանց թույլ է տալու արտահայտվել անհատապես և բարձրանալ այնպիսի մակարդակի, որն անհրաժեշտ է արտահայտելու գործի խորությունն ու լայնությունը, նրա տարողունակությունը։ Կնոջը անվանեցի Տիրամայր, նկատի ունենալով բոլոր վերևում ասվածները. այսինքն, այն պատ-

ճառով, որ ինքը նկարիչը թվում է, թե գտել է իր գլխավոր լուծումներից մեկը նոր արվեստի համար շատ թանկագին հնագույն սրբանկարչության փորձի մեջ. սրբանկարչություն, որն իր գաղափարներով և շատ մանրամասներով օգնում է, որպեսզի կանգնես մի բարձունքի վրա, առանց կորցնելու ոչ ինքդ քեզ, ոչ էլ քո առարկան. համարյա ինչպես որ ամենակալն ինչ-որ հեռավորությամբ ետ է քաշվում, որտեղից և՛ ինքը կարող է տեսնել, և՛ իրեն կարող են տեսնել: Ընթերցողը Ավետիսյանի գործը կարող է տեսնել, բացելով դիրքը: Հնարավոր է, որ այս երեք դեմքերը շատ են շոշափելի: Տղամարդը, հավանաբար, ինքը արվեստագետն է, կինը՝ իր իսկական կինը, նույնպես նաև նրա մայրը: Այդ նույնացումը չի բացառվում, բայց և չի ընդգծվում. պահերն այնպես են ընտրված, որ տեսանելի, հասկանալի լինի ճշմարիտ մեկնարկը, միաժամանակ և շեշտվի փիլիսոփայական ավարտը, այն ամբողջ ուղին, որ գծում է հիշողությունը և մտածողությունը, ուղենալով թելադրել ինչ-որ զգացմունք և կամ կյանքի մի կանգառ: Սկիզբը կատարվում է առարկայի մի անմիջական բնութագրումով: Մարդիկ և իրերը չեն լուծվում, պահպանում են իրենց նյութականությունը և անհատականությունը: Բայց դրա վրա կանգ չենք առնում: Զգացմունքների և մտորումների աշխարհում նկարչական մակերևույթի հետ զգացական ու հոգևոր մխրճման համոզիչ մի համադրման միջով առաջանում ենք դեպի այսօրվա մարդու հոգեկան աշխարհը, մարդու, որը նույնքան այսօրվա է, ինչքան և մշտական: Այս գործի մանրամասները շատ են ուսումնասիրված: Դրանք պատկերում են և խորհրդանշում: Ուշադիր դիտում ենք պառավ մոր ետևում գրանվող լուսամուտը, և մյուսը, ավելի լուսավորը, երիտասարդների ետևում: Տարեց կանացի դեմքը, նրա գույները, ուղիղ մեզ նայող նրա աչքերը, պառավ կնոջ ձեռքերը, գոգնոցի վրա դրած: Այս բոլորը տալիս են ինչ-որ ստատիկ վիճակի կամ հակադարձ, դեպի ետ շարժման գաղափարը: Մյուս երկու դեմքերի նայվածքները հղում են այնտեղ մոտիկ հոսող ինչ-որ բանի, որը մենք չենք տեսնում, անմիջականորեն չենք հաղորդակցվում նրան, բայց զգում ենք, որ այս դեպքում այն շատ կարևոր դեր է խաղում, իշխում է այս ամբողջ տեսարանի վրա և առաջանում է դեպի մեր կողմը: Նկարի թեման այստեղ դրա մեջ է՝ հոսող ժամանակը, հիշողությունը և մտորումը: Կանացի երկու դեմք շրջանակում են տղամարդուն, ընդգծելով կենտրոնական գաղա-

փարը այդ շարժման, որը ամբողջանում է տղամարդու դեմքի վրա, պատրաստ այլ որակների համար, ինչպես ճարդ վեր է կենում աթոռից անելու այն, ինչ մտածել է ու որոշել: Այս տեսակետից տղամարդն այնքան կենդանի է, այնպիսի խտությամբ բնութագրված, որ մեկնաբանելու փորձերը կարող են ծնել բազմաթիվ պատմություններ և էջեր: Բայց կա ևս մեկ այլ, առավել նշանակալից պահ, որը զբաղեցնում է կենտրոնական տեղը՝ դառարկ տարածությունը տղամարդու և նրա մոր միջև: Այն անձնավորությունը, որ պետք է այնտեղ նստեր, բացակայում է: Նրա տեղը զբաղեցնում է դեղին վարագույրը, վրան ինչ-որ կարմրավուն խոռվք: Հենց այս դատարկությունն իր թեթև շարժումով կենդանացնում է հիշողությունը, գունային և ֆունկցիոնալ առումով, մյուսների կեցվածքը լռելյայն հղում է դատարկ տեղին: Երեք քրմերի նման այս մարդիկ մի կողմ են քաշվել և սպասում են, որ ինչ-որ բան հայտնվի և լցնի դատարկ տեղը: Դա մի սրբազան պահ է, նման այն պահին, երբ հավատացյալը սպասում է սրբության հայտնվելուն: Այս սպասումը նրանց ստատիկությանը տալիս է խորը ներքին ուժ և լարում, և մեզ ևս հրավիրում է մասնակցելու: Այս հույսով են իրար հետ միացած դեմքերը և իրերը, մեր մտքերի և զգացմունքների մեջ իմաստ և արժեքավորում ստանալու ակնկալությամբ:

Մինաս Ավետիսյանի այս գործի նման գործերը կարող են երևան գալ այնպիսի մի բարոյական և հոգևոր կլիմայում, որը հորդել է հիշողություններից և պահանջում է նրանցից, ովքեր արտահայտում են ազգային ոգին, իրենց անհատական ոգորումների միջից ելք տալ այս համընդհանուր կարիքին:

ՆԱԻՐԻ

Նաիրի կնշանակի՝ Գետակների երկիր: Այս անվանումը ևս հանդիպում է հնագույն պատմության մեջ շատ ուրիշ անվանումների հետ, ինչպիսիք և Հայաստանը, որը այսօր էլ իրենք հայերը օգտագործում են և նշանակում է՝ Հայկի երկիր: Բնակիչները կոչվում էին Թորգոմյաններ, Թորգոմի անունից, որը Նոյի որդի Հաբեթի չորրորդ սերունդն էր: Հեթերը երկիրը անվանել են Հայասա, վրացիները՝ Սոմխեթի, աքադացիները՝ Արմանի և Նաիրի, բայց և Ուրաշտու (բաբելոնյան բարբառում՝ Ուրաշտու), պարսիկները՝ Արմինա, հույները՝ Արմենիա, ուրիշներն էլ այլ կերպ: Հաստատ չէ, որ այս բոլոր անվանումները արտահայտում

են նույն երկիրը և նույն ժողովրդին։ Տարբերվում են անվանումները, տարբերվում են նաև դրանց օգտագործման ժամանակները։ Ընդհանրապես, բազմանունությունը ցուցանիշներից մեկն է այն շփոթի, որը գոյություն ունի հայերի ծագման և նրանց առաջին պատմական քայլերի շուրջ։

Հատատան այն է, որ խոսքը վերաբերում է այդ տարածքի հնագույն ժողովուրդներից մեկին։ Իր բազմադարյա դաժան պատմության մեջ նա կարողացավ վերապրել և ստեղծել իր սեփական քաղաքակրթությունը, բերել իր սեփական գույնը ցեղերի և ազգերի պատմության մեջ։

Այնուհետև գիտենք, որ արդեն ինքը, հատատաված Հայաստան անունը ևս շատ անգամ բաժան-բաժան է եղել իր իսկ երկրի նման, և նույնիսկ նորագույն պատմության համար հեշտ չէ ասել, թե ինչն ինչոց է այսքան շատ բաժանումների և անվանումների մեջ։ Պատմության մեջ կա Մեծ Հայք և Փոքր Հայք, Արևելյան և Արևմտյան Հայաստան, Բարձր Հայք, Ներքին Հայք, Սատրապական Հայաստան, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք։ Բյուզանդական պատմության մեջ կա նաև Արմենիակոն թեմը, որը մեր պատմագրության վերջին շրջանում պատահում է նաև Արմենիակների թեմ անունով, կարծես թե այն մեկ ուրիշ ցեղի, ուրիշ ժողովրդի վերաբերվեր։ Եվ շատ ուրիշ բաներ, ուստիև բազմաթիվ են պատմաբանների, լեզվաբանների և առավել ժամանակակից մարդաբանների պաշտպանած տեսակետները հայերի ծագման մասին։

Հատատը դարձյալ այն է, որ մեծ խաչի վրա, որը հյուսիսից կազմում է Կովկասյան լեռնաշղթան, Կասպից և Սև ծովերի միջև, արևմուտքից՝ Փոքր Ասիան, հարավից՝ Միջագետքն ու Մերձավոր Արևելքը, և արևելքից՝ Իրանը, այս հսկա խաչքարի ուղիղ կենտրոնում ապրել և հազար անգամ խաչվել է հայոց ցեղը, որը շարունակում է ապրել, քաղաքական գործիչների և գիտնականների առաջ դնելով միևնույն հարցերը, մինչև որ դրանք լուծվեն մարդկային ձևով։

Պատմվում է այս տարածքի վրա մ.թ.ա. 6-րդ դարի հայկական թագավորության մասին, որը եղել է մարերի դաշնակիցը։ Հետագայում, սակայն, մարերը նվաճել են Արմենիան, ստիպելով հպատակության հարկ վճարել։ Այնուհետև Կյուրոսը տապալեց մարերի թագավորությունը և հիմնեց իր պետությունը, պարսիկ Աքեմենյանների մեծ թագավորությունը, իր հպատակների թվում ներգրավելով նաև արմեններին։ Նա Դարեհ Վշտասպյանի երեքլեզվյա երկար արձանագրությունը, որտեղ պարզ կերպով գրված է արմենների անունը։ Այս հույժ կարևոր վկայագիրը, հայտնաբերված լինելով պարսկական այժմյան Բեհիսթուն վայրի մոտ, կոչվում է «Բեհիսթունի արձանագրություն»։ Այն ժայռի վրա փորագրել են մ. թ. ա. շուրջ 520 թ. հին պարսկերեն, էլամերեն և աքադերեն։ Էլամացիները ապրելիս են եղել Պարսից ծոցից հյուսիս-արևելք, էլամերենը պարսկական պետության պաշտոնական լեզուն էր։ Բայց իրենց պաշտոնական բոլոր գրությունները պարսիկները ջանում էին ապահովագրել գոնե ևս մեկ այլ լեզվով, սովորաբար աքադերենով, և հանուն վարկի, օգտագործում էին նաև իրենց հին լեզուն։ Դարեհն իր այս արձանագրության մեջ պատմում է իր գահակալության առաջին տարիներին մի շարք հպատակ ժողովուրդների բարձրացրած ապստամբությունների մասին, թե ինչպես այդ շարժումները նա խեղդել է արյան մեջ, պահպանելով իր մեծ տերության ամբողջականությունը։ Իմիջիայլոց նա խոսում է նաև Արմենների բարձրացրած հաջորդական ապստամբությունների մասին։ Ահա թե այդ դեպքերից մեկի մասին ինչ է ասում.

> «Խոսում է Դարեհ թագավորը.— Դադարշիշ անունով հային, իմ սատրապին ես ուղարկեցի Արմինա։ Ես նրան այսպես ասացի— Գնա և կոտորիր ապստամբ զորին, որն իրեն իմը չի համարում։ Դրանից հետո Դադարշիշը մեկնեց։ Երբ նա եկավ Արմինա, ապստամբները համախմբվեցին և դուրս եկան Դադարշիշի դեմ նակատամարտ տալու։ Արմինայի Զուզախիա վայրում նրանք նակատամարտ տվեցին։ Աննուրամազդան ինձ օգնեց։ Շնորհիվ Աննուրամազդայի, իմ զորը գլխովին ջախջախեց ապստամբ զորին։ Թուրահավարա ամսի ութերորդ օրը (ապրիլի 19, 521 թ.) նրանք նակատամարտ տվեցին»։

Ուրիշ նման ապստամբություններ էլ են եղել, որոնք նույնպես նկարագրում է արքայից արքան գոհունակությամբ և պարծանքով, մինչև որ Ահուրամազդայի և իր զորավարների (որոնց թվում կային նաև արմեններ) օգնությամբ, զինքի ուժով պարտադրեց նրանց խմբվել իր գահի շուրջ, իր մականի տակ։

Ըստ երևույթին, արմեն աղնվականները և առաջնորդները, նախարարները, պահպանում էին իրենց իշխանությունը և փոքր թագավորությունները, վճարելով ամենամյա հարկ՝ ոսկով, ինչպես նաև տրամադրելով ձիեր՝ պարսկական հեծելազորի համար։ Այս մեծ օջախների թվում առանձնացավ Երվանդունի (Երվանդ, մեր պատմագրության մեջ՝ Օրոնտես) տոհմը, որն, ըստ էության, ինչ-որ ընդմիջումներով, թագավորեց Հայաստանում մինչև Մեծն Ալեքսանդրը և Սելևկյանները։ Նրանց անունը մնացել է իրենց թագավորության մեջ կառուցած քաղաք-ամրոցների վրա՝ Երվանդաշատ, Երվանդակերտ, Երվանդավան։ Այս Երվանդունի թագավորներից, այսինքն՝ պարսից սատրապներից մեկը, Օրոնտեսը, Արտաշուրասի որդին, կառավարում էր երկիրը այն ժամանակ, երբ այս տեղերով, վերադառնալով Միջագետքից, անցել էր Քսենոփոնը իր բյուրի հետ։ Այդ ժամանակներից էլ Հայաստանը բաժանվեց երկու խոշոր մասերի՝ արևելյանի և արևմտյանի։ Վերջինիս, որը գտնվում էր Եփրատ գետից արևմուտք, տիրում էր մեկ ուրիշ սատրապ՝ Տիրիբազոսը, որը մոտ էր հոնիացիներին և, նրանց միջոցով, աթենացիներին ու սպարտացիներին, և գործուն մասնակցություն էր ունենում Արևելքի հետ նրանց ունեցած սիրախաղերին։ Այդ ժամանակներից ի վեր Արևմտյան, և ավելի փոքր, Հայաստանը գտնվում է մեր հին պատմության սահմաններին, շատ հաճախ նույնիսկ նրա բուն պատմության մեջ...

Սա է հայերի պատմության հնագույն շրջանի մասին տեսակետներից մեկը, ավանդականը։ Այն երկար տարիների ճանաչում ունի, բայց հետզհետե արդեն չի բավարարում իրենց իսկ հայերին։ Եվ իրավամբ, քանի որ դա նրանց պատմությունից հանում է մի մեծ ժամանակահատված։ Գուցե մեկ կամ երկու հազարամյակ։ Կա նաև մեկ ուրիշ, առավել կարևոր պատճառ. այն դուրս է նետում հայկական գրույցները։ Պատմությունն առանց գրույցների նույնն է, ինչ ծառը առանց արմատների, առանց իր ննջահողի։ Նա զրկված է լինում նոր հետազոտությունների և մեկնությունների համար վերադարձի հնարավորությունից։ Մի տեսակ պատմություն է առանց ապագայի։

Հայերի մեծ պատմիչ Մովսես Խորենացին երբ նստեց գրելու իր «Հայոց պատմությունը», շատ մտածեց իրենց ազգային գրույցների հարցի վրա։ Լինելով զարգացած մարդ, սուր մտքով և պատմաբանի կազմակերպված գիտակցությամբ, նա մեծ կարևորություն տվեց հին պատկերացումներին։ Ջանաց այդ բոլորը հավաքել ժողովրդական երգերից և պատումներից, դրանք մշակեց, որոնք և կազմեցին ճիշտ այն հողը, որի վրա նա կերտեց իր երկը։ Ինքը միշտ չէ որ այդ ամենին հավատում էր։ Երբեմն, հին հերոսների ահռելի հատկությունների և նրանց սխրանքների մասին հավաքած գրույցները պատմելիս դրանք քննարկում է, դիմելով այն անձին, երկրի իշխաններից մեկին, որին ձոնել էր իր գրվածքը. «Ոհ, չափազանց առասպել է այս»։ Բայց և արձանագրում է այն, զգում է դրա կարիքը։

Գրույցները ցեղը կապում են բնության և պատմության հետ։ Տվյալ դեպքում՝ հայերին Արարատի և Նոյի տապանի հետ։ Թե նույնիսկ ավելի ուշ իրենք ինչ-որ տեղից են եկել, ի՞նչ առնչություն ունեն այդ ամենի հետ։ Մի խոսքով, խնդիրն այն է, որ պետք է բացատրվեն գլխավորապես երկու հարց. հնդեվրոպական ծագումը և ասիական արմատը։ Երկուսը դեռևս չեն համատեղվում մեկ ըմբռնման մեջ հնդեվրոպացիների, ինչպես նաև այդ երկրի մասին մեր ունեցած այսօրվա պատմական տվյալների հետ։

Ուրեմն, հակասավանդական ըմբռնման կողմնակիցները վերաքննության են դնում այն հարցը, թե որքանո՞վ են այդ տրվյալները դիմանում գիտական նորագույն քննություններին։ Հընդեվրոպական տեսության մեջ ճեղքեր են հայտնաբերվում, խոսք է լինում նոր տվյալների մասին, որոնք տապալում են քիչ թե շատ սրբագործված տեսակետները՝ հնդեվրոպացիների ընդհանուր հայրենիքի մասին, նրանց սփռման ժամանակի, նրանց տարածման ուղիների մասին։ Փաստարկները վերցնում են համեմատական լեզվաբանությունից։ Այս գիտության ընձեռած տվյալների հիման վրա առաջին հերթին հաստատվում է հայերենի հնդեվրոպական ծագումը, մի տեսակետ, որը վերջին տարիները որոշ ժամանակ վիճարկվել էր։ Քանի որ հայերենի տարբերությունը հնդեվրոպական մյուս լեզուներից մեծ է, հայտնվում է այն կարծիքը, թե հայերենի անջատումը ընդհանուր հնդեվրոպականից առաջնածին է, այսինքն, տեղի է ունեցել այն շրջանում, երբ բաժանվել են հնդեվրոպական հիմնական ճյուղերը, հելլենները, խեթերը, արիացիները, և այդ իրադարձությունը տեղավորվում է 5-րդ և 4-րդ հազարամյակների միջև։ Այնուհետև, հաստատվում է, որ հին շատ լեզուներ, որոնք մինչև վերջերս չէին համարվում հնդեվրոպական, պատկանում են այդ

մեծ ընտանիքին։ Այսպես, իմիջիայլոց, հնդեվրոպական ճանաչվեց նաև պելասգյան լեզուն, բայց հայերի մասին նոր տեսության մեջ ամենակարևորն այն է, որ հնդեվրոպական են համարվում Փոքր Ասիայի հին լեզուների մեծ մասը։ Այս նոր տվյալների հիման վրա Փոքր Ասիա է տեղափոխվում հնդեվրոպական կենտրոնը, ընդհանուր հայրենիքը։ Հօգուտ այս տեսակետի նրանք վկայաբերում են նաև մեծ թվով փոխառություններ հնդեվրոպական նախալեզվի և սեմական ժողովուրդների ու շումերների լեզվական հիմքից, որոնք բացահայտում են երկարատև շփումներ և ընդհանուր սահմաններ։ Այս տեսությունը հանգում է հայերի տեղաբնիկ լինելու ճանաչմանը։ Ուրեմն, հնդեվրոպացիները իրենց հետագա հայրենիքները փոխադրվել են ոչ թե Բալթյան երկրներից, Կարպատներից կամ Եվրոպայի ուրիշ երկրներից, այլ Փոքր Ասիայից՝ Կովկասի վրայով և կամ էգեյան ծովով, ինչպես այդ արել են մեր հին նախնիները։ Այսինքն, այդ տեսությունը դիպչում է նաև մեր հնդեվրոպական հիմնաքարին, գլուխնիվար շրջելով ցարդ եղած կարծիքները։ Օրինակի համար, Աքիյավացի մեծ պետությունը ստեղծել են ոչ թե Պելոպոննեսոսից Փոքր Ասիա անցած աքայացիները, այլ իրենք աքիյավացիներն են իրենց փոքրիկ նավերով ճեղքել էգեյան ծովը և բնակեցրել մեր հունական երկիրը. այդ էլ թող ապացուցվի։

Բայց ինչքան անկայուն և տագնապալից են հնդեվրոպական հին և նոր տեսությունները, այնքան որոշակի և համոզիչ են հակաավանդական տեսության կողմնակիցները, երբ խոսում են իրենց երկրի հին պատմականության մասին։ Մի մեծ առեղծված էր և է նաև Ուրարտու թագավորությունը։ Նրա գոյությունը հիշատակված է այն ամենով, ինչ իրենցից հետո թողել են հնագույն պետությունները։ Նրա մայրաքաղաքը Տուշպան էր (Թոսպիս), Վանա լճի ափին, որից առաջացել է թագավորության Բիայնա կամ Բիայնիլի երկրորդ անվանումը։ Այս պետության թագավորների կառուցած մեծ ամրոցներից մեկն էր էրեբունին, այսօրվա Երևանի սահմանների մեջ, մի բլրի վրա, որտեղ մի քանի տարի առաջ հայտնաբերվեցին դրա ավերակները, ինչպես նաև այն արձանագրությունը, որը փորագրել է ամրոցի հիմնադիր Արգիշտի թագավորը։ Այդ արձանագրությունը պատմում է, որ Խալդի աստծու կամքով Արգիշտի թագավորը, Մենուայի որդին,

կառուցեց բերդը և անվանեց էրեբունի, ի փառս Բիայնիլի թագավորության և ի սարսափ Թշնամյաց։ Բերդը կառուցվել է մ. թ. ա. 782 թ.։ Այդ տարին էլ համարվում է Երևանի հիմնադրման տարեթիվը։

Ասորեստանյան աղբյուրների համաձայն Ուրարտուի թագավորությունը 9-րդ և 8-րդ դարերում հասավ իր զարգացման բարձր մակարդակին։ Նույն աղբյուրները խոսում են ասորեստանցիների հետ գոյություն ունեցած երկարատև հակամարտությունների և պատերազմների կամ խաղաղ դադարների, բարեկամության և գործակցության մասին։ Այնուամենայնիվ, թվում է, որ ասորեստանցիները, հատկապես Սարգոն Բ-ն, ծանր հարվածներ հասցրին Ուրարտուին։ Սարգոնը 714 թ. ներխուժեց Ուրարտու և մեծ ավերածություններ գործեց։ Այդ արշավանքներից մեկի ժամանակ նա բնաջնջեց նաև ուրարտացիների մի հին տաճար ու հետո, վերադառնալով Նինվե, կարգադրեց իր արվեստագետներին, իր այլ սխրանքների հետ միասին, այն ևս նկարել։ Այդ տաճարը հին հունական տաճարի կատարյալ նմուշ է՝ եռանկյունի ճակատոնով և վեց սյուներով։ Այնքան մեծ է նրա նմանությունը Պարթենոնի հետ, որ Նահապետը չհամբերեց և ասաց. «Ահա թե որտեղից եք վերցրել»։

6-րդ դարի սկզբին, շուրջ 580 թ., այս թագավորությունը դադարում է գոյություն ունենալուց և, ինչպես ասացինք, Ուրարտու երկրին փոխարինում է Արմենիա երկիրը։

Այդ անվանումը տարածված էր աքադացիների, հատկապես բաբելոնացիների մոտ և, ակներևաբար, Արարատ անվան պես բաբելոնացիների մոտ և, ակներևաբար, Արարատ աղավաղումն է։ Դրա ճիշտ անվանումը պիտի լիներ՝ Արարատյան թագավորություն, ինչպես և կա Հին կտակարանում (Երեմիա, 51, 27)։ Հավաստվում է նաև հետևյալ անհամեմատ առավել կարևորը. երեքլեզվյա կամ երկլեզվյա հին արձանագրություններում աքադյան Ուրարտուին կամ Ուրաշտուին համապատասխանում է մյուս լեզուների Արմինան կամ Արմանին, և այն էլ առավել հին արձանագրություններում, քան Բեհիստունինն է, որտեղ աքադական Ուրարտայի դիմաց էլամերենն ունի՝ Հարմինուարա, իսկ հին պարսկերենը՝ Արմինիա։ Այս բոլորից հետո Նահապետը այսպես ձևակերպեց հայկական նոր բագուն տեսության եզրակացությունը.

— Այն 300 տարիները, որ գոյատևեց այդ թագավորությունը Վանա լճի շուրջ, ոչ այլ ինչ է, քան մեր պատմությունը մ. թ. ա.

9—6-րդ դարերում՝ Շուրջ 590 թ., ներքին սովորական երկպառակությունների հետևանքով, երկիրը կառավարող հին արքայատոհմը ընկավ և նրա փոխարեն բարձրացավ մեկ ուրիշ՝ նույնպես հայկական, Երվանդունի արքայատոհմը...

Այստեղ երկու տարակույս է ծագում՝

Ինչո՞ւ Հին Կտակարանում ոչ մի տեղ, որտեղ արտացոլված է ամբողջ երկրամասի այդ տարիների պատմությունը, չենք գտնում հայերի անունը։ Բայց նշենք, որ հին հույներին ևս չէինք հանդիպելու այնտեղ, եթե երկու-երեք անգամ Դանիելը և մեկ անգամ Հովելը հարկ չհամարեին մեզ հիշատակել։

Մյուս հարցը Վանի թագավորների թողած հնագույն արձանագրությունների լեզվի հարցն է։ Բոլորը աքադերեն են և մի այլ լեզվով, որը, անտարակույս, հայերենը չէ, այլ մեկ այլ լեզու՝ նոր խուրրիերենը, որը առավել մոտ է խեթերի լեզվին։ Տեսության կողմնակիցների՝ այս հարցին տված պատասխանը համոզիչ է. այն, թե ավելի ուշ ևս, երբ արդեն անվիճելի էր հայերի գերիշխանությունը երկրի քաղաքական կյանքում, պաշտոնական լեզուն դարձյալ երբեք չի եղել հայերենը։ Այն, առաջին տարիներին, արամերենն է, ապա հունարենը, իսկ ավելի ուշ՝ հունարենի հետ ասորերենը և լատիներենը։ Այսպես է եղել մինչև 5-րդ դարը, երբ հայերը ստեղծեցին իրենց գիրը։

Մ. թ. ա. 6-րդ դարից հետո հայոց պատմությունը գիտության համար արդեն առանձին հարցեր չի ներկայացնում։ Ալ. Մակեդոնացու տարիներին երևում է, որ հայերը ազատագրվեցին պարսիկներից, մինչդեռ արևմուտքում հայկական երկիրը կցվել էր հելլենական մեծ տերությանը։ Արևելյան Հայաստանն իր կենտրոնը տեղափոխում է Արաքսի հովիտը, Արմավիր (հին Արդիշատիխինիլի), իսկ հետագայում՝ Երվանդաշատ մայրաքաղաքով, Արաքսի ափին։ Հայկական տարածքում ձևավորվում են երեք գլխավոր նյարդակենտրոն կետեր, որոնք տարբեր ձևերով մասնակցում են քաղաքական և ռազմական այն բոլոր խաղերին, որ խաղացին Ալեքսանդր Մակեդոնացու հաջորդները, այնուհետև՝ հռոմայեցիները տեղական ցեղերի հետ։ Արևելյան Հայաստանը՝ Արաքսի հովիտով, Արևմտյան Հայաստանը և, ավելի հարավ, երկու փոքրիկ թագավորություններ՝ Կոմմագենեն և Սոփքը։ Արևմտյան Հայաստանը հաստատապես հետևեց արևմտյան կողմնորոշման՝ Սելևկյաններ, պոնտացիներ, հռոմայեցիներ, ավելի ուշ՝ բյուզանդացիներ։ Կոմմագենեն և Սոփքը տատանվում էին Սելևկյանների պետության և Արաքսի Հայաստանի միջև, քանի դեռ վերջինս պահպանում էր իր անկախությունը Անտիոքոսից և նրա հաջորդներից։ Գլխավորապես, սակայն, այս երկու սատրապությունները, որոնք ամբողջ այդ շրջանի հաղորդակցության և առևտրի կենտրոններ էին, մնում էին Սելևկյանների ձեռքում։

220 թ. Անտիոքոս 3-րդը նվաճեց նաև Արաքսի հովիտը, այս երկիրը միացրեց Վանա լճի շրջանի հետ և այնտեղ սատրապ նշանակեց հայ Արտաշեսին (Արտաքսիասին)։ Հետ այնու տեգոս կարգեց հայ Արտաշեսին (Արտաքսիասին)։ Հետ այնու այս ամբողջ իշխանությունն ստացավ Մեծ Հայք անվանումը։ Սոփքում Անտիոքոսը իշխանությունը հանձնեց սատրապ Զարեհին (Զարիադրիս)։ Այս երկու առաջնորդները, երբ Անտիոքոսի տերությունն սկսեց քայքայվել, բանակցեցին Հռոմայեցիների հետ և իրենց հայկական թագավորությունները հռոմեցիներին անկախ։

Արտաշեսը հայկական նոր՝ Արտաշեսյանների արքայատոհմի հիմնադիրն է։ Նա իր տերության սահմանները ընդարձակեց բոլոր ուղղություններով և հիմնեց նոր մայրաքաղաք՝ Արտաշատը, Արևելքի հելլենիստական փայլուն քաղաքներից մեկը։ Այսպես սկսվեց հայկական թագավորության նոր բարգավաճումը։ Նրա փառքը իր գագաթնակետին հասավ քիչ ուշ, Տիգրան 2-րդի, Արտաշեսի թոռան ժամանակ։ Հայկական թագավորության սահմանները Վրաստանի Կուր գետից հասան մինչև Պաղեստին, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով։ Իր ընդարձակ թագավորությունը կառավարել կարողանալու համար Տիգրանը կառուցեց Տիգրանակերտը՝ Տիգրիսի վերին հոսանքում։

Այս պետության բախտը վճռվեց նախ հռոմայեցիների և Մեծ Հայքից արևմուտք գտնվող Պոնտոսի թագավորության (Միհրդատ) ու այնուհետև՝ հռոմայեցիների և Մեծ Հայքից արևելք գտնվող հզոր պարթևների թագավորության մեծ հակամարտության ընթացքում։ Այս պատերազմների ժամանակ Լուկուլլոսը ավերեց Տիգրանակերտը և քիչ ուշ Պոմպեոսը հաղթական մտավ Արաքսի հովիտը և հասավ Տիգրանակերտի մատույցները։ Այնուհանդերձ, Տիգրանը մնաց իր գահին, որպես հռոմայեցիների հարկատու։ Պոմպեոսը նույնիսկ ընդունեց Տիգրանի՝ «արքայից արքա» տիտղոսը, որը նախապես ստիպված էին Տիգրանին զիջելու պարտված պարթևները։

Այս երկու հզոր ախոյանների արանքում խաղացվեց Արտաշեսյան արքայատոհմի վերջնարարը։ Մ. թ. ա. 53 թ. Կրասոսը Միջագետքի Խառան վայրում պարտություն կրեց պարթևներից։ Այնուհետև Տիգրանի որդի Արտավազդը Մեծ Հայքը հռչակեց անկախ և հռոմայեցիներից վերանվաճեց Փոքր Հայքն ու Ծոփքը։ Արտավազդը, ինչպես պատմում է Պլուտարքոսը, ստացել էր հելլենական կրթություն և հունարեն լեզվով գրել էր ճառեր, պատմական երկեր, նույնիսկ ողբերգություններ։ Հայտնի է նույնպես, որ նրա հոր արքունիքում ապրել և ուսուցանել էին հելլեն մտավորականներ Մետրոդորոսը, հռոմայեցիների երդվյալ թշնամին, և աթենացի Ամֆիկրատեսը։ Արտավազդի վախճանը ողբերգական էր։ 34 թվականին Անտոնիոսը, նախորդ տարի պարթևների դեմ ունեցած մի շատ անհաջող արշավանքից հետո, դարձյալ Ալեքսանդրիայից շարժվեց և ներխուժեց Հայաստան, պատժելու համար Արտավազդին, նրան համարելով ուխտադրուժ։ Մինչ նա մոտենում էր Արտաշատին, Արտավազդն ինքը ներկայացավ նրան։ Անտոնիոսը շղթայակապ արեց նրան ու տարավ Ալեքսանդրիա։ Ոսկե շղթաներով կապած, նրան որպես նվեր պարգևեց Կլեոպատրային։ Բայց Արտավազդը, երբ տրիումֆի ժամանակ նրան անց էին կացնում Կլեոպատրայի առաջով, հրաժարվեց երեսը շրջել դեպի Կլեոպատրան և հայտնել իր հպատակությունը։ Կլեոպատրան նրան նետեց բանտ և, երեք տարի անց, գլխատեց։

Արտաշեսյաններն իրենց թագավորությունն ավարտում են քրիստոնեական թվագրման առաջին տարում, երբ վերջին թագավոր Տիգրան 4-րդի կին Էրատոն հրաժարվեց Հայաստանի գահի վրա իր ունեցած իրավունքներից։

Հայկական թագավորությունն արդեն սերտ կապեր էր հաստատել պարթևների ազգակից թագավորության հետ, որտեղ գահակալում էր Արշակունիների մեծ արքայատոհմը։ Ուստի, պարթևները Հայաստանի գահին բարձրացրին իրենց զորավարներից մեկին, Վաղարշի եղբայր Տրդատ Ա-ին։ Հռոմայեցիները հակառակվեցին Տրդատի հռչակմանը, պատերազմ սկսեցին հայերի և պարթևների դեմ և 59 թվականին հիմնահատակ ավերեցին Արտաշատը։ Քիչ անց Տրդատը ստիպված եղավ պաշտոնական արարողությամբ Ներոնի անդրիի առաջ հանել իր թագը և այն հանձնել հռոմայեցիներին, պայմանով, որ ինքը կայսրը այդ թագը պետք է իր ձեռքով վերստին հանձնի Տրդատին։ Այդպես էլ կատարվեց 66 թվականին Հռոմում, մեծ տոնախմբությունների և հանդիսությունների ժամանակ։ Տրդատին ճամփու դնելով դեպի հայրենիք, Ներոնը նրան տրամադրեց նաև հսկայական զրամական միջոցներ, ինչպես նաև ճարտարապետներ ու վարպետներ, վերակառուցելու համար Արտաշատը, որը մի կարճ ժամանակ վերանվանվեց Ներոնիա։

Արշակունիները Հայաստանում թագավորեցին մինչև 5-րդ դարը։ Դա հին հայկական պետության, Մեծ Հայքի՝ որպես միասնական պետության, վերջին մեծ փուլն է։

Սկզբնական շրջանում դա մի թագավորություն է Հռոմից կախված, բայց հոգեպես պարթևներին դաշնակից։ Այս խոր բաժանումը պիտի ուղեկցի Հայաստանին իր պատմության ընթացքում։ Հռոմայեցիները կայազորներ են պահում հայկական հողում, նույնիսկ նոր, երկրորդ դարից, մայրաքաղաք Վաղարշապատում, որտեղ այսօր գտնվում է Էջմիածինը, հայերի եկեղեցական կենտրոնը։

Երկու մեծ իրադարձություններ վճռական դեր խաղացին հայ ժողովրդի այդ շրջանի պատմության մեջ և շատ բանով կանխորոշեցին նրա հետագա ճակատագիրը։ Դրանցից մեկը տարավ դեպի հայկական պետականության վերացումը։ Մյուսն օգնեց հայերին պահելու իրենց ազգային գաղափարը, իրենց լեզուն և ինքնագիտակցությունը։

3-րդ դարի սկզբներին (226 թ.) պարսիկ աղնվական Արտաշիր Պապականը Սասանի տոհմից, սպանեց պարթև թագավոր Արտավան 5-րդին և հաստատեց Սասանյանների արքայատոհմը։ Նրա նպատակն էր՝ վերականգնել Աքեմենյանների հին կայսրությունը, վերահաստատելով հին կրոնը, մազդեականությունը. մոգերին և ամբողջ հին կարգը։ Փոքր Ասիայի ժողովուրդների համար այդ նշանակում էր՝ պարսկական նոր խարազան։ Իմիջիայլոց, ղեպքերի այս նոր շրջադարձից սկսեց մեծապես տուժել նաև Փոքր Ասիայի հելլենականությունը։ Այդ մասին Պաժել նաև Փոքր Ասիայի հելլենականությունը։ Այդ մասին Պաուսանիոսը[1] գրում է. «Տեղի միջնաշխարհի հելլենականությունը նրանցից տուժեց այնքան և այնպես, ինչքան և ինչպես Փոքր Ասիայի ծովափին ու Հունական թերակղզին Եվրոպայում։ Նույն այդ ժամանակ տուժեցին հյուսիսային բարբարոսներից»։ Հայերը Արտաշիրի և նրա հաջորդների առաջին թիրախը դար-

[1] Նոր ժամանակների հույն խոշորագույն պատմարան (Ծ. թ.)։

ձան։ «Պարսից պատերազմ» էպիկական ցիկլում պահպանվել են այդ ծանր շրջանի մասին մի շարք վկայություններ։ Սկսվում են այդ ժողովրդի նոր տառապանքները. ժողովուրդ, որը հայտնվեց գայլի երախում, մինչդեռ մյուս կողմից ուներ մի դաշնակից (նախ՝ հռոմայեցիներին, ապա՝ բյուզանդացիներին), որը, քանի դեռ իրեն հզոր էր զգում, կարողանում էր ինչ-որ երաշխիք ապահովել պարսկական վտանգի դեմ. այսինքն՝ կարողանում էր Հայաստանը պահել իր բացարձակ հովանավորության տակ, իսկ իր թուլության շրջանում հոժար էր Հայաստանը բաժանել պարսիկների հետ և կամ նույնիսկ՝ զոհաբերել։

Արտաշիրի որդի Շապուհ Ա-ն, առանց հապաղելու, 252 թվականին նվաճեց Հայաստանը և հայկական գահին բարձրացրեց Արտավազդ 5-րդին, ստիպելով նրան ընդունել Սասանյանների դերիշխանությունը։ Սակայն քիչ անց Հայաստանը պիտի վերանվաճեր իր անկախությունը։

Այսպես է սկսում հյուսվել հայոց բաղմաչարչար պատմության շղթան։ Այս պայմաններում թագավորական իշխանությունը կորցրեց իր նախկին հմայքը, աշխուժացան մեծ տները՝ նախարարները, մի մասը հարելով պարսիկներին, մյուս մասը՝ հռոմայեցիներին։

Շուրջ մեկ դար հետո հռոմայեցիները համաձայնության եկան պարսից թագավոր Շապուհ 3-րդի հետ, և 387 թվականին Թեոդոսիոս Մեծը կնքեց Հայաստանի բաժանման պայմանագիրը։ Հռոմեական կայսրությունն ստացավ Հայաստանի արևմտյան մի քանի գավառները, մինչդեռ հայկական հողի մեծագույն մասը, գրեթե 3/4-րդը, վերցրեց Պարսկաստանը։ Հայոց Արշակ Գ թագավորը անցավ արևմտյան գավառները և շարունակեց թագավորել մինչև իր մահը։ Արևելյան հատվածում պարսիկները գահ նստեցրին Խոսրով Դ-ին, բայց հայ ավատատերերը նրան մեղադրեցին որպես հռոմայեցիների թաթուն բարեկամի, նրան հեռացրին և գահ բարձրացրին նրա եղբայր Վռամշապուհին։

Այս խելամիտ անձնավորությունը թագավորեց 389-ից մինչև 415-ը։ Մի քանի տարի նրան հաջորդեց նրա որդի Արտաշեսը։ Սրանով վերանում է Արշակունիների արքայատոհմը և հայկական թագավորությունը։

Հենց Վռամշապուհի թագավորության ժամանակ տեղի

ունեցավ երկրորդ խոշոր իրադարձությունը, որի մասին ակնարկեցինք վերևում՝ հայ գրերի գյուտը 405 թվականին։

Այս գլխում հիշատակված անուններից շատերը մնացել են ժողովրդի հիշողության և նրա բանաստեղծական ստեղծագործության մեջ։ Այստեղից դրանք քաղեցին հայ առաջին պատմիչները և հաղորդեցին իրենց, ինչպես իրենք են անվանում իրենց մատյանները, Պատմությունների միջոցով։

Պատմական դեմքերի և դեպքերի համապատասխանությունները միշտ չէ, որ ճշգրիտ են և դյուրընկալելի։ Ջրույցների և երգերի կերպարները մխրճվում են մեկը մյուսի մեջ, և հայկական ժողովրդական բանահյուսության ուսումնասիրողները դժվարանում են դրանք տարանջատել և պատմականորեն տեղադրել։ Գերիշխող կերպարներից մեկը Տրդատ Ա-ն է։ Հաճախ երգերում նրան կոչում են նախորդ արքայատոհմի առաջին թագավորի՝ Արտաշես Ա-ի անունով։ Ուրիշ անգամ նրա կերպարը շփոթվում է նույն անունը կրող հետագա թագավորների հետ։ Նա ականավոր կերպար է հին շրջանի բանահյուսության մեջ։ Տարբեր զրույցներ կան նրա սխրանքների, ինչպես նաև ալանների թագավորի դուստր գեղեցկուհի Սաթենիկի հետ նրա ամուսնության մասին։

Կա նաև հետևյալ պատումը, որը շատ գեղեցիկ արձանագրել է Խորենացին.[1]

> «Մի օր Սյունյաց Բակուր նահապետը (Տրդատ Բագրատունուն) ընթրիքի հրավիրեց։ Երբ գինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ մի կին, որ շատ գեղեցիկ էր ու երգում էր ձեռներով՝ անուրը Նազենիկ։ Տրդատը նրան ցանկացավ և ասաց Բակուրին. «Այդ վարձակն ինձ տուր»։ Նա պատասխանում է. «Չեմ տա, որովհետև իմ հարճն է»։ Իսկ Տրդատը բռնեց այդ կնոջը՝ իր մոտ հաշելով սեղանակիցների առաջ զգվում համբուրում էր նրան սիրահարված անգուսպ երիտասարդի նման։ Բակուրը խանդելով վեր կացավ, որ կնոջը նրա ձեռքից խլի։ Բայց Տրդատը ոտքի ելնելով, ծաղկամանն իբրև զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղանից վանեց։ Կարծես մի նոր Ոդիսևս էր առաջ եկել, որ կոտորում էր Պենելոպեի սիրեկան-

1 Այստեղ հեղինակը շփոթել է Տրդատ Բագրատունի իշխանին Տրդատ թագավորի հետ (Ծ. Բ.)։

ներին, կամ լապիթոսների և հուշկապարիկների կռիվ էր տեղի ունենում Պերիթոսի հարսանիքում: ...Բայց իսկապես ավելորդ էր պատմել այդ ցանկասեր մարդու հաջագործությունը»:

Նույն պատմիչի գրի առած մյուս զրույցներից է նաև արքայորդի Արտավազդի մասին զրույցը: Այս կերպարը, շատ հավանական է, պատկերում է նույնանուն թագավորին, որին պարսիկները նստեցրին հայկական գահին: Արտավազդի մասին Խորենացին արտահայտվում է մեծ արհամարհանքով.

«Բայց ուրիշ ոչ մի արիություն ու հաջագործություն ցույց չավեց, այլ անձնատուր լինելով կերուխումի, թափառում էր նախնախուտ տեղերում, եղեգնուտներում, հարափներում, վայրի էշեր և խոզեր հետապնդելով. անփույթ լինելով ուսման, հաջության և բարի հիշատակների, միայն իր փորի ծառան և ստրուկը դառնալով՝ աղբանոցներն էր մեծացնում»:

Զրույցը պատմում է նաև հետևյալը.

«Արտաշեսի մահվան ժամանակ հեթանոսական եռվորությամբ շատ կոտորածներ էին լինում. սրա վրա, ասում են, Արտավազդը եղանում է և ասում իր հորը.

«Երբ դու գնացիր,
Ու ամբողջ երկիրը ինձ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ո՞ւմ թագավորեմ»:

Սրա համար Արտաշեսը նրան անիծելով այսպես է ասում.

«Թե դու (ձի) հնծնես որսի գնաս
Ագռաւն ի վեր, դեպ Մասիս,
Քաջերը ինձ բռնեն տանեն
Ագռաւն ի վեր, դեպ Մասիս,
Այնտեղ մնաս, լույս չտեսնես»:

Պառավները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի հարանձավի մեջ երկաթե շղթաներով կապված, երկու շուն միշտ կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարբինների կռանահարության ձայնից կա-

պանիներն ամրանում են: Ուստի դեռ մինչև այժմ էլ դարբիններից շատերը, առասպելին հետևելով՝ կիրակի օրերը երեք կամ չորս անգամ (կռանով) խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավազդի շղթաներն ամրանան»:

ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ

Այսպես են հայերը կոչել իրենց մեծ պատմիչ Խորենացուն. այսինքն՝ նրան անվանել են Բանաստեղծ, և այն էլ՝ առաջինը բանաստեղծների մեջ: Քերթողահայր նշանակում է՝ Բանաստեղծների հայր:

Հայ բանաստեղծության ծաղկաքաղ կազմողները Խորենացուն վերագրում են մի քանի բանաստեղծություն, բացի այն ամենից, ինչ ինքը մատուցել է իր պատմության մեջ, քաղելով հին բանաստեղծական ավանդություններից: Սակայն թվում է, թե նման մեծ ճանաչումը պայմանավորված է ոչ այնքան Խորենացու բանաստեղծություններով, որքան բանաստեղծական այն ղգացմունքով, որ նա տածում է դեպի իր հայրենի պատմությունը, ինչպես նաև նրա խոսքի հուզականությամբ: Եվ այս բոլորի հետ միասին Մովսես Խորենացու մեջ խոսում էր պատմաբանի կազմավորված գիտակցությունը, որպիսին երևում է նրա որդեգրած մեթոդից և նրա մի շարք արտահայտիչ մեկնաբանություններից:

Նա, օրինակի համար, դիմելով Բագրատունի իշխանին, որի պատվերով է, հավանաբար, նստել ու գրել իր պատմությունը, ասում է.

«Մենք, որքան հնարավոր էր, խուսափեցինք ավելորդ ու պանուված խոսքերից և ինչ որ աննավատի գործ կամ կարծիք կար, միայն հետևելով արդարն ու ճշմարիտը գրելու, ուրիշներից (օգտվելով) կամ մեզանից՝ որքան կարողություն ունենինք: Այստեղ էլ նույնպես վարվելով՝ խոսքիս ընթացքը կանգնեցնում եմ, երբ անպատշաճություն եմ նկատում կամ հավատիության կողմից կասկածելի մի բան: Եվ ինձ էլ, ինչպես շատ անգամ, այժմ ևս աղաչում եմ, մեզ մի հարկադիր ավելորդ բաներ գրելու, մի գուցե այդպիսի իիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավատի ամբողջ աշխատությունն

անպետք ու ավելորդ մի գործ դառնա, որ հավասարապես վտանգ է և՛ ինձ, և՛ ձեզ»։

Իշխանը գործունյա հայ նախարարներից մեկն էր։ Նա, հավանաբար, ճնշում էր գործադրում պատմիչի վրա, կամենալով նրան ուղղություն տալ այնպես, ինչպես ինքն էր ավելի լավ համարում։ Այդ ճնշումները շատ համառ պետք է եղած լինեին, բայց հեղինակը տարբեր միջոցներ էր գտնում դրանց ընդդիմանալու, երբեմն նույնիսկ վարպետ խուսանավումներով.

«Պլատոնի խոսքն այժմ համարձակապես կարտասանեմ. «Սիրողի համար կա՞ արդյոք ուրիշ ես», բանի որ իսկապես չկա որևէ մեկը։ Որովհետև բացի ուրիշ անհնար բաներից, որ ձեզ համար ձեռնավոր դարձրինք, այս էլ ենք կատարում։ Որովհետև պարսից այն զրույցները ու գործերը, որ մենք ատում ենք և մանավանդ որոնց լսելը տաղտկություն էր մեզ պատճառում, այսօր իմ ձեռքով ինքս շարադրում եմ, նրանց անմտության մեջ միտք դնելով և նրանց չափազանց հին և նրանց համար անհասկանալի անցքերն անում կրացատրեմ, միայն թե սրանք ձեզ ուրախություն կամ օգուտ բերեն»։

Խորենացին հին Հայաստանի թիվ մեկ անթերի զարգացած մտավորականն է, բազմակողմանի շնորհքներով օժտված։ Նա առաջինն է նաև, որը ամեն է մեծ արժանիքներ ներկայացնող պատմական երկ, միաժամանակ բանական ստեղծագործության մեջ սկզբնավորելով լարված և երկարատև դրամատիկական պատվանդան ունեցող մի քաղաքակրթության հուզական շեշտը։

Նախորդել էին մի քանի ուրիշ պատմիչներ։ Ըստ հերթականության առաջինը համարվում է Կորյունը, այն վարդապետը, որը գրեց Մեսրոպ Մաշտոցի, հայ գրերը ստեղծողի վարքը։ Նրա մասին էլ կխոսենք ավելի ուշ։ Երկու ուրիշ հեղինակներ, որոնց կենսագրություններն անհայտ են մնացել, ամեն մեկն արդեն տվել է իր «Հայոց պատմությունը»։

Նրանցից մեկը Ագաթանգեղոսն է։ Չկան հստակ տեղեկություններ, թե ո՞վ էր այս մարդը, ի՞նչ ազգության էր պատկանում, ի՞նչ գործեր է կատարել։ Գուցե նա հայ էր, գուցեև լատին, այդպես են նրան կոչում, և կամ հելլեն։ Ասում են, թե նրան

իր հետ Հռոմից բերել է Տրդատ Գ-ն։ Վերջինիս է դիմում Ագաթանգեղոսը իր պատմության ավարտին և ասում է հետևյալը.

«Իսկ մենք, երբ ստացանք fn թագավորական հրամանները, ով այրեր մեջ fաջ Տրդատ, այս ամենը գրելու, ըստ այնմ մատյանների ժամանակագրին վայել ձևով դրոշմեցինք, ամեն ինչ շարադրելով հունական ճարտասանության օրինակով»։

*Տրդատ Գ-ն մահացել է 330 թվականին։ Նա այն թագավորն է, որը քրիստոնեությունը հռչակեց պետության պաշտոնական կրոնը, թեև նախկինում նա քրիստոնեությունը հալածել էր դաժանաբար, հռոմեական օրինակի համաձայն, Հռոմում Դիոկղետիանոսի ծավալած հալածանքներին միաժամանակ։ Հայերը քրիստոնեությունն ընդունեցին 301 թվականին կամ Միլանի էդիկտից (313 թ.) անմիջապես հետո։ Անկախ ճշգրիտ թվականից, հայերն առաջիններն էին, որ քրիստոնեությունը դարձրին իրենց պետական կրոնը։ Այս կարևոր հարցի մասին մենք կխոսենք մեր գրքի մեկ այլ հատվածում։ Բայց պատմիչ Ագաթանգեղոսի թվագրման և ազգային պատկանելության մասին նկատում ենք հետևյալը։ Եթե այս պատմիչը Տրդատի ժամանակակիցն էր, նշանակում է, որ նա իր գիրքը գրել էր նախքան հայերի սեփական գիր ունենալը (405 թ.)։ Այս դեպքում Ագաթանգեղոսի պատմության բնագիրը պետք է լիներ հունարեն։ Այն կարող է ոչ մի առնչություն չունենալ հեղինակի ազգային պատկանելության հետ։ Հայտնի է, որ նախքան իրենց գրերն ունենալը, հայերը եկեղեցիներում օգտագործում էին հունարենը։ Իմիջիայլոց, լեզուն էս այն հանգամանքներից մեկն էր, որը բաժանում էր պարսկասերներին հելլենասերներից։ Առաջինները խրախուսում էին հոգևոր առնչությունները սասրինների հետ։ Այնուհետև, Ագաթանգեղոսը հնարավոր է, որ Հռոմում ծնված կամ այնտեղ կրթություն ստացած լիներ, ինչպես և ինքը, Տրդատ թագավորը, որին, համաձայն ավանդության, դեռևս երեխա ժամանակ տարել էին Հռոմ։ Կարող է նաև, որ Ագաթանգեղոս անունը առնչություն ունենա ոչ թե երկի հեղինակին, այլ կենսագրվողին, քանի որ իրականում Ագաթանգեղոսի բովանդակությունը հայերի սուրբ Գրիգորի վարքն է (այս դիտողությունը պատկանում է Մանուկ Աբեղյանին)։ Համենայն դեպս նույնիսկ թարգմանաբար այդ գործի հետ ծանոթացողի վրա

(Նույնը նկատում ենք նաև մյուս պատմիչի՝ Փավստոս Բուզանդի վերաբերյալ) ապավորություն է գործում ժողովրդական բանաստեղծական ստեղծագործության իմացությունը և զգացողությունը: Այն եղանակը, որով պատմվում են հին հայկական զրույցները, երկու գրքերում էլ գրսևորում է հին բանաստեղծության խորը և անմիջական ապրումը. հենց այս էլ, գուցե, այն ամենակարևորն է, որ մարդ կարող է նկատել այդ հեղինակների ազգային պատկանելության հարցի առթիվ: Ագաթանգեղոսը պատմում է գլխավորապես, թե ինչպե՞ս Գրիգոր Լուսավորչի ձեռքով Հայաստանում տարածվեց քրիստոնեությունը: Բուզանդը (կամ Բյուզանդացին) մեծ բանիմացությամբ օգտագործելով ժողովրդական ավանդույթները և մշտապես հավատարիմ մնալով դրանց, նկարագրում է 4-րդ դարի ողբերգական իրադարձությունները, երբ պարսիկները, իրենց հարած հայ իշխանների օգնությամբ, վերացրին հայկական թագավորությունը, մինչև որ հայրենասիրական տարրերը, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, կարողացան նրանց դուրս շպրտել երկրից և մի որոշ ժամանակով վերականգնել Հայաստանի անկախությունը:

Ընդհանրապես, գերիշխում է այն կարծիքը, որ Ագաթանգեղոսը գրել է շատ ավելի ուշ, 5-րդ դարում, ուղղակի հայերեն: Մաշտոցի վարքագիր Կորյուն վարդապետից հետո նա առաջին հայ պատմիչն է:

Մովսես Խորենացու մասին նույնպես չկան բավարար կենսագրական տվյալներ: Աղքատ հայրորդի, նրան վերցրել և ուղարկել են արտասահման ուսում ստանալու, ինչպես ինքն է գրում, «իր հոգևոր հայրերը»: Նա նկատի ունի այդ ժամանակաշրջանի Հայաստանի երկու հոգևոր խոշոր դեմքերին՝ եկեղեցու պետ Սահակ Պարթևին և մատենագրական վարդապետ Մաշտոցին: Սուրբ գրքերի թարգմանությամբ և աղանդավորականների դեմ պայքարի հարցերով մտահոգված, այդ երկու ուսուցիչները առանձին հակում դրսևորեցին օտար կրթության հանդեպ, և այլ աղբյուրներից նույնպես հայտնի է, որ հաջորդաբար պատանիներ ուղարկեցին սովորելու Ասորիքի, ինչպես նաև Կոստանդնուպոլսի կրոնական դպրոցներում: Այս անգամ գերադասվել էր Ալեքսանդրիան: Այստեղ էր գտնվում Կյուրեղի աթոռը, նրա, ով հալածեց Պողոս արքեպիսկոպոս Նեստորիոսին և

նախագահել էր Նեստորական աղանդը դատապարտած Եփեսոսի տիեզերական ժողովում: Հայ ուսումնասիրողների կատարած հաշվումներից հետևում է, որ Խորենացին Ալեքսանդրիա ուղարկվել է այդ ժողովից մի քանի տարի հետո, շուրջ 435 թվականին, 25 տարեկան հասակում: Մաշտոցի վարքագրից նույնպես գիտենք, որ ուսման համար գնացած այս երիտասարդների միջոցով հայ եկեղեցու առաջնորդները Ասորիքի եկեղեցուն և Կյուրեղին տեղեկացրին, թե ինչ-որ ամբարիշտ մարդիկ, ղինված հերետիկոս Թեոդորոս Մոփսուեստացու, Նեստորիոսի ուսուցչի, գրվածքներով, անցել են Հայաստան և քարոզում են Աստվածածնի մասին հերձվածական գաղափարներ: Այսինքն, սկսել էր պայքարը, որը հանգեցրեց արևելյան եկեղեցիների բաժանմանը Քրիստոսի երկու կամ մեկ բնույթի հարցի պատճառով:

Աշակերտների երթուղին անցնում էր Եգեսիայով: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո նրանք շարունակեցին ճանապարհը դեպի Եգիպտոս: Այնտեղ ուսումնառությունն ավարտելուց հետո նոր առաքյալները բռնեցին վերադարձի ճանապարհը, բայց, ինչպես գրում է ինքը Խորենացին. «Կամենալով նավով Ելլադա գնալ, սաստիկ քամիներով մղվեցինք ընկանք Իտալիա, սուրբ Պետրոսի և Պողոսի հանգստարանները ողջունեցինք և երկար չմնացինք Հռոմայեցիների քաղաքում. Ելլադայով անցանք Ատտիկե, քիչ ժամանակ մնացինք Աթենքում: Ձմեռն անցնելուց հետո ճանապարհ ընկանք Բյուզանդիոն, մեր հայրենիքին փափագելով»:

Պետք է նշենք նաև հետևյալը. թեև քաղաքական դեպքերը մեծ անջրպետ էին բացել Պոլսի և հայկական թագավորության միջև, ինչպես նաև հակառակ այն բանի, որ եկեղեցիների հարաբերությունները յուրովի ընթանում էին օտարացման կլիմայի մեջ, Խորենացին և նրա ուսուցիչները հելլենասեր էին, այսինքն, հելլենական դպրության երկրպագուներ, բայց և միաժամանակ քաղաքականապես ավելի հակված էին դեպի Բյուզանդիան, քան դեպի Ասորիքը, որը վայելում էր պարսիկների բացահայտ հովանավորությունը: Մովսես Խորենացին ամենանականավոր մատենագրականն է հելլեն դպրության բարեկամների ճամբարում. Հելլադան նա անվանում է «գիտության մայր կամ դայակ» և իր հավատարմության համար հելլենական հոգևոր գաղափարին նա, ըստ երևույթին, բանկ հատուցեց:

Սրբ նա վերադարձավ հայրենիք, արդեն նրա հոգևոր հայրերը չկային։ Բայց նրանց վախճանվելուց առաջ էլ նրանց հեռացրել էին եկեղեցու ղեկավարությունից։ Դա այն ժամանակն էր, երբ պարսիկները վերացրել էին Արշակունիների արքայատոհմը և թագավորության անկախությունը։ Սահակ Պարթևը հայկական եկեղեցում ներկայացնում էր մեկ այլ տոհմ, նույնպես պարթևական ծագումով. այն հոգևորական տոհմը, որը հաստատել էր ինքը՝ Գրիգոր Լուսավորիչը։ Որոշ ընդհատումներով, մինչև 5-րդ դարը նրա հետնորդները կառավարել են եկեղեցին և դարձել են ազգային միասնության ու անկախության խորհրդանիշ։ Հայրենիք վերադառնալով, նոր առաքյալը ահա այսպիսի նոր կլիմայի պատահեց։ Ինչպես երևում է իր իսկ գրածներից, ինչպես նաև այլոց վկայություններից, Խորենացու վերադառնալուց անմիջապես հետո սկսվել են նրա տառապանքները։

Մեկ այլ պատմիչ, որն ապրել է քիչ ուշ, Ղազար Փարպեցին, Վահան Մամիկոնյանին ուղղած իր թղթում այդ մասին գրում է, այդ կերպ հայտնելով նաև իր կրած տառապանքների մասին։

> «Երանելի փիլիսոփա Մովսեսը, որ արդարև, միևչդեռ ապրում էր իր մարմնական կյանքը, արդեն երկնային զորականներին էր բաղամակից, չէ՞ որ տեղից տեղ հալածվեց հայոց այդ աբեղաների ձեռով։ Չէ՞ որ նրա լուսավորող ու տգիտաճալած գրքերը անգիտությունից փաթաղիկես էին համարում նրանք և էլի ուրիշ բաներով խայտառակեցին։ Սակայն հետո այլոց տված ամոթանքից՝ մի խաբեական եպիսկոպոսություն մանադեղի պես խմեցրին այն սրբին և խեղդեցին։ Եվ թե նա վախճանի ժամին ի՞նչ աճավոր նզովքի գիր է թողել բանաձայության գլխավորների վրա, գիտեմ, որ դուք լավ տեղյակ եք...»։[1]

«Փաթաղիկես» բառը ասորերեն է և նշանակում է՝ խնկապարկաս, քանի որ Խորենացու գրքերը գրված էին հելլենական ոգով, և նրանց հեղինակը իմաստասեր չէր, ինչպես կոչվում էին ասորական կողմնորոշման հետևորդները, այլ Փիլիսոփա։

Նզովքը, որի մասին ակնարկում է Փարպեցին, Խորենացու պատմության վերջին մասն է, հռչակավոր «Ողբը» հայոց թա-

1 Ղազար Փարպեցի, *Հայոց պատմություն*, թարգմ. Ր. Ոսկանյանի, Երևան, *1982*, էջ *483*.

գավորության և Արշակունի արքայատոհմի, ինչպես նաև հայոց հայրապետության և սուրբ Գրիգորի տան վախճանի մասին։

Դա հին հայ գրականության ամենանշանավոր երկն է.

> «Ողբում եմ ես, հայոց աշխարհ, ողբում եմ ես, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու հաճախադ, խորհրդականդ և ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ շարափառությունը»։

Խորենացին օժտված է ճշմարտության և արդարության անվեհեր պաշտպանի և կրթված մարդու բարեմասնություններով. նա ազգային ուսուցիչ էր։ Նրա գանգատը, նրան զբաղեցնող հարցերը, նրա ողբերը չունեն պարզապես անձնական բնույթ։ Իր հետ կատարվածների մեջ նա ավելի մեծ չարիք է տեսնում իր ազգի և իր հավատքի համար։

Այստեղ մեջ եմ բերում մի հատված նրա գրքից՝ վերջին մասը։ Կայծակ-նախադասություններով, բանաստեղծական հաղորդակության բարձր մակարդակի վրա և իր հայրենիքի ապագայի մասին դրամատիկական նախազգացությամբ հեղինակը տալիս է մի շարք ցնցող պատկերներ, որպիսիք Հայաստանն ապրում էր 5-րդ դարում.

> «Ուսուցիչները տխմար ու իմաստասիրական, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկեսեր, նախանձոտ, բողոքող հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը։

> Կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվամոլ, հաճ թե աստվածասեր։

> Վիճակավորները հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքները ատող, առևտուր և կատակերգություններ սիրող։

> Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են։

> Աշխարհականները ամբարտավան, ստահակ, մեծա-

խոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, ժառանգությունից փախչող:

Չինովնականները անարի, պարծենկոտ, գենք ատող, ծույլ, ցանկասեր, բուլմորթ, կաղապատիչ, գիտեմոլ, ելուզակ, ավազակներին համաբարո:

Իշխանները ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր, սուրուկներին համախոհ:

Դատավորները տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենից վերացած:

Եվ ի՞նչ կա այս բոլորի դիմաց, եթե ոչ այն, որ ստված մեզ աճտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը երաշտացած, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները բխաբեր և խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը կայծակներ բաժող, կարկտաբեր, անձրևներն անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղյամաբեր. չրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. հողի պտուղների անբերրիություն և անասունների անասելիություն, այլև երկրաշարժեր և սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե՝ ամբարիշտներին խաղաղություն չկա:

Որովհետև տիրեցին խստաբարո ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս. կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, բշնամիները զորացած. հավատը ծախվում է այս ունայն կյանքի համար: Ավազակներ են գալիս անհատնում և շատ կողմերից. տները բալանվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայոնի աններ բանտարկվում են, դեպի օտարություն են ախտրվում ազնվականները, անբիվ նեղություններ են կրում ռամիկները. առնվում են բաղաքներ, բանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ



Միհաս Ավետիսյան
ՄՏՈՐՈՒՄ

համաձայնակեր։ Աստվածապաշտությունը մոռացված է, և կա դժոխքի ակնկալություն»։

Մովսես Խորենացին միայն իր ազգի անցյալը չէ, որ պատմեց։ Որպես ճշմարիտ բանաստեղծ, նա առաջ էր նայում և շատ բաներում կանխատեսավ Հայաստանի ողբերգական ապագան։

Ա Վ Ա Ր Ա Յ Ր

5-րդ դարը գուցե ամենաճգնաժամայինն է Հայոց երկրի պատմության մեջ։ Դեռևս նախորդ դարում այս երկիրը դարձյալ գտնվում էր երկու մեծ ուժերի՝ Հռոմեական (հետզհետե՝ Բյուզանդական) կայսրության և նոր պարսկական թագավորության միջև։ Այս տերություններն իրար մեջ բաժանել էին Հայկական պետությունը և բացահայտել իրենց հետապնդած նպատակները։ Բյուզանդացիները Փոքր Հայքը և մի քանի արևմտյան շրջաններ վերցնելուց և իրենց կայսրությանը կցելուց հետո մնացյալ Հայաստանի համար փորձում էին վարել այնպիսի քաղաքականություն, որն օգներ հայերին՝ չեզոքացնելու իրենց լիովին ձուլելու ուղղությամբ պարսիկների գործադրած ջանքերը, միաժամանակ, սակայն, իրենք բյուզանդացիները հայերի պատճառով անմիջական բախման մեջ չէին մտնում պարսիկների հետ։ Արևելյան Հայաստանը նրանց հետաքրքրում էր սոսկ իբրև քրիստոնեական առաջապահ մի երկիր պարսիկների և կայսրության արևելյան սահմանների միջև։ Այս գործելակերպին նրանք հետևեցին նաև ավելի ուշ, երբ պարսիկներին հաջորդեցին արաբները, այնուհետև՝ մոնղոլները և թուրքերը։ Սակայն մեծ հարցերը, առավել ևս իրենց գոյությանը սպառնացող վտանգները, որոնց դեմ-հանդիման շատ անգամ կանգնում էին բյուզանդական կայսրերը, մեծապես խանգարում էին այդ քաղաքականության կիրառմանը։ Շատ անգամ իրենք՝ Բյուզանդիայի կայսրերը ներխուժեցին այդ երկիրը և վերացրին նրա անկախությունը։ Նրանք մշտապես ձգտում էին Բարձր Հայքից քամել հնարավոր ամեն ինչ իրենց տնտեսության և պաշտպանության համար, գլխավորապես ձիեր և ռազմիկներ իրենց բանակի համար, բայց և պարզապես մարդկային բազ-

մություն, բարբարոսների արշավանքներից ամայացող իրենց կայսրության տարբեր շրջանները բնակեցնելու համար։

Մյուս կողմից, պարսիկները համառորեն ջանում էին վերջնականապես ձուլել այս երկիրը և ըստ էության ջնջել քարտեզից։ Հենց 5-րդ դարում էլ հայերը տվեցին իրենց մեծ ճակատամարտը՝ հանուն իրենց ազգային գոյության։

Հայերի պետականությունը փաստորեն վերացված էր։ Պարսիկները Հայաստանը վերածել էին սատրապության և այն կառավարում էին կամ իրենց սատրապի (մարզպանի), կամ տեղացիների՝ հայերի միջոցով։ Այսինքն՝ այդ պաշտոնին նշանակում էին պարսկասեր ավագ նախարարներից մեկին։ Ըստ էության, այս հնագույն երկիրը, որը նախկինում միավորված էր Բագավորի կենտրոնական իշխանության տակ, այժմ բաժանված էր մի շարք ավատապետություններին։ Հայաստանի այդ տարիների պատմությունը քայլ առ քայլ ընթանում է դեպի Բագավորական իշխանության թուլացումը և ավատական մասնատվածությունը։ Առանձնապես վտանգավոր էին պարսկասեր իշխանները, քանի որ պարսիկները նպաստում էին հենց քայքայման այդ գծին, և հայ Բագավորները, նեցուկ ունենալով եկեղեցին ու հելլենասեր նախարարներին, դուր չանում էին սանձել քայքայման արագացող ընթացքը։ 4—5-րդ դարերի հայկական տարեգրությունները լի են պատմական և մարդկային փորձությանը հատկանշական իրադարձություններով, որոնք սովորաբար ուղեկցում են որևէ ազգի կամ հանրության՝ ճակատագրական պահերին։ Այդ իրադարձություններից քաղել է իր նյութը հայ պատմավեպը, որն արդեն անցյալ դարում ստեղծել է լավ ավանդույթ. այն այսօր էլ շարունակում են հայ արձակագիրները։

Արշակունիների հայկական պետությունը կառուցված է եղել հին արևելյան տերությունների հայտնի օրինակով, ուժեղ կենտրոնական իշխանությամբ և հին ազնվական տոհմերին պատկանող տնտեսական և վարչական խոշոր բաժանումներով։ Մայրաքաղաքի շուրջ (իսկ Հայաստանն իր պատմության ընթացքում փոխել է մոտ 15 մայրաքաղաք. այդ երկիրը հաճախ կոչել են թափառող մայրաքաղաքների երկիր) տարածվում էր Բագավորի ընդարձակ տիրույթը՝ Այրարատը, որը ժառանգում էր նրա առաջնածին, անդրանիկ որդին։ Առաջնածին որդիների ունեցած կարևորության մասին մենք գիտենք դեռևս Հին Կտա-

կարանից։ Իսկ «անդրանիկ» բառը ուներ առանձին հմայք, և ժամանակի ընթացքում դարձավ հատուկ, սովորաբար հերոսների անուն։ Մյուս արքայորդիները դուրս էին գալիս արքունիքից ու ոստանից և ուրիշ վայրերում տիրույթներ ստանալով, հաստատվում էին այնտեղ։ Այդպես էր կատարվում նաև տեղական իշխանների եղբայրների հետ։ Որպես կանոն, իշխաններ մնում էին առաջնածին որդիները և նրանց կոչում էին տեր, մինչդեռ մյուսներին՝ սեպուհ կամ ազատ, որոնք սովորական ազնվականներ էին։ Այսպիսով, այդ մարդկանցից ձևավորվում էր մի ամբողջ դաս։ Բագավորներից մեկը, Խոսրով Գ-ն, իր մայրաքաղաք Դվինից դուրս մեծ ծառաստաններ ստեղծեց, որոնք գոյություն ունեն մինչև օրս, և կառուցեց այնտեղ Տիկնոնի պալատը, մի տեսակ Մոն-Պառնաս, որպեսզի այնտեղ զբաղվեն այս սեպուհները։

Այս ամենը ցույց է տալիս հոգածությունը Բագավորական իշխանության հզորության մասին, որը միավորում էր պետությունը և ազգը։ Կայուն էր նաև Բագավորության բարձր պաշտոնների ժառանգականությունը։ Այդ պաշտոնները պատկանում էին որոշակի ընտանիքների և անցնում ժառանգաբար տոհմի անդրանիկ որդուն։ Հաղարապետություն, սպարապետություն, մաղխազություն (Բագավորի Բիկնազորի պետի պաշտոն), մեծ Բագադիը ասպետություն և արքունիքի մյուս բարձրագույն պաշտոնները այս կամ այն ազնվական տոհմի գահերեցի հատուկ առանձնաշնորհումն էր, ապահովված բազմադարյան ավանդությամբ, ինչպես նաև արձանագրված հայոց արքունիքի Դահնամակում, որտեղ հերթականությամբ, ըստ իրենց կարևորության, նշված էին բարձրագույն ազնվականության տասը տոհմերը և հետևում էին մյուսները, դարձյալ խիստ հաջորդականությամբ։ Այս նույն կարգով մասնակցում էին նրանք պաշտոնական արարողություններին ու հանդիսություններին ։ արքունի ճաշկերույթի ժամանակ նստում էին յուրաքանչյուրն իրեն սահմանված բարձին։

Ահա այս կարգը խախտվեց 4-րդ դարում և քայքայումը արագ շարունակվեց հաջորդ դարում։ Պարսկասեր նախարարների հարաբերությունները հայոց Բագավորի հետ ստացել էին հակամարտ բնույթ. կենտրոնական իշխանությունը իզուր ջանում էր նոր հենարաններ գտնել։ Դրանցից մեկն էր տարօրինակ մի քաղաք, Արշակավանը, որը Արշակ Բ Բագավորը հիմնեց

Արարատի հարավային սահրոտում, որպեսզի այնտեղ կենտրոնացնի տեղական իշխաններից դժգոհներին և հալածվածներին, ավատատերերի հետ իր ունեցած պայքարի ընթացքում նրանց իր կողմը ունենալու համար։ Քանի որ ավատատերերից մեկն էլ հայկական եկեղեցին էր (արդեն ասել ենք, որ Գրիգոր Պարթևի տոհմը ստացել էր, նույնպես ժառանգաբար, եկեղեցական դահը Հայաստանում), շուտով Արշակավանի դեմ, բոլոր մյուսների հետ, ոտքի կանգնեց նաև հայոց եպիսկոպոսապետը, կաթողիկոսը, և անիծեց Արշակավանը։ Վերջինս շուտով դարձավ խոշոր քաղաք, օրինակելի ճարտարապետությամբ, հելլենիստական տիպի, բայց արդեն ուշացած քաղաքային կենտրոն։ Սակայն պատմիչները, որոնք արտահայտում են եկեղեցու տեսակետը, այդ քաղաքը պատկերում են որպես փախստականների և ավազակների որջ։ Փավստոս Բուզանդն ասում է, թե այնտեղ հավաքվեցին բոլոր գողերն ու հափշտակիչները, ստահակները, մարդասպանները, ամեն տեսակ անարդարություն գործած մարդիկ, բոլոր նրանք, ովքեր բազմաթիվ ոճիրներ էին կատարել։ Նրանք այնքան շատ էին, որ շուտով լցրին ամբողջ հովիտը։ Եպիսկոպոսապետի անեծքից հետո, երեք օրվա ընթացքում, քաղաքը անհետացավ երկրի երեսից։ Բայց ճշմարտությունն այլ է, և այն մեզ հաղորդում է Խորենացին։ Քաղաքը առաջացրել էր Թագավորի Թշնամիների ատելությունը։ Երբ պարսիկները վերստին մտան Հայաստան, 4-րդ դարի երկրորդ կեսին, պատերազմական դեպքերից մեկի ժամանակ հակաթագավորական նախարարները, եկեղեցու գործարար մասնակցությամբ, զորքերի միջոցով այդ քաղաքը, բառիս բուն իմաստով, արմատախիլ արեցին։ Ոչնչացրին նրա ամբողջ բնակչությունը, գթացին միայն երեխաներին։ Գրեթե այդ ժամանակ էլ ոչնչացան Արաքսի հովտի հայկական մյուս հին քաղաքները ևս, հին մայրաքաղաքները, բացի Դվինից։

Այս ամբողջը ինձ անհրաժեշտ էր որպես ներածություն 5-րդ դարի մեկ այլ մատյանի՝ Ղազարե Վարդապետի պատմության համար։

Ղազարեն մեծ պատկերավորությամբ պատմում է Ավարայրի դաշտում, Արարատից հարավ, Վասպուրականում, պարսիկների դեմ հայ հայրենասերների մղած ճակատամարտի մասին։ Այս պատմիչը չի անդրադառնում առավել հին պատմական դեպքերին և ազգային ղրույցներին։ Ճակատամարտին նախորդած

դեպքերի հակիրճ նկարագրությունն անելուց հետո նա ուղղակի մտնում է իր թեմայի մեջ։ Այսինքն, պատմում է, թե պարսիկները, Հայաստանում թագավորական իշխանությունը վերացնելուց հետո, որոշեցին ստրկացնել նաև երկրի ոգին, հայերին պարտադրելով իրենց կրոնը՝ զրադաշտականությունը։ Նույնը փորձեցին անել նաև Անդրկովկասի մյուս երկրներում՝ Վրաստանում և Աղվանքում։ Ուստի այս երեք երկրների մեծերին կանչում են Տիզբոն և ստիպում ընդունել պարսից արքայի պայմանները։

> «Երբ աճօրեն իշխանը տեսավ, որ իր շարությունը հաջողվեց, սկսեց մի այլ խորհուրդ ևս մտածել, ինչպես մի մարդ, որ բորբոքված կրակի վրա շատ վառելափայտ է ավելացնում»։

Հայ պատմիչը, որը միաժամանակ և հոգևորական էր, կրկնակի թշնամանքով է դիտում պարսից արքայի նպատակները։ Ասում է, թե դրանք աստծու առաքած նշաններն էին, կանխազուշակում էին իր իսկ պարսկական թագավորության կործանումը։

> «Ոռվենեան այդպիսիները հենց իրենց կենդանության ժամանակ բնակվում են ինչպես բանձրամած խավարում, և հոգիները մարմնի մեջ փակված են ինչպես կենդանի մարդը գերեզմանում։ ...Օրհասական աղջեռն էլ շնչերը հատնելիս ավելի ուժգին են կռվում, և իմաստուններն խույս տալով փախչում են նրանցից։ Այսպիսի մի վախճան է եկել–հասել այդ տեռությանը. երբ նրանց խփում են՝ չեն զգում, և երբ իրենք են խփում՝ չեն հասկանում. իսկ երբ առաջին բշնամի չի գտնվում, իրենք իրենց հետ են կռիվ սկսում, մարտնչում։ Մարգարեի խոսքը հենց հարմար է գալիս նրանց վերաբերմամբ. «Մարդ իր բաղցածությունից սաիլված շուռ կգա և կուտի իր անձի կեսը»։

Ղազարեն ներդաշնակում է անխոով և մանրամասն պատումը իր հայրենասիրական հափշտակության և առօրյա կյանքից ունեցած փորձառության հետ։ Այս առավելությունները առանձնացնում են նրա ստեղծագործությունը, որն այսօր էլ կարդա-

վում է իբրև կենդանի մի պատում և հայրենասիրական առաքինության հիանալի դաս։ Լինելով հոգևորական, նա առանձին ուշադրություն է դարձրել դավանաբանական հարցերին, մանրամասնորեն պատմում է, թե ի՞նչ էին նրանց պատասխանում հայ հոգևորականները, սակայն այս ամենը նա պատմում է շատ հակիրճ և հյութեղ։ Շատ հաճախ նա օգտագործում է այնպիսի պատկերներ, որոնք բացահայտում են արտակարգ մի դիտողականություն։ Այս հոգևորականը, իրոք, հրաշալի է ռազմական տեսարանների իր նկարագրություններով, ինչպես նաև այն միջոցներով, որ նա գտնում է այդ մեծ ողբերգության տարբեր կողմերի պարզ և արտահայտիչ պատկերներն ուրվագծելու համար, ինչպես, օրինակ, երբ խոսում է պարսիկների կողմն անցած և հայրենիքին ու հավատին դավաճանած նախարարների մասին։ Նույնիսկ այստեղ նա մոլեռանդ հոգևորականը չէ, անեծքը շուրթերին։ Նա սիրում է ընդգծել մյուսների մեծահոգությունն ու համբերատարությունը, դրանով իսկ ավելի մեծ չափեր հաղորդելով դավաճանների դատապարտելի զգացումներին և վատ արարքներին։

«Իսկ երբ մարզպանին էլ ձերբակալեցին, նա երդումով միաբանվեց նրանց հետ, որ հարազատ կմնա ուխտին, զղջում էր, որ առաջ բաժանվել էր նրանցից։ Ապաշխարելով ընկնում էր սուրբ եպիսկոպոսների տեղը և աղաչանք-պաղատանք անում, որ չմերժեն և չհեռացնեն նրան իրենցից։ Երկու-երեք անգամ անսուտ երդում տվեց սուրբ ավետարանի վրա բազմության առաջ, երդումը գրեց, կնքեց և կապեց ավետարանից. և աղաչում էր, որ աստված վրեժխնդիր լինի իրենից և ոչ թե նրանք ստրկացնեն իրեն։

Իսկ նրանք թեև հաստատ գիտեին նրա նենգ կեղծավորությունը, և թե խաբեությամբ նորից դառնալու է առաջվա մոլորությանը, ամենևին ետ չտարան նրա վրա ձեռ բարձրացնելու նախորդ հանցանքի համար, այլ նրա դատաստանը թողին սուրբ ավետարանին»։

Գրքում շատ են անձնական դրամատիկ դրությունները, որոնք ընթերցվածը հագեցնում են առանձին մի հուզականությամբ և մինչև այսօր էլ վառ են պահում ընթերցողական հետաքրքրու-

թյունը։ Նույն ոգևորիչ եղանակով, իբրև դեպքերին ականատես վկա, ինչպես էլ, իրոք, որ թվում է թե եղել է պատմողը, խոսում է համայն ժողովրդի հայրենասիրական համախմբության մասին, երբ իշխանների մի խմբի օգնությամբ պարսիկ մոգերը մտան երկիր և սկսեցին քանդել քրիստոնեական սրբավայրերը և նրանց տեղը բարձրացնել բագիններ արևին և քարոզել զրադաշտականությունը։ Հայրենասիրական զգացումը բոլորին հավասարապես դարձրել էր վճռական՝ պատերազմելու հանուն հավատի և հայրենիքի, և այս հարցում ոչ ոք չէր տարբերվում մյուսից։

«Այնուհետև տերը ծառայից ավելի չէր երևում, և ոչ էլ վախուկ մեծացած ազատը՝ տառապյալ գեղջուկից, և ոչ էլ մեկը մյուսից ավելի պակաս բաշխության մեջ։ Միևնույն ճոխ սիրտն ունեին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղա և Քրիստոսի անունով բոլոր միաբանվածները։ Ուրախ ու հետևաոհասարակ միևնույն գենով զինվորվեցին և Քրիստոսի հավատի պատվիրանի միևնույն զրահը հագան, նշմարտության միևնույն գոտիով ամրացրին իրենց մեջքերը թե տղամարդիկ և թե կանայք։

Այնուհետև վեր ընկած էր մնում ոսկին, և ոչ ոք հատկապես իր համար չէր վերցնում, և առանց ագահության հարամարհված, անարգված էին զարդարանքի ու մեծարանքի համար հատկացված պատվական հագուստները։ Ինչպես և ամեն մի գույք ոչինչ էր համարվում իր տերերի աչքում։ Իրենց անձերի վրա նայում էին ինչպես մեռած դիակների վրա, և ամեն մեկն իր գերեզմանն իմն էր փորում, իրենց կյանքը մահ էին համարում, իսկ մահը՝ հավատի կյանք»։

Ավարայրի հակատամարտը տեղի ունեցավ 451 թվականին։ Այն հայերի Թերմոպիլեն է։ Եղիշե վարդապետը իր հրաշալի գրքով պատվավայուն և հուշարձան կանգնեցրեց նրանց սխրին, ովքեր ընկան ապստամբների առաջնորդ Վարդան Մամիկոնյանի հետ, այն ժամից, որի հին ժառանգական իրավունքն էր սպարապետության պաշտոնը։ «Վարդանի քաջերը և հայերի սրբազան պատերազմը», այսպես կհնչեր գրքի ճիշտ վերնագիրը մեր թարգմանությամբ։

Առանձնապես հետաքրքիր են օգնության համար ապստամբների կատարած զուր դիմումները Արևմտյան Բագավորության, դավանակից Բյուզանդիային։ Ապստամբության նախապատրաստման ընթացքում հայերը իրենց հավատարիմ իշխաններից մեկին հատուկ դեսպան ուղարկեցին Բյուզանդիա։ Պատմիչը երկյուղածությամբ արտահայտվում է Թեոդոսիոս կայսեր նկատմամբ։ Ըստ երևույթին, հայերը հույս ունեին, որ Կոստանդնուպոլիսը կլսի և կուզարկի իրենց խնդրած օգնությունը։ Սակայն այդ օրերին Թեոդոսիոս կայսրը մահացավ։

«Եվ նա փոխարեն բագավորեց Մարկիանոս կայսրը. սա իր խրատատու վատբար ծառաների շնորհիվ, այն է՝ Անատոլիոս սպարապետի և Եղփարիոս ասորու,— նրանց էլ անարգ ու վատբար, միևնույն ժամանակ և անատված մարդիկ,— նրանց կողմն անցնելով բագավորը՝ չկամեցավ ուշադրություն դարձնել հայերի միաբան ուխտին, որ իրենց ամբողջ ուժով ընդդիմադրել էին հեթանոսների չարությանը։ Իսկ այս անարի մարդը ավելի լավ էր համարում իր դաշինքը պահել հեթանոսների հետ մարմնական խաղաղության համար, քան թե հրիստոնեության ուխտին պատերազմակից լինել։ Այս պատճառով էլ շտապեց, դեսպաններ ուղարկեց պարսից բագավորի մոտ նույն Եղփարիոսին և հաստատուն դաշն կնքեց նրա հետ՝ օգնություն ցույց չտալ հայոց զորին ոչ զորով և ոչ էլ զենով ու ամեն տեսակ օժանդակությամբ»։

Ճակատամարտը տեղի ունեցավ մայիսի 26-ին։ Երկուստեք շատերը սպանվեցին։ Դիակները ծածկեցին վայրը և «նրանց թիվն այնքան մեծ էր, որ (վայրը) նմանվում էր խորդուբորդ քարակույտերի»։ Կոտորածն այնքան մեծ էր, որ չկային հաղթողներ ու պարտվածներ, «այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով», իրար միջև բաժանեցին՝ հաղթանակ և պարտություն։ Բայց հայերի մեծ շահն այն էր, որ պահպանեցին իրենց հոգևկան միասնությունը։ Ճակատամարտից հետո պարսիկ մոգերը իրենց փաստ-փուստան հավաքեցին և վերադարձան իրենց երկիրը։ Ըստ էության, պարսիկները հրաժարվեցին հայերին նախկին հեթանոսության վերադարձնելու իրենց նկրտումներից. իսկ քաղաքական տեսակետից ևս Ավարայրը շատ բան էր նշանակում, քանի որ այն ուժեղացրեց հայերի հայրենասիրական ղեգացումները և դարձավ ազգային հպարտության և ազատության ծարավը կենսավորող խորհրդանիշ։ Երեսուն տարի անց հայերը դարձյալ իրենց սրերը խաչաձևեցին պարսիկների հետ և կարողացան կնքել պայմանագիր, որը նրանց համար ապահովում էր ավելի բարենպաստ պայմաններ, և որով համարյա վերականգնեցին իրենց ինքնավարությունը։

Եղիշեի գիրքը փակվում է հրաշալի մի եղերերգությամբ, էլեգիայով, նվիրված «տիկնանց փափկասուն Հայոց աշխարհի», որոնք բաժանեցին պատերազմի արհավիրքները և հավատարիմ մնացին այդ պատերազմում ընկած կամ երկար ժամանակ գերի տարված իրենց ամուսիններին։ Նրանք մոռացան, ասում է պատմիչը, թե ի՞նչ էին նախկինում, իշխանուհինե՞ր, թե՞ ծառաներ. դարձան մեկ հոգի իրենց ընկերների և որդիների հանդեպ, բոլորը նույն սև զգեստը հագան, մոռացան իրենց փափուկ մահճակները, հարուստ սեղանները և համով ուտելիքը, որ իրենց պատրաստի մատուցում էին ծառաները։ Ոչ մեկը մյուսի ձեռքին լվացվելու ջուր չէր լցնում, ոչ էլ սրբիչ էր մատուցում։ Այս ամենը մոռացվեց ու ծածկվեց փոշու տակ։ Սարդերն իրենց ոստայնը հյուսեցին նրանց առագաստների վրա։ Պալատների սրահներում փշրվեցին բարձր գահերը, սեղանները, որոնց շուրջ մի ժամանակ խրախճանում էին իշխանները, բաժակները, որոնցով նրանք գինի էին խմում։ Շատ ուրիշ ամրոցներ ու պալատներ ևս ավերվեցին և ամայացան, որբացան պարտեզները իրենց ծաղիկներից և արմատախիլ եղան նրանց գիներեր այգիների տունկերը։

Փափկասուն հայուհիները, որոնք մեծացել էին քնքշանքի և իրենց տների հարստության մեջ, իրենց փափուկ մահճակներում, այժմ ճամփորդելով ոտաբոբիկ, գնում էին աղոթատները, աղաչելով աստծուն՝ օգնել իրենց դիմանալու այս մեծ փորձություններին։ Նրանք, ովքեր մանկությունից սնվել էին հորթերի ուղեղներով և երեների ընտիր մսով, այժմ վայրի գազանների նման խոտաճարակ են դարձել, և դրա համար էլ շնորհակալ են աստծուց ու չեն էլ հիշում իրենց նախկին հարուստ կյանքը։ Նրանց մաշկը սևացավ, քանզի ամբողջ օրը նրանք արևակեզ էին լինում, իսկ դիշերները քնում էին գետնի վրա։

«Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, գարուն հասավ և նոր ծիծառներ եկան... բայց նրանք երբեք չկարողացան տեսնել իրենց աննկալիներին: Գարնանային ծաղիկները նրանց հիշեցնում էին իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարող մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու: ...Նրանք հիշվեցին միայն գրված հիշատակարաններով, և ոչ մի տարեկան տոն նրանց հետու օտարությունից տուն չբերեց: ...Այնես սովորություն չարին հետու երկրից եկած մեկին հարցնելու, թե ե՞րբ կլինի, որ տեսնենք մեր սիրելիներին. այլ այն էր նրանց իղձն ու աղոթքը առ աստված, որ ինչպես սկսել են, այնպես էլ բաջությամբ ու երկնավոր սիրով լի նույնը գլուխ հանեն–վերջացնեն»:

Եղիշեն ինքը ևս մատավորական հոգևորական էր, վարդապետ: Բայց պատմում է այն, ինչ ապրել էր ինքը, և քնարական երակը գետի նման հոսում է նրա հիանալի գրքում: Նրա համար արժեք չունի հին պատմության և հին քերթության անդրադառնալը: Նա քերթություն և պատմություն դարձրեց այն, ինչ ապրել էր անձնապես: Այս կետում նա տարբերվում է Խորենացուց, որի ուժեղ կողմը հենց խորը գիտելիքներն էին և որի քերթողական ջիղը առանձնապես հոգեորական ելք գտավ նրա աշխատության մեջ: Եղիշեն արտահայտում է իր ապրումներն ու զգացումները. նա շատ ավելի անմիջական է կյանքի քնարականության հանդեպ և ներկայացնում է պոետական մեկ այլ հոսանք: Որպես երկու մեծ սկզբնավորումներ, այս երկու պատմիչ-քերթողներն էլ կանգնած են հայ քերթության մեկնարկի մոտ, որպեսզի հինգ դար հետո գտնեն համադրության հրաշալի մի պահ՝ հանձին Հայաստանի ամենանշանավոր բանաստեղծի, իրոք մեծն Գրիգոր Նարեկացու:

ՄՈՐԻԿ

Երևանի Համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» մեջ մեզ ցույց են տալիս հետևյալ նշումը.

«Այդ ժամանակ երկու մեծ տերությունների միջև դարձյալ պատերազմ ծագեց, որը տևեց շուրջ հսան տարի և ավարտվեց 591 թվականին: Դրան հետևեց Հայաստանի երկրորդ բաժանումը. այս անգամ մեծագույն մասը վերցրին բյուզանդացիները»:

Բյուզանդիայի կայսրն այդ ժամանակ Մավրիկիոսն էր (հայերեն՝ Մորիկ), իսկ պարսից թագավորը՝ Խոսրով Բ-ն: Այսինքն, նույն այն Մավրիկիոսը, որը պարսից գահը սեփականած Վահրամ Ջուբինին չախչախելուց հետո պատանի Խոսրովին վերականգնեց գահի վրա: Ասպետական նման վարմունքը ամենօրյա երևույթ էր սահմանակից թագավորությունների միջև (ճիշտ և ճիշտ այսօրվա նման): Մեր պատմիչը գրում է.

«Թեև գահը սեփականած Վահրամը ոչ պակաս շահավետ առաջարկներ արեց, բայց Մավրիկիոսը, վերցնելով օրինավոր առաջնորդի հովանավորությունը և որդեգրելով նրան և տալով նրան բավարար զորք և չախչախելով Վահրամին, պատանի Խոսրովին վերականգնեց հայրենի գահի վրա: Մարտիրոպոլիսը, Դարան և Պարսկահայքը այդ ժամանակ պարսից միապետը գիջեց մերոնց և ինչպես Լեոնտիի կին վերցնելով, վերջ տվեց Հրիստոնյաների ամեն մի հալածանքի»:

Մավրիկիոսը մեզ մոտ համարվում է Բյուզանդիայի ամենակարող զորավարներից և կայսրերից մեկը: Իմիջիայլոց նա նաև մուսաների սիրահար էր, բանաստեղծ և պատմագիր:

Նա ողբերգական վախճան ունեցավ: Նրան վայրենաբար սպանեց զորավար Փոկասը, նախապես նրա աչքերի առաջ սպանելով նրա բոլոր արու զավակներին, իսկ երկու-երեք տարի հետո նաև նրա դուստրերին, թեև վերջիններս դարձել էին միանձնուհի: Զորքը չէր սիրում Մավրիկիոսին, որովհետև նա փորձել էր սահմանափակել զինվորների ոռճիկը. նրան չէր սիրում նաև Կոստանդնուպոլսի ժողովուրդը նույն այդ տնտեսական պատճառներով: Նրա դեմ ծագեցին զինվորական խռովություններ: Բալմիցս նրան դատապարտել էին Պոլսի փողոցներում: Նման խռովություններից մեկի ժամանակ նրան նախազգուշացրին. «Մավրիկիոս, զգուշացիր. քանզի կբռնենք քեզ և քո բարեկամներին և քեզ մորթազերծ կանենք»: Մի քանի տարի անց Փոկասը սպանեց բոլորին և Մավրիկիոսի կնոջը...

Նրա ծագման մասին մեր առավել հին պատմիչները գրել են, որ նա Կապադովկիայից էր, իսկ հետագա պատմիչները նրա ծննդավայր համարում են Բյութանիան։ Հայկական տեսակետը Մավրիկիոսի բարքի և ծագման մասին տարբեր է։ Հայերը նրան համարում են իրենցը, հետևաբար և իրենց ազգի չար ոգիներից մեկը։ Եթե Մավրիկիոսը հայ էր, ապա պետք է հայ լիներ նաև նրան այնքան դաժանաբար սպանողը, զորավար Փոկասը. միայն իրական նշույլների միջև կարող են ծագել այդքան ուժեղ զգացումներ։ Ընդհանրապես հայերը համոզված են, որ Բյուզանդիայի պատմության ընթացքում իրենք Բյուզանդիային շատ ավելի մեծ թվով կայսրեր և զորավարներ են տվել, քան մենք, հույներս, այդ ընդունում ենք։ Նույնիսկ մակեդոնական հարստությանը նրանք վերագրում են հայկական ծագում. մի բան, որ այժմ ընդունում է նաև մեր պատմագիտությունը։ Մինչև իսկ Վասիլ Բուլղարասպանի մասին հայկական զրույցներն ասում են, թե Փոքր Ասիայի խորքերը իր կատարած արշավանքների ժամանակ թաքուն գնում էր հայոց վանքերը, ստանալու համար հայ հոգևորականների օրհնությունը։ Այսպիսի բազմաթիվ զրույցներ ենք գտնում Վասիլի մասին հայ պատմիչների մոտ, ինչպիսին այս մեկը, որ պատմում է Կիրակոս Գանձակեցին (13-րդ դար)։

«Իսկ Կիրժան (հուճարեն Կիր Յաննիս, պարոն Հովհաննես, անվան աղավաղված ձևը։ Կիրժանը կայսր Հովհաննես Զմշկիկն է՝ ազգությամբ նույնպես հայ) կայսրից հետո թագը գրավում է Վասիլը՝ թագավորելով հինսուն տարի։ Սա մշտապես հայ ազգի հանդեպ մի բարեմիտ մարդ էր, որ Քաղկեդոնի դավանությունը թողեց ու հետևեց մեր ճշմարիտ դավանանքին։ Եկավ Կիլիկիա, մկրտվեց հայոց Պաղակնիակ կոչվող վանքում ու վանքին տվեց գյուղեր, ագարակներ և ուրիշ բազմաթիվ բաներ»։

Առավել շատ են զրույցները Մավրիկիոսի մասին։ Բայց նրա հայկական համբավը բոլորովին էլ դրական չէ։ Հայերը, ինչպես ասացինք, նրան համարում են իրենց ազգի չար ոգին, անսանձ ջարդարար։ Մեկ ուրիշ պատմիչ, Սեբեոսը, որը համարյա ժամանակակից է այդ դեպքերին (7-րդ դար), հաղորդում է Մավրիկիոսի հղած հետևյալ նամակը Խոսրովին, թե ինչպես իրար

միջև բաժանեն Հայաստանը։ Նա իր հայրենակիցների մասին ասում է.

«Մեր միջև գտնվող այս ժողովուրդը խոստոր և անհնազանդ է ու խռովում է մեզ։ Ահա թե մենք ինչ կանենք. ես իմ մասում գտնվող (հայերին) կհավաքեմ և կտեղափոխեմ Թրակիա, իսկ դու ես մասի հայերին հավաքիր և տեղափոխիր Աբևելք։ Եթե կմեռնեն՝ մեր թշնամիները կմեռնեն, իսկ եթե մեռցնեն՝ մեր թշնամիներին կմեռցնեն, մինչդեռ մենք կապրենք հանգիստ և խաղաղ։ Բայց եթե նրանց թողնենք մեր երկրում, ապա երբեք հանգստություն չենք ունենա»։

Աղքատ մի տղա Արևելյան Հայաստանի ինչ-որ գյուղից, ծույլ և անհնազանդ, ապերախտ որդու մի տիպար, փախչում է տնից, լքելով իր հորն ու մորը, և պատերազմներից մեկի ժամանակ հետևում է կայսրի զորքերին։ Այս ուշիմ հայը սկսեց ամենաստորին պաշտոններից և հասավ մինչև Բյուզանդիայի զորավարի աստիճանին, ինչպես շատ ու շատ խելացի և քաջ կորով փոքրասիացիներ։ Այս մեկը, սակայն, տարբերվեց մյուսներից, քանի որ ամուսնացավ կայսր Տիբերիոսի աղջկա հետ և աներոջ մահից հետո բարձրացավ նրա գահին։ Այնժամ Մավրիկիոսը հիշեց իր մորն ու հորը։ Իսկույն մորը Կոստանդնուպոլիս բերել տվեց և կարգադրեց, որ նրան ցույց տան տաճարները, արքունիքը, քաղաքը և այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, որպեսզի մայրը, որը ամեն մեկից լավ գիտեր, թե Մորիկը որտեղի՞ց էր ճանապարհ ընկել, հասկանար և մտածեր, թե այդ ժամանակ ինչքան անիրավացի են եղել իրեն ծույլ և ապերախտ անվանելով։ Ինչպես սովորաբար լինում է նման պատմություններում, վերջում նա հարցնում է մորը՝ հասկացա՞վ արդյոք, թե որդին այժմ ինչ է դարձել, մայրը պատասխանում է, որ դուրեկան թագավոր է դարձել, բայց մարդ չի դարձել։ Մյուս պատմումը ավելի ինքնատիպ է. Մավրիկիոսը, հենց որ նրան կայսր դարձրին, իր մի քանի մարդկանց ուղարկում է գտնելու իր հորը, հաղորդելու նրան այդ լուրը և ասելու, որ Մավրիկիոսը խնդրում է նրա օրհնությունը և իր անելիքների մասին նրա խորհուրդը։ Հայրը լսեց նրանց, բայց ոչինչ չպատասխանեց և շարունակեց իր աշխատանքը։ «Ի՞նչ բան էր անում», հարցրել է

Մավրիկիոսը։ «Բանջարանոցում կաղամբ էր քաղում, դրանք շուկա տանել ծախելու համար»։ «Եվ ինչպե՞ս էր նա քաղում»։ «Դանակով ամբողջ կաղամբը կտրում էր արմատից, այնուհետև գլուխը դեն էր նետում և կոթը պահում էր ձեռքին»։ Մավրիկիոսը հասկացավ, որ հայրը իրեն ամենաախելոք խորհուրդն էր ուղարկել, ինչպիսին կարող էին այդ պահին տալ իրենն։ Ուստի վերցրեց և իր բոլոր լավագույն զորավարների գլուխները կտրեց, իր շուրջը թողնելով միայն կոճղերին։

Այս բոլորը հին տարեգրություններում։ Բայց իր հայրենիքի մասին ժամանակակից հայ բանաստեղծ Գևորգ Էմինի գրած մի գրքում էլ խոսք է լինում Մավրիկիոսի տապանաքարի մասին։ Այն գտնվում է գյուղական մի տան բակում։ Դրա վրա գյուղացիները, ապուպապից մինչև թոռները, չորացնում են իրենց երիցուկը, ռեհանը, սոխն ու սխտորը, ինչպես նաև դրա վրա ջարդում ու կոտորում են միսը։ Այս զրույցը հիշեցնում է առասպելը Արտավազդի մասին։ Հարվածելով այդ տապանաքարին, հայերը կարծես ամրացնում են չար մարդու դագաղը և ասում նրան. «Նստիր քո տեղը, Մավրիկիոս։ Աստված չանի, որ այնտեղից դուրս գաս»։

Ո՞վ իմանա, պատմական ի՞նչ զուգակցումներ կարող է ունենալ Մավրիկիոս կայսեր հետ այս կերպարն իր այն պատկերումով, ինչ ստեղծել է ժողովրդական ավանդությունը։ Այս Մավրիկիոսը իր մի շատ մութ կողմով խորհրդանշում է հայ ժողովրդի պատմության ողբերգական անցուդարձը, ժողովուրդ, որը, իմիջիայլոց, շատ տուժել է նաև հենց իրենց, հայերի պատճառով։ Դա հայրենադավների և, առավել լայն ընթերցմամբ, ազգային դավաճանության թեման է։ Նման բաներից հայերի ունեցած փորձը երկար դարերի պատմություն ունի և առանձնապես դառն է։ Նրանց բաղում պատմավեպերից մեկում կարդացինք հետևյալ երկխոսությունը. ծառերը վազում են և ասում Անտառին, որ բոլորին մեծ աղետ է սպառնում։ Չար մարդիկ մտել են Անտառ և տապալում են մի ծառը մյուսի հետևից։ «Մի վախենաք, ասում է Անտառը, այս էլ կանցնի, ինչպես ուրիշներն էլ են անցել»։ —«Ոչ, պնդում են ծառերը, այս անգամ գործի դրել են կացինը»։ —«Ի՞նչ բան է կացինը»։ —«Այն երկաթյա շեղբով մի առարկա է»։— «Երկաթից մի վախենաք»։ «Բայց կոթն ունի»։— «Իսկ կոթն ինչի՞ց է»։— «Ծառից»։ Անտառը ծայրից ծայր, մինչև վերջին ծառը, հառաչում է. «Այդ դեպքում մենք կորանք»։

Հայոց պատմության մեջ նման շատ բաներ կան։ Բայց այս առթիվ մենք վիճեցինք Նահապետի հետ։ Նա գտնում է, որ հայ պատմիչներն ու պատմավիպասանները շատ են չարաշահել, խոսելով այս հարցերի մասին և կոչ է անում իր ընթերցողներին՝ չհավատալ նույնիսկ իրենց ամենահավատի պատմիչներին և գրողներին, երբ նրանք գրում են իրենց հայրենիքին դավաճանած հայերի մասին։ Եվ Հայաստանի մասին գրած իր հիանալի գրքում, որը լի է խորհրդածություններով, դիտողություններով և կյանքի, պատմության ու մինչև իսկ այսօրվա հայի հոգեբանության խոր իմացությամբ, նա ասում է. «Երբեմն ես չեմ հավատում նույնիսկ պատմիչ Եղիշեին, որի մատյանն աղոթք է, բանաստեղծություն, պատվիրան»։

Կարծում եմ, նա իրավացի չէ։ Թեման գոյություն ունի։ Եվ քանի հին է ժողովուրդը, այնքան ծանր է նրա ուսերին պատմության դրած բեռը։ Այդպիսի իրադարձություններ անպակաս են ամեն մի պատմության մեջ։ Եվ կարգը մոտավորապես հետևյալն է.

Ընտրյալ տասներկու առաքյալներից մեկ դավաճան, իսկ եթե խոսելու լինենք ընտրյալ ռազմիկների մասին, ապա երեք հարյուրի միջից դավաճան է մեկը...[1]

Այնուհետև, ավանդության այս մորիկը խորհրդանշում է նաև այն բազմաթիվ ու բազմապիսի առնչությունները, որ այդքան դարերի ընթացքում հայերն ունեցել են դավանակից, բայց և հաճախ թշնամական, Բյուզանդիայի հետ։ Հայերից շատերը պետական, հատկապես զինվորական, աստիճանակարգով վերբարձրացան և, ինչպես ասում է Պապաւիզոպուլոսը, «կազմեցին պայծառ զինվորական ազնվականության կարևորագույն տարրերը. ազնվականություն, որի միջոցով այս պետությունը պահպանվեց»։ 7-րդ դարից մինչև խաչակրաց առաջին արշավանքները անհաշիվ են հայկական ծագում ունեցող մեծ ու փոքր կատարապանները բյուզանդական բանակում, ինչպես նաև պրո-

[1] Այստեղ հեղինակը առաջին դեպքում նկատի ունի Քրիստոսի 12 առաքյալներից մատնիչ Հուդային, իսկ երկրորդ դեպքում՝ Թերմոպիլեում Լեոնիդասյալներից մատնիչ Հուդային (ծան. թարգմ.)։

տոսպաթարիոսները՝ բյուզանդական վարչության մեջ։ Նահապետը պնդում է, որ նույնիսկ Փոտ պատրիարքը հայ է եղել։ Փոտ պատրիարքի մասին մենք չգիտենք։ Բայց երբ բյուզանդական վարչության մեջ կամ բանակում լսում ենք Գրիգորիոս, Փոկաս, Նարսես կամ Վարդաս, չպետք է կասկածենք, որ մենք գործ ունենք մի հայ Գրիգորի, մի Ներսեսի, մի Վարդանի հետ. առանձնապես վստահ ենք Նարսեսի և Վարդասի մասին. այդ պատճառով էլ հաճախ տեսնում ենք Նարսեսին, որ իր բանակով հալածում է Տավրոս կամ Անտիտավրոս Վարդասին և սպանում նրան, եթե մինչ այդ Վարդասը չէր հասցրել կուրացնել կամ մեկ այլ եղանակով չեզոքացնել Նարսեսին։ Տեսնում ենք նաև, թե ինչքան դյուրազգաց են հայկական ծագում ունեցող զորավարներն ու կայսրերը իրենց ազգի հանդեպ։ Նրանց հետաքրքրությունը հաճախ չի արտահայտվում նրա հանդեպ առանձին մի հոգեպատրուքյամբ, այլ շատ անգամ անվստահություն է և զգուշավարություն։ Աթենքում լույս տեսած Հելլեն ազգի բազմահատոր վերջին պատմության մեջ ևս (հատ. 8, էջ 353) կարդում ենք հետևյալ դիտողությունը. «Մակեդոնական արքայատոհմը, որ վերջին հետազոտությունների շնորհիվ պարզվել է, որ ունի հայկական ծագում և շատ հաճախ հենվում էր ազգային նույն ծագումն ունեցող զորավարների կարողության վրա, վերջ դրեց հայկական առավել նշանակալից թագավորությունների անկախությանը։ Մեկ հարյուրամյակի ընթացքում Բյուզանդական կայսրության մեջ ներառնվեց Տարոնը (968 թ.), Տայքը (1000 թ.), Վասպուրականը (1021 թ.), Անին (1045—1046 թ.) և Կարսը (1064 թ.)։ Բայց դեռևս այս կցումներից առաջ էլ հայ գաղթականներ փոխադրվել էին Տևրիկ, Մալաթիա, Լիկանդոս և Կիլիկիա»։

Այս ամենը ահավոր սխալներ էին բուն իսկ կայսրության համար և մեծ աղետներ պատճառեցին Հայաստանին։ Իրոք խորհրդանշական է ժողովրդական բանահյուսության Մավրիկիոսի կերպարը բյուզանդացիների կողմից այս երկիրն օգտագործելու հարցում. երկիր, որի հետ ունեին արենակցական կապեր։ Բյուզանդացի կայսրերի որդեգրած գիծը Հայաստանի հանդեպ այլ էր. այս հեռավոր լեռնային և շատ բանեերում դժվար երկիրը, որը սակայն քրիստոնեական էր, օգտագործել որպես առաջապահ պարսկական և Արևելքից եկող այլ վտանգների դեմ։ Դրա համար անհրաժեշտ էր մի առանձին հոգատարություն և գործնական բարեկամական օժանդակություն։ Հայ-բյուզանդական հարաբերությունների ընթացքում այս քաղաքականությունը բյուզանդացի կայսրերը բազմիցս կիրառեցին և օգնության հասան հայերին։ Նման մի դեպքի մասին գրում է նոր Հայաստանի մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը.

> «Հայոց պատմությունը հոյակապ է նկարագրում էն տեսարանը, երբ Ջիրավի մեծ դաշտում մի կողմը պարսկական բշնամի զորքն էր ծփում «իբրև ծով իմն աճեղ», իսկ նրա դեմ Հայաստանին օգնության եկած բյուզանդական բանակն էր կանգնած իր խաչանիշ դրոշակով «իբրև լեառն ադամանդեայ»։ Եվ միևչդեռ Արևելքի ու Արևմուտքի էս աճագին զորություններն իրար եկած վճռում էին հայ ժողովրդի նակատագիրը՝ վերև, նպատի ևվիրական բարձունքին հայոց մեծ Ներսեսը գոչում էր «առ Տէր՝ բազկատարած հայցմամբ խնդրելով ի նմանէ հայիլ ի խաչակիր դրօշակ իւրոյ ժողովրդեան», որի աշխարհիք դարձել էր «սպանդարան մարտիրոսաց»։

Շատ հանգամանքներ ստիպեցին բյուզանդացիներին այդպիսի քաղաքականություն վարել. դրանցից մեկը այն անհաղթահարելի դժվարությունն էր, որին դեմ առան նրանք Փոքր Ասիայի բազմանուն ցեղերին հելլենականացնելու իրենց նկրտումներում։ Հայերը դրսևորեցին ուժեղ դիմադրություն, ինչպիսին դրսևորեցին նաև Արևելքի հանդեպ։ Նրանք պահպանեցին իրենց պատմության և իրենց լեզվի հայրենասիրությունը, իրենց մշակույթի հպարտությունը. նրանք հեշտությամբ չէին նահանջելու բռնի ճնշումների, ինչպես նաև մեկ ուրիշ ավելի բարձր քաղաքականության համաձուլարար աղդեցությունների առաջ։

Այս բոլորով հանդերձ, ինչպես ասել ենք մեկ այլ կետում, բյուզանդացի կայսրերը չեն կարողացել հետևողականորեն շարունակել այս քաղաքականությունը։ Նրանք բազմիցս խախտեցին այն, բազմիցս թշնամաբար ներխուժեցին այդ երկիրը, վերացրին նրա անկախությունը, տասանորդեցին նրա բնակչությունը։ Հայ-բյուզանդական տարեգրություններն բռնությունների և ավերածությունների տեսակետից ետ չեն մնում հայերի և ավերածությունների տեսակետից ետ չեն մնում հայ-

պարսկական և, ավելի ուշ, հայ-արաբական տարեգրություններից, որպեսզի մարդ սահմանափակվեր Արևելքից սպառնացող այս երկու վտանգներով։

Այս դեպքում ևս տարբեր պատճառներ կային, որոնք մղում էին բյուզանդական իշխանություններին բռնության և ուժի քաղաքականություն վարելուն։

ԾԻՆՈՂ

Նախ՝ շուտով եկեղեցական անջրպետ բացվեց։

451 թվականին Քաղկեդոնում տեղի ունեցավ 4-րդ Տիեզերական ժողովը, որը դատապարտեց միաբնակությունը։ Սա պատկերամարտությանը նախորդած ամենահիմար քաղաքականությունն էր, որ դավանաբանական հարցերի պատճառով որդեգրեց բյուզանդական պետությունը իր ժողովուրդների հանդեպ։ Նա մոլեռանդ հակասության մեջ մտավ իր ամենաուժեղ և մեծամասնություն կազմող հպատակների հետ։ Հետագայում, ամբողջ դարեր, կայսրերն ու առավել խելամիտ պատրիարքները ապիկար ձևերով ջանացին ուղղել այդ սխալները, բայց ապարդյուն։

Հայերն այդ ժողովին չմասնակցեցին։ Այդ օրերին նրանք, առանց Բյուզանդիայի օգնության, պարսիկների դեմ մղում էին Ավարայրի ճակատամարտը։ Եվ միայն այն հանգամանքը, որ այդ ժողովը հրավիրելու նախաձեռնությունը վերցրել էր Մարկիանոս կայսրը, նա, ով մերժել էր օգնության մասին հայերի դիմումը և նույնիսկ նրանց մատնեց պարսից թագավոր Հազկերտ Բ-ին, բավական էր հայերի թշնամանքը գրգռելու համար։ Այդ մասին հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է.

> «Իսկ բարեպաշտ Թեոդոս կայսեր մահից հետո թագավորությունն իր ձեռքն է վերցնում Մարկիանոսը, որ կազմակերպեց վեց հարյուր երեսունվեց եպիսկոպոսներից բաղկացած Քաղկեդոնի ժողովը՝ պատակելու ուղղափառ դավանանքը, որ (ժողովը) մինչև այսօր ամբողջ աշխարհը լցրեց նրանց (ժողովի մասնակիցների) հայհոյությամբ»։

Հայերը Քաղկեդոնի ժողովի որոշումների դեմ պաշտոնապես հանդես եկան միայն մեկ դար հետո, իրենց եկեղեցական

ժողովում, որը հրավիրել էր նրանց եպիսկոպոսապետ Ներսես Բ-ն մայրաքաղաք Դվինում (554 թ.)։ Դա հայկական եկեղեցու պատասխանն էր Կոստանդնուպոլսում Հուստինիանոսի հրավիրած նոր ժողովին (553 թ.), որի նպատակն էր մեկ անգամ ևս դատապարտել միաբնակությունը։ Հայերի համար երկու բնույթի դավանանքը բոլոր դեպքերում մարմնավորում էր Քաղկեդոն անիծյալ անունը։ 5-րդ դարից ի վեր այդ անունն ամեն մի հայ քրիստոնյայի ականջին հնչում էր ինչպես սատանայի և սուր դավաճանության։ Անշուշտ, հայերի հակասությունը դավանաբանական հարցերում թելադրվում էր այս տեսակետից ևս իրենց ազգայինը տարանջատելու, իրենց ինքնավարության գաղափարը հաստատելու անհրաժեշտությամբ. մի գաղափար, որը նրանք հաստատում են դարեր շարունակ։

Այդ տարի, 451 թվականին, նրանք ասացին իրենց «ոչ»-ը Արևելքին և Արևմուտքին։

Նահապետի հետ գնում ենք տեսնելու Զվարթնոցի հին տաճարը, հոգևոր կենտրոն էջմիածնից երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա։ Ավտոմեքենան սլանում է Արաքսի հովտով. հանդարտ, լուսավոր մի տեղանք, ուր, քանի առաջ վի

Նեուբյունը և այն հռչակեց իր թագավորության մեջ պետական կրոն, ընդառաջ էր եկել դիմավորելու Գրիգոր Լուսավորչին, որին մինչ այդ բանտարկված էր պահել Խոր Վիրապում ավելի քան 10 տարի։ Տաճարի ճիշտ կողքին հայոց հայրապետը կառուցեց նաև կաթողիկոսական պալատը, որը տաճարի հետ միասին փուլ է եկել 10-րդ դարում։

Այս Ներսեսը գեղեցիկ անձնավորություն է։ Մեծ արարող, որի ողբերգությունը նույնպես եղել է շատ մեծ, քանի որ մի կողմից նրա քղանցքը և մորուքը քաշում էին գաղափած հակաքաղկեդոնականները, մյուս կողմից նույնն էին անում անմիտ և մոլեռանդ քաղկեդոնականները։ Վատթարագույն վիճակ, որպիսին կարող էր խոցել իր հոգու խորքում արարչական մեծ եռանդ և ձգտումներ ունեցող մարդուն։ Որովհետև այս Ներսեսը արարող էր, շատ հայանի շինարար։

Տաճարի հիմքերը գցել էր 641 թվականին։ Նույն այդ (և կամ նախորդ) տարին արաբներն առաջին անգամ ներխուժել էին Հայաստան։ Նրանք մտան Արաքսի հովիտը և կողոպտեցին մայրաքաղաքը։ Պատմիչ Կիրակոսը տալիս է հետևյալ նկարագրությունը.

> «Ներսեսը Դվինում կառուցեց սուրբ Սարգսի վկայարանը։ Դվին ֆաղաքում արաբների կողմից տասներկու հազարի կոտորածի ժամանակ սպանվածների արյունով ծածկվեց սուրբ սեղանն ու ավազանը. ավելի ևս երեսունհինգ հազար էլ ուրիշների գերեցին։ Հայրապետը սպանվածների ոսկորները ամփոփեց նույն վկայարանում. շինեց նաև վիրապը սուրբ Գրիգորի տեղը. կառուցեց նաև տեսնողներին հիացնող սուրբ Գրիգորը, որ հետո արաբների կողմից ավերվեց»։

Այս վերջինը Զվարթնոցի տաճարն է։ Իր այս անհաղթահարելի եռանդի համար՝ կառուցել այնտեղ, ուր ուրիշները քանդում էին, նրան անվանեցին Շինող, այսինքն՝ կառուցող, շինարար։

Նույն այդ 641 թվականին Ներսեսը բազմեց կաթողիկոսական գահին, երբ Կոստանդնուպոլսում կայսր թագադրեցին 11-ամյա տղայի՝ Կոնստաս Բ-ին։ Տասը տարի անց Կոնստասը հարյուր հազար զորքով ներխուժում է Արաքսի հովիտը, որտեղ դեռ նոր էին վերջացրել իրենց երրորդ այցը խալիֆայության արաբները։

> «Արաբները ողողեցին ամբողջ Կովկասը, հասան մինչև Քաղկեդոն, բայց հռոմայեցիները ոչնչի մասին չէին մտածում, դավանաճինից բացի»։

Կոնստասին առաջին հերթին հետաքրքրողն այն էր, թե ինչպես հայերին վերադարձնել Քրիստոսի երկու բնության մասին ճշմարիտ մեկնաբանության։ Ուստի լուր հղեց հայոց հայրապետին, որ եթե ուզում է ավարտել տաճարի կառուցումը, ապա նա պարտավոր է հավատարմության երդում տալ քաղկեդոնականությանը։ Նա մեկ առ մեկ իր մոտ հրավիրեց նաև հայ եպիսկոպոսներին ու նրանց ևս ասաց նույնը և ավելի խիստ բաներ։

Մի կիրակի առավոտ, մի քանի գումարտակ զորքի և մի գումարտակ հայ եպիսկոպոսների ուղեկցությամբ, կայսրը գալիս է այստեղ, Անքուն Ոգիների տաճարը, և բոլորը միասին պատարագ են կատարում։ Տաճարը դեռևս կիսավարտ էր։ Արարողությունից հետո կայսրը բոլորին վերցրեց ու տարավ Դվին։ Այնտեղ, մայր տաճարում, ուր մեկ դար առաջ Ներսես Բ-ն նզովել էր Քաղկեդոնը, ստիպեց բոլորին հաղորդություն առնել և հավատարմություն խոստովանել երկու բնության մասին ճշմարիտ ուսմունքին։

Այս բոլորը պատմում է պատմիչ Սեբեոսը, որը եպիսկոպոս էր և այդ ամենը տեսել էր իր աչքերով։ Նա ավելացնում է նաև հետևյալ զարմանալի տեսարանը. միայն եպիսկոպոսներից մեկը փորձեց ընդդիմանալ։ Նա հաղորդություն չընդունեց և հեռացավ տաճարից։

Ըստ երևույթին, պատմիչը այս դեպքում խոսում է իր անձի մասին։

Կոնստասը, որին շտապել էին հաղորդել այդ դեպքի մասին, պատվիրեց իսկույնևեթ իր մոտ առաջնորդել այդ եպիսկոպոսին։ Վերջինիս և կայսեր միջև տեղի ունեցած երկխոսությունը մոտավորապես այսպիսին է։ Կոնստասը հարցնում է եպիսկոպոսին.

— Հոգևորակա՞ն ես։

— Աստծու ողորմությամբ և քո բարձր կամքով, իմ արքա,— պատասխանում է հայ հոգևորականը։

— Ինչո՞ւ չհամաձայնվեցիր հաղորդություն առնել։ Ես քո կայսրն եմ, իսկ սա էլ քո հայրապետը, և մենք բոլորս հա-

դարձվեցինք։ Դու ի՞նչ ես ուզում պատկերել։ Մի՞թե արժանի չես համարում միասին հաղորդություն ընդունել։

— Ով մեծդ կայսր։ Ծարդ քեզ տեսնում էի պատին նկարած, և ոսկորներս դողում էին։ Իսկ ի՞նչ կարող եմ ասել այժմ, երբ քեզ կենդանի տեսնում եմ իմ առաջ։ Մենք այստեղ բարբարոս ենք և անուս։ Ես ինքս, իմ արքա, անարժան եմ քեզ հետ հաղորդվելու։

— Իսկ սա քո հայրապե՞տն է, թե՞ ոչ։

— Նույն ինքը սուրբ Գրիգորն է։

— Ընդունու՞մ ես նրան։

— Այո։

— Գնա և հաղորդություն ստացիր նրա ձեռքից։

Պատմիչը հաղորդում է մի քանի ուրիշ մանրամասներ ևս, բայց միջադեպն արդեն ավարտվել էր նաև իր լրիվ հնազանդությամբ։

Արաբների վերջին արշավանքի ժամանակ հայ իշխան Թեոդորոս Ռշտունին համաձայնություն էր կնքել խալիֆայության հետ, և վերջինս նրան ճանաչել էր Հայաստանի սատրապ։ Կոնստասը ստիպեց հայոց կաթողիկոսին՝ նզովել Թեոդորոս Ռշտունուն և վերադարձավ Պոլիս։ Կաթողիկոսը, Թեոդորոս Ռշտունու ձեռքը չընկնելու համար, ապաստանում է հարևան Տայքի իշխանությունում։ Այնտեղ մնում է ինքնաարտաքսման մեջ, մինչև Թեոդորոս Ռշտունու մահը (656 թ.), որից հետո շուտով վերադառնում է իր նստավայրը, մեկ անգամ ևս նզովում է Քաղկեդոնը, նորից հավատարմության երդում է տալիս Քրիստոսի մեկ բնության և, թողնելով հայրապետական աթոռը մեկ ուրիշին, ինքը ամբողջապես նվիրվում է իր սկսած շինարարությունն ավարտելու գործին։ Նա Զվարթնոցի տաճարի կառուցումն ավարտեց 661 թվականին և նույն տարին էլ վախճանվեց։

Բայց Սեբեոսն իր «Պատմության» մեջ հետևյալ մանրամասնություններով լրացնում է Ներսես կաթողիկոսի դիմանկարը։ Նա եղել է ծածուկ քաղկեդոնական, իր ուսումն ստացել է Հունաստանում, նույնիսկ ծառայել է բյուզանդական բանակում։ Անշուշտ նա բարեպաշտ էր և պահպանում էր բոլոր կանոնները, սակայն իր հոգում պահում էր քաղկեդոնական թույնը

և փայփայում էր բոլոր հայերին մի օր քաղկեդոնականության դարձնելու չար նպատակը։

Այս և ուրիշ բաներ գտնում ենք ինչպես Սեբեոսի գրքում, այնպես էլ հայկական այլ տարեգրություններում։ Շատ հաճախ տեսնում ենք նաև, որ երբ որևէ հայ իշխան կամ եպիսկոպոս ուզում էր ասպարեզից վերացնել իր հակառակորդին, փորձում էր նրան մեղադրել բյուզանդացիների առաջ որպես հակաքաղկեդոնականի կամ, եթե մեղադրանքը պետք է հասցվեր խալիֆայության ականջին, նրան մեղադրում էր ծածուկ քաղկեդոնականության մեջ։

Ահա այս դավանաբանական վեճերի և ամենաբարդ իրադրությունների մեջ, ինչ-որ տեղ սկսում է ջրի տակ անցնել բյուզանդական կայսրության բարոյական, ինչպես նաև նրա հոգևոր հեղինակությունը. այն միակ կետերը, որոնք կարող էին ջերմացնել հայերի շփումները հելլեն տարրի հետ։ Նույնիսկ Կոստանդնուպոլսի դպրոցները կորցրին նախորդ ժամանակներում վայելած իրենց հմայքը։ Նրանց ուսուցիչները, ինչպես գրում է Մանուկ Աբեղյանը, «եկեղեցականներ էին. նրանց հետաքրքրում էին, գլխավորապես, դավանաբանական և եկեղեցական այլ հարցերը։ Հին բանասիրությունը և արվեստը մոռացության էին մատնված»։ Այսպիսով, այնտեղ, ուր մի ժամանակ տիրապետում էին հոգևոր Բյուզանդիայի հանդեպ նվիրվածության և բարեկամության ուժեղ հոսանքները, աստիճանաբար ծնունդ առան անախորժությունը, սառնությունը և զգուշավորությունը։ Հայերի կաթողիկոսներից մեկը 7-րդ դարի սկզբին այս նոր տրամադրությունները ձևակերպել է հետևյալ բառերով.

> «Ոչ մի հարաբերություն հոմայեցիների հետ, որոնք երկրպագել են Քաղկեդոնին. նրանց ձեռքից մի վերցնեք ոչ գրքեր, ոչ սրբապատկերներ, ոչ իսկ նրանց հաղորդությունը»։

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Այնուհետև, կար նաև այն մամլիչ քաղաքականությունը, որին, որպես կանոն, հետևեցին բյուզանդական կայսրերը հայերի նկատմամբ։ Բռնի զորահավաքները, հայ ազգաբնակ-

չությանը իր երկրից բռնի տեղահանելը և կայսրության այլ շրջաններում վերաբնակեցնելը սովորական երևույթ էր. այնքան, որ մարդ այն տպավորությունն է ստանում, թե Հայաստանը Կոստանդնուպոլսի համար իր զորքերը ձիերով և այրերով ապահովելու ջահեմարան էր. հաճախ նույնիսկ կանանց ու երեխաներին պարբերաբար տեղահան էին անում իրենց երկըրներից նրանց մեկ ուրիշ վայրում բնակեցնելու համար, իբր «այրերի պակասը լրացնելու նպատակով», ինչպես այդ մասին գրում էին մեր հնագույն պատմիչները: Բյուզանդացիներն, ընդհանրապես, նման միջոցների էին դիմում բանակում հայերի բարձրացրած որևէ խռովությունից, կամ էլ հայկական հողի վրա պարսիկների կամ արաբների դեմ մղած պատերազմից հետո: Հայաստանի պատմությունը 7-րդ դարից սկսած մինչև Թուրքերի արշավանքները այսպիսի դրվագներով լի երկար մի ընթերցվածք է: Արաբների արշավանքները տևեցին մեկուկես-երկու հարյուրամյակ: Գալիս էին, ամայացնում երկիրը, սրանք ևս վերցնում էին ավար ու գերիներ, տանում իրենց երկրները, որպեսզի լրացնեին իրենց այրերի պակասը: Ամեն անգամ, նրանց հեռանալուց հետո, հայ նախարարներից որևէ մեկին հաջողվում էր իր ձեռքը վերցնել ավերված երկիրը և հաստատել իր իշխանությունը կամ փոքր թագավորությունը: Այս նախարարը, եթե մի քիչ էլ քաղկեդոնական էր, լավ հարաբերություններ էր ստեղծում նաև բյուզանդացիների հետ. կայսրը թույլ էր տալիս նրան, որոշ տնտեսական և այլ պայմաններով, թագավորել: Հակառակ դեպքում զորք էին ուղարկում, սովորաբար ինչ-որ Նարսեսի, Վարդասի կամ Փոկասի գլխավորությամբ: Վերջինս փոքր գահից գահընկեց էր անում տեղական թագավորին և նրա փոխարեն բարձրացնում էր առավել քաղկեդոնական մեկ ուրիշ իշխանի, կամ էլ ոչ մեկին չէր կարգում թագավոր, այլ վերցնում էր այն ամենը, ինչ կարող էր վերցնել և փոքրիկ թագավորությունը կցում էր կայսրությանը: Տարոնը, Վասպուրականը, Անին և դեռ այդպիսի մյուս թագավորությունները ճիշտ նման եղանակով ամայացվեցին ու կցվեցին Բյուզանդիային:

«Աքսոր»[1] անծանոթ բառը իր շատ օգտագործվելու պատճառով հայերի պատկերացման մեջ դարձել էր սարսափելի մի

1 Հունարեն՝ էքսորիա (ծան. թարգմ.):

տեղանուն: Սերեոս եպիսկոպոսի պատմության մեջ հանդիպում ենք հետևյալ զարմանալի խոսքին. «Կայսրը հրամայեց վերցնել նրան իր կնոջ ու որդիների հետ և տանել մի կալանավայր, որը կոչվում էր Աքսորք»:

Նախքան Թուրքերի արշավանքները գրեթե ամբողջ Հայաստանի բնակչությունը տասանորդվել էր, և երկիրը կցվել էր կայսրությանը: Կիրակոս Գանձակեցին այսպես է պատմում այդ սև շրջանի մասին.

«Իսկ մեր երկրի բնակիչները միմյանց դեմ զգովելով անհերթ հոխորտանքով ու խորամանկությամբ միմյանց վրա հարձակվելով՝ ստախոսությամբ նղաճում էին միմյանց կայսրին մատնելու նենգ խորհուրդներ՝ հերյուրելով արաբներին օգնելը. սրանք զրպարտում էին իշխաններին, անգամ հայրապետին, իսկ սա՝ նրանց, որոնց բռնի առնում տանում էին իրենց բնակավայրերից: Իսկ մնացածներին իբրև անտերունչների արհամարհելով՝ բանի տեղ չէին դնում: Հույները տիրեցին խանձարուրի:

Դրանից հետո հարավային խորշակի հուրը շարժվեց և բերեց մարդախողխող գազանին, որ երդեհելով բնաջնջեց մեր ազգը և առավելապես Անի խաղաքը, որովհետև պաշարեց այն խանձարուրից օր և ապա գրավելով՝ կոտորեց Անի խաղաքի բնակիչներին. ոչ ոքի չխղճաց Ալփասլան կոչված արյունարբու գազանը: Բայց մեր բազավորական իշխանությունը վերջացավ»:

Թուրքերը Հայաստան մտան փաստորեն առանց դիմադրության հանդիպելու: Սուլթան Ալփասլանը 1071 թվականին, առանց մեծ դժվարության, Մանազկերտում, Վանա լճի մոտ, ջարդեց Ռոմանոս Դիոգենիսի զորքերին: Այս հաղթանակը փոքր Ասիայի դռները բացեց Թուրքերի առաջ: Ինքը՝ կայսրը, գերի ընկավ:

Այս անցքերի մասին հայ վանականը գրում է.

«Հարուստ փրկագին տվեցին, և սուլթանը ազատ թողեց Դիոժենին: Բայց ժողովուրդը արդեն չէր ուզում նրան հպատակվել... գան բարձրացրին Միխայելին,

Դուկասի որդուն: Միխայելն իր զորով ցրեց Դիոժենի զորին,-և գինվորները նրան բռնեցին ու գլխին մի պարկ հագցրին: Երբ նրան տանում էին, նահապարհին ստացան կայսեր հրամանը և նրան կուրացրին, իսկ նա չարությունից մահացավ»:

Ամեն ինչի մասին հայ պատմիչները թողել են իրենց վկայությունները: Անցյալում նրանց կրած տառապանքներից շատերը հիշատակված են բարձր սարերում պահպանված հնադույն հայկական եկեղեցիներում, ինչպես նաև նրանց ամենաերևելի մի շարք հայրենակիցների կենսագրություններում:

Այնտեղ, ուր ճանապարհը վայրէջքով կտրուկ թեքվում է, հանկարծ այս ու այն կողմից ամենակարծր քարից երկու կատաղած ալիք դուրս են նետվում և գնդակի նման ուղղվում են դեպի մեր գլուխները: Հազիվ կարողանում ենք, հնօրյա աղավնու նման, կայծակի արագությամբ անցնել: Քիչ անդին կանգ ենք առնում: Դուրս ենք գալիս, վախեցած վերև ենք նայում:

Երևում է փլեկ մի պարիսպ: Մագիստրոսի հին բերդի մնացորդները: Այնտեղ, վերևում, կովել են նրա նախնիները, այնուհետև՝ նաև ինքը: Այդ բերդի բանալիները ինքը տարել է իր հետ և իր ձեռքով հանձնել կայսր Կոստանդինոս Մոնոմախին և ընդմիշտ մնացել է բյուզանդական գահի ծառայության մեջ:

Դրանք հենց այն տարիներն են, երբ մակեդոնական արքայատոհմը տեղահանում էր տեղի հայ ազնվականության մնացորդներին:

Քիչ այն կողմ Բջնի գյուղն է, որ դեռևս ապրում է իր դարավոր կյանքը: Երևում է նաև հին եկեղեցին, կառուցված 10-րդ դարում իր իսկ Մագիստրոսի կողմից: Գնում ենք այն տեսնելու: Եկեղեցին ինքը ևս գործում է: Հինավուրց, բարձր, համարյա քառակուսի, խաչաձև-գմբեթավոր մի կառույց, շուրջն ընկուզենիներ, խնձորենիներ, ծիրանենիներ, նշենիներ, գերեզմաններ: Ներսում հարսանիք է: Մոմի, գինու, ծխախոտի և խունկի հոտերը խառնված իրար: Բավական խոշոր տաճարի կենտրոնում շուրջանակի խմբված մարդիկ հետևում են հարսանեկան խորհրդի արարողությանը: Շուրջպտույտը ուրիշ

մարդիկ և պատանիներ: Նրանք խորհրդին ուշադրություն չեն դարձնում: Գնում-գալիս են եկեղեցում, խումբ-խումբ ինչ-որ բաների մասին զրուցում են, ուրիշներ նստել են աթոռների վրա, և նրանք էլ զվարթ ձայներով ու ձեռքի աշխույժ շարժումներով ինչ-որ բաներ են ասում: Այնտեղ է նաև միջին տարիքի, գուցեև մեզ նման արդեն տարեց, մի մարդ: Որպես պատերազմի հաշմանդամ, նա, դռնից քիչ ներս՝ պատին թիկնած, ծխում է իր սիգարետը և կարդում է իր թերթը: Մի քիչ հետևեցինք հարսանեկան խորհրդի արարողությանը: Փեսայի գլխին դրել էին մի հին ոսկեզօծ թագ, մեկ ուրիշ ավելի անհրապույրն էլ դրել էին հարսի գլխին: Թագերը շատ կանոնավոր կերպով, հարմար նստել են նրանց գլխներին, բայց նորապսակների ուղիղ հետևում կանգնած երկու ընկերներ, իրենց ձեռքերը խորհրդանշական կերպով մեկնել են, ասես իրենք են ձեռքերով պահում թագերը: Երգողների մեջ առանձնանում էր քահանայի ձայնը, որն, անկասկած, մի քիչ քեֆոտած էր: Բոլոր ներկաներն այդ արդեն նկատել են, որով և ամբողջ արարողությունն ստանում է առանձնապես մի ջերմ շեշտ: Մենք հետևում ենք, մինչդեռ քահանան, թողնելով նորապսակներին իրենց կանգնած տեղում, մի ցատկով անցնում է խորանի առաջ, մոտ մեկ մետր բարձր, որը, բուն տաճարից բաժանված լինելով կարմրավուն մի վարագույրով, լիովին նմանվում է թատերական բեմի: Քահանան իր դերն այժմ շարունակում է այնտեղից, շրջանակի երգելով, խաչակնքելով և այլ խորհրդավոր նշաններ անելով:

*Այնտեղից մենք ևս դուրս եկանք զվարթ տրամադրությամբ, ասես մեզ լավ գինի էին մատուցել: Բայց դրսում նորից տեսանք

նա գնացել էր իր բերդի բանալիները հանձնելու նրանց։ Սա ևս ողբերգական իրադարձություն է արտակարգ մի մարդու՝ հայոց պատմության սիմպլիգադներում։

Բայց ինչո՞ւ Մագիստրոսն ինքը գնաց և հանձնեց իր բերդի բանալիները։

Նահապետը պատասխանում է.

— Որպեսզի նրանք իրենից բռնի չվերցնեն։

Ճշմարիտ։

Իմիջիայլոց, նա ևս կառուցել է շատ եկեղեցիներ իր տոհմին պատկանած ընդարձակ տարածքի վրա։ Բջնիի ձորից մի քանի կիլոմետր այն կողմ մենք պատահեցինք հայկական ամենագեղեցիկ վանքերից մեկին՝ Կեչառիսի համալիրին, որը շատ լավ է պահպանվել։ Նրա պարսպապատից ներս կա երեք եկեղեցի։ Ամենամեծը, որը նվիրված է սուրբ Գրիգորի հիշատակին, կառուցել է Մագիստրոսը 1003 թվականին։

Մագիստրոսը եղել է ականավոր մտավորական և քաջ զինվորական։ Նրա թղթերը, մեծ մասամբ գրած Բյուզանդիայից և ուղղված իր հայրենակիցներին, հայ հին գրականության ամենանշանակալից հուշարձաններից են։ Դրանք ցույց են տալիս հեղինակի արտակարգ զարգացածությունը և բազմաթիվ հոգեկան շնորհները, բայց և նրա հոգեկան մեծ ողբերգությունը, որն իր ձևով արտացոլում է իր ցեղի ողբերգությունը հատկապես այդ ժամանակաշրջանում։

Արդեն վաղուց վերջացել էր խալիֆայության ամենակարողությունը, և հայ իշխանները փորձում էին հայկական փոքրիկ թագավորությունները վերամիավորել մեկ միասնական պետության մեջ, Բագրատունիների մայրաքաղաք Անիի շուրջը։ Դա խաղաղ ընդմիջում էր։ Վանքերում սկսում էին վերածաղկել հայոց դպրությունն ու արվեստը, և հատկապես այդ ժամանակահատվածում հանդես են գալիս մի քանի ականավոր դեմքեր, ինչպես բանաստեղծ Նարեկացին Վանի մոտ և այս փիլիսոփան՝ Մագիստրոսը, Անիի թագավորության մեջ։ Բայց իր ժամանակ էլ ավարտվում է այդ լավ շրջանը, և Բագրատունիների արքայատոհմն ընկնում է իր վերջին թագավորի՝ Գագիկ Բ-ի հետ, որի դեմ դավեցին բյուզանդացիները, նրան գերի տանելով իրենց մոտ։ Բյուզանդացիների դեմ կռիվներում ընկավ Մագիստրոսի հորեղբայրը, թագավորության սպարապետ

Վահրամ Պահլավունին։ Դրանից մի քանի տարի առաջ սպանվել էր նաև հայրը՝ Վասակ Պահլավունին։ Վերջին թագավորի բարեկամ և զինակից Գրիգոր Մագիստրոսը իր արքայի հետ մերթ կռվել է բյուզանդացիների, մերթ թուրքերի դեմ։ Հետագայում նա շնորհազրկվել է երիտասարդ թագավորի առաջ, որը և իր նախկին բարեկամին բանտարկել է Տարոնի բերդում։

Երբ նա գնաց Պոլիս, նրան շնորհեցին մագիստրոսի պաշտոն։ Այդ ամենաբարձր պաշտոններից էր՝ երկրորդը կամ երրորդը կեսարի պաշտոնից հետո, իսկ այլ ժամանակներում՝ այն միայն ցածր էր թագավորից ու պատրիարքից։

Այդ պաշտոնյայի ունեցած իշխանությունը տարբեր հանգամանքներում տարբեր է եղել, բայց իբրև պաշտոն այդ ժամանակներում ևս մնում էր կարևորագույններից մեկը։ Պաուիդոպուլոսն ասում է. «Ամենաբարձր քաղաքացիական պաշտոնը»։

Նրան դարձրին մագիստրոս և ուղարկեցին կառավարելու Միջագետքը։ Այնտեղ նա հետևողականորեն, բայց առանց միջոցների, դաժանությունների, հալածեց թոնդրակյանների աղանդը, պավլիկյանների աղանդի նորագույն և առավել հանդուգն արտահայտությունը։ Ըստ երևույթին, Մագիստրոսի զինվորական ու պետական գործունեությունը շատ հաջող ընթացավ։ Նրան դարձրին դոմեստիքոս և նրա կառավարմանը հանձնեցին Տարոնը մինչև Վասպուրական։

Բայց Գրիգորի հոգին լաց էր լինում ուրիշ բաների պատճառով։

Ինչպիսի պաշտոններ էլ նրան հանձնում էին, մտքից չէին դուրս գալիս հելլենների չորս արվեստները՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, երաժշտություն։ «Ճանաչելով դրանք,— ասում է նա իր թղթերից մեկում,— մենք ձեռք ենք բերում այնպիսի գանձեր, որոնք անսպառ են, և ոչ ոք չի կարող դրանք քեզանից վերցնել. դրանք ամենաթանկն են այն ամենից, ինչ կարող է կյանքը տալ մեզ»։

Նրա նամակներից մի փոքր ծաղկաքաղ է արել Մանուկ Աբեղյանը իր «Գրականության պատմության» մեջ։ Բայց եղածն էլ բավական է, որպեսզի պատկերացնենք այդ մարդու մեծ կրթվածությունը, նրա մտածողության ինքնատիպությունը և փայլատակումը։ Նրա հետ թղթակցողներից մեկը արքեպիսկոպոս Պետրոսն էր, այդ ժամանակաշրջանի մեկ այլ դեմք։

Հայ պատմիչները նրան մեղադրում են որպես բյուզանդացիների մարդու, որ իբր նրա օգնությամբ բյուզանդացիներին հաջողվել է մեկ առ մեկ իրենց ձեռքը գցել հայկական թագավորությունները։ Նա եղել է նաև բանաստեղծ, եղել է նաև մեծահարուստ։ «Բայց իր կյանքի վերջում նա հասկացավ, թե այս աշխարհում ինչքան ունայն են փառքն ու հարստությունը», գրում է պատմիչը։

«Թեև դու, սրբազնագույն տեր և մեր բոլոր եպիսկոպոսների առաքելական գլուխ, ինձ գրում ես, լուսավոր ցուցմունք ես տալիս, որ ես ծառան ավելի ծավալվի երկար խոսելով իր իմաստասիրական ուսումնասիրությունների մասին, մի բան, որը ինձ պետք է ուրախացնի, ինչպես հայրն է ուրախանում իր որդու հաջողություններով, այսուհանդերձ սիրելի է ինձ համար միշտ լինել հակիրճ, ...վասնզի, ինչպես մի հատ ուղիղ գիծը ցույց է տալիս ուղղանկյան ամբողջությունը, այնպես էլ հասկացողի համար մի խոսքը կարող է ետևից իրեն հետևություն շատ խոսքեր բերել»։

Մագիստրոսը շատ լավ ծանոթ է հին հունական դիցաբանությանը և փիլիսոփայությանը, հիանալի գիտի Պլատոնին և Արիստոտելին, որոնց թարգմանել է իր մայրենի լեզվով։ Գեղարազանց դիտելիքներ այդ ամենի մասին և ազգային լուսավորչի մեծ հեղինակ։ Նրան չի պակասում նաև հումորը։ Նա գրում է իր մի բարեկամին, որը լավ ուսող էր և, քանի որ ընդունել էր քաղկեդոնական դավանանքը Քրիստոսի երկու բնության մասին, ավելի մեծ ազատություն էր զգում ամեն օր ձուկ ուտելու, ինչի հանդեպ առանձնապես թուլություն ուներ։ Այս բարեկամը խոստացել էր կարմրախայտներ ուղարկել Գրիգորին, բայց չէր շտապում իր խոստումը կատարելու։

«Ուղարկիր ինձ,— գրում է նրան,— հապշտապ ես խոստացած կարմրախայտները, հակառակ դեպքում այս նամակից հետո ես քեզ համար բան կգրեմ և կողոդեմ ճարտարախոսության այնպիսի հեղեղով, որ քեզ վստահեցնում եմ, ուտելու ես ես կարմրախայտները, և չես զգալու, թե հաճելի համ են տալիս ես բերանին, և ոչ

միայն այդ կարմրախայտները, այլև բոլոր մյուս սողուններ, բզեզներն ու ճիճուները, զոր գիտեմ, թե ուտում ես ամեն ուրբաթ օր, ես պիտի ստիպեմ քեզ զզվանքով ու սարսափով փսխել»։

Ըստ երևույթին, Գրիգորը իրեն բացարձակապես հանգիստ էր զգում իր մայրենի լեզվի աշխարհում։ Նա շատ հեշտությամբ նստել ու գրել է բազմատող մի պոեմ, 16-վանականի տողերով։ Այն գրել է 1045 թվականին, երբ գնացել էր Պոլիս և հանձնել իր բերդի բանալիները կայսրին։ Այնտեղ ծանոթացել է մի արաբ բանաստեղծի հետ։ Նա այնքան շատ է խոսում արաբական պոեզիայի մասին, որ Գրիգորը իրեն վիրավորված է զգում, հատկապես երբ արաբը մեծ հափշտակությամբ խոսում էր արաբական հանգի գեղեցկության մասին։ «Իսկ դուք,— պատասխանում է Գրիգորը,— այդ համարում եք բանաստեղծություն, երբ գրում եք նույն հնչյունով վերջացող տողեր։ Այժմ անմիջապես ես քեզ համար գրեմ քանի տողեր ուզում ես։ Ինչքան որ Մուհամմեդը գրել է 40 տարում, ես քեզ նույնքան կգրեմ ընդամենը չորս օրում։ Եվ իմ բոլոր տողերը պետք է վերջանան —ին վանկով, որը դու համարում ես ամենալավը»։ Եվ իրոք թեմա վերցնելով Աստվածաշնչի բովանդակության ազատ շարադրանքը, չորս օրում գրում է հազար տասնվեց տող, բոլորն էլ —ին հանգով։ Իր պոեմը Մագիստրոսը անվանում է «Հազարտողյան»։ Եվ սա հայ բանաստեղծության մեջ առաջին պոեմն է, որտեղ խիստ հետևողականությամբ կիրառված է տողերի հանգավորումը։ Մագիստրոսից հետո նրա հետնորդներից և հայ ամենանշանավոր բանաստեղծներից մեկը՝ Ներսես Շնորհալին, գրել է «Ողբ ի վերայ անկմանն Եդեսիոյ» պոեմը, չորս անգամ ավելի երկար, քան Գրիգորի Հազարտողյանը։

Ահա նման բաներով հաճախ Գրիգորը ցրում էր իր բազմաթիվ վշտերը, նաև իր երկրի վշտերը։ Նա ունի մի թուղթ, ուղղված կաթողիկոս Պետրոսին, որի մեջ ասում է, թե այն, ինչ արեց, հանձնելով իր բերդը բյուզանդացիներին, իր խոշոր անմտություններն էր, բայց ոչինչ ավելի լավ չէր կարող լինել հայրենիքի և իր համար ստեղծված այս դժվար պայմաններում։

«Թող բարի լինի fո գերիմաստուն միտքը լսելու և դատելու իմ անմիտ արարքը, որի պատճառով շատ ավելի մեծ դառնություններ ճաշակեցի, քան անգամ ինքը Պրիամոսը, որը հետ այնու ոչ մի երջանիկ օր չունեցավ: Ըստ որում, հասարակ ժողովուրդը պատմում է հետևյալ առակը զգուշավոր արտույտի մասին, որը մի օր բարձրից ընկնում է գետին, մեջքը ճողին, պարզում է տոտիկները դեպի երկինք, որպեսզի չլինի, թե երկինքն ևս ընկնի և ճզմի իրեն. նա, ուրեմն, փորձում էր իր տոտիկներով պահել երկինքը: Այս տեսնողները սկսեցին ծաղրել նրան և ասացին. «Ով դու խելքի ծովդ. fո այս ծղոտ տոտիկներով երկի՞նքը պիտի պահես»: Իսկ թռչունը պատասխանում է. «Ես անում եմ այն, ինչ կարող եմ»: Ահա իմ այս արարքներն էլ իմ ծղոտներն են... Այսուհանդերձ, ճուսալով Տիրոջը և հավատալով այնտեղ (այսինքն՝ Կոստանդնուպոլսում) ինձ տրված խոստումներին, մի լրաբեր ուղարկել եմ հայրենիք, որն արդեն վաճառվել ու մատնվել է շատերի կողմից, իսկ մենք շտապեցինք փախչել հալածական: Թող լինի Տիրոջ կամքը»:

Այս անձնավորությունը ներկայացնում է այդ դժվարին ժամանակաշրջանում իր ազգի կրած տառապանքների առիթով մտածմունքի և տագնապի մի գերագույն պահ: Իր կրած ծանր դասերը նա փորձեց փոխանցել իր հետնորդներին, ինչպես այդ երևում է նաև իր որդուն հղած մի նամակից, ուր գրում է.

«Անմիջապես, որ սկսեցիր գրերը հասկանալ, ես շտապեցի սիրով ու եռանդով, լավ դայակի նման, գիշեր-ցերեկ բեզ սնել Պյութագորասի, Պլատոնի, Ստահիրացու գրքերով, և իբրև հատուցում այժմ բեզ շատ եմ խնդրում, մի մոռացիր իմ ավանդները, մի րույլ տա, որ fո մեջ հանգի սերը դեպի մեր Քրիստոս աստվածը և դեպի նա, ով դարձավ մեր առաջին լույսը. նկատի ունեմ Պարթևին՝ fո հորը»:

Նրա որդի Վահրամը հաջորդեց նրան որպես Միջագետքի և Տարոնի կառավարիչ, բայց իր երազում պահեց այն ամենը,

ինչ հայրը գրել էր կտակի մեջ, այն է՝ նվիրվել եկեղեցուն և հայ դպրությանը: Նա հանդիպեց կայսրի համառ մերժումներին, բայց ի վերջո կարողացավ անել այն, ինչ ուզում էր: Նա հրաժարվեց պաշտոններից և դարձավ եպիսկոպոսապետ՝ կաթողիկոս Գրիգոր Դ: Քիչ անց թողեց նաև հայրապետական աթոռը, գնաց Պոլիս, անցավ Եգիպտոս, Պաղեստին: Նա նպատակադրվեց հավաքել և հայերեն թարգմանել բոլոր վկաների վարքերը, որի համար էլ ստացավ Վկայասեր մականունը:

Գրիգոր Մագիստրոսի անունը հետագայում հայրենակիցները հաճախ են հանդիպելու նրա հետնորդների գործերում. հետնորդներ, որոնցից շատերը առաջատար դեր կատարեցին հայ ազգի բոլորովին հանկարծակի ապրած նոր ծաղկման տարիներին, Կիլիկիայի թագավորության մեջ. ծաղկում, որը հայերի վերջին փայլատակումը եղավ, նախքան այս երկրում դարերով կհանգեր նաև նրանց լույսը այն մեծ խավարի մեջ, որ իրենցից հետո տարածեցին թուրքերը:

Հայոց հին պատմության վերջին փուլին վերաբերող երկու կարճ գրույց տարեգրություններից:

Մի անգամ Տրապիզոնում Ջրօրհնեքին հրավիրեցին նաև հայոց կաթողիկոս Պետրոսին, որը հետացել էր հայրենիքից: Այնտեղ ներկա էր նաև Բյուզանդիայի կայսրը: Բայց Պետրոսին և նրա եպիսկոպոսներին կանգնեցրին գետափին շատ ավելի բարձր, քանի որ հայերի կատարելիք Ջրօրհնեքը կանոնական չէր համարվում, և նրանց օրհնած ջրերը չէին կարող սրբագործված լինել: Ուստի նախքան ջրերը ծով թափվելը, հույն եկեղեցականները, որոնք հայերից ներքև շատ լավ դիրք էին բռնել, մտածեցին օրհնել և սրբագործել: Նրանք նաև մի վարժեցրած աղավնի ունեին, որը պետք է թռչեր իրենց օրհնած ջրերի վրա, որով պետք է ապացուցվեր, թե Սուրբ Հոգին օրհնեց իրենց ջուրը, այլ ոչ թե հայերի: Բայց ահա քեզ հրաշք: Երբ Պետրոսը ջուրը, այլ ոչ թե հայերի: Բայց ահա քեզ հրաշք: Երբ Պետրոսը օրհնեց ջուրը, գետի հոսանքը նո դարձավ, և ջուրն այնքան պայծառացավ, որ արևը հանգավ, և բոլորի աչքը մթնեց: Եվ երբ հետո աղավնին փորձում է թռչել հույների օրհնած ջրերի վրայով, մի արծիվ սլանում է և իր մագիլներով խլելով աղավնուն, բարձրացնում, տանում է իր հետ և անհետանում:

Բոլորը զարմացան այդ հրաշքից: Եվ հույները Պետրոսին առնում տանում են ավելի հեռու, Սեբաստիա: Այստեղ հայոց

հայրապետն էր Վահրամը, այսինքն, Մագիստրոսի որդին, Գրիգոր Գ Վկայասերը։

Այս դեպքը պատմում են բոլոր հայ հին ժամանակագիրները։

Ահա և մյուս դրույցը.

Հայերի վերջին թագավոր Գագիկը գնում է Պոլիս, որտեղ հույները նրան բռնում և բանտարկում են։ Այնուհետև բանտից հանելով, նրան աքսոր են ուղարկում Սերաստիա (հետագայում նրան սպանում են)։ Այնտեղ Գագիկը լսում է, որ մի հույն եպիսկոպոս, Մարկոս անունով, իր շանը կոչել է Արմեն, «հայերի հանդեպ հույների ունեցածատելության պատճառով»։ Գագիկը գնում է Մարկոսի տունը։ Մարկոսը նրան հրավիրում է ճաշելու։ Ճաշելիս թագավորը նրան ասում է. «Ուզում եմ, որ ինձ մի շնորհ անես»։ «Ինչ որ կամենաս»,— պատասխանում է եպիսկոպոսը։ «Կանչիր քո շանը»։ Շունը պառկած է լինում դռան շեմին։ Մարկոսը նրան կանչում է մեկ ուրիշ անունով. շունը տեղից չի շարժվում։ «Նրան իր իսկական անունով կանչիր»,— ասում է թագավորը։ Մարկոսն այդպես էլ անում է, և շունն իսկույն վեր է կենում։ «Ինչո՞ւ նրան այդպես կոչեցիր»,— հարցնում է Գագիկը։ «Ի՞նչ նշանակություն ունի»,— պատասխանում է եպիսկոպոսը,— «մի փոքրիկ քոթոթ է»։ Այնժամ թագավորը հրամայում է բերել մի պարկ և շանը գցել պարկի մեջ։ «Հիմա էլ տիրոջը գցեք պարկի մեջ, տեսնենք, թե ինչքա՞ն է քոթոթը փոքր»։ Եպիսկոպոսը լաց է լինում և պատասում, որ այդ չանեն, բայց թագավորի մարդիկ նրան էլ նետում են պարկի մեջ և գավազանով հարվածում են շան կողերին։ Շունը, ցավից կատաղած, խածնում է Մարկոսի փորը և Մարկոսը ճչում է. «Ինձ ուտում է»։— «Ահագին մարդ ես, և քեզ ուտում է մի փոքրիկ քոթո՞թ»։ Գավազանով մի քանի անգամ էլ հարվածում են շանը, վերցնում եպիսկոպոսի բոլոր դանձերը և հեռանում, թողնելով, որ պարկի մեջ մի շունն ուտի մյուսին...

ՍԻՍՎԱՆ

Ինչպես պատմում է դրույցը, մի հայ պինվորական, Ռուբեն անունով, սպանված Գագիկ Ի թագավորի շրջապատից, կարողացավ տեր դառնալ լեռնային Կիլիկիայում, Տավրոսի

վրա գտնվող Բարձրբերդ ամրոցին։ Այն պահից իր ձեռքում և աստիճանաբար իր իշխանությունը տարածեց շրջակա հողերի վրա, հիմնելով մի փոքր իշխանապետություն նման այն մյուսներին, որոնք առաջանում էին Մեծ Հայքում և ամբողջ Փոքր Ասիայում, հենց որ հանգամանքները այդ թույլ էին տալիս։ Վերջին տարիներին բյուզանդացիների քաղաքականության հետևանքը եղավ այն, որ ամենուր նրանք հայկական բնակչություն սփռեցին։ Շատ հաճախ խոշոր շրջաններ, ինչպես նախորդ դեպքում տեսանք Գրիգոր Մագիստրոսի կապակցությամբ, բյուզանդացիները վատահում էին իրենց երկրներից հալածված հայ ղորականներին։ Այդ մասին Մատթեոս Ուռհայեցին իր պատմության մեջ գրում է.

«Հույները հայ իշխաններին տրամադրում էին երկրամասեր, ասպիսանեներ և պալատական պաշտոններ։ Նրանցից վերցրած իշխանությունների փոխարեն նրանց տալիս էին ուրիշ խոշոր իշխանություններ և նրանց բերդերի փոխարեն ուրիշ անառիկ բերդեր և գավառներ, կալվածքներ, վանքեր։ Վասպուրականի, հայկական մեծ նահանգի, բնակչության մեկ երրորդը նրանք 1021 թվականին տեղափոխեցին Կապադովկիա, 4000 գյուղ, 72 բերդ, 8 քաղաք...»[1]։

Երբ կայսրությունը Թուրք-սելջուկների և, քիչ անց, խաչակիրների հարվածների տակ սկսեց երերալ ու նահանջել, Տավրոսի, Անտիտավրոսի ու Սև լեռան վրա գտնվող հայկական քաղաքների և բերդերի կառավարիչները, բնական է, որ պետք է բարձրացնեին սեփական դրոշը։

Կայսրության և հայերի միջև բացված հոգևոր անջրպետի մասին մենք արդեն խոսել ենք նախորդ գլուխներում։ Այստեղ կավելացնենք մի քանի բան այն ամենից, ինչ իր ժամանակագրության մեջ պատմում է վանական Մատթեոս Ուռհայեցին.

«Հռոմայեցիների (իմա՝ բյուզանդացիների— Ս. Գ.) ազգը սովոր է (սուտ) երդումներով կործանել մեր աշխարհի մեծամեծներին... Այն ստավածուրաց և նենգավոր ազգ է... չար և անողորմ»։

[1] Հեղինակի այս մեջբերումը Ուռհայեցուց ունի ոչ մեծ տարբերություն բնագրի համեմատությամբ (Ծ. Բ.)։

Այդ ժամանակաշրջանի հայ պատմագրությունը առգրված է գլխավորապես այդ ոգով։ Սակայն հայերի համար, այն թշվառ պայմաններում, որոնցում այդ ժամանակ գտնվում էր կայսրությունը, և այն աղետներում, որոնց ենթարկվում էր իրենց հայրենիքը թուրքերից և ապա մոնղոլներից, կենսական հարց էր դարձել՝ գտնել մի անկյուն, որտեղ հնարավոր լիներ վերահավաքվել և վերահաստատել իրենց սրբություններն։ Լարավի լեռներում գտնվող ազատ ամրոցները ընձեռում էին այն առավելագույն ապահովությունը, որ կարող էր գտնել այդ ազգը։ Նրանք, ովքեր կարողանում էին փրկվել թուրքերի խանչալից կամ մոնղոլների նետերից, վերցնում էին իրենց հետ ինչ հնարավոր էր և գնում ազատ Կիլիկիա, Սսի երկիրը, ինչպես երբեմն անվանում էին բերդերի բերդ, ամրացված Սիս քաղաքի շուրջ աստիճանաբար կազմավորվող այդ թագավորությունը։

Թագավորության հիմնադիր Ռուբենը իրեն համարում էր Բագրատունյաց գործի շարունակող և նրանց հետնորդը։ Նրա օրինակին հետևեցին նաև հարևան գավառներից նրա ուրիշ հայրենակիցներ ևս, այնպես որ հետզհետե սկսել էր կազմավորվել մի ավելի լայն հայկական հասարակություն Կիլիկիայի ծովափի երկարությամբ, սկսած Ալեքսանդրետի ծոցից, որն անվանեցին Հայկական ծոց, մինչև Կալոնորոս, շուրջբոլորը բնական սահման ունենալով ամբողջ լեռնային ղանգվածը, Տավրոսից մինչև Ամանոս լեռները։ Երեք մեծ տոհմեր գլխավոր դերը խաղացին հայոց պետականության պատմության այս վերջին փուլում՝ Ռուբինյանները, Արծրունիները և Օշինյանները։ Վերջիններիս թագավորանիստը գտնվում էր Տավրոսի լեռներում։ Քանի որ նրանց թիկունքին գտնվում էր Իկոնիայի սուլթանությունը, նրանք հարկադրված էին բարեկամական հարաբերություններ պահպանել բյուզանդացիների հետ։ Նրանք բավական ժամանակ շարունակում էին իրենց խաղը խաղալ, շատ հաճախ բնդհարվում էին հայկական մյուս բերդերի հետ։ Բայց 12-րդ դարում, երբ խաչակիրները շատ լուրջ հարցեր ստեղծեցին Բյուզանդիայի համար, հայ ավատատերերը կարողացան ավելի սերտ հարաբերություններ հաստատել ու մերձենալ իրար և իրենց թագավոր հռչակեցին Ռուբինյան տոհմից Լևոն Բ-ին։ 1198 թվականին հանդիսավոր կերպով տեղի ունեցավ նրա թագադրությունը Տարսոնում և դրանից հետո, շուրջ ամբողջ մի դար, Կիլիկիայի թագավորությունը ապրեց բարգավաճման մի ժամանակաշրջան, որպես միասնական հայկական թագավորություն։ Կիլիկիայի պետական կառուցվածքը շատ բաներում կրկնում էր հին հայկական սկզբնօրինակը, բայց շատ բաներում նաև ուներ նոր տարրեր, որոնցում նկատելի են ֆրանկ խաչակիրների ունեցած ուժեղ ազդեցությունները։ Խաչակիրներին հայերը, բյուզանդական կայսրության հետ իրենց ունեցած հակասությունների պատճառով, ընդունեցին իբրև դաշնակիցների և նրանց հետ հաստատեցին քաղաքական և ազգակցական սերտ հարաբերություններ։

Թագավորի կողքին կար Կանցլերը (Ջանցլեր), այսինքն՝ վարչապետը. կար Դունդատարը՝ երկրի ղորապետը, Պրոքսիմոսը (տնտեսական նախարար) և այլ նախարարներ ու աստիճանավորներ, որոնց նստավայրը Սիս քաղաքն էր, ուր և գտնվում էր թագավորի պալատը։ Մյուս խոշոր քաղաքներն էին՝ Տարսոնը, Ադանան, Այաս և Ալեքսանդրետ նավահանգիստները, Անարղաբան, Գեբմանիկը (Մարաշ) և այլն։ Շատ շուտով այս թագավորությունն ապրեց անտեսական նշանակալից վերելք, քանի որ դրան առավելապես նպաստում էր նաև աշխարհագրական դիրքը. Կիլիկիան առևտրական բանալի էր Միջերկրականից դեպի Փոքր Ասիայի տարբեր շրջանները, մինչև Կովկաս, Պարսկաստան և Հնդկաստան ընկած ճանապարհի համար։ Շուտով բացվեցին կանոնավոր և կայուն քարավանային առևտրական ուղիներ։ Այստեղ հայերի առևտրական ոգին և արհեստավորական բնածին տաղանդը բարգավաճելու իդեալական պայմաններ գտան։ Արտակարգ նշանակալից էր նաև հոգևոր շարժումը, քանի որ շատ շուտով Մեծ Հայքից այստեղ փոխադրվեց կաթողիկոսական աթոռը, որը սկզբում հաստատվեց Հռոմկլա բերդում, Կիլիկիայից արևելք, Եփրատի աջ ափին, և հետո՝ Սիս մայրաքաղաքում։

Բայց այստեղ հայերը պետք է պայքարեին բազմաթիվ և հզոր թշնամիների դեմ։ Բացի ուժային առճակատումից, որի համար նրանք հոգ էին տանում իրենց զինված ուժերն ունենալու, մեծ նշանակություն ունեին քաղաքական խաղերը և հմուտ դիվանագիտությունը, դաշնակցություններն ու բազմապիսի շրջադարձերը։

Բյուզանդական կայսրությունից բացի, հյուսիս-արևմուտքում պետք է դիմագրավեին նաև Իկոնիայի սուլթանությանը, իսկ

մյուս ծայրին, դեպի Արևելք, Անտիոքի ֆրանկական թագավորությանը։ Բայց այս երկրների և կայսրության միջև գոյություն ունեցած բազմաթիվ և բազմապիսի ռազմական ու քաղաքական բարդ հարաբերությունների մթնոլորտում Կիլիկիայի տերերը կարողացան նրանց թշնամուց վերածել իրենց դաշնակիցների։ Երբ Հովհաննես Կոմնենոս կայսրը արշավեց Անտիոքի ֆրանկներին հարվածելու, հարկադրված եղավ մեկ առ մեկ պաշարել և չեզոքացնել իր ճանապարհին դտնվող բազմաթիվ հայկական բերդերը։ Քիչ անց առավել լուրջ սպառնալիք ծագեց այն ուղղությամբ, որտեղից սովորաբար իջնում էին բոլոր պատմական մեծ աղետները՝ Կասպյան դռներից։

Հայ պատմիչներին ենք պարտական Կովկաս և Փոքր Ասիա մոնղոլների կատարած առաջին արշավանքների մի քանի շատ կենդանի նկարագրություններ։ Դրանցից մեկը պատկանում է դեպքերին ժամանակակից Կիրակոս Գանձակեցուն.

«Իսկ նրանք (մոնղոլները) ընդհանրապես մորեխի բազմությամբ փռված էին դաշտերը, լեռները, ձորերը, կամ իրև աննման հոդությամբ տեղացել էին երկրի վրա։ Այնուհետև այնտեղ պետք էր տեսնել տրամագիծ աղետներ և ողբերի արժանի սուգ։ Որովհետև հողը չէր բավարարում մտածներին, ոչ էլ ճարերն ու անտառներն էին պահում ապաստանածներին, ոչ բերդերի շատ ամուր շինվածքները, ոչ նեղ ու խոր ձորերը, այլ ամենը դուրս էին նետում բարձրվածներին։ Լիվում էր արանց արին, աղեղնավորների կորովի ձեռքերը բուլանում էին, բարկացնում էին սրեր ունեցողները, որպեսզի բշնամիները չտեսնեն ու անողորմ կերպով չսպանեն։ Թշնամիների ձայները հալում էին նրանց, կապարճների չխկոցները անարեկում էին նրանց բոլորին։ Յուրաքանչյուր աչք իր օրհասը եկած էր տեսնում, և իրենց սրտերը ներսում մեռնում էին։ Մանուկները սրից փախչում էին ծնողների մոտ, իսկ ծնողները նրանց հետ վախից ընկնում էին նախճան թշնամիների վար գցելը։

Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես սրերը անխնա կոտորում են տղամարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին, եպիսկոպոսներին ու քահանաներին, սարկավագներին ու դպիր-

ներին։ Մծկեր մանուկները հարի էին խփվում, և գեղեցիկ կույսերը խառնակվում ու գերվում էին...

Միակին ու միամոր արտասուքներին չէին խղճում և ծերությանը երբեք չէին ողորմում։ Ուրախությամբ էին դիմում սպանությանը, կարծես գնում էին հարսանիք կամ գինարբում։

Ամբողջ երկիրը լցվեց մեռելների դիակներով, և չկար մեկը, որ թաղեր դրանք։ Սիրելիների աչերի արտասուքը սպառվել էր, և չկար մեկը, որ անօրենների անից բնկածներին ողբար։ Սուգ հագավ եկեղեցին, և նրա գեղեցկության պայծառությունը վերացավ. խափանվեցին նրա արարողությունները, և վերացան պատարագները նրա սեղանից. լռեցին ժամասացությունները, և նրա մեջ այլևս չէր լսվում երգերի ձայնը։ Ինչպես խավարով պատած էր ամբողջ երկիրը, և մարդիկ ավելի գիշերն էին սիրում, քան ցերեկը...»։

Պատմիչն այստեղ խոսում է վերին Հայքի մասին։ Ինչ վերաբերում է Կիլիկիային, ապա նրա իշխանները, առաջ քշելով Իկոնիայի Թուրքերին, որոնց մոնղոլներն իրենց հեծելազորով բառացիորեն ավլեցին, կարողացան բարեկամական մերձեցման գալ և իրենց ապահովել այդ սարսափելի վտանգից։ Թուրքերի ջախջախվելուց հետո հայոց թագավոր Հեթումը Բաթու խանի մոտ ուղարկեց իր եղբայր Սմբատ Գունդստաբլին ընծաներով ու բարեկամության առաջարկով, որից հետո երկու եղբայրները, թագավորն ու սպարապետը, մեծ ճանապարհորդության գնացին Մոնղոլիա, Կարա-Կորում, Մանգու մեծ խանին խոնարհվելու համար։ Այս եղանակով նրանք ամրապնդեցին բարեկամությունը մոնղոլների հետ և նրանցից գիր վերցրին, որով մեծ խանը իրենց ճանաչում էր իրենց երկրների տերեր։ Բացի այդ, մեծ խանը նրանց շնորհեց նաև մի շարք շրջաններ, որոնք նախկինում դտնվում էին Իկոնիայի սուլթանի տիրապետության տակ։ Իրենց այդ ճանապարհորդության ընթացքում Հեթումն ու Սմբատ Գունդստաբլը անհավատալի շատ բաներ տեսան։ Այդ մասին ժամանակագիր Կիրակոսը գրում է հետևյալը.

«Ուրիշ շատ բաներ էլ պատմեց իմաստասեր (Հերում) բագավորը բարբարոս ազգերից, որը մենք բաց ենք թողնում՝ որպեսզի որևէ մեկին ավելորդ չթվա»։

Նախապես, սակայն, ավել է հետևյալ հիանալի նկարագրությունը.

«Որովհետև հուսով ակնկալում ենք մեզ պատած այս նեղությունից փրկություն, մտադրվեցինք մեր ազգի նկող սերունդներին հիշատակ թողնել, ուստի համառոտ կընկարագրենք հետաքրքրասերների համար նրանց կերպարանքն ու լեզուն:

Կերպարանքով ու տեսքով աճավոր ազգ էին և զարհուրելի. մորուք չունեին, բայց ամանք սակավաթիվ մազ ունեին շրթունքին կամ դնչին: Աչքերը նեղ էին ու սրատես, ձայները նուրբ ու սուր, երկարակյաց էին ու դիմացկուն:

...Ուտում էին ամեն տեսակի կենդանի՝ մաքուր ու անմաքուր. ձիու միսը ավելի էին գերադասում. կառկտոր նոշում էին, խաշում կամ խորովում էին առանց աղի և ապա մանր կոտորում էին, բացացնում աղաչրում և այդպես ուտում. ոմանք ուղտերի նման ծնկում էին, ոմանք էլ նստած էին ուտում: Ուտելիս համահավասար բաժանում էին տերերին ու ծառաներին, իսկ կումիս կամ գինի ըմպելիս՝ մեկը մեծ ամանով վերցնում էր իր ձեռը և փոքր բաժակով մեծ ամանից վերցնում շաղ էր տալիս դեպի երկինք, ապա արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ, ապա իեր՝ շաղ տվողը մի փիչ խմում էր նրանից և մատուցում էր ավագագույնին: Իսկ երբ որևէ մեկը նրանց համար ուտելիք կամ ըմպելիք էր բերում, նախ բերողին էին տալիս ուտելու և խմելու, իսկ նետո իրենք էին ուտում ու խմում, որպեսզի մահադեղերից չվնասվեն:

...Սովորաբար այն էին ասում, թե իրենց արհաճ ազգակից է ատծուն: Երկինքը ատված վերցրել է իր համար բաժին, իսկ երկիրը տվել է խաղանին: Որովհետև ասում էին խաղանի հայրը Ջանգզ դաշը տղամարդու սերմից չի սերվել, այլ ինչ-որ լույս է եկել աներևույթից, տան երդիկով ներս է մտել և մորն ասել է, թե՝ «Կնդիանաս և իննական որդի կծնես երկրի համար»: Եվ սրանից էին նրան սերված համարում»:

Այսուհանդերձ, մահացու թշնամին եգիպտոսի մամլուկներն էին: Նրանք Ասորիքի վրայով բազմաթիվ արշավանքներ էին

կատարում, մինչդեռ Իկոնիայի կողմից հարձակումներ էին գործում սուլթանության հորդաները, դրանով իսկ Կիլիկիայի թագավորությունը դնելով երկու կրակների միջև: Այս բոլորը 13-րդ դարի վերջից սկսած, երբ թագավորում էր Լևոն Գ-ն, և բազմաթիվ այլ հատկանիշներ, արդեն պարզ էին դարձրել, որ երկրի նախկին միասնությունը անվերադարձ քայքայվել էր: Ավատատեր իշխանները կազմում էին իրենց անկախ իշխանությունները, մյուս կողմից էլ բարեկամական հարաբերությունները ֆրանկների հետ շատ պատճառներով թուլացել էին: Սմբատ Գունդստաբլը, քաջարի ռազմիկ, միաժամանակ և ականավոր մտածող, պատմագիր և օրենսդիր, իր ժամանակագրության մեջ տալիս է տարբեր նկարագրություններ մամլուկների գեմ հայերի մղած պատերազմներից.

«Մի քանի օրվա ընթացքում այս անհավատները հիմնովին կողոպտեցին Սիս քաղաքը, նրի մատենեցին բոլոր տները, խլեցին ու թալանեցին ինչ որ կարող էին տանել, անհնար էր հաշվել մեր մեռյալների, ինչպես նաև գերի տարվածների թիվը: Այնուհետև անհավատները հարձակվեցին գավերի բերդը, բայց բերդի պաշտպանները մատղիր չէին այն հանձնելու: Այնժամ մեր բշնամիները կրակ վառեցին և ամեն ինչ նրի մատնեցին շրջակա լեռներում և դաշտերում, ամբողջ երկիրը մոխիր դարձրին: Բնակիչներից շատերն իրենց կանանց ու երեխաների հետ թաքնվեցին այնտեղ մոտիկ գտնվող երկու մեծ քարայրներում, որոնք հնում օգտագործում էին որպես բերդեր, մեկը կոչվում էր Քեմ, մյուսը՝ Բեհնար: Թշնամու անհամար բազմության առաջ բնակիչները չկարողացան վերցնել իրենց գեներն ու իննապաշտպանության դիմել. բոլոր նրանց բռնեցին և սպանեցին: Ասում են, թե այդ մարտերում սպանվեցին շուրջ հսան հազար մարդ»:

Մամլուկների հետ պատերազմների այս վերջին փուլը տևեց գրեթե մեկ դար: 1375 թվականին, երբ ամսվա պաշարումից հետո, Սիս բերդաքաղաքը ևս վերջապես ընկավ մամլուկների ձեռքը, և, ըստ էության, հանգավ միջնադարյան Հայաստանի իրոք բազմախոով և դինամիկ պատմության այս, շատ դեպքերում պայծառ, միջադեպը ևս:

Գտնվելով քրիստոնեական երկու տարբերի՝ Բյուզանդիայի և Ֆրանկների միջև, Կիլիկիայի հայերը, ինչպես արդեն ասել ենք, նախընտրել էին խաչակիրներին։ Թեև զավանաբանական տարբերությունները հայերի և կաթոլիկների միջև առավել խորն էին և ավելի շատ, բայց կարելի է հասկանալ հայերի այդ վարքագիծը, իմանալով քաղաքական և հոգեկան այն կլիման, որ ստեղծվել էր իրենց երկրի և Բյուզանդիայի միջև։ Սակայն անջատված լեռնային հսկա զանգվածներով, ինչպես նաև բյուզանդական ուղղափառության դարավոր պարսպով անջրպետված այս հնագույն ցեղի հանդիպումը ֆրանկների հետ փոքր Ասիայի ափերին եղավ նույնքան բնական, ոչ օտարոտի, ինչքան ծովի հետ։ Այն հեշտությունը, որով նրանք առաջ ընթացան իրենց այս նոր հանդիպումներում և այն կարողությունը, որ դրսևորեցին իրենց քաղաքական, դաշափարական, մինչև իսկ մարդկային մերձեցումների մեջ, այդ հանդիպումները դարձնում են չափազանց հետաքրքիր մի պահ, դիտումներ անելու և խորհրդածելու համար հայերի մտքի ճարպկության, նրանց արթնության, հեշտ համակերպվելու և նման կենսունակ հատկությունների մասին, որոնք բնորոշում են այս ցեղին, ինչպես նաև ավյալ շրջաններում ապրող մյուս արթուն և ժիր ցեղերին։ Հայերի վերաբերյալ, որպես նրանց հոգեկան կերտվածքի հիմնական բաղադրիչներից մեկը, նշել են նրանց եվրոպականությունը, որը, իհարկե, խոր հետքեր է թողել նաև նրանց հոգևոր ավանդության մեջ։ Այդ հանգամանքը հաստատվում է նաև դարեր շարունակ հայերի գործնական վերաբերմունքի մեջ, երբ այս ազգը ստիպված է եղել ապրել աշխարհագրական տարբեր լայնություններում և երկարություններում վրա, Արևելքում և Արևմուտքում։ Ամենուր հայերը կատարելապես ուղղագծվեցին այն առանձնահատուկ պայմանների հետ, որոնց մեջ իրենց նետաց պատմությունը, առանց սակայն խզելու խոր կապը իրենց ծագման, իրենց նախասկզբնական, իրենց ծնող բնության հետ։ Կիլիկիայի թագավորությունը, հայկական ու եվրոպական, այդ տեսակետից առանձնապես արժեքավոր է, կարծում եմ՝ այդպիսին պետք է լինի նրա համար, ով կուզենա ուսումնասիրել այդ հարցերը, դիտումների և խորհրդածությունների համար։

Ճշմարիտ է, որ ժամանակի ընթացքում խորանում է հիասթափությունը եվրոպացիներից։ Նկատելի է, որ սկզբնական շրջանում խաչակիրների հայտնվելուն ուղեկցում են հույսի

ալիքներ։ Եվ շատ ուժգին է հակադրությունը բյուզանդացիների հանդեպ, որոնք դիմադրում էին քրիստոնեական այս մեծ շարժման տարածմանը Արևելքում։ Հատկապես կայսր Ալեքսիոս Կոմնենոսը շատ է լսել հայ պատմիչներից եվրոպացի եղբայրների դեմ ունեցած իր բշնամանքի մասին։ Մոնղոլների մասին գրած նույն պատմիչը, Կիրակոս Գանձակեցին, իր մատյանում գրում է.

> «Սրա տասնյոթերորդ տարում բյուզանդացիները (նկատի ունի ֆրանկներին —Մ. Ա.) շարժվեցին Ասիայի կողմերը՝ Թիրակ (Թրակիա), որպեսզի հրիստոնյաների տառապաճերների վրեժը լուծեն սկյութացիներից ու պարսիկներից, ինչպես նաև արաբներից։ Եվ շատերը նեղություններ կրեցին գաղտնի ու հայտնի նենգությամբ սաղայելի որդու՝ Ալեխս կոչվածի կողմից, որ բազավոր էր Կոստանդնուպոլսում։ Որովհետև աճօրենը հրամայեց կերակուրների հետ մանադեղ խառնել և այդպես տալ նրանց. նույնպես էլ ըմպելիքներին։ Ովքեր ուտում, մեռնում էին։ Ծովի վրա էլ խարդավանեց նրանց, ովքեր վտանում էին նրան իբրև իրենց հավատակցի։ Նա խորամանկությամբ օգնում էր բարբարոսներին։ Թող նրան տերը հատուցի։ Որովհետև նա հրիստոնյա իսկ չէր, ինչպես ոչ էլ նրա մայրը»։

Ալեքսիոսի մայրը եղել է «շատ խելամիտ տիրուհի Աննա Դալասսենենն» հայկական ծագումով, փոքր Ասիայի Դալասինա տոհմից, այսինքն՝ առավել քաղկեդոնականությանը հավատարմության երդում տված հայերից։

Կիրակոս Գանձակեցու այս հատվածը բնորոշում է հայերի ընդհանուր վերաբերմունքը։ Քաղաքական հանգամանքները թելադրում էին ֆրանկների հետ ընդհանուր ճակատ կազմելու անհրաժեշտությունը կայսրության դեմ, որից, ըստ էության, լիովին խզվել էր հարավի հայկական թագավորությունը։ Ավելի ուշ, ժամանակների փոփոխման և քաղաքական հուսաբությունների հետևանքով հանգամանքները փոխվելու էին։ «Այս մարդիկ,— խաչակիրների մասին գրում է մեկ ուրիշ պատմիչ,— մոռացան ասածու պատվիրանները։ Նրանց համար ոչինչ է անմեղների և ճշմարիտ հավատացյալների արյունը թափելը»։

Այս նոր ծանոթությունների և փորձառությունների մեջ, այս նոր միջավայրում, որտեղ մի կողմից կարող էր ծաղկել գործարար ոգին, իսկ մյուս կողմից սողոսկում էր ինչ-որ անապահովության զգացում, բնական է, որ տիրապետելու էր պրագմատիզմի ոգին անգամ քահանաների և վանականների միջավայրում։ Ազգի մտավորականները, եպիսկոպոսները և վարդապետները իրենց գրվածքներում հաճախ խոսում են պրակտիցիզմի և անհատապաշտության կործանարար այս ոգու դեմ, որը ներթափանցել էր պետական կյանքի բոլոր բնագավառները։ Կաթողիկոս Ներսես Շնորհալին իր հոչակավոր Ընդհանրական թղթերից մեկում ասում է, որ նույնիսկ անապատականները ուրիշ բան չեն անում, քան այն, որ ամեն մեկը իր համար այգի է տնկում և ինչ-որ տեղ իրար պատահելիս, իրար հետ խոսելու այլ նյութ չունեն, քան իրենց այգիների և արտերի մասին հարցնելը։ Նրանք անապատական դառնում են ոչ թե հանգստանալու նպատակով, այլ որպեսզի վիճակ ձեռք բերեն, ամեն մեկն իր շահն է հետապնդում և ոչ թե հանրության ու եկեղեցու շահերը։ Շնորհալին հավաստում է, որ իր երկիրը մորմոկող մեծագույն չարիքը արծաթասիրությունն է։ Արծաթասիրությունն է աշխարհիկ իշխաններին ստիպում գողանալ, անօրենություններ կատարել, ճնշել ու սպանել ուրիշներին, իսկ կղերականներին մղում է, որպեսզի նրանք սպանեն իրենց հոգիները։ Կաթողիկոս Ներսեսի այս Ընդհանրականը մանրամասն արձանագրություն է բարքերի, ինչպիսիք դրանք ձևավորվում էին այս մթնոլորտում, որտեղ ամեն ինչ ապականել էր դրամը, և հատարակ ժողովուրդը զոհվում էր բազմակի գերիշխանության և շահագործման տակ։ Մի ստիպեք նրանց, ովքեր մեր ծառայության տակ են,— խորհուրդ է տալիս նա երկրի իշխաններին,— որպեսզի ձեզ ծառայեն իրենց կարողությունից ավելի, մի ծանրաբեռնեք նրանց անտանելի բեռներով, ինչպես անխոս կենդանիների, մի գողացեք նրանց քրտինքը։ Մտածեք, որ նրանց աշխատանքի շնորհիվ են գոյացել ձեր գանձերը և ձեզ անհրաժեշտ դիրության կրկնապատիկն ու եռապատիկը...

Այս հոգևորականը, ինչպես վերևում նկատեցինք, իր ժամանակի ամենաականավոր բանաստեղծներից էր։ Ընդհանրապես հայկական Կիլիկիան, այլ բաններից բացի, հայտանշեց նաև հազվադեպ մտավորական մի ծաղկում, այն աստիճանի, որ նույնիսկ ինքը, օրհնյալ Սմբատ Գունդստաբլը իր Դատաստանագրքում ներգրավել էր նաև արհեստը այն գործերի թվում, որոնք արժանի էին հարգանքի և որը պարտավոր էր հարգել ամեն մի քաղաքացի և ինքը՝ պետությունը։

«Պատվեք ամեն մի արհեստավորի և բոլորից առավել դարբնին, հյուսնին և բարգործին։ Բայց դրանից էլ առավել պատվեք գործներին և բժիշկներին, բանզի նրանք բուժում են մարդկանց...»

Կիլիկիայի պետությունը առանձնահատուկ տեղ ունի հայերի պատմության մեջ։ Մեր հիացմունքն է առաջացնում ազգի ստեղծագործական ունակության այս հազվադեպ վկայությունը, և հատկապես նկատում ենք, որ այսօրվա հային հատկապես հպարտացնում են մշակութային ստեղծագործության ազդարարները՝ Դպրությունն ու Արվեստը, որոնք ուղեկցում են ազգային Հիշողության այդ աշխարհագրական հեռավոր շրջանին և տալիս պրան մի առանձնահատուկ պայծառ և հմայիչ գույն։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Այն տեղը, որ Հայաստանի պատմության մեջ ունեցել է և երկրի այսօրվա կյանքում էլ շարունակում է ունենալ գիրքը, առավել մեծ տպավորություն գործող պարագաներից մեկն է։ Բավական է հիշատակեմ մի քանի թվական տվյալ, որ վերցրել եմ Նահապետից նրա գրքերի մասին։ Նրա որևէ նորավեպը կամ թատերգությունը Հայաստանում, այսինքն՝ երեք միլիոն բնակչություն ունեցող մի երկրում (իսկ հայերեն կարդացողները, այսինքն՝ հայերը ավելի քիչ են, շուրջ երկու և կես միլիոն) լույս է տեսնում 20 կամ 30 հազար օրինակ տպաքանակով և շատ արագ անհետանում է գրախանութներից։ Եվ սա բացառիկ մի դեպք չէ, այլ ընդհանուր կանոն։ Մեր հրատարակիչները և գրավաճառները, առավել ևս գրողները, որոնց հազար և հազար հինգ հարյուր օրինակ տպաքանակով հրատարակած գրքերը ամիսներով, նույնիսկ տարիներով սպասում են գնորդի, լավ կհասկանան, թե ի՞նչ են նշանակում այս թվերը գրողի և նրա ընթերցողների միջև ծավալվող երկխոսության ընդհանուր չափերի և կենսունակության համար։ Սակայն այս հարցին մենք դեռ կարող է վերադառնանք։ Այժմ դարձյալ դիմենք պատմությանը։

Հայերեն գրված առաջին գիրքը, այսինքն՝ ինքնագիր երկը, եղել է գիրք գրքերի մասին. մի պատում հայկական այբուբենի և այն ստեղծած մարդու մասին, այն մասին, թե ինչպես նա կերտեց այս հրաշքը։ «Կերտեց» բառը իսկական առումով արտահայտում է նրևույթի բուն էությունը։ Ինչպես և Նոյը կերտեց

իր տապանը։ Այնուհետև Հայաստանը միշտ դժվարին պահերին այնտեղ էր մտնում, հաղթահարելու անհետացման մեկ ուրիշ նոր վտանգ ևս։

Հայկական այբուբենը նույնպես ծնունդ է նրանց 5-րդ մեծ դարի։ Հայկական այբուբենի 36 տառերը հաճախ նմանեցրել են պատերի, և հիացմունքը դեռ այսօր էլ կենդանի և անսահման է Դարբնապետի հանդեպ։

Հետմիջօրեին նստած ենք Նահապետի հետ։ Մեզ հետ նրնստած է նաև մի հայ ծերուկ, որի կյանքն այնպես է ստացվել, որ տարիների մեծ մասը անց է կացրել Իրանի շահի բանտում։ Շատ զարգացած է, գիտե հինգ եվրոպական լեզու, մի այդքան էլ արևելյան։ Այդ մարդուն, Արտաշեսին, ես շատ հարգեցի, ինձ հաճելի էր նրա ընկերակցությունը։ Այդ երեկո խոսում էինք հայկական այբուբենի տառերի մասին։ Մեկն ասաց, թե այս հարցի վերաբերյալ իր բոլոր կարդացածներից այն տպավորությունն է ստացել, որ Մաշտոցը, երբ դարբնում էր իր այս պատերը, որպես նմուշ նկատի է ունեցել արամեական գրերը, որ օգտագործում էին ասորիները (ասորերենը Եդեսիայի և Մծբինի արամեական բարբառն է։ Այս ամենի համար վկայակոչում եմ Արտաշեսին), ինչպես նաև մեր հունարեն ալֆավիտը։ Արտաշեսն այդ կարծիքին չհամաձայնեց։ Երջվեց դեպի ինձ, իր կորացած մատով շատ քաղաքավարությամբ մի պահ փնտրեց իմ հայացքը, և այն շատ գեղեցիկ կերպով վերցնելով, ուղղեց դեպի լուսամուտը։ Եվ դանդաղ շարժումով լուսամուտի շրջանակը գծելուց հետո ասաց.

— Սա է նկատի ունեցել Մաշտոցը։

Նրան լսելով մտածեցի, որ նա մի հավելյալ պատճառ ուներ այդ խոսքն ասելու, քանի որ այս մարդը իր դարի գրեթե 2/3-րդը տեսել է բանտախցի փոքրիկ լուսամուտից։ Բացի այդ, նա, ըստ էության, իրավացի էր նաև մեր խոսակցության առարկայի վերաբերյալ. Մաշտոցը լուսամուտ էր բացում, ուստի և պետք է ուսումնասիրեր, թե ինչպես են լուսամուտները լույսն անցկացնում ներենց միջով։ Պետք է նրանց բացվածքը լիներ լայն, բայց և միաժամանակ ամուր, կրակակետի նման, և դիմանար հուր-հավիտյան, որպեսզի իր հետնորդները դրանք վերանորոգելու կամ նորերով փոխարինելու կարիքը չունենային։ Ճիշտ այդպես էլ եղավ։ Այս հոգևորականը, հայկական այբուբենի վարպետաց վարպետը, անթերի գտնվեց։ Նրա գործը կատարյալ

հանդիսացավ հնչյունների վերարտադրման ճշգրտության տեսակետից։ Նրա գործը դարերի ընթացքում գուցեև այս կամ այնտեղ նորոգվել է, բայց երբեք մեծ փոփոխությունների չի ենթարկվել, դրա կարիքը երբեք չի զգացվել, մինչդեռ ինքը լեզուն, որպես հնչյունակազմական և արտահայտչական համակարգ, իր զարգացման ընթացքում առաջադրել է վերանորոգման և հարմարեցվելու լուրջ հարցեր։ Գրությունը մնաց նախկինը, նույնիսկ այն հայերը, որոնք հեռացել էին իրենց հայրենիքից և ընդունել կաթոլիկական դավանանքը, ծավալեցին մշակութային աշխույժ գործունեություն, հատկապես Վենետիկում ու Վիեննայում, նույնիսկ ուղղափառությունից հեռանալով հարեցին կաթոլիկության, սակայն նրանք ևս չմտածեցին գրերի բնույթը փոխելու մասին։

Արդ, ինչպե՞ս աշխատեց այս մարդը և ինչպե՞ս նրան հաջողվեց հասնելու այսքան լավ արդյունքի։

Զրույցը պատմում է.

«Մի օր սուրբ Մեսրոպը աղոթելիս, տեսավ մի ձեռ, որը քարի վրա գրում էր ինչ-որ տարօրինակ նշաններ։ Իսկույն հասկացավ, վեր կացավ և այդ նշանները գծելով, ստեղծեց մեր այբուբենը»։

Այս հարցի շուրջ համարյա այսպիսի պարզունակ մի ըմբռնում մշակվել է նաև մեր պատմագրության մեջ։ Բյուզանդիայի պատմության մի ձեռնարկի մեջ, որն այսօր օգտագործում են Հունաստանի միջնակարգ դպրոցներում, այն հատվածում, որտեղ խոսվում է Կոստանդնուպոլսի Պանդիդակտերիոնի (Համալսարանի— Ս. Գ.) մասին, կարդում ենք նաև հետևյալը՝

«Պետության բոլոր կողմերից ժամանում էին ուսանողներ, ինչպես անվանի հայ Մեսրոբը (Մեսրոպիոս, 441թ.), որը, նուաճարեները սովորելուց հետո, կազմեց հայկական այբուբենը և թարգմանեց հրեստոնեական տարբեր գրքեր»։

Բայց 441 թվականին Մեսրոպն արդեն վախճանվել էր։ Ոչ էլ դրանից առաջ նա սովորել էր Պանդիդակտերիոնում։ Նա ուղևորվել էր Կոստանդնուպոլիս բոլորովին ուրիշ նպատակներ ունենալով, այն բանից հետո, երբ արդեն ստեղծել էր իր այբուբենը։ Բայց հունարենին նա տիրապետում էր։ Շատ հավանական է, որ նա հունական դպրոց հաճախել է իր հայրենիքում, Տարոնում, որտեղ ծնվել է շուրջ 360 թվականին։ Նա գիտեր նաև ասորերեն ու պարսկերեն լեզուները և իր այս գիտելիքները օգտագործեց որպես քարոզիչ, որպիսին նա մնաց մինչև իր երկար կյանքի վերջը, ինչպես նաև իր այբուբենը ստեղծելիս։ Քարոզչի իր երկարամյա փորձառությունը նրան համոզեց, որ իր ժողովուրդը անհրաժեշտաբար պետք է ձեռք բերի իր գիրն ու գիրքը, որովհետև մինչև այդ ժամանակ, գրեթե հարյուր տարի, հայ ժողովուրդը հավատում էր այնպիսի մի կրոնի, որը իրեն անծանոթ էր և եկեղեցիներում լսում էր լեզուներ (հունարեն և ասորերեն), որոնք չէր հասկանում։ Մեսրոպի կենսագիրը Կորյունը պատմում է, թե Մեսրոպը նկատի գտավ Մեծ Հայքի կաթողիկոս Սահակին և նրան հայտնեց իր խորհուրդները, վերջինս մեծ հոժարություն հայտնեց նրան աջակցելու։ Կորյունն այնուհետև շարունակում է.

«Եվ նրանք միասին սիրով մեկտեղ գալով՝ առավոտը կանուխ մեծ աղոթքներով ասածուն (էին դիմում), որպեսզի բոլոր մարդկանց հասնի հրեստոնեական փրկությունը։ Եվ այդ ամում էին շատ օրեր։ Ապա ամենաբարի աստծուց պարգև եղավ նրանց՝ հրանելի միաբանյալների երկրի մասին հոգացող խորհուրդը ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել։ Շատ հարցուխորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին Հայոց բազավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում»։

Թագավորը նրանց հայտնեց, որ Ասորիքում Դանիել անունով մի եպիսկոպոս ինչ-որ տեղ գտել է հայկական հնագույն գրեր։ Անմիջապես մարդկանց ուղարկեցին Ասորիք, և Դանիել եպիսկոպոսը նրանց հանձնեց այդ գրերը։ Շուրջ երկու տարի Մաշտոցը և մյուս վարդապետները փորձեցին Դանիելի այդ ալֆավիտով թարգմանել եկեղեցական գրվածքները և դրանք սովորեցնել ժողովրդին։ Բայց նկատեցին, որ դրանցով չեն կարողանում արտահայտել հայերենի հնչյունները և վանկերը, քանի որ Դանիելի նշանագրերը «ուրիշ դպրություններից թարգված և հարուրյուն առած» էին։ Այսպես է արտահայտվում Մաշ-

տոցի կենսագիրը այդ հին ալֆավիտի համար։ Իսկ դա ի՞նչ բան էր, ինչո՞ւ չէր կարող ամբողջությամբ արտահայտել հայերենի հնչյունները, ի՞նչ է նշանակում «ուրիշ պրոբյուններից թաղված և հարություն առած» արտահայտությունը. այս բոլորը դեռևս պարզաբանված չեն հայագետների կողմից, որոնք առաջարկում են տարբեր մեկնություններ։

Պատմությունը շարունակվում է այսպես.

Մաշտոցը, մի խումբ աշակերտների վերցնելով, իջնում է Ասորիք, Ամիդ ու Եդեսիա քաղաքները։ Այս քաղաքներում էին գտնվում ասորի եպիսկոպոսներ Ակակիոսի և Բարիլասի աթոռները։ Վերջիններս մեծապես օգնեցին հայ մտավորականին իր ծրագիրն իրագործելու համար։ Մեկ այլ կետում կտեսնենք, թե ինչո՞ւ Մաշտոցը գերադասեց այս երթուղին և չգնաց, խոսքի համար, ուղիղ Կոստանդնուպոլիս։ Այս երևույթի տակ կա մի շատ հետաքրքիր պատմություն։

Ասորի եպիսկոպոսները հոգևորականների ու ժողովրդի հետ, գրում է պատմիչը, ընդառաջ եկան ու դիմավորեցին Մաշտոցին և նրա աշակերտներին, «և շատ մեծարանքներ ցույց տալով ժամանածներին՝ ընդունեցին հոգ տանելով (նրանց համար) քրիստոնյաների կարգի համաձայն»։ Մաշտոցն իր աշակերտներին բաժանեց երկու խմբի, որոնցից մեկը պետք է սովորեր ասորական դպրությունը Եդեսիայում, իսկ մյուսը՝ հունական դպրությունը. վերջին խմբին նա ուղարկեց Սամոսատ։ Ինքը Մաշտոցը մնաց ասորական քաղաքներից մեկում, հավանաբար Եդեսիայում, ինչպես կարծում է Աբեղյանը։ Այստեղ էլ նա կերտեց այբուբենը։

Աբեղյանն ասում է նաև, որ Մաշտոցն իր այբուբենը ստեղծելիս շատ բանում հետևել է հունական ալֆավիտին, որի համար էլ հայկական գրությունը գնում է ձախից աջ, և յուրաքանչյուր բառ գրվում է առանձին։ Նույնպես իր տառերին տահմանեց այնպիսի կարգ և անուններ, որոնք շատ մոտ են մերիններին՝ այբ, բեն, գիմ, դա... (ալֆա, բետա, գամա, դելտա...)։

Բոլոր նշանագրերը գծելուց հետո ինքը ևս գնաց Սամոսատ և փնտրեց գտավ հույն գեղագիր Հռոփանոսին (Ռոմանոսին)։ Սա գծային առումով մշակեց այբուբենը, տառերին տվեց վերջնական ձև ու հայ առաջին քերականներին սովորեցրեց, թե ինչպես պետք է բոնեն իրենց գրիչները։ Այս մարդու ձեռքով էլ գրվեց Հայաստան առաջին նախադասությունը։ Իսկ այդ նա-

խադասությունը հետևյալն է՝ վերցված Սողոմոնի առակներից. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։

Այս բոլորից հետո Մաշտոցն ու իր գործակիցները հաղթական նվաճումներով վերադարձան իրենց հայրենիքը։ Պատմիչն ասում է, որ նույնիսկ Մովսեսը, աստծու պատվիրանները ձեռքին, Սինա լեռից իջնելիս այնքան ուրախ չէր, ինչքան այժմ հայ գրերի այս ավետարերը։ Թող Մովսեսը արժանացած լինի իր աչքերով աստծուն տեսնելու և նրա ձայնը լսելու. սակայն լեռից իջնելուց նրա սիրտը ծանր էր, որովհետև գիտեր, թե անջըրպետ էր բաժանում Իսրայելի ժողովրդին ճշմարիտ աստծուց։ Մինչդեռ այժմ այս հայ Մովսեսին համայն երկրի իշխաններն ու հասարակ ժողովուրդը, թագավորի և հայրապետի հետ միասին, դուրս էին եկել դիմավորելու Արաքսի ափին։

> «Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարեձայն օրհնություններով ետ դարձան խաղաղ, և տոնական ուրախությամբ անցկացրին օրերը... Այն ժամանակ անպայման սմանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավատարկիցների (այսինքն՝ կաթողիկոսի և Մաշտոցի) ձեռով հանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ, հայերենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին»։

Առանց հապաղելու սկսեցին թարգմանել Աստվածաշնչի առանձին գրքերը։ Պարզ չէ, թե ո՞ր լեզվից։ Սամոսատում Հռոփանոսի հետ միասին թարգմանեցին Առակները։ Այնուհետև, Հայաստանում, լարված թափով շարունակվեց թարգմանական աշխատանքը, և շատ շուտով թարգմանվեց ամբողջ Աստվածաշունչը՝ Հին և Նոր Կտակարանները։ Տպավորիչ է այն արագությունը, որով կատարվեց այս հսկայական աշխատանքը։ 413 թվականին արդեն ավարտվել էր մարգարեական և եկեղեցական գրքերի հիմնական զանգվածի թարգմանությունը և, այդ ժամանակից սկսած, նշվում է սուրբ թարգմանչաց եկեղեցական

տոնը (նույնիսկ հիմնվեցին սուրբ Թարգմանչաց նվիրված վանքեր)։ Հայաստանում այժմ էլ նշվում է այդ տոնը, նվիրված թարգմանությունների միջոցով հայ գրականության ժողովրդականացմանը։

Ըստ երևույթին, որոշ ժամանակ անց թարգմանությունների մեջ նկատվեցին տարբեր անճշտություններ, անկատարություններ, և որոշվեց այդ ամենը վերանայել սկզբից, հունարեն ճշգրտված օրինակների հիման վրա (հավանաբար առաջին թարգմանությունները կատարվել էին ասորերենից)։ Աշակերտների նոր խմբեր ուղարկվեցին Եդեսիա և Կոստանդնուպոլիս, մինչդեռ Մաշտոցը գնաց Հարևան երկրները, Աղվանք և Վրաստան, և նրանցից յուրաքանչյուրի համար ստեղծեց առանձին նշանագրեր։ Այնտեղից իջավ Մելիտենե, լուծելու համար նաև մյուս կարևոր հարցը, այն է՝ հայոց լեզուն և տառերը տանել նաև Փոքր Հայքի իր հայրենակիցներին, որտեղ եկեղեցական լեզուն հունարենն էր։ Այստեղ, ըստ երևույթին, հանդիպեց տեղի կառավարիչ Անատոլիոսի դիմադրությանը, ուստիև մեկնեց Պոլիս։ Կայսրը և Պոլսի պատրիարքը մեծ պատվի արժանացրին նրան և շնորհեցին իր ուզած թույլտվությունը։ Սակայն նրանից պահանջեցին՝ Հայաստան վերադառնալուց հետո պայքարել «բարբարիանոս» աղանդի դեմ։ Եվ իրոք, նախկին քարոզիչը, Փոքր Հայք վերադառնալով, մեծ ջանասիրությամբ և հետևողականորեն հալածեց աղանդավորներին և, տեսնելով, որ խոսքը ապարդյուն է լինում, «սկսեց թշվառացնող գավազանը գործադրել խիստ ծանր պատուհասներով, գելարաններով։ Իսկ երբ դրանով էլ փրկությունից զուրկ մնացին, (այն ժամանակ) սաստիկ ծեծեցին, ապա խանձեցին, մրեցին ու պես-պես ձևերով խայտառակեցին և աշխարհից դուրս քշեցին»։

Մաշտոցը մահացավ 439 թվականին, հայկական այբուբենի ստեղծման պատմության մեջ նրան հավասարազոր մյուս մեծի՝ կաթողիկոս Սահակ Պարթևի մահից մեկ տարի անց։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ

Հայաստանի հոգևոր կենտրոնը եղել է Էջմիածինը։ Սկզբից ևեթ այնտեղ է գտնվել հայոց կաթողիկոսի, այսինքն՝ եպիսկոպոսապետի աթոռը։

Նահապետն իր ձեռքով իմ ծաղատետրում գրել է. «Մեր ճշմարիտ բարեկամներն այստեղից չեն մեկնում, մինչև չտեսնեն»՝ և առաջինը նշում է Էջմիածինը։ Անմիջապես դրանից ներքև, մի տողի վրա գրում է՝ Գառնի-Գեղարդ։ Գառնիում գտնվում է առաջին դարում կառուցված հեթանոսական մի տաճար։ Իսկապես գելփյան տեղանքում սևավուն քարով կառուցված մի Թեսեյոն[1], բարձր սարեր, համարյա ուղղահայաց լանջեր, խորունկ գետաձորեր։ Պակասում է ծովի մի փոքրիկ անկյուն։ Սակայն ինչպես մեկ ուրիշ առիթով ասել եմ, Հայաստանում ուր էլ գնաս, ծով չես տեսնելու, բայց ամեն սարի ետևում քեզ թվում է, թե երկնքում ինչ-որ ծով է արտացոլվում։ Գեղարդը, որը Գառնիի հետ նույն տողի շարունակության վրա է գրվում, վանքերի մի համալիր է, բրիչով փորված ժայռերի մեջ։ Բառը նշանակում՝ նիզակի սուր ծայրը, և հետևից երևում է այդ զարմանալի կառույցներից մեկի սրածայր գմբեթը։ Երրորդը նշվում է Սարդարապատը։ Դա այն վայրն է, որտեղ բոլոր հայերը, կենդանի թե մեռած, ոտքի ելան, կանգնեցրին թուրքերին, որոնք 1918 թվականին ամբողջ զորքով արշավել էին, որպեսզի նորից արյան մեջ խեղդեն Հայաստանը։ Այնուհետև Նահապետը նշում է հինգ տեսարժան կետեր Երևանում՝ Մատենադարան, Ազգային պատկերասրահ, Պատմության պետական թանգարան, Էրեբունի ամրոց և Երևանի օպերայի ու բալետի ակադեմիական թատրոն։ Այստեղ ավելացված են նաև Երևանի շրջագծում գտնվող հնագույն եկեղեցիները, իսկ նրանց ցանկում մի ձեռք, կարմիր մատիտով գրել է՝ տակ, տես բարբարոս մի ձեռք, կարմիր մատիտով գրել է՝ տակ, «Երևան, կոնյակի գործարան»։

Պատմում են, որ այս գործարանի նկուղներում տակառից տակառ համտես ես անում և դատում բոլորովին ուրիշ մարդ։ Մաքսիմ Գորկին, Երևանում գտնված ժամանակ, իջել է նկուղները տանող աստիճաններով (գործարանը կոչվում է Արարատ՝ «Արարատ» տրեստ) և մի քանի տակառից համտես է արել։ Այնուհետև իր խոսքը գրել է տպավորությունների գրքում՝ հետևյալ բառերով. «Ավելի հեշտ կարելի է բարձրանալ Արարատի գագաթը, քան «Արարատի» աստիճանները»։

Բայց հիմա մենք գնում ենք Էջմիածին։

Էջմիածին։ Բառը նշանակում է այն վայրը, որտեղ առաջին

---

1 Թեսեյոն—այսպեսզարդ հեթանոսական տաճար Աթենքում (Ծ. Բ.)։

անգամ իջավ Միածնի լույսը։ Նշանակել եմ նաև մեկ ուրիշ անվանում՝ Շողակաթ, լույսի աղբյուր։

Էջմիածնին մոտենալուց երկու տեղ կանգ ենք առնում. առաջին անգամ 10-րդ դարից արդեն ավերակված Զվարթնոցի տաճարում (որի մասին արդեն խոսել ենք նախորդ գլուխներից մեկում) և հետո՝ սուրբ Հռիփսիմեի տաճարում։ Հռիփսիմեն հայերի առաջին սրբուհին է։

Կա հուզիչ մի ըրույց։

Այս աղջնակը ընդունել էր քրիստոնեությունը և նոր դաստիարակությանը հավատարիմ մի խումբ այլ աղջիկների հետ իր կյանքը նվիրել քրիստոնեություն քարոզելուն։ Դեպքը տեղի է ունեցել Գրիգոր Լուսավորչի տարիներին։ Նա եղել է բացառիկ գեղեցկուհի։ Մյուս աղջիկները նույնպես եղել են գեղեցկուհիներ, բայց բոլորից գեղեցիկը եղել է Հռիփսիմեն։ Նրան ցանկանում է Տրդատ թագավորը, երբ դեռ մոլի կռապաշտ էր։ Տրդատը հրամայեց իր մոտ բերել կույսին։ Հռիփսիմեն հրաժարվեց հետևել թագավորի ուղարկած պաշտոնյային։ «Գազանաբար ոգորելով,— ասում է պատմությունը,— առնաբար մարտնչում էր։ Գրեթե ժամը երեքից մինչև տասը մաքառելով, թագավորը, որ շատ ուժեղ էր համարվում, պարտվեց նրանից»։ Նույն վճռականությամբ Հռիփսիմեն ընդդիմացավ նաև հռոմայեցի բերդապահին, որի զորանոցները այնտեղ մոտիկ էին. հռոմայեցիներն ու հայերը բռնեցին և սպանեցին Հռիփսիմեին ու նրա ընկերուհիներին։ Նրանց գերեզմանի վրա շինեցին փոքրիկ մի մատուռ։ Այսօրվա եկեղեցին կառուցվել է հետագայում դրանից մի քանի քայլ հեռավորության վրա։ Այն Հայաստանի ամենագեղեցիկ հին եկեղեցին է։

Հայերը լիովին իրավունք ունեն հպարտանալու իրենց հին ճարտարապետությամբ։ Նրանց պահպանված եկեղեցիներն ու վանքերը, կառուցված 6-րդ և 7-րդ կամ 10-րդ և հետագա երկու դարերում, հիացմունքի արժանի շենքեր են, կառուցված մեծ ճաշակով ու մանրամասների հիանալի մշակմամբ։ Դրանք խոշոր կառույցներ չեն։ Ավելի շուտ փոքր են և պարզ, բայց պարզությունը ժողովրդական անպաճուճ արվեստի հետ չի առնչվում, դա այն պարզությունն է, որին հասնում է վարպետը երկարամյա հմտությունից և բյուրեղացած փորձառությունից հետո։ Ավստրիացի ճարտարապետ Ստրժիգովսկու (1918 թ.) և հայ ճարտարապետ Թորամանյանի ուսումնասիրություններից հետո Եվրոպայում արդեն սկսեցին խոսել այդ հին հուշարձանների մասին և այսօր կարելի է ասել, որ ճարտարապետության պատմության այդ գլուխը, ինչպես նաև հայերի հնագույն մշակույթին վերաբերող բազմաթիվ այլ հարցեր մեծ այժմեականություն ունեն։ Բայց նույնիսկ չմասնագիտացած և այդ ամենի մասին նախնական տեղեկություններ չունեցող մարդն անգամ հիացմունքով կանգ է առնում հին վանքերի առաջ, որոնք ցրված են լեռնային Հայաստանում այս ու այնտեղ, շատ հաճախ հեռավոր և առանձնացած վայրերում, ինչ-որ մի ձորում կամ բարձր գագաթի վրա, որովհետև, չհաշված այն դիտումները, որ կարող է անել վարժ և փորձառու աչքը, այս գեղակառույց և բարեշեն տաճարները խոսում են արվեստի լեզվով, որը ջերմացնում է հոգին և ամեն ինչ ասում է այս կամ այն նկարով և կամ գեղեցիկ մի գծագրությամբ։ Եվ դա ավելի շատ է հուզում սիրտն ու միտքը, քան հաճախ ամբողջ գրքեր։ Ինչպես մի լավ երաժշտություն, մի գեղեցիկ արձան, մի հիանալի պատմություն։

Մի խոսքով, մարդ իսկույն հասկանում է, որ այստեղ աշխատել են ճշմարիտ ճարտարապետներ և ոչ թե հասարակ պատշար վարպետների խմբակներ. իսկ սա բոլորովին այլ բան է. սրանց հմայքն ուրիշ է։ Այստեղ գործ ունենք մի զարգացած մշակույթի հետ։ Իմ կարծիքով, սա է այս նշանակալից արվեստի գլխավոր հատկանիշը։ Մասնագետ ուսումնասիրողները այդ մասին շատ են խոսում, շատ բաներ ինձ ասաց նաև Նահապետը, որը մեծ ախր և հիանալի գիտելիքներ ունի նման հարցերում, այն ազդեցությունների մասին, որ հայկական ճարտարապետության նմուշներն ունեցել են հետագայում Եվրոպայի ռոմանական և, ավելի ուշ, գոթական ոճի ճարտարապետության վրա։ Զգիտենք։ Անհրաժեշտ է, որ մարդ այս հարցերը ուսումնասիրի բազում կողմերից, որպեսզի կարողանա կարծիք կազմել։ Սակայն ճշմարտություն է՝ այն համը, որ զգում ես տեսնելով այս շենքերը, նրանց ուրվագիծը, առանձին գծերը, քարի արտաշարգ մշակումը, փոքրաթիվ, բայց շատ գեղեցիկ քանդակները, այն ճաշակը, որ զգում ես այս բոլորից իբրև մի ընդհանուր տպավորություն, շատ հարազատ է մի զգացումի, որ ունենում ես ռոմանական և կամ գոթական ոճի տաճարում, երբ մի պահ զանց առնես հսկայական չափերն ու բարձրությունը, նյութի ահավոր զանգվածները և ծանրությունը։

Հայերը ճամփա են ընկել քրիստոնյաների համար ընդհանուր եղող մեկնարկներից, բազիլիկ կոչված տիպից, ամենապարզ և փոքր կառույցներից։ Աստիճանաբար այդ պարզ կառույցը հարստացրին սյուներով և բաժանմունքներով, մատուռներով, գավիթներով և այլն։ Այս եղանակով 5—7-րդ դարերում հասան հիանալի արդյունքների, երբ արդեն երևան են եկել և մշակվել քրիստոնեական եկեղեցիների մեզ ծանոթ բոլոր տիպերը, որոնք հիմնական ձևերի, բազիլիկների և կենտրոնագմբեթ կառույցների տարբեր տարատեսակներն են կազմում։ Մի քարթ գիպքերում հայերը այս երկու հիմնական տիպերը խաչաձևել են իրար։ Արուճ կոչված հայկական գյուղում տեսանք 7-րդ դարում կառուցված եզակի մի եկեղեցի, շատ խոշոր բազիլիկ մի կառույց, գմբեթավոր, իսկ նրա տակը՝ հեթանոսական մի սրահ։ Երբ ներս ես մտնում, քեզ թվում է կրկնակի և եռակի խոշոր, քան դու կարող ես պատկերացնել շենքը դրսից դիտելուվ։ Գլխաթախտաբար, գմբեթն արդեն փլված է և այժմ դրան փոխարինում է երկինքը. փակ վայրի լարումը անուղղելի կերպով թուլացել էր։

Հռիփսիմեի տաճարը լավագույնն էր այն ամենից, ինչ մեզ հաջողվեց տեսնել։ Անպաճույճ, եթերային կառույց, օդալետ և լուսառատ, որը գեղեցկորեն և խելացի կերպով կլոր գմբեթից իջնում է ցած. կարելի է ասել, ձուլածո մի կերպարանք, կոնաձև կլոր գլխարկի տակ։ Այս եկեղեցին կարող է որպես նմուշ ծառայել հայկական արվեստի նաև մեկ այլ արժանիքի տեսակետից. դա գեղազարդման կատարյալ ներդաշնակությունն է մանրամասի կիրառական նպատակի հետ։ Ոչինչ այս տաճարներում ավելորդ չէ, և ոչինչ դրանցում չի պակասում։ Քրիստոնեության, ինչպես նաև եկեղեցու նպատակների, նրա դերի մասին հայկական ըմբռնման ոգին իսկ պահանջում էր, որ կառույցները լինեին հնարավորին չափ անպաճույճ։ Կրոնական ու եկեղեցական բոլոր բաները հայերը ընկալել են մեղանից շատ ավելի պարզ և դրանք գործնականորեն և դրական կերպով դարձրել իրենց կյանքի կցորդը, փոխանակ կյանքը դոգմաներին կապելու։ Եվ ճիշտ այդ պատճառով էլ, քաղաքական միասումներից բացի, որոնք բազմաթիվ էին և նշանակալից, չկարողացան երկար ժամանակ համընթաց քայլել բյուզանդացիների հետ, որոնք շատ բաներ անրուժելիորեն խճճեցին և թույլ տվեցին, որ դավա-

նանքը, հաճախ իր աչք ծակող անմտություններով, լիովին ստրկացնի իրենց։ Հայկական տաճարը կրոնի այդ երկրային ըմբռնման մի տպավորիչ վկայությունն է. ոչ մի տեղ մենք չենք տեսնում ոչ սրբապատկերներ, համենայն դեպս՝ սրբապատկերների մի ամբողջ բեռ, ոչ էլ զարդարանքային ուրիշ դատարկաբանություններ, որոնք գրեթե միշտ վկայում են մտքի խճճվածության մասին, խառնաշփոթ, արհեստական, շատ դեպքերում կեղծ ըմբռնումների մասին։ Հռիփսիմեի եկեղեցին գործում է։ Ունի քահանա և սարկավագ։ Դռնից ներս մտնելով, տեսանք նաև քահանային՝ միջին տարիքի մի մարդ, որ նստած էր աթոռին, մուտքից քիչ այն կողմ։ Նրա ներկայությունն այստեղ այն միակ տարբերությունն էր, որ մենք հավաստեցինք այս գործող եկեղեցու և տասնյակ մյուս չգործող եկեղեցիների միջև։ Անշուշտ, այս տաճարը լավ խնամքի տակ է, մաքուր է, ներսում մի քանի մոմ վառված, բայց ոչ մի տեղ ոչ մի չքեղություն, ոչ մի նկարչություն կամ որևէ նշանցող բան։ Մածկի տակ պատերով շրջափակված մի տարածություն, որտեղ հավաքվում են հավատացյալները, գեղակառույց և այնպես կարգավորված, որ հավատացյալները տեսնեն ու լսեն, և նրանց հայացքը, սահելով պատերի վրայով, որոնց միակ զարդարանքը նրանց սրբատաշ և հարթ մակերեսն է, պարզ շրջանակված մի լուսամուտ, մի սյուն կամ պատին կռթնած մի կիսասյուն, գուցե նաև մեկ-երկու ուրիշ մանրամասներ, նայվածքը, սահելով այս ամենի վրայով, գնում է վերև, որպեսզի սևեռվի այն բարձրագույն գաղափարին, որի ծառայությանն է նվիրված եկեղեցին. ահա սա է հայկական տաճարը։

Էջմիածինն այս եկեղեցուց մի քիչ ներքև է գտնվում։ Այստեղ խոսքը մայր տաճարի և այլ կառույցների համալիրի մասին է՝ կաթողիկոսի վեհարանը, հոգևոր ճեմարանը, գրադարանը, հյուրանոցը, նման սրբավայրերի համար սովորական այս ջենքերով, և բացի այդ, ինչպես մեկ ուրիշ առիթով ասել ենք, այստեղ գտնվում է խաչքարերի մի հիանալի հավաքածու, որը մարդ կարող է երկար դիտել և, մեկից մյուսին անցնելով, կատարել տարբեր դիտումներ։ Այսուհանդերձ, ես չեմ շարունակելու նրանց նկարագրությունը։ Ես կաշխատեմ ամբողջացնել այս պլխի գաղափարը, շարունակելով այն կետից, որ ես թողնել քիչ վերև։

Ուրեմն, այստեղ գտնվում է աթոռը եպիսկոպոսապետի, ինչպես նրան անվանում էին մի ժամանակ, Առաջին Եպիսկոպոսի, որի սրբագործված անվանումն է՝ Կաթողիկոս ամենայն հայոց։ Հայ քրիստոնեական աշխարհում կաթողիկոսը հավասարազոր է միջնադարյան Պապին, որովհետև նրա գավազանին ենթակա են մի քանի պատրիարքներ (այսօր գոյություն ունեն երկու պատրիարքություններ՝ մեկը Երուսաղեմում, մյուսը՝ Կոստանդնուպոլսում։ Կան նաև երկու կաթողիկոսություններ. բայց այդ արդեն մեկ ուրիշ պատմություն է)։

Վերադառնանք Մեսրոպ Մաշտոցի երեսուն և վեց գինվորներին։

«Մի մոռանա Քրիստոսին և Պարթևին», կտակում էր Գրիգոր Մագիստրոսը իր որդուն, որը հետագայում նույնպես դարձավ հայոց եկեղեցու պետը։ Պարթևը 5-րդ դարի Սահակ կաթողիկոսն է, Մաշտոցի գործակիցը։ Նա ևս մեկ ուրիշ հայրապետի՝ սուրբ Գրիգորի հետնորդ Ներսես Մեծի որդին էր։ Մի հին ավանդության համաձայն, Ներսեսին, որին նախապես արդեն մեծապես նեղել էին նաև բյուզանդացիները, թունավորել է հայոց թագավորը։ Նա հին քահանայապետերից էր, որոնք ավետարանը սովորել էին գործնական քրիստոնեության հետ։ Նա այդ ամենը սովորել էր Կեսարիայում և Կապադովկիայում իրենց իսկ եկեղեցու հայրերից։ Նա Հայաստանում դարձավ հիմնական ներկայացուցիչը հօգուտ սովյալների ու ծարավների՝ քրիստոնեության հումանիստական առաքելության մասին Բարսեղ Կեսարացու ուղենշած գծի։ Նա ջանաց անտեսապես ամրապնդել վանքերն ու եկեղեցիները, ուղեց ամենուր հիմնել ծերանոցներ, աղքատանոցներ, ապաստարաններ չքավորների և տառապյալների համար։ Սակայն իր այս իրոք սուրբ նպատակների հանդեպ ունեցած անհաշտ նվիրվածության ընթացքում ընդհարվեց աշխարհիկ իշխանությունների հետ, քանի որ ամբողջ Հայաստանը նա ձգտում էր դարձնել մի խոշոր վանք։

Նրա որդին, Սահակ Պարթևը, հունագետ էր և պատկանում էր հունասերների խմբակցությանը։ Նրա գահակալության տարիներին, ինչպես գիտենք, Հայաստանն իրար միջև բաժանել էին Բյուզանդիան ու Պարսկաստանը։ Արևելյան Հայաստանում եկեղեցական լեզուն ասորերենն էր։ Ասորի արքեպիսկոպոսը, որի աթոռը գտնվում էր Սելևկիայում, ջանում էր պարսից թագավորի աջակցությամբ չեզոքացնել հելլենական ազդեցությունը,

դրանով իսկ ձգտելով դառնալ ամբողջ պարսկական քրիստոնեական կրոնական առաջնորդը։ Արդեն նա իր տիտղոսի մեջ ընդգրկել էր հայկական, վրացական և աղվանական եկեղեցին։ Եվ մինչ հայ քաղաքական առաջնորդները իրենց կռիվն էին մղում պարսիկների դեմ, որոնք ձգտում էին հայերի ազգային լուծարքին, հայ եկեղեցու գլուխը պարտավոր էր պաշտպանել իր եկեղեցու անկախությունը, քանի որ, հակառակ դեպքում, նրան հայ եկեղեցին ընկներ ասորի արքեպիսկոպոսի ենթակայության տակ, ապա դրանով իսկ կընկներ պարսից թագավորից կախման մեջ, այս կարևոր տեսակետից ազգային անկախության հիմքերը փորելով։ Ամենակարևոր հարցերից մեկը, որ նա պետք է կարգավորեր, եկեղեցուց ասորերենը դուրս մղելն ու հայերենով փոխարինելն էր։ Բայց գործը պետք է կատարվեր մեծ շրջահայեցությամբ և շատ ուշադիր։ Կոստանդնուպոլսի հետ անմիջական հաղորդակցությունը այս շատ կարևոր ձեռնարկումը ապահովաբար ձախողման կենթարկեր։ Այս հարցում հայերի գործելակերպը վկայում է քաղաքական մեծ խոհեմության մասին։ Նրանք հոգևոր Հելլադայի հետ այդպիսի շփումը փնտրեցին Ասորիքին հարևան Սամոսատ քաղաքում։

Մյուս կողմից, նույն խոհեմությամբ, նրանք կարողացան վերջնականապես իրենց լեզուն պարտադրել նաև բյուզանդական Հայաստանի եկեղեցուն, դուրս մղելով հունարենը։

Այս ամենի համար պարսիկներն այդ տարիներին հայրապետական աթոռից հեռացրին Սահակին և նրա փոխարեն կարգեցին ասորի եպիսկոպոսի։ Սրան պատահեց խորհնացին, երբ օտարությունից վերադարձավ իր երկիրը։ Քիչ անց պարսիկները ուղարկելու են նաև իրենց մոգերին և ջանալու են Հայաստանում վերահաստատել կռապաշտությունը, պարտադրել զրադաշտականությունը։ Արդեն Ավարայրի ճակատամարտի նախօրյակն էր։

Բայց արդեն երեսունվեց գինվորներ դիրքեր էին գրավել իրենց անպարտելի ամրոցում։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մատենադարանի մասին պետք էր խոսել գրքիս հաջորդ մասում, նվիրված Հային, Հայաստանի ներկային։ Այս հատվածում,

ատաուիյունը մի մեծ փուռ է, որն ամենօրյա տաք հաց է արտադրում, հոգևոր սնունդ, որն իննչքան մարդ զարգանում է, աղնվականանում, բարելավվում ամեն տեսակետից, այնքան այդ սնունդը շահեկան է դառնում հանապազօրյայի առումով, այնքան արժեքավորվում է, դառնում մեկ ուրիշ անհրաժեշտություն։ Սակայն այն, ինչ որոշիչ է մի գրքի համար, դա պատմողական խոսքի բնական ընթացքն է։ Եվ Մատենադարանը մեր խոսքի շարունակության մեջ է։ Մատենադարանը Մաշտոցի երևանվից գինվորների՝ իրենց հազարհինգհարյուրամյա կյանքի և պայքարի ընթացքում մղած ճակատամարտի համընդհանուր պատկերն է։

Այն Երևանի Ալեքսանդրյան գրադարանն է։ Բառը նշանակում է՝ Ձեռագրերի գրադարան։ Մինչև 15 հազար ձեռագրեր, հիմնականում հայերեն, տարբեր չափերի և տարիքի, կենտրոնացված են այստեղ. հին ոգիներ, որոնք շտապել են գալ այստեղ, երբ վառվեց հայկական այս նոր օջախը, և դեռ շարունակում են գալ հայկական սփյուռքի բոլոր կողմերից։ Եվ եթե կա ժամանակակից մի տաճար, որը կարող է իր գմբեթի տակ միավորել աշխարհի բոլոր հայերին, ապա դա, անկասկած, այս շենքն է, նրա մարմնավորած գաղափարը։

Շենքը գտնվում է կենտրոնական փողոցներից մեկի վերջում, բարձունքի վրա։ Երևում է շատ հեռվից, դրեթե ամբողջ քաղաքից։ Տեղանքը այնպիսին է, որտեղ ուրիշ ժամանակներում եկեղեցի կկառուցեին։ Ավտոմեքենան մեզ բողնում է մի քիչ ներքև։ Մինչև Մատենադարանի դուռը գնալու համար նախ բարձրանում ես աստիճաններով և անցնում Մաշտոցի մոտով։ Նա նստած է գահին և մի ձեռքով ցույց է տալիս նեսի պատը, որի վրա փորագրված են նրա երևանվից գավակները, մինչդեռ մյուս ձեռքը մեկնել է այնպես, կարծես քեզ ասում է՝ «Բարի գալուստ. առ և կեր»։ Նրա առաջ ծնկի է իջել մի պատանի, որը նայում է նրա աչքերին. աշակերտը՝ ուսուցչի առաջ։ Նեսում, պատի վրա փորագրված է Սողոմոնի իմաստուն թելադրանքը, որի մասին արդեն խոսել ենք. այն վկայում է աշխարհի իմաստուիյանն ու հանճարի խոսքին հաղորդակից գառնալու մեծ ծարավի մասին։

Ուսուցչի կերպարանքին հաղորդել են խոշոր չափեր, հետևելով դասական ըմբռնումներին. այսինքն՝ հոգու մեծ բովանդակությունը և ոգու մեծությունը անհրաժեշտաբար արտահայտել խոշոր մարմնի և խոշոր գլխի միջոցով։ Նկատեցի, որ վիպասաններից ոմանք այս հարցում հետևել են ուրիշ տեսակետի։ Այսպես, օրինակի համար, Բաֆֆին իր վեպերից մեկում ասում է, թե Մաշտոցը թուլակազմ էր, նիհար ու փոքրամարմին, որի վրա «բնությունը, կարծես սխալմամբ, դրել էր մի շնորհալի գլուխ, որին մի հարուստ, հոյակապ մարմին ավելի պատշաճ կլիներ»։ Սա այն տեղն է, ուր մարդ կարող է ասել այն, ինչ համարում է լավագույնը։

Մի քանի աստիճան վերև, շենքի գռներից աջ ու ձախ, լայն աստիճանավանդակի վրա, ամբողջ հասակով կանգնած են մտավորական ուրիշ այրեր, ինչպես՝ Խորենացին, օրենսգետ Մխիթար Գոշը, նկարիչ Ռոսլինը և ուրիշ երեքը։ Գետնահարկ դահլիճում և աստիճաններից երկրորդ հարկ բարձրանալիս, մենք տեսնում ենք խճանկարներ ու որմնանկարներ, որոնք պատկերում են դրվագներ հայ ժողովրդի պատմությունից, տեսնում ենք Ալարայրի ճակատամարտը, մեկ այլ տեղ Մաշտոցին՝ իր գործակիցների հետ, հայ գրերը ստեղծելիս։ Այստեղ դարձյալ գերիշխում են խոշոր, լայնաճակատ, մտածող գլուխները, որոնք փայլում են հանց արևներ։

Մատենադարանը ձեռագրերի ուսումնասիրման գիտահետազոտական հաստատություն է, միաժամանակ նաև դրանց թանգարանը։ Դժբախտաբար, մենք այստեղ այցելեցինք շոգ ամռանը, երբ բացակայում էին բոլոր խոշոր գիտնականները. միայն թանգարանն էր տեղում։ Դա մի ընդարձակ ցուցասրահ է, որտեղ կարելի է գաղափար կազմել հայերի անցած հազարհինգհարյուրամյա հոգևոր ուղու մասին։ Ամենահին ձեռագրերն են՝ 7-րդ դարի մի ավետարան և դարձյալ մեկ ուրիշը՝ 9-րդ դարից։ «Էջմիածնի ավետարան» կոչված ձեռագրում (10-րդ դար) կան թերթեր, որոնց վրա նկատելի են ավելի հին ժամանակի մանրանկարներ։ Մագաղաթյա տարբեր մատյաններում նույնպես կան երկրորդ անգամ օգտագործված բազում թերթեր։ Մատենադարանի աշխատակիցները վերականգնում են սկզբնական տեքստերը և հայտնաբերում են շատ հին ժամանակագրություններ։ Պահպանվել են հնագույն ուրիշ բնագրեր ևս, երբ ավելի հին ժողովածուներից վերցնելով դրանք, օգտագործում էին պահպանվածների համար որպես առաջին թերթեր՝ կաշվե կազմից անմիջապես հետո, բուն տեքստը պահպանելու նպատակով։ Մատենադարանը հարուստ է մագաղաթ-

ներով, որոնց մեջ կան նաև հիանալի զարդանկարներ։

Ծոցատետրիս մեջ գրանցել եմ հետևյալ թվերը.

Առ 1-ը հունվարի 1980 թ. Մատենադարանում կային 16066 ձեռագրեր, որոնցից 10827-ը ամբողջական հայկական ձեռագրեր և 2010 հայկական տարբեր ձեռագրերի պատառիկներ։ Մատենադարանում կան նաև 2463 օտարալեզու ձեռագրեր՝ հունարեն, եբրայերեն, արաբերեն, նույնիսկ եթովպերեն։ Ընդամենը առ այսօր պահպանված հայկական ձեռագրերի ընդհանուր թիվը շուրջ 25 հազար է։ Մատենադարանի ձեռագրերից բացի, շուրջ չորս հազար ձեռագրեր գտնվում են Երուսաղեմի հայոց պատրիարքարանում, գրեթե մի այդքան էլ Վենետիկի հայկական սուրբ Ղազար վանքում։ Նշանակալից են նաև Վիեննայի և Իսպահանի (Իրան) հայերեն ձեռագրերի հավաքածուները։

Այստեղ կարելի է տեսնել և տեղեկանալ հետաքրքիր շատ բաներ։ Կարելի է տեսնել կաշվե հնագույն թերթերի պատառիկներ, որոնք արշավանքների ժամանակ և կամ գողերից ու ավազակներից փրկելու համար թաղել են հողի տակ, որտեղ երկար տարիներ մնացած լինելու հետևանքով արդեն քարացել են։ Նախքան Մատենադարանի հիմնադրվելը, ձեռագրերի պահեստներ գտնվում էին տարբեր վանքերում. դրանցից ամենամեծը և հնագույնը գտնվել է Էջմիածնում, կաթողիկոսի աթոռանիստում։ Սակայն, իր իսկ հայրապետական աթոռի նման, այդ հավաքածուները ևս թափառում էին մի տեղից մյուսը, բոլոր այն հետևանքներով, որ ունենում են նման տեղափոխումները, առանձնապես գրքերի համար, մանավանդ երբ այդ տեղափոխումները կատարվում են բռնությամբ։ 5-րդ դարում կաթողիկոսական աթոռը տեղափոխվել է Դվին, այնուհետև, երկարատև մի ժամանակաշրջան հայրապետական աթոռը, հայկական իշխանությունների նստավայրերի նման, թափառում էր, որպեսզի 12-րդ դարում հանգրվաններ կիլիկիայում։ Ավելի ուշ, 1441 թվականին աթոռը վերահաստատվեց Էջմիածնում։ Հայերեն ձեռագրերի աշխարհը խոնարհված վանքերով և ողջակիզումներով լցված մի աշխարհ է։ Խոշոր ազնաներից մեկը 1804 թվականին հարվածեց Էջմիածնի գրադարանին։ Այն թալանեց ավազակների մի խումբ, և հետո հայերեն ձեռագրերն սկսեցին վաճառվել Արևելքի և Արևմուտքի շուկա-

ներում։ Շատ ժամանակ դեռ չի անցել այն օրից (1967 թ.), երբ Լոնդոնում աճուրդի հանվեցին Երուսաղեմի հայոց պատրիարքարանից գողացված ձեռագրեր, որոնց մեջ նաև հաղվագյուտ մի ավետարան, խոշորագույն հայ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի (13-րդ դար) նկարազարդումներով։

Այս ականավոր վարպետից, որն աշխատել է Հռոմկլայի դպրատունը, հավաստի պահպանվել են յոթ ձեռագիր. դրանցից չորսը թե հինգը գտնվում են Երուսաղեմում, մեկը՝ Պոլսում, մեկ ուրիշը՝ Ամերիկայում, սեփական հավաքածուներից մեկում, և մեկը կամ երկուսը՝ Մատենադարանում։ Այստեղ է գտնվում այժմ այն ավետարանը, որը Լոնդոնում հանել էին աճուրդի։ Այն Մատենադարանին նվիրել է Երուսաղեմի հայոց պատրիարքը։ Դժբախտաբար, ինչպես ասել եմ, երբ մենք պատրիարքարան, դեկավարությունը բացակայում էր, ուստի մենք մեր աչքերով չտեսանք հայկական մանրանկարչության այդ արքային։ Այս մեր տեղեկությունները երկրորդ ձեռքից են, ինչպես նաև շատ լավ կատարված ընդօրինակումներից։

Ըստ երևույթին, Ռոսլինը, ակնածանքով պահպանելով ավանդությունը, իր արվեստի մեջ ներմուծել է Կիլիկիայի հարավային բնաշխարհից վերցված, ինչպես նաև եվրոպական Արևմուտքի հետ անմիջական շփումներից այս կամ այն կերպ ձեռք բերած տարրերը։ Նրա նկարներում նկատելի է գույների հարուստ և աշխույժ մի խաղ. մարդկային արարածները, հատկապես կանայք, ավելի կանացի են, առավել հմայիչ և զվարթ, ճարտարապետական և նկարչական գեղազարդումը առավել ծաղկանկար, լուսավոր և մանրամասնային։ Իմ ձեռքին է Հովհաննես Ավետարանչի՝ 1260 թ. ձեռագիր ավետարանից կատարված մի լավ պատճենանկար։ Դա ամենախոշոր, ամենապայծառ և ամենահիանալի դիմանկարն է այն բոլորի մեջ, ինչ դարերի ընթացքում մեզ ավել են սրբանկարիչները՝ շորս ավետարանիչներին նկարելիս։ Ամբողջ էջը բռնած այս կերպարանքը կարող ես երկար դիտել ու չկշտանալ պատկերման ուժից և քո ամբողջ հոգին արմատապես իր վրա բևեռող Ջմարիտ և սուրբ հավատից, թեկուզև վաղուց արդեն անհավատ ես ամեն մի հավատի հանդեպ։ Ամբողջ թերթը վառվում է ոսկեկարմիր մի հրդեհով։ Ավետարանիչը նստել է նույնպես կարմիր բազկաթոռի վրա և շուրջն ամեն ինչ բոցկլտում է,

արտացոլելով նրա հրկեզ հավատքը։ Բաղկաթոռը նկարի ձախ կողմում է. բայց ավետարանիչը մտածմունքի պահին թեքվել է դեպի կենարոն, այնպես, որ գլուխը գալիս ու կանգ է առնում ամբողջ նկարի մեջտեղում, իր խոհուն կիսադեմով, որոշ չափով անհավատալի երկարեցրած և մտածմունքների ծանրության տակ այնպես թեքված, որ նրա առանցքը քթի գծի հետ կազմում է հասարակ մահկանացուների համար փոքր-ինչ տարօրինակ անկյուն։ Նա մորուքավոր հայ ծերունի է, հոնքերի թավ աղեղների տակ մտածող, խոհուն և խոշոր աչքերով։ Եվ դա մարդկային գլուխ չէ, այլ խելքի շտեմարան։ Այս անորսալին, մարդկային խելքը, փորձել է նկարել արվեստագետը և նկարելուց հետո դրա շուրջը անց է կացրել ոսկեգույն լուսապսակը, մեր ուշադրությունը բևեռելու համար առավել ուշադրության արժանիի վրա։ Սեղանին, մարդկային կերպարանքին զուգահեռ, այս հայ Հիերոնիմոսը գլխիվայր և պոչը վերև տրնկած խրել է մի ձուկ, որը թվում է, թե նոր է իջել վերևից, իր հետ բերելով դեռևս դրերով չծածկված մի մագաղաթ՝ վրան տողագծեր քաշած, պատրաստ օգտագործման համար։ Ձուկն այդ մագաղաթը շատ զգեցիկ է պահում իր մկրատանման պոչով։ Կարծես այս մագաղաթին էր սպասում Հովհաննեսը, որպեսզի վերցնի թիակը և շարունակի իր մատավոր նավարկումը։ Սակայն խոհերով հափշտակված, նա դեռևս չի նկատել մագաղաթը բերողին, ուստիև սա իր հայացքը բևեռել է ավետարանչի վրա, սպասելով, որ նկատեն իրեն և դարձյալ բերեն նավարեն։ Հովհաննեսն իր մատներով բռնել է գրիչը, իսկ նրա մյուս գրենական առարկաները գտնվում են սեղանի վրա....

Այս ձեռագրերից շատերի մեջ դրանց գրիչները կամ պատվիրատուները կատարել են տարբեր գրառումներ, որոնք հայերին կոչվում են Հիշատակարան*։ Հիշատակարաններում տրվում են բացատրություններ այդ գործի վերաբերյալ, ինչպես նաև պատմականորեն պիտանի ուրիշ տեղեկություններ։ Նահապետն ինձ հայթայթեց մեծ թվով այդպիսի հիշատակարաններ։ Դրանցից մի քանիսը փոխադրում եմ այստեղ.

«Ես, որ ծանրամարմին եմ, իմ ուսերին վերցնում էի բուղթ, բանաք, գրիչ և արբապատկերներ և հետևում էի իմ ուսուցչին և ուր որ կանգ էիներ առնում, ես շարունակում էի մեծ տառապանքով ու զրկանքներով գրել։

Եվ չեմ հիշում դեպք, որ ինչ-որ բան սկսած լինեմ մի վայրում և այն վերջացրած լինեմ այնտեղ...»

«Այստեղ մի բերք կտրեցի, բանի որ բանաքս բավվեց։ Բող ասված մեզ փրկի մեր մեղքերից»։

«Տեր Ջահարիան այն ինձ հանձնեց որպես գրավ և ես, Սիմեոն վարդապետս, երեսուն արծաթ դրամ վճարեցի և այն փրկեցի հափշտակիչ բշվառականների ձեռքից»։

«Պահպանեք այստեղ իմ բոլոր գրածները և երբ հասնեն հալածանքների և պատերազմների ժամանակներ, վերցրեք այս գրքերը, տարեք բաղաք և բաֆցրեք դրանք. բայց խաղաղ օրերին դրանք վերադարձրեք վանքերին և ընթերցեք դրանք. մի բողեք դրանք փականքի տակ, մի բաֆցրեք. բանզի կողպեքի տակ եղած գրքերը ուրիշ բան չեն, բան կուռքեր»։

«Եթե պատահեց, որ տեսնեք այս ձեռագիրը, կարդացեք այն կամ արտագրեք այն և պահպանեք երկյուղածությամբ, ուշադիր եղեք, որ չխարավի և չհամարձակվեք կտրել նրա բերքերը կամ բերել այս վերնագիրն ու դրա փոխարեն մեկ ուրիշ անուն գրել»։

Մի խոշոր գրանցում է թողել Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսը (14-րդ դար։ Գրառումը կատարված է մի առավել հին ձեռագիրը ավետարանում, այսպես կոչված Յոթ նկարիչների ավետարանում), որտեղ նա գրում է.

«Ես ևվաստ Ստեփանոս, Սեբաստիայի եպիսկոպոս, մեղավոր հովիվ և անուժ բեռական, ուղևորվեցի ասավածապան Կիլիկիա, սուրբ Գրիգորի անյունին երկրպագելու, և ինձ մեծ պատիվ ու հարգանք ցույց տվեցին Կոստանդին հայրապետը և Օշին բագավորը։ Օշին բարեպաշտ բագավորը փափագեց ևվասիս ևվիրել մի բան և ես, անտեսելով ունայն բաները, փափագեցա մի ավետարան։ Բագավորը հրամայեց և ինձ բույլ տվեցին մտնել գրադարան, որտեղ պահվում էին արբագան գրքերը. բոլորից առավել ես հավանեցի այս մեկը, գրված արագագիր և գեղեցիկ տառերով և գեղազարդված բազմագույն նկարներով, բայց ոչ ավարտված. դրանց մի մասն ավարտված

էր, մյուս մասի գծերն էին միայն նշված, իսկ մի մասն էլ մնացել էր բոլորովին անգիր: Վերցրի այս ձեռագիրը մեծ ուրախությամբ և սկսեցի փնտրել մի լավ ծաղկողի և գտա բարեպաշտ հաճանա Սարգսին, որը կոչվում է Պիծակ, որն այդ արհեստի գերազանց գիտակ է: Նրան տվեցի 1300 դրամ, որ հավաքել էի իմ ազնիվ աշխատանքով և ևս ճոխ մնաց ու մեծ նվիրումով ավարտեց ու լրացրեց կիսատ մասերը և դրանք ոսկեզօծեց և երբ այն բերեց ինձ, ես մեծապես ուրախացա: Այն ավարտեց հայոց ՋկԹ (769) թվին (1320 թ.), երբ դառն ժամանակներ էին, դաժան և դժվար, բայց այդ մասին ես լավ համարեցի չգրել»:

Մատենադարանում կա զարմանալի ձեռագիր մի մատյան: Զարմանալի է ինքը նույնքան, ինչքան և նրա պատմությունը: Մի ճառընտիր, գրված Տարոնում, շուրջ 1200 թվականին: Կշռում է 27 և կես կգ և նրա չափերն են՝ 75×55 սմ: Այն գրված է ցուցափեղկում, և մարդ կարող է տեսնել ու աչքերին չհավատալ: Նրա բացառիկ խոշորությունն ընդգծելու համար նույն ցուցափեղկի մեջ դրել են նաև դաճաճ մի գիրք՝ 14-րդ դարի մի օրացույց, ընդամենը 19 գրամ քաշով ու 3×4 սմ ծավալով: Իսկ ճառընտիրն ունի 600 էջ, յուրաքանչյուր էջը՝ հորթի մի լրիվ կաշի: Ճառընտիրի արտագրության տարին տեղի է ունեցել Իկոնիայի թուրքերի արշավանքը. գրքի տերն սպանվել է, և ձեռագիրն ընկել է մի թուրք դատավորի ձեռքը: Մշո վանականները հանգանակություն են անում, թուրք դատավորից գնում այդ գիրքը և պահում են Մշո ս. Առաքելոց վանքում: Շատ ավելի ուշ, ձեռագիրը հեշտ օգտագործել կարողանալու համար, բաժանում են և կազմում երկու հատորի մեջ: Այդ վանքում էլ մնում էր հրաշատեսիլ գիրքը, մինչև հայերի ցեղասպանությունը և մեծ տեղահանությունը: Երկու հայուհիներ, որոնք լեռների վրայով ուղղվեցին դեպի իրենց արևելյան հին հայրենիքը, դրանք վերցրին իրենց հետ: Ճանապարհին, մեծապես հոգնելով, նրանք ստիպված եղան հատորներից մեկը թաղել հողում, իսկ մյուսը կարողացան բերել էջմիածին: Հետագայում մյուս հատորը հայտնաբերել է մի ռուս զինվորական: Ձեռագրից պակասում են 17 էջ, որոնցից 16-ը, չգիտենք ինչպե՞ս,

ընկել են Վենետիկ, իսկ մեկը՝ Վիեննա, հետևելով իրենց հայկական ճակատագրին:

Մատենադարանի հունարեն ձեռագրերը շատ չեն տարալեզու ձեռագրերի ընդհանուր զանգվածի մեջ: Դրանց մեծամասնությունը տարբեր հատվածներ են, հին հունական, բյուզանդական և հետբյուզանդական ձեռագիր հավաքածուներից պոկված թերթեր, որոնք ծառայել են որպես պահպանող ներդիր հայկական ձեռագրերի համար: Դրանց թիվը հասնում է շուրջ 70 միավորի: Կան նաև 16-րդ և հետագա դարերին պատկանող ութ ձեռագիր մատյաններ. ցուցափեղկերից մեկում տեսանք նաև մոնեմվասիացի Կեղծ-Դորոթեոսի ժամանակագրությունը, որը վերաբերում է 17-րդ դարի սկզբներին:

Շատ ավելի կարևոր են հին հունական բնագրերից կատարված հայերեն թարգմանությունները. բնագրեր, որոնք չեն պահպանվել և դրանց մասին մեր գիտելիքները, ինչպես այսօր ասացինք, բացառապես հիմնված են հայերեն այս թարգմանությունների վրա: Այդ բոլորից առավել կարևորը փիլիսոփա Զենոնի «Հաղագս բնության» երկասիրության թարգմանությունն է. շատ կարևոր են նաև Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրության և Փիլոն Ալեքսանդրացու Հնգամատյանի մեկնության թարգմանությունները:

Հայերը դեռևս շատ կանուխ, 5-րդ դարից, թարգմանեցին հին հունական գրվածքներ և արտաքին գիտելիքներին վերաբերող ավելի ուշ շրջանի գործեր, հատկապես ճարտասանական, փիլիսոփայական և քերականական ձեռնարկներ: Ցուցափեղկերից մեկում տեսնում ենք այդպիսի մի քանի թարգմանություններ Արիստոտելից, Թեոփն Ալեքսանդրացու գործերից, ինչպես նաև Դիոնիսիոս Թրակացու (կամ Հոդոսացու կամ Ալեքսանդրացու) հռչակավոր «Քերականական արվեստ» մատյանի թարգմանությունը:

Այս թարգմանությունների հիման վրա, մեկնությունների կամ բացատրական առավել ընդարձակ վերլուծությունների տեսքով, զարգացավ իրենց՝ հայերի ուրույն գիտական միտքը և փիլիսոփայությունը: Առաջին հայ տեսաբաններից մեկը 5-րդ դարում եղել է Եղնիկ Կողբացին, Մաշտոցի աշակերտներից: Այստեղ մենք տեսնում ենք նրա գրվածքներից «Եղծ աղանդոցը»: Նույնպիսի տեսաբան էր նաև քիչ ուշ ապրած և առավել հայտնի դարձած Դավիթը, որը 5-րդ դարի վերջում սովորել է

Ալեքսանդրիայում, ապա՝ Աթենքում։ Ըստ երևույթին, նա առանձնապես աչքի է ընկել Աթենքում և իր գիտելիքների ու փայլատակող մտքի պատճառով ստացել է Անհաղթ մականունը։ Այս փիլիսոփան իր «Սահմանք իմաստասիրության» գրքով և Արիստոտելի փիլիսոփայության վերաբերյալ կատարած իր մեկնություններով հիմնադրեց հայ փիլիսոփայական միտքը։ Այս երկու մտածողների՝ Եզնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի ավանդներին հետևեցին նրանց անվանի մյուս հայրենակիցները ամբողջ միջնադարի ընթացքում հայկական համալսարաններում, որոնք սովորաբար գործում էին խոշոր վանքերին կից. նախորդ էջերում մենք արդեն տեսանք, որ Գրիգոր Մագիստրոսը, նախքան հայրենիքից հեռանալը, դասավանդել է Սանահնի վանքի համալսարանում և իր այլ աշխատությունների հետ թողել է նաև Դիոնիսիոսի քերականության ընդարձակ մեկնությունները, որոնք նույնպես ցուցադրված են այս սրահում։ Ինչպես երևում է մի շարք նկարագրություններից, վանական այս համալսարաններում ուսուցումը միայն աստվածաբանական չէր, այլ ընդգրկում էր շատ ավելի լայն մի ծրագիր. սովորեցնում էին երաժշտություն, գեղագրություն, ինչպես նաև մանրանկարչության արվեստը, և քրիստոնեության դասականներից բացի, այստեղ ուսումնասիրում էին նաև դասական հնության մեծերին։ Թվում է, թե ճշգրիտ գիտություններով նրանք առանձնապես չեն զբաղվել, այսուհանդերձ, Մատենադարանի ցուցափեղկերում չեն պակասում նաև հին ձեռագրեր, ձեռնարկներ և ուսումնասիրություններ, որոնք նվիրված են նաև ճշգրիտ գիտություններին, հատկապես բժշկությանն վերաբերող զանազան հարցերի։

Ճշգրիտ գիտությունների այս բնագավառներում հանրագիտակ խոշոր դեմքը եղել է Անանիա Շիրակացին։ Նա ապրել է 7-րդ դարում և զբաղվել է համարյա բոլոր ճյուղերով՝ թվաբանությամբ, երկրաչափությամբ, աշխարհագրությամբ և աստղաբաշխությամբ, անգամ պատմությամբ և բնափիլիսոփայությամբ։ Տեսնում ենք նրա մի մեծ Թվաբանությունը, քիչ անդին նաև նրա մի Աշխարհագրությունը։ Անանիան, որն ստացել էր Համարող (Մաթեմատիկոս) մականունը, եղել է հիացմունքի արժանի մտածող։ Մենք կարդացել ենք նաև նրա ինքնակենսագրությունը, որտեղ պատմում է շատ հետաքրքիր բաներ։ Նա դեռ շատ պատանի, մեծ սեր և ընդունակություններ է դրսևորել մաթեմատիկայի նկատմամբ և փափագել է ուսումնասիրել այդ գիտությունը, բայց Հայաստանում ուսուցիչներ չի գտել, որովհետև բոլորը զբաղված էին դավանաբանական հարցերով։ Ուստի մեկնում է Թեոդոսիուպոլիս։ Այստեղ պատահում է մի մարդու, որը նրան հայտնում է, թե Ջորրորդ Հայքում ապրում է մի լավ մաթեմատիկոս։ Անանիան գնում է այնտեղ, բայց տեսնում է, որ այդ մարդը գիտություններից ոչինչ չի հասկանում և նրա գիտելիքները շատ մակերեսային են։ Նրա մոտ վեց ամիս է մնում և, վերցնելով նրանից այն ամենը, ինչ կարող էր տալ իրեն, Անանիան մեկնում է Պոլիս։ Ճանապարհին ասում են, թե Տրապիզոնում ապրում է նշանավոր մի մաթեմատիկոս, Տյուքիկոսը. ուստի Անանիան ուղևորվում է այնտեղ։ Ուսուցիչը նրան հոժարությամբ ընդունում է և պարզվում է, որ նա իրոք շատ հայտնի ուսուցիչ է։ Երիտասարդ տարիներին եղել էր Հայաստանում և, ինչպես Անանիան պատմում է, տեսել էր այն անգիտությունը, որ տիրում էր այնտեղ։ Նա կամենում է Անանիային դարձնել ճշմարիտ գիտնական, որը կարող լինի օգնելու իր հայրենիքին։ Նա Անանիային իր մոտ է պահում ութ տարի։ Նա իր գրադարանում, գրում է Անանիան, ուներ բոլոր գրքերը, «Ծածուկ և Հայտնի», աստվածաբանական, բժշկագիտական, մաթեմատիկական, աշխարհագրություններ, տիեզերագիտություններ, ժամանակագրություններ։ Ջկար գիրք, որ չունենար և չիմանար։ Նա գիտեր բազմաթիվ լեզուներ և երբ ուզում էր որևէ բան հայերեն թարգմանել, կարդալիս բոլորովին կանգ չէր առնում, այլ շարունակում էր, իր կարդացած լեզվից անցնելով հայերենին, ասես այնտեղ ընթերցածը գրված լիներ հայերեն։

Այսպիսի հիացմունքով է արտահայտվում Անանիան իր հույն ուսուցչի մասին։ Այստեղ նա շարադրում է նաև նրա պատմությունը, ճիշտ այնպես, ինչպես իրեն պատմել է ինքը Տյուքիկոսը։[1]

«Ես երիտասարդ ժամանակ Տրապիզոն քաղաքում կենում էի Հովհաննես զորավարի դռանը. զիվոր էի

[1] Շիրակացուց արված այս և հաջորդ մեջբերումները հեղինակը կատարել է Մ. Աբեղյանի «Հայ գրականության պատմության» ռուսերեն հրատարակության Ա հատորից։ Հեշտացնելու համար հեղինակի պատմելու ոճը, մենք ևս օգտվել ենք Մ. Աբեղյանի նույն գործի հայերեն հրատարակությունից (Խ. Բ.)։

դարձել Հայաստանում և երկար ժամանակ, մինչև Մորիկ թագավորը, մնալով այնտեղ՝ սովորել եմ հայ լեզուն և դպրությունը: Իսկ երբ պարսիկները հարձակվեցին հույների վրա, վիրավորվեցի պատերազմում, փախա Անտիոք, և բոլոր ստացվածքներս ավարի առնվեցին: Այն ժամանակ ես Աստծուց խնդրեցի վերբերիս բժշկություն և ուխտեցի ասելով. Եթե ինձ կյանք շնորհես, անցավոր գաններ չեմ ժողովիլ, այլ կհետևեմ գիտության գաներին... Ողջանալով՝ գնացի Երուսաղեմ հաղաբ, այնտեղից Աղեքսանդրիա, և այնտեղից Հռոմ, և մի ժամանակ մնալով այնտեղ, դարձա Կոստանդնուպոլիս և գտա իմաստասերների հաղաբի ուսուցիչ Աբենասին, մի երևելի մարդու, և նրա մոտ ուսման մնացի ոչ սակավ տարիներ: Եվ կատարյալ իմաստությամբ դարձա այստեղ: Եվ սկսեցի վարդապետել և սովորեցնել»:

Անանիան ինքը ևս հետևեց իր ուսուցչի օրինակին: Այս իմաստուն մարդու մոտ իր ուսումնառությունը փայլուն կերպով ավարտելուց հետո վերադարձավ Հայաստան, իր հայրենակիցներին ուսուցանելու նպատակով:

Բայց այնտեղ նրան ոչ ոք չէր սպասում: Ոչ ոք չուրախացավ նրան տեսնելով: Ինքը Անանիան պատմում է.

«Եվ ես, առույգ հայերից, երանից ուսա այս զորավոր արվեստը, որ թագավորներին է ցանկալի, և մեր աշխարհը բերեցի առանց որևէ մեկի օգնության, միայն իմ ջանքով, աստծու օգնությամբ և սուրբ Լուսավորչի աղոթքով, թեպետև ոչ ոք շնորհակալ չեղավ իմ աշխատությանս համար, և հայերը չեն սիրում իմաստություն կամ գիտություն, այլ ծույլ ու ձանձրացող են: Որովհետև երբ Հայաստան եկա, շատերն եկան ինձ մոտ ուսանելու, բայց մի փիչ գլխի ընկնելուց հետո՝ չմնացին, որ այս արվեստներն ավարտեն, այլ ինձ թողին ու մի կողմ բաշվեցին և սկսեցին սովորեցնել՝ ինչ որ չգիտեին և չէին հասկացել. կեղծավորներն ու սնափառներն սկսեցին գիտնական ձևանալ և մարդկանցից ռաբբի կոչվել. իմ վրա էլ սարսած պարսավաճճներ են ասում: Իսկ ես նրանց պես չարություն չունեի սովորեցնելու և ուսուցանելու վերաբերմամբ, այլ մտաբերում եմ տերունական խոսքը, որ

ասում է՝ Ինձ է վրեժխնդրությունը, և ես կհատուցանեմ: Եվ դարձյալ թե՝ Իմ ոսկին սեղանավորներին տուր, և ես կգամ տոկոսներով կպահանջեմ: Ապա ուրեմն ես չեմ արգելի ոչ ոքի, որ սովորել է ուզում: Եվ ես այս՝ անմահ հիշատակ եմ թողնում ձեզ, վարդապետներ, մի արգելեք ուսումնասերներին և փափագողներին, և հատուցում կառնեք Քրիստոսից, որ ձրի շնորհատու է»:

Քննախույզ միտք, մաթեմատիկոս և աշխարհագրագետ, նա քննադատական ոգով կարդում է Աստվածաշունչը և շատ դեպքերում զարմանում է և բացահայտորեն հայտնում է իր զարմանքը: Հիացմունքով է խոսում հին հունական փիլիսոփայության մասին: Ուզում էր համադրել իր երկու հավատամքները՝ հին հունական գիտությունը և իր ժամանակակից աստվածաբանությունը: Իր գրվածքներից մեկում նա Բյուզանդիայի հույների մասին ևս գրում է հետևյալը. «Ձեր այդ ասածները իմացության և ճշմարտության պատուղներ չեն, այլ բխում են ձեր ուժից, ձեր իշխանությունից և ձեր խորամանկ մտքից»:

Սակայն ոչ նրա խոսքերը, ոչ նրա գրքերը արձագանք չգտան իր հայրենիքում նրա կենդանության օրոք: Մի քանի դար հետո, իր թղթերից մեկում Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսին գանգատվում է, որ իզուր է ինքը ջանում գտնել Շիրակացու մի գիրքը, որը «քեզանից առաջ այն դողդողալով պահում էին հողի տակ»:

Այսուհանդերձ, Գրիգորի այս ժամանակաշրջանից հետո Մաշտոցի զինվորները, ինչպես այդ տեսնում ենք նաև Մաշտոցի գերեզմանի ցուցասրահում, բավական առաջ գնացին, հաղթահարելով աստվածաբանական արգելափակոցները, յուրացնելով անհրաժեշտ գիտելիքներ, առավել ևս նվիրվելու համար նոր բնագավառներ գիտության, առավել ևս բանաստեղծության մեջ:

ԳՐԱԲԱՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Միջնադարյան Հայաստանի հիանալի բանաստեղծության մասին խոսելուց առաջ, այստեղ անհրաժեշտ է որոշ իրազեկություն ունենալ հայերի լեզվական հարցի վերաբերյալ: Այս գլխին որպես վերնագիր ծառայող երկու բառերը ներկայացնում են այն երկու հոսանքները, որոնք կազմավորվել են լեզվի

առաջընթաց զարգացման ընթացքում, և որոնք ապրում էին իրենց առանձին կյանքով. մեկը կենդանի խոսքում, մյուսը դպրության մեջ։ Բայց երբ մատավորականությունը, արտահայտելով կյանքի հոգևոր դրսևորման մեջ ժողովրդական խավերի դերի մասին դեմոկրատական մի նոր ըմբռնման հոգևոր միտումները (ավելի ճիշտ կլիներ ասել՝ արտահայտելով մատավորականության դիրքորոշումը ժողովրդական խավերի հանդեպ), այն պահից, երբ սկսեց գոյություն ունենալ այդպիսի մի պրոբլեմ և տարբեր պատճառներով լրջորեն զբաղեցնել մատավորականությանը, այս երկու հոսանքների՝ երկու լեզուների, համակեցությունը արդեն դարձավ շատ դժվար և, ըստ էության, անհնար։ Հայերեն գրաբարն ընդհարվեց հայերեն աշխարհաբարի հետ, և առաջինը ստիպված եղավ նահանջել, մինչդեռ մյուսը մտավ գրավոր խոսքի մեջ և արագորեն իշխեց այնտեղ, դառնալով ազգի գրականության տիրապետող լեզուն։

Այս ամենը ես պատմեցի մի փոքրիկ հեքիաթի նման, որովհետև հայերեն երկու լեզուների միջև մղված պայքարը թվում է հեքիաթ, եթե համեմատելու լինենք այդ բնագավառում մեր ահռելի ու դեռևս անվերջանալի փորձերի հետ։ Հեքիաթի է նման նաև այն սրությամբ, որ Հայաստանում ընդունեց լեզվական պայքարը, այլև, առավելապես, այն պատճառով, որ այդ պայքարն արդեն շատ հին մի պատմություն է, պատմություն, որն ավարտվել է դեռևս անցյալ դարում և այժմ ապրում է լոկ նրա հիշողությունը, այն էլ շատ հեռավոր, եթե, իհարկե, ապրում է ինչ-որ տեղ և եթե ինչ-որ մարդիկ հիշում են այն, բացի պատմաբաններից և բանասիրական կրթության տեր մարդկանցից։

Սա դեռ չի նշանակում, որ բախումը շատ սուր բնույթ չի կրել, որ այդ առումով ճակատամարտեր չեն մղվել։ Բայց այնպես եղավ, որ Հայաստանում հին լեզվի համար պայքարից գլխավորապես հոգևորականությունը, մինչդեռ եկեղեցուց դուրս գտնվող մատավորականությունը, առաջին գծի վրա՝ գրողները, արձակագիրներն ու բանաստեղծները միահամուռ կանգնեցին իրենց ժողովրդական լեզվի պաշտպանության դիրքերում և արագորեն պարտադրեցին այն, մյուս լեզուն թողնելով բացառապես եկեղեցական գործածության համար, ինչպես նաև այն ամենի մեջ, ինչ այդ լեզուն ստեղծել էր և պատկանում էր իրեն

հնագույն ձեռագրերում և հնատիպ գրքերում (հայերեն առաջին գիրքը տպվել է Վենետիկում՝ 1512 թվականին)։

Բայց այն, ինչ մի ընդհանուր անունով կոչվում է գրաբար, մեկ միասնական տիպ չէ, այլ գրավոր մի լեզու իր զարգացման մեջ, հայկական դպրության սկզբնավորումից հետո ընկած ամբողջ ժամանակաշրջանում։ Բնագրերը, հատկապես կրոնական, որոնք զուտ դավանաբանական պատճառներով չեն ընդունում միջամտություններ և փոփոխություններ, ցեմենտի նման սառում են հավերժապես և հավակնում են մշտական օրինակելի նմուշ կազմած լինել, այդ բնագրերը դարձան պահպանողական լուրջ ուժ։ Մյուս կողմից խոսքի կենդանի գործածությունը մըշտապես նոր տարրեր էր մացնում լեզվի մեջ։ 10-րդ դարի մատավորականները արդեն չէին գրում 8-րդ և 6-րդ դարերի հին հեղինակների նման, թեև արտահայտությունների մեջ ոչ մի ակնհայտ փոփոխություն չէր կատարվել։ Հայերը առանձնացնում են երեք փուլ իրենց լեզվի զարգացման մեջ, որը հետևել է հնդեվրոպական լեզուների ընդհանուր օրինակին, խիտ համապատասխանելով մշակույթի տարբեր տիպերից անցումը նկարագրական-վերլուծական արտահայտության։ (Այդ պատճառով էլ լեզվական մշակույթի տեր այսօրվա հայը երբեմն նատում է և մեզ նման թախծում է, երբ այսօրվա լեզվի կենդանի, երբեմն նույնիսկ նրա անկասելի ծաղկման պայմաններում մեռած գրաբարի մի անթերի արտահայտություն գալիս է քեզ հիշեցնելու այդ լեզվի ուժեղ կողմերը, պարտադրում է նրան այսօրվա լեզվի հանդեպ սկեպտիցիզմի ինչ-որ զգացում)։

Այդ երեք փուլերը հետևյալներն են։ Առաջինը՝ ամենահին լեզուն, մեկնարկի լեզուն, որ հասնում է մինչև 10-րդ դարը։ Այն անվանում են՝ հին։ 10-րդ դարից հետո, մինչև 16-րդ դարը հին բանասիրական տիպի կողքին գրվում է նաև մի լեզու, որը որոշ չափով ավելի մոտ է բանավոր խոսքին, մեկ ուրիշ տարբեր տիպ, և որն անվանում են միջին հայերեն, հայ ուսումնասիրողները գտնում են, որ արդեն 16-րդ դարում սկսել էր արտահայտվել գրավոր խոսքում այն հոսանքը, որը հետագայում կոչվեց աշխարհաբար. դա ժողովրդական լեզուն էր կամ, ավելի ճիշտ, նոր հայերենը։ 19-րդ դարի կեսերից այդ լեզուն արդեն տիրապետում է որպես հայերի ազգային գրական լեզու։ Այն այսօր գոյություն ունի իր երկու հիմնական ճյուղով՝ արևելահայերեն և արևմտահայերեն։ Առաջինը գործածության մեջ է

այսօրվա Սովետական Հայաստանում, ինչպես նաև Իրանում և Հնդկաստանում բնակվող հայերի միջավայրում։ Երկրորդով խոսում ու գրում են ոսկեդարի մյուս բոլոր հայերը։ Սակայն այս երկու հատվածների միջև հաղորդակցվելու, իրար հասկանալու դժվարություններ բոլորովին գոյություն չունեն, ոչ էլ նրանց միջև տարբերություն կա հին գրաբար լեզվի հանդեպ վերաբերմունքի հարցում։ Նրանց միջև եղած տարբերությունները քերականական են և այդ ըմբռնելու համար պետք է իմանալ հայերի լեզուն։

19-րդ դարում իրենց նոր լեզվի օգտին մղած պայքարի ընթացքում հայ մտավորականները շատ կարևոր հաջողությունների հասան. համենայն դեպս, եթե այդ բոլորը գնահատենք մեր սեփական փորձի լույսի տակ։ Նրանք չհապաղեցին իրենց այդ հարցը դնելու և պարզելու, ինչպես նաև չուշացան այն լուծելու գործնական միջոցներով, նույն իր՝ լեզվական պրակտիկայով։ Եվ հետո նրանք թույլ չտվեցին, որ այդ կարևոր հարցը ընդունի բացառապես գեղագիտական բնույթ, հովանավորվի գեղագետների կողմից և շարունակության մեջ դառնա ինչ-որ դատարկ գեղագիտության մենաշնորհը. երևույթներ, որոնք դեռևս մեզ խարազանում են տարբեր ձևերով։ Երրորդ և ամենակարևորն այն է, որ հայերը այդ ամբողջ հարցը դիտեցին սերտորեն կապված իրենց ժողովրդի և ազգի ճակատագրի հետ, այսինքն՝ այն պայքարի հետ, որ իրենք մղում էին Հայաստանի ազատագրման և ժողովրդական զանգվածների մշակութային լուսավորության համար։ Նրանք վերցրին և ուսումնասիրեցին իրենց գրավոր լեզվի ունեցած հնարավորությունները հետևյալ ուղղությամբ. ա) իրենց լեզուն պետք է հետևի եվրոպական ժամանակակից մտածողության նոր հոսանքներին և բ) էապես հաղորդակցվի մինչև ամենացածր ժողովրդական խավի ընթերցողների հետ։ Եվ նրանք նկատեցին, որ հին լեզուն այս երկու կետերի առումով էլ մեռած էր։

Հանդես եկան մի շարք դեմքեր, որոնք առանձնապես աչքի ընկան, և հայերն այսօր մեծապես հարգում են այդ առաջին դերակատարներին։ Նրանք իրենց գաղափարները դարձրին գիտակցություն, մղված այն ամենից, ինչ տեսնում էին, թե կատարվում էր մյուս աշխարհում, եվրոպական մտքում առաջացած նոր հոսանքներից և իրենց ազգային շարժման նոր կարիքներից։

Նրանցից մեկը, պրոֆեսոր Նազարյանը հետևյալ խոսքերով է 1846 թվականին որոշել իրենց խնդիրը.

«Հին ձևը, որը չի համապատասխանում իրերի նոր կարգին և կտրված է ազգային կյանքից և ընդհանուր գործածությունից, արդեն կորցրել է ամեն արժեք, չի կարող մեր ձեռքում մնալ որպես մշակույթի և կրթության գործիք մեր ժամանակաշրջանի մարդկանց համար։ Նա պարտավոր է վերածնվել, հաստատել բարեկամական սերտ կապեր իրականության հետ, որը մշտապես վերանորոգվում է, և ամեն կերպ հասնի նրան օգնության։ Մի խոսքով, մեզ պետք է մի նոր գրականություն, որն ապրի մեր դարի ոգով»։

Այստեղ մարդ տեսնում է, թե հայ աշխարհականները ինչ պարզ և հստակ դասեր վերցրին եվրոպացի մտավորական խոշոր շարժումներից, լուսավորականությունից և ռոմանտիզմից, հատկապես Հեգելից և նրա դիալեկտիկական մեթոդոլոգիայից։ Առավել մեծ նշանակություն ունեցավ ռուս դեմոկրատական մտքի բյուրեղացած դիրքորոշումը, որին աշակերտեցին բոլոր հայ աշխարհաբարականները։ Առանձնապես Լեզու և ժողովուրդ, իսկ ավելի լայն առումով՝ Մտավորականություն և ժողովուրդ հարցի առնչությամբ։ Կատարյալ ամբողջականության և արժանապատվության մի երևույթ էր իսկապես հիացմունքի արժանի Միքայել Նալբանդյանը, մեկը այն մտքերից, որոնց նոսր ժամանակահատվածներով ի հայտ են բերում ազգերն ու ժողովուրդները, որպեսզի մեծ հեռավորությունների վրա լուսավորեն իրենց ճանապարհը։ Միքայել Նալբանդյանը զարմանալիորեն զարգացած և բազմատաղանդ անձնավորություն էր՝ հրապարակախոս, բանաստեղծ, վիպագիր, փիլիսոփա և, այս բոլորի հետ միասին, նաև հեղափոխական։ Իր այս բազմաթիվ շնորհների համար ցարը նրան փակեց Պետրոպավլովսկ ամրոցում և, լինելով հիվանդ, թոքախտավոր, ինչպես բոլոր այդ արտակարգ հոգիները, բանտախցից դուրս գալուց հետո Նալբանդյանը մահացավ դեռ ոտք չդրած քառասուն տարին։ Մահանալիս նա բոլոր իրավունքներն ուներ ասելու այս մեծ խոսքերը.

«Մեծ ազատական ելիրեցիներ մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր աճը և գրիչը

չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյաց արծաթի բումբերի տակ միշտ անխոցելի են. նաև բռնակալների իշխանության մեջ:

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և բաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և, կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը:

Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, եթե մի օր արժանի լինինք գենք առնով մեր ձեռքը և միշև այժմ բարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր աչյունով»:



Լեզվական հարցի վերաբերյալ Նալբանդյանի գաղափարները ուղղագծված էին իր այս առավել ընդհանուր ըմբռնումներով և համոզմունքներով: Նա տարբեր աշխատություններ նվիրեց պատմությանը, տեսությանը, լեզվի քերականությանը, և իր գրական ստեղծագործություններով ու թարգմանություններով գործնականում նմուշներ տվեց, թե ինքն ինչպես էր պատկերացնում հայերեն նոր լեզուն: Իր տեսական երկերում, Ռոյդիսի նման, գրելով գրաբար, նա նկարիչ Այվազովսկու եղբայր, գրաբարի պաշտպան վարդապետ Գաբրիել Այվազյանի դեմ սուր բանավեճ մղելով, պաշտպանում էր իր տեսակետները լեզվի հարցում: Նալբանդյանը ևս, Նազարյանի նման, որի հետ աշխատակցեց վերջինիս Մոսկվայում հրատարակած «Հյուսիսափայլ» պարբերականում, պայքարում է հանուն արդիականացված լեզվի, որը բաց լինի ամբողջ ազգի համար: Այս հարցում նա չի տարվում գաղափարախոսական ծայրահեղություններով, այլ փորձում է համաձուլել բոլոր այն կենսունակ տարրերը, որոնք կկարողանային լեզվին հաղորդել լայնություն և ճկունություն, հարմարվելու և յուրացնելու հատկություններ,

և, անշուշտ, բառային ամբողջ հարստությունը գործուն վիճակում պահելու հնարավորություն:

«Գրել ժողովրդական լեզվով առանց ծառայաբալու գավառական բարբառներին, միևնույն ժամանակ ամբողջ պահելով լեզվի ժողովրդականությունը, մշակել այդ լեզուն, ներս բերելով դորա մեջ նոր մարդավայել և արժանի եվրոպական անունի գաղափարներ, ահա այն մի հատիկ գործը, որով պիտո է պարապեին հոգիազգաց հեղինակները և բարգմանիչը մեր ազգի ուր և իցե»:



Բայց այս բոլորից առաջ բանաստեղծ, արձակագիր և մանկավարժ Խաչատուր Աբովյանը, ըստ էության, արթնացրել էր լեզուն նորոգելու և նոր գրականություն ստեղծելու միտքը: Բոլոր նրանց նման, ովքեր ինչ-որ նոր բան են աշխարհին բերում, Աբովյանին ևս բաժին ընկավ առաքյալի դառն ճակատագիրը, և մինչ նա ուսուցչություն էր անում այդ ժամանակ դեռևս աննշան Երևանում, հանկարծ նրա հետքերը կորան, և ոչ ոք չիմացավ, թե նրան ինչ պատահեց: Այսուհետև սկսած նրա կենսագրությունը շարունակում են լեգենդները: Դեռևս անցյալ դարի վերջերին ասում էին, թե տեսել են նրան Սիբիրում, սպիտակած մազումորուքով, գավազանը ձեռքին, նա դուրս էր գալիս և նայում էր ճանապարհի հեռուն, որտեղից սպասում էր, թե կգրևա ավետաբերը Պետերբուրգից, իր համար ներման հրամանագիր և իր երկիրը վերադառնալու թույլտվություն բերելով...

Խաչատուր Աբովյանի մեծ սխրանքը նրա «Վերք Հայաստանի» վեպն էր, որը գրել է 1840 թվականին, որպեսզի պատմի իրենց հայրենիքի ազատագրության համար հայերի մղած ազգային կռիվների մասին, միաժամանակ նաև իր հայրենակիցներին ասի երկու բան. առաջին, որ հավատարկ ժողովրդի կյանքը կարող է թեմաներ տալ գրողին և նրան ներշնչել իսկական ստեղծագործություններ գրելու. երկրորդ, որ այսօրվա գրողը միայն իր ժողովրդի լեզվի մեջ կարող է գտնել իր նյութը և կերպարները՝ իր կենդանի գաղափարը հաստատելու համար: «Վերք Հայաստանին» պատմական վեպ է: Նրա կենտրոնական հերոսը (Ազատ անունով մի գյուղացի, մեկը արհամարհված դասի այն հայերից, որոնց մասին, ինչպես տեսանք, խոսում է

Նալբանդյանը) ստիպված է լինում դենք վերցնել և դուրս գալ իր երկիրը նվաճած պարսիկների դեմ կռվելու։ Հետևում են պատերազմական մի շարք դրվագներ, ռազմիկների արկածները ճարերում, ամբողջ ժողովրդի ոտքի կանգնելը, հերոսի ձերբակալումը, բանտարկությունը և մահը, և ազատության ծառը, որ կանաչում է նրա թափած արյան վրա։ Դա էպիկական և քնարական մի գործ է, բազում ռոմանտիկ շեղումներով, ժողովրդական կյանքի ու բարքերի բազմաթիվ նկարագրություններով։ Վեպում գործողությունները քիչ են, իսկ խոսքը շատ, այսուհանդերձ, սակայն, դա մի գիրք է, որը մտել է հայերի հոգու մեջ, ինչպես մի ավետարան։ Ըստ էության, այս գրքով է սկսվել ժամանակակից հայ գրականությունը։ Իմիջիայլոց դա նաև մի մանիֆեստ է լեզվական հարցի մասին։ Միայն թե այն ուղղված չէ մտավորականներին, որպեսզի նրանց ասի, թե ինչ առավելություններ ունի ժողովրդական լեզուն և թե գրքի հեղինակը ինչքան հմտորեն է օգտագործում այդ լեզուն։ Ինքը հեղինակը մասնակից է իր հերոսների տառապանքներին և կռվում է նրանց կողքին, նրանց հետ դառնում է մեկ մարդ։ Նա նրանց ամենադեպ ուսուցիչը չէ, այլ ընկերը բոլոր հարցերում՝ հայրենասիրության, մարդկայնության և, իմիջիայլոց, նաև լեզվական հարցում։ Աբովյանը զարգացած գիտնական էր։ Նա ավարտել էր Էջմիածնի հոգևոր ճեմարանը, սովորել հայկական լավագույն ուսումնարաններից մեկում՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ուսումը շարունակել Ռուսաստանում՝ Դորպատի համալսարանում։ Որպես գրողի նրա գործունեությունը եղել է բազմակողմանի։ Բայց իր վեպն ավարտելուց հետո մտածել է դրան կցել մի Առաջաբան, որի մեջ խոսում է սրատաց ուրախության պոռթկումով, ինչպես մոտավորապես պիտի արտահայտվեր իր հայրենասեր հերոսը, տեսնելով Երևանի բերդի գրավումը և վերջապես իր ժողովրդի մուտքը բերդից ներս։ Իր այդ առաջաբանում Աբովյանը գրում է.

«Թող ինձ այսուհետև ոգեա կանչեն, լեզուս բաց ա էլել, իմ բնաիր, ազիզ, իմ սուրի սիրեկան ազգ։ Թող տրամաբանություն գիտեցողը իրան համմյարի համար գրի, ես՝ fո կոռած, շվարած ոդին, fեզ համար»։

Աբովյանի գործն այսօր էլ կարդացվում է այնպես, ինչպես մի ժամանակ կարդում էին Շարախնոցը։ Հայ բանաստեղծները սիրում են իրենց լեռնագագաթները նմանեցնել բագիններին, որոնք այժմ հանգել են։ Սրբ իրենց ազգի համար վրա են հասնում դժվար ժամանակներ, դիմում են այդ բագիններին, որ այդ նրանք խլեն իրենց լուսությունը, կրակ ժայթքեն, որը նշանավորելու է նոր մի մեկնարկ։ Այն տարին, երբ Աբովյանը հեղինակեց իր գիրքը, պատահեց, որ որոտաց Արարատի գագաթը, խզելով իր դարավոր լռությունը։ Աբովյանին նվիրված գեղեցիկ քնարական մի գրվածքի մեջ բանաստեղծ Իսահակյանը հետևյալն է ասում իր մեծ հայրենակցի գրքի մասին.

«Ինչպես 1840 թվին դաբեռով լուռ Մասիսը պոռթկաց կրակ ու բոց, և ճեղեղեց, և շարժեց հայոց աշխարհը բովանդակ, այնպես էլ նույն թվին՝ Աբովյանի մեծ սիրտը... ճեղեղեց և կրակ ու բոց որոտաց, և շարժեց հայ ժողովրդի ճերաշխարհը բովանդակ, և կայծակի նման ճեղքեց ապագայի մութն ու մոայլը, ցույց տվեց փրկության ուղին՝ հայ ժողովրդի ազատագրման–անկախության պահումն ու պաշտամունքը մայրենի բաղցր ու մեծասքանչ լեզվի, լուսավորության, անձնազոհ հայրենասիրության, սխրալի, հերոսական բաջագործության»։

Աբովյանի գրքից հետո հայ գրականության համար արդեն լեզվական հարց ըստ էության գոյություն չունի։ Գրում են խոսակցական լեզվով։ Դրա շնորհիվ էլ նրանց գրականությունը, հատկապես հայկական քնարերգությունը, միջնադարի բանաստեղծների հիանալի ստեղծագործությունից հետո, ապրեց մի նոր ծաղկում։

ՏԱՂ

Գեղարդի վանքում, որը փորել են ժայռի մեջ, նահապետը մեզ համար երեք երգ երգեց։

Լավ ձայն ունի։ Արդեն նախապես էլ ասել եմ, որ երիտասարդ տարիներին որպես բարիտոն երգել է Երևանի պետական երգչախմբում, և նրան ճանաչողները մեզ ասել էին, որ երբ գնանք Գեղարդ, խնդրենք նրան երգել մեզ համար, քանի որ լսելիությունը այնտեղ, հատկապես երկրորդ հարկում, հիանալի է։ «Անպայման ստիպեք նրան երգել»։

Մենակ մենք ենք վերևի տաճարում։ Միայն վերջում, երբ նա ավարտում էր երրորդ երգը, դռան մոտ երևացին մի քանի հայորդիներ, որոնք կանգնեցին ու համայված լսեցին նրան։ Հետո ջատ չերմ շնորհակալություն հայտնեցին։

Գեղարդը ամենատպավորիչ բաներից է, որ մարդ այսօր տեսնում է Հայաստանում։ 12-րդ դարում կառուցված մի հին վանք։ Դարպասից ներս մտնելով, հայտնվում ես վանքերի համար սովորական բնացող մի վայրում։ Կա կաթողիկեն, կա պարսպապատը, բակը, աղբյուրը, պարսպապատին շարքով հենված մենախուցերը։ Տաճարը մի կենտրոնական խաչաձև կառույց է, լայն բացված թմբուկի վրա բարձրացող սրածայր գմբեթով, բնութագրական խճապատկերով առավել մանր և առավել մեծ կողաղիր մակերեսների, որոնք բոլորը համատեղ կազմում են կառույցի աստիճանավոր ծածկը։ Ինչ-որ ժամանակից հետո տաճարի կառույցին ավելացրել են ավելի ցածր և ավելի ընդարձակ մի շենք, ժամատունը* կամ գավիթը։* Դա քառակուսի մի կառույց է և տաճարի հետ հաղորդակցվում է մի նեղ դռնով, որը միաժամանակ նաև այն բաժանում է եկեղեցուց։ Այս մանրամասը իր մյուս տարրերի հետ միասին կառույցը դարձնում է եկեղեցական և ոչ եկեղեցական։ Դա մի տուն է, մի խոշոր սրահ։ Տանիքը դեպի կենտրոն հետզհետե բարձրանում է և հանգում մի բացվածքի, երդիկի*։ Ինչպես և հնագույն ժողովրդական տներում, այն և՛ լուսանցույց է, և՛ ծխնելույզ։ Միշտ էլ տպավորիչ է տանիքի կենտրոնական հատվածի գեղազարդումը, ինչպես նաև տանիքը իրենց վրա պահող չորս հատաբեսա սյուները։

Գեղարդում այս գավիթի մի կողմը հենված է ժայռին, որը կազմում է պատերից մեկը։ Եվ սա ներքածական է այն ամենին, ինչ մենք տեսնելու ենք ավելի ներսում, աջ և ձախ կողմերում գտնվող բացվածքներից անցնելուց և ժայռի մեջ փորված եկեղեցիների մեջ հայտնվելուց հետո։ Դա ինչ-որ անհավատալի բան է։ Մարդ կարող է բազմաթիվ քարայրներ տեսած լինել, բայց այստեղ, որպեսզի ընթերցողը ևս գաղափար կազմի, թե ի՞նչն է առանձնահատուկ տպավորություն գործում, Ֆարայր հասկացողությունը պետք է ընկալի ճարտարապետություն հասկացողության հետ հմուտ մի ներդաշնակության մեջ։ Նրանք, ովքեր փորել են այս ժայռերը, քարի ներքին ծալքերում պարզապես մի բացվածք չէ, որ բացել են։ Փորելիս նրանք միաժամանակ կառուցել են, ինչպես կկառուցեին մեկ ուրիշ վայրում։ Գետնափոր այս տաճարները իրենց ճարտարապետության և քանդակազարդումների տեսակետից ոչնչով չեն տարբերվում բաց տարածության մեջ կառուցվող մյուս տաճարներից։ Ես վերևում արդեն ասել եմ, որ հայկական եկեղեցին ժողովրդական վարպետների գործ չէ, որը մեզ հրապուրում է իր պարզ և հասարակ լուծումներով։ Դրանք արվեստի կառույցներ են, նույն կերպ հիանում ես դրանց բարդությամբ և պարզությամբ։ Մեկը մյուսից անբաժան։ Զգում ես և գնահատում, թե ի՞նչ աշխատանք է կատարվել, ի՞նչ գեղեցիկ և ճշգրիտ չափումներ և ի՞նչ հմուտ կիրառումներ։ Այս բոլորը մի ընդհանուր տպավորություն է։ Դրա կողքին մնում են տաճարների փոքրաքանակ զարդաքանդակները, որոնք փորագրվում են քո հիշողության մեջ նույն այն ձևով, ինչ դրանք քանդակել են քարի վրա՝ խորը և հաստատուն։ Դրանք ցուլերի գլուխներ են, մարդիկ, առյուծներ, արծիվներ, ասես կենդանի, բայց շատ անհոգ, իրենց աչքերը մեզ վրա հառած, կարծես այստեղ ինչ-որ բան էր կատարվում մեր հայտնվելուց առաջ, բայց մեր ներկայությունը նրանց շփոթեցրել է։ Իրենց այս անճարտար կեցվածքով մեզ են նայում ավելի շփոթված, քան մենք՝ նրանց։ Միշտ մի առանձին հիացմունքով ենք կանգ առնում հայկական զարդաքանդակի առաջ, թե՛ այնտեղ, երբ վարպետը ուզում է մանրամասը գեղեցիկ աշխատել, թե՛ այն դեպքում, երբ թողել է, որ մյուսը մենակ շարունակի մանրամասները, ինքը նախապես ճոխ մի ձևով կամ այլ ակնարկություններով շատ ընդհանուր գրգիռներ տալուց հետո։ Ըստ երևույթին, նման արվեստին այստեղ գերազանց են տիրապետել։

Ահա այս խոր եկեղեցիներից մեկում մեզ համար երգեց Նահապետը։ Նրա թավ ու խորունկ ձայնը, հետևելով սյան մի խոշոր գալարի ակոսին, բարձրանում էր, ալիքվում, լայնանում, նեղանում, և մինչ ձայնի հնչյունները թեթևորեն հորդելով վարդյակի շրջանակներից, գնում էին հանգելու կաուրի կենտրոնական բացվածքից ներթափանցող լույսի մեջ, նա, ներքևից շատ վարժ ձևով, դարձյալ մի փոքրիկ մղում էր տալիս, և խորքից վերսկսում էր մեկ ուրիշ դանդաղ վերելք։ Լսում էի նրան և մտածում, որ դեռ քսան տարի առաջ մենք ծանոթացել էինք Մոսկվայում, բայց այդ ժամանակ չէի կարողացել ենթադրել, և ինչպե՞ս նման բան կարող էիր մտածել փողոցում, միջանցքում և

կամ գնդակի նման մեկիս այս կողմ, մյուսիս այն կողմ տանող վերելակում ունեցած մի հանդիպումից հետո, այո, չէի կասկածել, թե ինչ երգեր էր այս մարդը պահում իր հոգու խորքում, թե իր նախահայրերի ինչպիսի կարոտներ օրորում էին նրա միտքը և երգի ելևէջները։ Եվ հնարավոր չէ լավ ճանաչել մի մարդու, առանց նրա երգերը լսելու։ Դեռ ավելին. չես կարող մի երկիր, մի ժողովուրդ ճանաչել, առանց նրա երգի։

Մեզ համար այդ օրը Նահապետի երգած երգերից մեկը 5-րդ դարից էր, որի խոսքն ու երաժշտությունը պատկանում էր հենց Մաշտոցին (կամ Խորենացուն), երկրորդ երգի հեղինակը եղել է Կոմիտաս կաթողիկոսը, հայերի Ռոմանոս Երգահանը (7-րդ դար), իսկ երրորդը շատ ավելի ուշ ժամանակի երգերից էր։ Մինչև 10-րդ դարը հայկական բանաստեղծությունը ապրում է կրոնի և եկեղեցու հետ. այս միջավայրից դուրս բանաստեղծներ չկան։ Հայ միջնադարյան բանաստեղծությունը նման է բյուզանդական բանաստեղծության և երաժշտության, այսինքն, այն ևս դանդաղ հանդիսավոր է, հրեաների, ասորիների և մնացյալ ամբողջ Արևելքի սրտամորմոք, ծնրադիր և աղերսող եկեղեցական մեղեդի, որը ևս չգիտեմ, թե ինչքանով է մեզ բնորոշում, բայց հայերին այդ երաժշտությունը բնորոշում է, որովհետև բխում է նրանց արևելյան երկրի խորքերից։ Այն նույն մարդիկ, որոնք իրենց ժողովրդին տվեցին դպրություն և հոգևոր պատմություն, այդ նմուշները վերցրել են ասորիներից և բյուզանդացիներից և դրանք հարմարեցրել են իրենց պայմաններին, բոլոր դեպքերում բանաստեղծություններ և երաժշտություն գրելով ու հորինելով եկեղեցու կանոնական շրջանակներում, բայց, ինչպես կատարվեց իր իսկ գրության և դպրության հետ, այդ բոլորը իրենց սեփականն էր, արևելյան բանաստեղծություն և երաժշտություն իր իսկ բնական միջավայրում։ Մտավորական շատ հայտնի դեմքեր իրենց անունները կապել են եկեղեցական բանաստեղծության ու մեղեդու՝ կցուրդների ու շարականների* հետ, ինչպես իրենք, 5-րդ դարի մեծ վարդապետները։ Նրանցից հետո գալիս են Կոմիտաս կաթողիկոսը, Հեղենագետ Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը և նրա գործի շարունակողները, հայկական Կիլիկիայի կրոնական առաջնորդներ և բանաստեղծներ Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին։ Մինչև 14-րդ դարը այս բանաստեղծությունն ապրեց

իր ստեղծագործական շարունակությունը։ Էապես խոսքը վերաբերում է եկեղեցական երաժշտությանը, իր տարբեր տեսակների մեջ։ Բայց եկեղեցական այս անհրաժեշտությունների կողքին գրվում էին նաև կրոնական բանաստեղծություններ, որոնք արտահայտում էին անձնական հոգեվիճակներ, միշտ կրոնական ղգացումների շուրջ, որպես նմուշ ունենալով եկեղեցիներում երգվող օրհներգությունները։ Բայց անձնական անխառն հույզը այս կապանքների միջով էլ իր համար ձևեր էր գտնում արտահայտվելու պոետականորեն, այսինքն՝ անձնականապես, թող որ եղածն էլ լիովին կապանք չէր։ Հոգևոր բանաստեղծության և երաժշտության կանոնները մի երկար ժամանակի համար կարող էին գործել ստեղծագործաբար պոետական անխառն ղգացմունքի համար, դրանք դեռևս շոամպ չէին դարձել։ Նշանակությունից ղուրկ չէ այն, որ իրենց առանձին անվանումներից բացի, բանաստեղծական և երաժշտական կտորները կոչվում էին նույնպես տաղ,* այսինքն՝ երգ, ինչպես այն երգերը, որոնք երգվում էին դաշտերում և տներում։ Կրոնական տաղերի մեջ հեշտությամբ ներթափանցում էին քնարական պատկերներ և արտահայտչական ձևեր ժողովրդական բանաստեղծությունից, որը շատ հին էր և հայրենասիրական առանձնահատուկ մի հմայք էր գործում մտավորականների վրա, հատկապես այն բանից հետո, երբ դավանաբանության մեջ էլ աստիճանաբար վարդանում էր ազգային յուրահատկության գիտակցությունը և օտարներից անջատվելու և անկախ լինելու անհրաժեշտությունը։

Առանձնահատուկ ազդեցություն պետք է որ գործած լինեն հնագույն վիպերգերը։ Այդ ամենը ի մի հավաքից դարձյալ խորենացին իր Պատմության մեջ ու, հետևաբար, նրա տպավորությունները ևս ազգային գիտակցության վերաբերյալ շատ թարմ էին, ինչպես նաև այն ամենը, ինչը առնչվում էր հայոց պատմությանը և քաղաքակրթությանը։ Ինչպես ասել ենք, անցյալի համար իրենց բոլոր տեղեկությունները հայ պատմիչները քաղել են բանավոր ավանդություններից։ Իրենց հնագույն երգերում նրանք ժամանակի ընթացքում յուրացրել էին հին առասպելներ և պատմական իրադարձություններ։ Հաճախ իրենց հնագույն մի թագավորի կերպարը ներկայացնում է տարբեր ժամանակներում ապրած պատմական դեմքերի,

պլևական կերպարների բազարկում։ Առաջին ցիկլը արտացոլում է հնագույն պատմական իրադարձություններ, որոնց կենտրոնական դեմքը Տիգրանն է, իսկ շարունակության մեջ պատմական այն շրջանը, որը ժամանակագրականորեն համընկնում է հնագույն և փառահեղ մայրաքաղաք Արտաշատի ծաղկման հետ, այսինքն՝ ընդգրկում է հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջանը։ Երգիչների (վիպասանի*) անունից, որոնք հյուսում և պահպանում էին այդ երգերը, հետագայում գրականության մեջ ամբողջ ցիկլը կոչվել է վիպասանի*։ Դրան հետևում է մեկ ուրիշ ցիկլ՝ «Պարսից պատերազմը»։ Այնտեղ երգվում են ազգային պատմության դրվագները մինչև 5-րդ դարը, պատերազմները պարսիկների դեմ, ինչպես նաև մյուս ճակատում հույների, այսինքն՝ հռոմայեցիների կամ բյուզանդացիների դեմ մղված պայքարը։ Բայց հիմնականում այդ երգերում արտացոլվել են տարբեր դրվագներ պարսիկների հետ ունեցած ընդհարումներից։ Պարսիկներին ներկայացնում է Շապուհ արքան, մինչդեռ հայերին մարմնավորում է Արշակ թագավորը։ Ծագություն ունի մի շատ գեղեցիկ երգ, որը պատմում է, թե ինչպես Շապուհը վերցրեց և Արշակին բանտարկեց Անհուշ բերդում և հրամայեց սպանել սպարապետ Վասակ Մամիկոնյանին։ Վերջինիս մորթազերծ անելուց հետո նրա կաշվի մեջ հարդ լցրին և նրա խրտվիլակը դրեցին Արշակի բանտախցիկում, որպեսզի ընկերանա հայոց թագավորին։ Հնագույն ղրույցներում շատ նկարագրություններ են հանդիպում այդ բերդի, որի անունը թագավորի առաջ տալը խստիվ արգելված էր մահվան սպառնալիքով։ Հրամանը խախտողներին անմիջապես ուղարկում էին Մոռացության այդ բերդը, և կենդանի բոլոր մարդիկ նրան այնուհետև մոռանում էին։

Երգում նկարագրվում են պատմական իրադարձություններ. Պարսկաստանի նոր տերերի՝ Սասանյանների պայքարը, որոնք նպատակ էին դրել հայկական գահից տապալել Արշակունիներին, պարսից նախկին արքայատոհմի ազգականներին, և հպատակեցնել Հայաստանը։ Շապուհը Արշակին հրավիրում է Տիզբոն։ Վերջինս, նախորդ անգամների նման, վստահեցնում է Շապուհին, որ նրա մտերիմ բարեկամն է, ծառան ու դաշնակիցը։ Սակայն պարսիկը չի հավատում նրան։ Համոզված է, որ Արշակը, երբ վերադառնա Հայաստան, դարձյալ իր դեմ պատերազմ է սկսելու, ինչպես այդ արել է բազում անգամ։ Ուստի

իր մոտ է հրավիրում մոգերին և հարցնում նրանց, թե ի՞նչ անել։ Երեսուն տարի, ասում է նա, պատերազմում ենք հայերի հետ և չենք կարողանում նրանց հպատակեցնել։ Եվ ահա այժմ իմ ձեռքում է նրանց թագավորը։ Ինչպե՞ս վարվեմ։ Թույլ տա՞մ նրան վերադառնալ իր հայրենիքը, թե՞ նրան փակեմ ամրոցում։ Մոգերը խորհուրդ են տալիս փորձել Արշակին։ Հայաստանից բազ բերի մի բեռ հող և մի տիկ ջուր։ Հողը թող փռի պալատի մեծ սրահի հատակին, այնպես, որ հողը ծածկի հատակի կեսը, այնուհետև հողը ջրի Հայաստանից բերված ջրով։ Այդ բոլորը կատարելուց հետո Շապուհը հրավիրում է Արշակին։ Նախ՝ նրան կանչում է իր մոտ, որտեղ գահն էր դրած, այսինքն՝ պարսկական հողի վրա։ Նրան հարցնում է. «Ասա ինձ, ինչո՞ւ այդքան ատում ես ինձ և իմ խոսքը չես կատարում։ Ես փափագում էի իմ աղջկանը կնության տալ քեզ և քեզ ինձ որդի դարձնել, բայց դու գերադասեցիր ինձ թշնամի դառնալ և ահա երեսուն տարուց ավելի դու պատերազմում ես իմ դեմ»։ Արշակը նրան պատասխանում է. «Ես ընդունում եմ քո խոսքերը. ընդունում եմ, որ իմ հանցանքը մեծ է քո առաջ, ես քեզ խաբել եմ, և դու ամեն պատճառ ունես ինձ սպանելու։ Բայց իմացիր, որ խորքում ես քո բարեկամն եմ, ընկնում եմ քո ոտքերը, երկրպագում քեզ և ասում, որ քանի դեռ կենդանի եմ, կլինեմ քո հավատարիմ ծառան ու դաշնակիցը»։ Շապուհը բռնում է նրա ձեռքից ու տանում է սրահի մյուս մասը. ինքը վերադառնում է իր գահին և ուղղում է նրան այն նույն հարցը, ինչ և առաջ։ Այժմ Արշակը նրան այսպես է պատասխանում. «Հեռու ինձանից, անհավատարիմ ստրուկ, որ սպանեցիր քո տերերին և հափշտակեցիր նրանց գահն ու թագավորությունը։ Ես երբեք չեմ ների ոչ քեզ, ոչ քո որդիներին։ Ես պիտի կռվեմ ձեր դեմ, մինչև որ ետ վերցնեմ իմ ազգականների արյունը և նրանց վերադարձնեմ պարսից գահը»։ Եվ Շապուհն այս նույնը կատարում է երեք անգամ։ Այնուհետև Շապուհը հրավիրում է Արշակին ընթրիքի և նրան նստեցնում է վերջին, ամենացածր աթոռին։ Արշակն այդ ընդունում է որպես մեծ վիրավորանք։ Նա չի համաձայնվում նստել իրեն տրամադրված բարձին և, դիմելով Շապուհին, ասում է համարյա նույն այն խոսքերը, ինչ և ասել էր նախապես, հայկական հողի վրա գտնվելիս։ Այնժամ պարսից թագավորը հրամայում է կապել նրան և տանել Անհուշ բերդը։ Դրան հետևում է հայոց սպարապետ Վասակի հետ կատարված

մեկ ուրիշ դրվագ։ Վասակը եղել է կարճահասակ, և երբ Շապուհը տեսնում է նրան, ասում է. «Այս գաճաճին տես։ Երեսուն տարի պատերազմում եմ և չեմ կարողանում նրան նվաճել»։ Սպարապետը նրա խոսքերին պատասխանում է. «Կարող է ես մարմնով փոքր լինեմ, բայց քեզ համար ահ ու սարսափում էին իմ անունը լսելիս»։ — «Որո՞նք են այդ երկու լեռները», հարցնում է Շապուհը։ «Մեկը դու ես, իսկ մյուսը՝ հռոմայեցիների թագավորը»։

Այս զրույցը քաղել է իր Պատմության համար Փավստոս Բուզանդը։

Այս երգերը, ինչպես նաև դրանցից առավել հները, մի էպիկական ամբողջություն չեն կազմում։ Դրանք ցրված պատումներ են եղել և տարածվել են ժողովրդական մյուս քնարական երգերի հետ, որ երգում էին շրջիկ երգիչները, դուդուկները, իրենց բանդիռի նվագակցությամբ։

Լայն կտավի չափածո առասպել է շատ ավելի ուշ ժամանակ առաջացած «Սասունցի Դավիթը», ներշնչված խալիֆայության դեմ հայերի մղած դարավոր պատերազմներից։ Դա հայերի ազգային դյուցազնավեպն է։

Սասունի լեռներում, Տիգրիս գետի ակունքների և Վանա լճի միջև, հաճախ ապաստան էին գտնում անկախության համար պայքարող հայերը, հատկապես արաբների դեմ մղված կռիվների ժամանակ։ Վերջնականապես ձևավորված լինելով ավելի ուշ, այս նոր զրույցները սնած պատմական դեպքերից ժամանակի որոշ տարածության վրա, այս դյուցազնավեպը բաժանվում է երեք խոշոր ամբողջության։

Առաջին զրույցի մեջ, որը սովորաբար կոչվում է զրույցի երկու հերոսների՝ եղբայրներ Սանասարի և Բաղդասարի անունով, խալիֆը Հայաստան գնացած իր հարկահավաքներից իմանում է հայոց Դադիկ թագավորի գեղեցիկ աղջկա, Ծովինարի մասին։ Ուստի նա իր մարդկանց ուղարկում է Հայաստան և, պատերազմի սպառնալիքով, պահանջում է, որ Ծովինարին,

որպես իր կին, ուղարկեն Բաղդադ։ Ծովինարը համաձայնում է գնալ խալիֆի մոտ, պայմանով, որ պահպանի իր քրիստոնեական հավատքը։ Նա մեկ ուրիշ պայման ևս դնում է խալիֆի առաջ, որ վերջինս Ծովինարի համար կառուցի սեփական մի ապարանք, որտեղ նա պետք է ապրի մի ամբողջ տարի մենմենակ։ Խալիֆը այս բոլոր պայմաններն ընդունում է։ Ծովինարը պատրաստվում է մեկնել օտար երկիր։ Բայց մինչ նա ծարավը թափառում էր լեռներում, հրաժեշտ տալով իր երկրին, հանկարծ ժայռից դուրս է ցայտում բյուրեղյա սառնորակ ջուր։ Խմում է այդ ջրից և հղիանում, որից հետո ծնում է երկվորյակ տղաներ՝ Սանասարին և Բաղդասարին։ Այս տղաներն էլ դյուցազնավեպի առաջին ճյուղի հերոսներն են։ Խալիֆը, տեսնելով, որ այս երեխաները արագ մեծանում են և դառնում շատ ուժեղ տղաներ, որոշում է սպանել նրանց։ Այս բանը հայտնի է դառնում նրանց մորը։ Տղաները իրենց մոր աչքերը թացող արցունքներից կռահում են սպառնացող վտանգը և փախչում։ Հայրենիք վերադարձի ճանապարհին եղբայրներից մեկը, ծովում լողանալիս, իջնում է մինչև օվկիանոսի թագավորությունը։ Ծովից դուրս է գալիս մարդկային բանականություն ունեցող ձիու վրա նստած, և որպես զենք ունենալով Թուր կայծակին։ Ճանապարհին ջուր է խմում մի աղբյուրից, որտեղից մեղր ու կաթ էր հոսում, և դառնում է իսկական հսկա։ Երկու երբայրները, հասնելով իրենց երկիրը, հիմնադրում են Սասուն բերդը, որը նշանակում է անքակտելի, և այնտեղ հաստատում են իրենց ազատ թագավորությունը։ Հետևում է մեկ այլ պատմություն, որի մեջ երկու եղբայրները կռվում են վիշապների թագավորության դեմ և ամուսնանում են՝ Սանասարը վիշապների թագուհի Դեղձունի, իսկ Բաղդասարը՝ թագուհու քրոջ հետ։ Սանասարի և Դեղձունի որդին, Մհերը, դյուցազնավեպի երկրորդ ճյուղի հերոսն է։

Մհերը շարունակում է իր հոր սխրանքները։ Իր թագավորությունը պաշտպանում է ամենազոր և չարաննենգ վիշապներից ու մարդկանցից։ Հաղթում է նաև խալիֆ Մսրա Մելիքին, նրա հետ հաշտություն կնքում և եղբայրանում։ Քիչ ժամանակ անց Մելիքը մահանում է, և նախաբեմում հանդես է գալիս նրա կինը, Խամիլ խաթունը, որը ամուսնու հետ եղբայրացած Մհերին հրավիրում է Մըսր։ Թեև հերոսի կինը, գեղեցկուհի և իմաստուն Արմաղանը, աղաչում է ամուսնուն՝ չհավատալ այդ օտար կնոջ խոսքերին և չգնալ Մըսր, Մհերը ուղևորվում է այնտեղ։ Խամիլ

թաթունը տալիս է նրան խմելու թունդ հին գինի և, կենակցելով Մհերի հետ, նրանից հղիանում է։ Արմաղանը այդ լսելով, երդվում է քառասուն տարի ամուսնուն թույլ չտալ իր մահիճը մտնելու։ Անցնում է ժամանակը, կախարդանքը լուծվում է, և մի օր Մհերը լսում է Իամիլ խաթունի խոսքերը, որը իրենց տղային օրորելիս ասում է. «Փայլիր Մըսրի արև, խավարեց Սասունի արևը»։ Այնժամ հերոսը մտաբերում է իր հայրենիքը, իր տունը և իր կնոջը, հեծնում է ձին և վերադառնում է իր երկիրը, որտեղ, ի վերջո, Արմաղանը համաձայնում է հրաժարվել իր երդումից, որպեսզի Սասունը չմնա առանց պաշտպանի։ Մեկ տարի հետո Սասունում ծնվում է Դավիթը։

Դավիթը ամբողջ դյուցազնավեպի կենտրոնական հերոսն է։ Նրա հայրն ու մայրը շուտով մահանում են ու տղային թողնում որբ։ Մանուկը չի կարող ոչ մի ուրիշ կնոջ կաթով սնվել. ուստի սասունցիները, որպեսզի երեխան չմահանա, որոշում են ուղարկել Իամիլ խաթունի մոտ, որն իր մահիճը բաժանել էր Դավթի հոր հետ և վերջինիս մյուս որդու մայրն էր։ Ինչպես առաջին ճյուղում, այստեղ ևս հերոսները երկու եղբայրներ են, բայց նրանց արդեն բաժանում են հակամարտությունը և ատելությունը, քանի որ նրանք ծնվել են տարբեր մայրերից։ Կրտսեր Մհերիքը մեծ նախանձով և սարսափով է նկատում, թե ինչքան արագ առնականանում է Դավիթը, և հրամայում է նրան ետ իր երկիրը ուղարկել։ Նա թաքուն իր մարդկանց պատվիրում է նրան ոչընչացնել։ Դավթի սխրանքներն սկսում են հենց այս կետից։ Նա շատ սխրանքներ է կատարում, պաշտպանելով հայրենիքը։ Ի վերջո, պապի զենքերը կապած և ձին հեծած, հաղթում է Մհերիքին, որը արշավել էր Սասունի վրա։ Այս դեպքերի հետ բացվում է նաև պատումի մյուս, քնարական գիծը։ Դավիթը սիրում է գեղեցկուհի Խանդութ խաթունին։ Երկուստեք ցանկալի այս միությանը խոչընդոտում է հսկայամարմին Ջմշկիկ Սուլթանը։ Սա փափագում է ամուսնանալ Դավթի հետ և նրա մոտ ուղարկում է խնամախոսներ ու անվանի երգիչներ, որպեսզի նրան գայթակղեն ու բերեն իր թագավորությունը։ Եվ մինչ Դավիթը գնում է հանդիպելու Խանդութին, հանկարծ ներկայանում է հսկայամարմին Սուլթանը և ամենաքաղցր բառերով նրան մոլորեցնում է և տանում իր թագավորությունը, խմեցնում յոթ տարվա թունդ գինի, ինչ արել էին նաև նրա հոր հետ։ Շատ շուտով, հենց մյուս առավոտյան, Դավիթը ուշքի է գալիս, հեռանում է և գնում է Խանդութին հանդիպելու։ Գտնում է, ամուսնանում նրա հետ, նրա երկիրը ազատագրում է Պապաֆրանկի տիրապետությունից (այս երվագն արդեն խաչակիրների շրջանից է), մերժում է տեղի բնակիչների առաջարկը՝ այնտեղ մնալու և նրանց թագավորը դառնալու մասին, վերցնում է կնոջը և վերադառնում Սասուն։ Նրա վերադարձի ճանապարհը փորձում է կտրել Ջմշկիկ Սուլթանը։ Նա ելնում է Դավթին ընդառաջ և մենամարտի հրավիրում։ Դավիթը խնդրում է թույլ տալ անցնել և մենամարտելու համար վերադառնալ յոթ օր հետո։ Դավիթը մոռանում է խոստումը և հիշում է միայն յոթ տարի հետո։ Գնում է Սուլթանի երկիրը, բայց մենամարտելուց առաջ տեսնում է գեղեցիկ մի լճակ և ցանկանում է լողալ։ Եղեգնուտում թաքնված թիկնեղ, կապուտաչյա մի կին հետևում է այս անծանոթ լողացողին։ Այդ կինը Ջմշկիկ Սուլթանի և Դավթի աղջիկն է։ Հենց որ ի դեմս անծանոթի ճանաչում է իր մորը վիրավորած մարդուն, որն այժմ էլ եկել է նրան սպանելու, լարում է աղեղը և նետով խոցում է հորը թիկունքից։

Կրտսեր Մհերը, Դավթի և Խանդութի որդին, չորրորդ ճյուղի հերոսն է։ Դեռ փոքր տղա, սա ևս որբ է մնում։ Նրա մայրը, լսելով Դավթի մահը, ժայռից ցած է նետվում ու մահանում։ Մհերի քեռի Վերգոն, արծաթասեր և վախկոտ մի մարդ, սեփականում է գահը և փոքրահասակ թագավորին ուղարկում է մոր երկիրը, որտեղ ոչ ոք նրան չէր ուզում։ Այս հերոսը նույնպես մեծանում է թշնամական միջավայրում, շատ անգամ իր հայրենիքը փրկելով զանազան աղետներից։ Նա պետք է կռվեր ոչ այնքան շատ մարդկանց, որքան բնության արհավիրքների դեմ։ Մհերի հեղեղներն են սպառնում խեղդել թագավորությունը, մերթ էլ հսկա ժայռերը կտրում են ջրի ճանապարհը, և երկիրը կանգնում է ծարավից ու երաշտից ոչնչանալու վտանգի առաջ։ Մի անգամ մարդկանց փրկելու համար նա ստիպված է լինում կռվելու մինչև իսկ աստծու վիհվորների դեմ։ Ահա այս ամենաղոր գերմարդ թշնամիները երկու անգամ դժվարացնում են հերոսի սխրանքները, և Մհերը, հոգնած ճակատագրի դավերից, գնում է այնտեղ, ուր թաղված էին իր հերոս նախնիները, նրանց խորհուրդը հարցնելու։ Նա լսում է իր հոր ձայնը, որը պատվիրում է նրան գնալ Ագռավաքար ժայռի մոտ և այնտեղ սպասել իր ժամանակին։

Նա ճիպոտում է իր սևուկ ձին, գնում է Ագռավաքար և

հասնելով, հարվածում է թրով ու ժայռը երկու կես անում։ Այդպես, իր նախապապ Սանասարի ձին հեծած և նրա զենքերով զինված, մտնում է ժայռի մեջ։ Նրա ետևից ժայռը փակվում է, և այդ հսկան մինչև օրս էլ այնտեղ է, սպասելով, թե երբ կհնչի իր ժամը...

ՆԱՐԵԿ

«Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը կազմավորվել է արաբական խալիֆայության դեմ հայերի մղած պայքարներից հարյուրամյակ հետո։ Արաբների դեմ մղված պատերազմների շատ զրվագներ մշակվել են ժողովրդական երգիչների շրթներին, միացել ուրիշ երգերի հետ։ Սկսեցին հյուսվել շատ ընդարձակ պատումներ, բայց այդ բոլորը գրի առնվելուն ու համակարգվելուն բոլորովին նորերս, անցյալ դարի վերջերին։ Գրականագետների կարծիքով դյուցազնավեպն արդեն 10-րդ դարում վերջնական ձևավորված էր որպես էպիկական մի ամբողջություն։

Այս ժամանակահատվածը հայ քնարերգության պատմության մեջ նշանակալից մի հանգրվան է իրոք իր մեծ երևույթով, վանական բանաստեղծ Գրիգոր Նարեկացիով։ Նրա գլխավոր երկը, Նարեկ անունը կրող խորախորհուրդ ներբողների մի ամբողջություն, դարձել է սրբազան գիրք. այն ավետարանների, աղոթագրքերի, վարքագրություններ և այլ սրբազան գրքերի նման դարեր շարունակ կարդացվել է և դարձել պաշտամունքի առարկա։ Այսօր ևս հայերը կարդում են այդ գործը և իրենց բանաստեղծին մեծարում այնպես, ինչպես մենք՝ Հոմերոսին, իտալացիները՝ Դանթեին, ամեն մի ժողովուրդ՝ իր մեծ բանաստեղծին։

Նարեկ է կոչվել վանա լճի ափին գտնված այն վանքը, որտեղ անց է կացրել իր կյանքը եղբայր Գրիգորը, հայտնի մատենագիր, միաժամանակ և բանաստեղծ եպիսկոպոսի որդի, ինքը նույնպես բանաստեղծ, վանական դպրոցի շրջանավարտ և հետո ուսուցիչ, վարդապետ։

Նա ապրել է գրեթե նույն տարիներին, ինչ Գրիգոր Մագիստրոսը։ Հայաստանի համար այդ տարիները դադարի կարճատև

տարիներ էին հին ազատների և նոր հույսերի միջև։ Արաբները արդեն վաղուց դադարել էին երկրի համար սպառնալիք լինելուց։ Թուրքերը դեռևս չէին երևացել, իսկ բյուզանդացիները չէին զազազել։ Հարաբերական կենտրոնացման, բարեկեցության և խաղաղության տարիներ։ Այդ տարիներից պահպանվել են գեղեցիկ եկեղեցիներ, հատկապես վանքեր, որտեղ գործում էին ճեմարաններ և համալսարաններ։ Այդ համալսարաններում հանդես եկան ականավոր մտավորական դեմքեր, ինչպիսին Գրիգոր Մագիստրոսը, որի մասին խոսել ենք նախորդ գլուխներից մեկում, իսկ հիմա էլ այս Գրիգորը, Նարեկի հեղինակը բանաստեղծը։ Այդ տարիները նույնպես ազատ մտածողության, դավանաբանությունից այն կողմ անցնող առավել լայն հետաքրքրությունների տարիներ էին։ Հայաստանը ևս այդ ժամանակ սկսել էր ապրել հոգևոր վերածննդի մի փուլ, որը այդ շրջանում բնորոշում էր արևելյան երկրների կյանքը, արաբական քաղաքակրթության նշանակալից արտահայտությամբ, որը ծաղկեց բոլոր այն երկրներում, որոնք ընդունեցին նրանց քաղաքական ազդեցությունը, սկսած Միջին Ասիայից ու Պարսկաստանից մինչև Եգիպտոս և Իսպանիա։ Այս ընդհանուր հոգեկան միջավայրի մեջ աշխուժացավ նաև աղանդավորական շարժումը, հատկապես հայոց երկրում, պավլիկյանների հայրենիքում։ Այս երկրում զարգացավ քրիստոնեության համարյա բոլոր դոգմանների և եկեղեցական կարգերի լիակատար տապալման հզոր մի ալիք։ Այդ թոնդրակյանների շարժումն էր, որը տարածվել էր նաև հայ եկեղեցու ծոցում։ Նույնիսկ Գրիգոր Նարեկացու հայրը մեղադրվել էր որպես աղանդավորական և հեռացվել իր եպիսկոպոսական աթոռից։ Մի օր,— պատմում է վանքի հայսմավուրքը,— Նարեկա վանք ներկայացան հայոց քահանայապետ մարդիկ, Գրիգորին ևս նույն մեղադրանքը ներկայացնելու համար։ Վերջինս նրանց հրավիրեց իր մենախուցը և այնտեղ մատուցեց եփած աղավնիներ։ Սակայն Ավագ Ուրբաթ օրն էր։ «Ավագ Ուրբաթ օրը աղավնինե՞ր ուտենք»,— զարմացան հավատաքննիչները։ «Սխալվել եմ,— խոստովանեց Գրիգորը։— Ներողություն եմ խնդրում. բայց եկեք առանձին-առանձին հերքով աղոթենք աստծուն, որ վերակենդանացնի իզուր մորթված այս աղավնիներին։ Եթե մեր մեջ կա թեկուզև մեկ բարի քրիստոնյա, ապա աստված կլսի նրա աղոթքը»։ Հավատաքննիչներն այդ չընդունեցին։ Բայց Գրիգորը ծնրադրում է սրբապատկերի

առաջ, աղոթում է, և աղավնիները կենդանանում են, թևերը թափահարում և թռչում հեռու։ Այսպես է պատմվում վանքի հայտնավորքի մեջ։ Այսուհանդերձ, նրա հորը աստիճանաբարկել էին և նզովել. ուսուցիչը, այդ մեղադրանքը չեզոքացնելու նպատակով, նատեց ու գրեց մի պարսավագիր բոլոր աղանդների, հատկապես այս մեկի դեմ, որն այժմ սպառնում էր եկեղեցու հիմքերին։ Նրա խորհրդով նույնպես վարվեց նաև Գրիգորը։

Այդ երկից բացի նա գրեց նաև երգ երգոցի մեկնությունը, մի օրհներգություն, նվիրված կենարար սուրբ խաչին, մեկ ուրիշ օրհներգություն՝ սուրբ առաքյալների մասին, մի քանի հոգևոր տաղեր և իր անզուգական Նարեկը։

Ինչպես ասացինք, Նարեկացին իր ամբողջ կյանքը ապրել է վանքի անխռովության մեջ, համեմատաբար խաղաղ մի ժամանակաշրջանում։ Այսուհանդերձ, բանաստեղծն ընկալում էր գալիք օրերի ողբերգական պատգամները։ Նրա ստեղծագործության մեծ թեման ողբերգականորեն երկփեղկված մարդն է, որին բաժանել է աստված, շարունակության մեջ ինքը մարդը բաժանում է ինքն իրեն, և ուրիշներն էլ, ով ինչքան կարող է, դարձյալ կոտորակում են նրան։ Այս բազմաթիվ կոտորակումները և վերամիավորման, ամբողջանալու ծարավը։ Մարդը, որ իր ցանկացածից տարբեր է, անբավարարվածությունը այն բանից, ինչ ինքն է, իր պատասխանատվությունը և մեղապարտությունը, հույսը, իր կամեցածը դառնալու և պիտանի լինելու փափագը ու դառնության խոր զգացումը, քանի որ խորքում զգում է, թե մնալու է այն, ինչ արդեն ինքը կա։ Այս ամենը կրկնվում է քերթությունների նրա ժողովածուի մեջ, որպիսին իրականում է այդ գիրքը՝ հոգևոր հիմների մի ժողովածու (Մատեան ողբերգութեան*)։ Սովորաբար այդ երկին տվել են «Ողբի գիրք» և կամ «Գիրք ողբալի երգերի» անունը։ Նրա միավորներից յուրաքանչյուրն ունի կրկնվող նույն վերնագիրը՝ «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»։ Այն սկսում է աստծուն ուղղված հիմնով, այնուհետև դառնում է դեպի իր հոգու խորքերը և ջանում բացահայտել իր հոգու մեղավոր հակումները, դրանք լույս աշխարհ հանել մեղսագործելու համար, աստծուց փրկություն պահանջելով։ Իր բանաստեղծություններում նա օգտագործում է նաև հանգավոր

խոսքը, առանց սակայն դերի մնալու հանգին և այլ արտաքին պարտավորություններին, արտահայտությունը հետևում է զգացումի և խռովյալ մտքի թելադրանքներին, հանգից անցնում է ազատ տողին՝ հինգվանկանի կամ յոթվանկանի, դրանից էլ անցնում է արձակ խոսքին և այն ամենին, ինչ ահրաժեշտ է իրեն, որպեսզի իր խոսքն ստանա խմաստների շունչը և հնչի շեշտը աղոթքով աղերսողի, որը տարբեր դիրքեր է ընդունում աստծու առաջ։

Բանաստեղծը կատարելապես գիտակցում է իր պոետական պարտավորությունը։ Իր երգերից մեկը, 26-րդ, նա սկսում է բանաստեղծական հանգավորված խոսքով իր մտքերն արտահայտելու արվեստի մասին խորհրդածություններով.[1]

Ս.

Ոմանք ողբալի ու կողկողածայն
Բանաստեղծություն եղանակելիս
Տունն ավարտում են միևնույն գրով,
Ջանալով այդպես առավել սաստիկ,
Ցավատանջորեն եմվել, մորմոքել
Սրտերը՝ արցունք կորզելու համար։
Սհա և ես էլ, արդարև, անցած
Այդպիսի լալկան բանաստեղծություն
Հորինող մարդկանց բազմության գլուխ,
Նրանց ողբածայն ավաղումներով
Վշտակիր հոգում հեծեծանքները պիտի տարածեմ,
Ես, որ լիովին մեռած չեմ թեև աշխարհի համար,
Բայց և, իսկապես, կենդանի էլ չեմ Աստծո համար,
Ոչ լրիվ ջերմ եմ, ոչ իսպառ սառած,
Ինչպես ասված է Հայտնության գրքում,
Երիցս ատելի՝ եոյակ տերության
Եվ ամենատես բարձրյալ արարչին։
Այս եղանակը հարմար է թախծի պատկերման համար,
Թշվառություններն, այդպես կցորդված,

[1] Նարեկացու այս և հաջորդ բոլոր հատվածները մեջ ենք բերել Վ. Գեորգյանի աշխարհաբար թարգմանությամբ։

Շաղկապված միմյանց նույն հանգավորմամբ, միևնույն
գրով,
Ներկայանում են կրկնակի ողորմ ու արտաճմլիկ:

Բ

Իսպառ ուրացած պարտքը տաղանդի՝
Ես ապիկարս, գործերով անարգ,
Որպես արմունի գանձերի վատնիչ,
Կրկնադատ, մեծին աննողոպրելի պատասխանատու
Մի կալանավոր, փրկությունից զուրկ,
Արժանի կերպով կանգնել եմ ահա
Անխուսափելի պատժի հանդիման.
Բյուր բանբար եմ պարտ, այնինչ գրպանում չունեմ մի
ունկի:
Եվ անբարեխոս փակված կապկպված դառն արգելանում,
Խավար բանտի մեջ. հաշակելով լոկ հեծեծանք ու լաց,
Տանջվում եմ այսպես անպաշար, անօգ ու անապավեն:
Ի՞նչ է մնում ինձ, թե ոչ բարբառել
Կոծ ու կսկիծով այսման ողբաձայն.
Ընարեցի այս չափն ու վերջույթը նույն
Խորհրդավոր ու անհատնում թվով երկյակ տասնյակի:

Ամբողջ երկրորդ հատվածում կայուն կերպով նա օգտագործում է -ի հանգը: Այս տառը հայերեն այբուբենում ունեցած իր հերթական տեղով նշանակում է 20 թիվը, և այստեղ այդ թիվը շեշտվում է որպես ապացույց այն մեծ պարտքի, որ զգում է խոստովանողն իր գիտակցության վրա ծանրացած:

Նարեկացու բանաստեղծությունները կրկնվող ուղևորություններ են դեպի իր հոգու խորքերը: Սակայն այնտեղից իր մեղքերը լույս աշխարհ դուրս բերելիս, նա ընդհանուր կետեր է գտնում բոլոր մահկանացուների տառապանքների, թերությունների, հոռահատությունների, ողբերի հետ: Նրա այդ տխրալի խորհրդածությունների մեջ կա բազմադեմ մենախոսության, ամբողջ աշխարհի խոստովանանքի զգացողություն: Դա ուժեղացնում է նրա պոետական դիրքը, նրա ձայնին հաղորդելով էկումենիկ ուժ:

Նորակերտ մատյանն այս ողբերգության,
Ուր պատկերված են, նշավակվելով,
Ամենատարբեր կրճերն ամենի,
Իբրև ամենայն վիշտ ու ցավերի
Մասնակից, հաղորդ, մեծապես գիտակ
Ու նշմարտացի մի պատվեր, ավանդ,
Հանձնարարվում է այս երկրի վրա
Հաստատված բոլոր բանականներին,
Համայնատարած հրիստոնյաների
Տիեզերագումար ամբողջ բազմության,
Նրանց, որ նոր են միայն կյանք մտնում,
Որոնք հասել են արդեն արթումի,
Որ սպասում են վախճանի օրվան՝ անկար ծերությամբ,
Լինեն մեղավոր, թե արդարամիտ,
Ինքնապաճած գոռոզ, թե սխալներին հասու անձնադատ,
Անշար ու բարի, թե եղեռնագործ,
Նկուն, թե խիզախ,
Սառուկ, հպատակ, թե իշխանավոր կամ գերաշխարհիկ,
Շինական, միջակ, թե բարետռնտիկ, սեպուհ, պայազատ,
Թե արու, թե էգ,
Թե հրամայող և թե հնազանդ,
Թե վեհ ու վսեմ, թե փոքր ու նվաստ,
Աշգո, թե անարգ, ասպետ, թե ռամիկ,
Թե գյուղաբնակ, թե բաղաքացի,
Թե անավորի սանձով բռնված գոռոզ բռնակալ,
Վերնականների հետ հաղորդակից մեծակյացներին,
Նվիրյալներին, զգաստ ու պարկեշտ,
Քահանաներին, ընտիր ու մաքուր,
Աաջնորդներին, վարով բարեզարդ
Ու արթնվեր նախաբռնակալ գահերեցներին:
Նրանցից ոմանց աղերս-աղաչանք,
Իսկ ոմանց համար բարի խրատներ
Աղոթքի ձևով ներկայացրի ես այս մատյանում,
Որ ձեռնարկել եմ հոգուդ զորությամբ,
Շարադրելով ինձ բազմապիսի աղերս-մաղթանքներ,
Իսկ այն բոլորին խնդրանքներ բազում՝
Հանապազ մեծիդ բարեգթության դիմելու համար:

Ինչպես երևում է նույնիսկ այս հատվածներից, նա հեղեղբանաստեղծ է, հոգու հազվադեպ վերծանող։ Նրա խոսքին բնորոշ է նաև լեզվի խոր իմացությունը. ոչ թե պարզապես իր, հայերեն լեզվի, որին նա տիրապետում է շատ հանդիստ և մեծ վարպետությամբ, այլ մարդկային լեզվի, այն հնչյունների, որոնք հոգին են դրսևորում և պատրաստ են մեկը մյուսին քայքայելու, ինչպես այդ նույնը կատարվում է այն ամենով, ինչը մարդը կրում է իր ներսում, իր գնդիկները, որոնք ամեն օր սպանում են իրար, իր զգացումները՝ սև ու սպիտակ, այն առաքինությունները, որ ուզում է ինքը ունենալ, և այն թերությունները, որոնք խաթարում են մարդու առաքինությունները։ Իսկապես արժանապատիվ խոսքի դիալեկտիկական թափով նա առաջանում է դեպի հոգեկան մերկացումը, նրան չեն կանգնեցնում ոչ մի տեղ արտահայտչական անբավարարությունները և կամ ինչ-որ այլ տաբանումներ, որոնք պիտի կարողանային ներքինիացնել նրա համարձակությունը, արտահայտչական և բարոյական։

Իմ դժոխարմատ մանուիր ծառի պտուղները դառն,
Որոնք ընտանի բշնամիներ են,
Հակառակորդներ մոտ ու հարազատ,
Դավաճան ոդիի,
Սառև պիտի նշեմ մեկ առ մեկ իրենց անունով.
Անա և դրանք.
Միտ նանրախորհուրդ, բերան չարախոս,
Տարփահայաց աչք, ականջ բյուրալուր,
Մանածիգ ձեռներ, երիկամ անբոր,
Մոլորուղի ոտք, աներկյուղ ընթացք, խոտոր նանապարհ,
Ծխախոտ շունչ, երբ խավարային,
Քարազանգված լյարդ, հեղհեղուկ մտքեր,
Անհաստատուն կամք, չարիք անփոփոխ,
Բարեմասնություն, խախտված հիմնովին,
Տարագիր հոգի, վանուված ավանդ,
վիրավոր զգացո, նեռանար թշուն,
Փախչող գանվեժ, բռնված հանցապարտ, ծովահեղձիկ հեն,

Անպատասխան մարտիկ, հենգավոր զինվոր,
Յուի սպառազեն, բուլամորթ մշակ,

Անխիղճ աղորիչ, ստոր բեմական,
Անխուսնկ բանանա, անձիր վարդապետ,
Կշտամբված դպիր, ցնդած իմաստակ, բոլ նարատասան...

Այս ամենը ստոկ ներածություն է անհամար այն ինքնախարազանումներից մեկի, որն այստեղ, այս գլխում, Նարեկացին ավարտում է հետևյալ խոսքերով.

Նախատողի ծաղր, բարեկամի ողբ,
Գրողի պարսավ, հանդիմանողի ամբաստանություն։

Այժմ Նարեկացու ստեղծագործության ուսումնասիրողները շատ են գրում և ջանում հետազոտել այս ֆենոմենը որպես ազդակից այն երևույթին, որ ներկայացնում է մարդկային հոգեկան տարածությունը Դոստոևսկու գործերում։ Այսպիսի զուգահեռ անցկացնելը կարող է շատ արդյունավետ լինել։ Ընդհանուր հեռ անցկացնելը կարող է շատ արդյունավետ լինել։ Ընդհանուր գծերը շատ են այն եղանակների մեջ, որոնցով այս երկու հեղինակները պատկերում են բազմաթիվ, հաճախ անհաշտելի բաժանվածությունները, բազմաթիվ մարդիկ մեկի մեջ, այդ ամենին ուղեկցող տագնապները, ապաքինման ծարավը, հույսը, հուսահատությունը և այլն։ Նարեկացին իր բոլոր ներբողները ծավալում է կայուն մի սխեմայով, ինչպես ասացինք վերևում, և ինչ էլ որ ասելու է, ինչքան էլ դառը լինի իր ինքնաճանաչման փորձությունը, միշտ վերջում արտահայտվում է աղաչանքն առ աստված մեղքերի թողության համար և հույս է հայտնվում, որ, այս բոլորով հանդերձ, մարդը կարող է գտնել ինքն իրեն և փրկվելու Այնուամենայնիվ, նրա տողերի մեջ, աշխարհի մյուս բոլոր ունայնությունների կողքին, չի դադարում գործելու գիտակցումը այն բանի, թե ունայն է հուսալ, որ մարդը երբևէ կդառնա ավելի լավը, քան էր և է։ Սա նույնպես ընդհանուր մի գլուխ է երկու գրողների մտածողությունների մեջ, ինչպես նաև ընդհանուր են այդ ամենը մշակելու իրենց գործադրած ձևերի մեջ։ Ընդհանուր են նաև իրենց շեշտվածությամբ։ Բայց Նարեկացուն և Դոստոևսկուն առավելապես իրար մոտեցնող կետը, հավանաբար, վերոհիշյալ վերջին տողն է՝ «հանդիմանողի ամբաստանություն» (հանդիմանչի դատախազություն)։

Ոճրի գաղափարը, որը պարունակում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է պատժի համար։ Մարդն իր հետ, իր ուսերին մնացած ամեն ինչի հետ, կրում է նաև իր տաժանակրությունը։ Այդպիսին է նրա ճակատագիրը։ Իր մեկ այլ ներբողում Նարեկացին ասում է.

Կամելով գնալ ավելի ուժգին՝ թաղվեցի սաստիկ,
Անշափին միտված՝ իմին չհասա,
Բարձրագույններին ձգտելով անդուլ՝
Նախկին տեղիցս էլ գահավիժեցի,
Երկնային ուղուց անդունդներ ընկա,
Որքան ավելի շատ զգուշացա,
Այնքան ավելի վնաս կրեցի,
Ջանալով պահվել աճեղձ, անխաթար՝
Ավերակվեցի դառն ու մաներապես,
Մահառել նաև ձախ կողմի վրա՝ գայթեցի աջով,
Նորը ձեռք բերել՝ նախկինն էլ կորցրի,
Ջրոտիների ետևից ընկած՝
Կաւևորներից զրկվեցի հավետ,
Մինչդեռ ոխտն էի պահել ցանկանում, դաշեր դրժեցի,
Կտրվել հոոի մոլություններից՝
Գտա առավել կոստաբեռներ,
Փորերից փախած՝ մատնվեցի ձեռք մեծամեծների,
Ինչ որ ես իմ ստեղծել էի,
Զարաչար ոսոխ դարձրի իմ դեմ։

Նարեկացու երկը նաև շատ կարևոր վկայություն է այդ ժամանակաշրջանի համար։ Շատ հաճախ նույնիսկ պատմական վկայություն՝ իր նկարագրած պատկերներով ու դրվագներով, ինչպես, օրինակ, 23-րդ ներբողի հետևյալ տողերը.

Թե գիվոր տեսնեմ, մահ եմ սպասում,
Թե պատգամաբեր՝ արհավիրքի բոթ,
Եթե գրագիր՝ կոտայան մուրհակ,
Թե օրինապահ՝ անեծք ու նզովք,
Եթե խարոգիչ՝ ոտքերի փոշու թոթափում միայն,
Եթե բարեպաշտ՝ հանդիմանություն,

Եթե անզգամ՝ կսկիծ ու մորմոք...
Ընդոստնում՝ ամեն թեթև թեղյունից,
Դողում, երբ հանկարծ հրավիրվում եմ խրախճանության...
Պիտի կարկամեմ, եթե կանչվելու լինեմ հարցումի,
Եթե իրավամբ ընտվելու լինեմ, պիտի համրանամ...

Հայերը հաճախ են գանգատվում իրենց հին ու նոր բանաստեղծների գործերի թարգմանություններից։ Դրանք միայն բնագրից չնչին տպավորություններ են հաղորդում։ Եվ եթե այդ ճիշտ է բոլոր բանաստեղծների համար՝ ինքն իսկ հայերենը դեռևս այնքան վարժ չեն ձայնակցում հայերենին, ապա Նարեկացու բանաստեղծությունը, ըստ երևույթին, շատ ավելի մեծ դժվարություններ է ներկայացնում թե այն պատճառով, որ նրա լեզուն արդեն հին մի լեզու է, բայց և առավելապես այն պատճառով, որ այս բանաստեղծը իր հսկայական գրքում միշտ գրեթե միևնույն բանի մասին է խոսում, առանձնապես հմտությամբ է վերադառնում առանց կրկնելու իրեն, տողերը հաճախ նույն բառերն են ասում, բայց որոշակի տարբերություններով, նոր հրանգներով, ուրիշ մանրամասներով ու պատկերներով, մի բան, որ, անշուշտ, սաստիկ դժվարացնում է վերարտադրել նույնիսկ ժամանակակից հայերենով։

Ինչքան էլ որ հորդառատ գետի նման տարածվելիս լինի այս բանաստեղծի խոսքը, ինչքան ճյուղավորումներ էլ որ աջ ու ձախ տա, երբեք չի կորցնում իր խորությունը, ոչ էլ իր շնչի հզորությունը։

Ինչպես հին վանականների բոլոր գրքերը, Նարեկացու «Մատյանը» ևս վերջում ունի իր վերջաբանը՝ Հիշատակարանը։ Այստեղ Նարեկացին իր ճոխ լեզվով հետևյալ տեղեկություններն է հաղորդում իր պոեմի մասին.[1]

«Ժամանակներու հոլովման հառաջընթացին, ուր լրասպարար, նշուլագեղ, արփիաճաճանչ, լուսակիր, օրակշիռ, մշշափարատ և ակնապարար արեգակը՝ ստեղծագործված արուսյակը՝ կհամ-

* Նարեկացու հիշատակարանը տալիս ենք Տրապիզոնի Գաբրիելին եպիսկոպոսի թարգմանությամբ։

բարե, կփոփոխե և կկուտակե դարեր չափազ բազմահազար տարիներ, և այս անցավոր ու մահկանացու աշխարհը կկենդանացնե ու կնորոգե. հայկական տոմարի ինններեակ հորելյանին ամբողջական յոբելին և տասնյակի սկզբնավորման, Հոռոմնեբու՝ հաղթող ու մեծ կայսր Վասիլի դեպի մեր երկրի հյուսիսարևելակողմերը կատարած արշավանքեն երեք տարիներ հետո, երբ ան ընդարձակ և անծայրածիր սահմաններու վրա, թանձրակուռ քարերու կոթողումներով, ի սփյուռս աշխարհի կտարածվեր, և՝ որչափ կհասնեին իր ձեռքն ու երկնագույն և անխզելի պարանալարը՝ աջ ու ձախ կսուրար ունթարթափորեն, նույն նվաճումներու առաջադրությամբ՝ ավելցնելու, սեփականացնելու և իր իշխանության ծիրին մեջ առնելու բազմախումբ երկիրներ։ Անդորրության այս ժամանակամիջոցին, երբ եկեղեցվո թշնամիները ընդունված էին վերջապես,— հերինեցի, բարդեցի, կանգնեցի, պատրաստեցի այս շահեկան դիրքը, ուր՝ իբրև միակ հրաշակերտի մը մեջ՝ հավաքեցի խոսքի բազմաստեղնյան դերվագները, ես՝ Գրիգոր կրոնավոր քահանա, հետինս բանահյուսներուն և կրասերս վարժապետներուն, գործակցությամբ՝ Նարեկի մեծափառ և բարձրապատիվ ուխտին վանական՝ Հովհաննես ընտրյալ եղբորս, որուն հետ՝ իբրև երկու անձեր մեկ դեմքով ու կերպարանքով կենցաղավարեցանք, ըլլալով ոչ միայն ըստ մարմնո հարազատներ, այլ նաև ըստ ամենայնի միաշունչ, միակրոն ու սրտակցորդ, չորս աչքերով ուղիղ միևնույն խորհրդին հառելով։

Արդ, բազմաշխատությամբ պատրաստված այս ախորժահամ սեղանին ճաշակողներիդ կաղաչենք հիշել զմեզ ձեր անկեղծ ազոթքներուն և պատշաճ խնդրվածքներուն մեջ և կմաղթենք, որ ձեր անուններն ալ գրվին վերին դպրության կյանքի մատյանին մեջ»։

Ինպես մեզ բացատրեցին, շրջաններից յուրաքանչյուրը, որոնց մասին այստեղ գրում է Նարեկացին, մեկ հիսնամյակ է։ Այնուհետև, որպեսզի գտնենք մեր թվականը, եթե մեզ հայտնի է հայոց թվականը, պետք է ավելացնենք դրան 551 տարի։ Այսպես հասնում ենք 1001, ավելի ճիշտ՝ 1002 թվականը, մինչև այն տարին, երբ Գրիգոր Նարեկացին հաստատեց, կառուցեց ու գրեց իր դիրքը։ Հետևաբար, բնագրում հիշատակված կայսրը Բասեղ Բուլղարասպանն է։

ՍԱՑԱԹ-ՆՈՎԱ

Ուշ դար է բաժանում հին Հայաստանի բանաստեղծական երկու խոշորագույն գագաթներին՝ վանական-փիլիսոփա Նարեկացուն վանական-ուրուրադուր Սայաթ-Նովայից։ Այս երկու մակդիրների միջև պարփակված է պոետական շատ կարևոր մի պատմություն։

Այդ ժամանակահատվածի գրեթե միջին մասում տեղի ունեցավ աշխարհի այդ հատվածի համար ևս մեծագույն կարևորությունը՝ Կոստանդնուպոլսի նվաճումը թուրքերի կողմից։ Այդ տարիներին ապրած հայ բանաստեղծներից մեկը, Առաքել Բաղիշեցին, գրել է մի ողբ Կոստանդնուպոլսի գրավման մասին։ Գործը գրվել է նույն գրավման տարին (1453 թ.)։ Այն չափածո է, պատմում է քաղաքի գրավման որոշ դրվագներ և ասում, որ եվրոպայից գալու են դավանակից քրիստոնյա ժողովուրդները և ազատագրելու են քաղաքը։ Այնուհետև նրանք առաջ են շարժվելու դեպի Արևելք, ոչնչացնելու են բոլոր անհավատներին, ազատագրելու են Հայաստանը և Միջագետքը, մինչև Երուսաղեմ ու Եգիպտոս։ Այսպիսի մարգարեություն էր կատարել վանականը։ Սակայն կիլիկիայի թագավորության վերացումից հետո հայերը, մինչև 20-րդ դարը, չունեցան իրենց թագավորությունը, ոչ մեծ, ոչ էլ փոքր։ Այն ամբողջ շրջանը, որտեղ երբեմնի հայկական հողերն էին, ընկավ թուրքերի և պարսիկների լծի տակ, որոնք իրար դեմ մղած պատերազմների ընթացքում իրար միջև բաժանում ու վերաբաժանում էին հայկական բարձրավանդակը, մինչև Անդրկովկասը ներառյալ։ Շատ ուրիշ բաների հետ այս դժվարին ժամանակներում ոչնչացան նաև ազգային ավատատիրության առանձնաշնորհումները։ Տեղաբնիկ հայ իշխանների տեղը եկան գրավելու թուրքերը, պարսիկները և քրդերը։ Ուստի և, վանքերից ու դյուղերից բացի, Հայաստանում արդեն գոյություն չունեին խոշոր համայնքներ՝ ազգային քաղաքակրթության օջախներ։ Այս բոլորը, սակայն, ունեցան նաև մի հետաքրքիր հետևանք, հատկապես պոեզիայում։ Ինչքան նեղանում էին սահմանները, որոնցում ապրում էր բանաստեղծը և որոնք նա արտահայտում էր, այնքան նրա գրվածքների մեջ գույն էր ստանում անձնական զգացումը։ Ազատագրվում էր և ժամանակի հետ առաջ էր ընթանում

անհատական արտահայտությունը, և բանաստեղծությունը, աստվածաբանությունից ու փիլիսոփայությունից ավելի ցած իջնելով, մտնում էր հանապազօրյա կյանքի մեջ, դառնալով անձնական ապրում և երգ։ Այնուհետև, հայ բանաստեղծները ենթարկվում էին իրենց շրջապատող արաբա-պարսկական պոեզիայի ծովի ազդեցություններին, պոեզիա, որն արդեն ստեղծել էր քնարական կայուն մի միջավայր և շատ որոշակի պոետական համակարգ, այսինքն՝ սրբագործված ժանրեր, թեմաներ և այլն։ Արաբա-պարսկական մշակույթը ապրում էր վերածննդի իր ոգին, որը ներթափանցում էր նաև մյուս աշխարհը, նույնիսկ Եվրոպա։ Անշուշտ, հայ բանաստեղծը չէր ապրում վեզիրի պալատում, ոչ էլ իր բանդիտով պատերազմներում և խրախճանքի ժամանակ ուղևկցում խաներին ու փաշաներին։ Նա դեռ երկար շարունակում էր մնալ վանքում։ Այս հանգամանքը առանձնապես դժվարացնում էր անցումը կյանքի պոեզիային, որը դարձել էր ավանդություն Արևելքի պոեզիայի աշխարհում։ Այսուհանդերձ, հայկական վանքում ևս բանաստեղծությունն սկսում էր զգալ և խոսել ուրիշ եղանակներով, ինչպես մենք տեսնում ենք գոնե այն բանաստեղծություններում, որոնք մատչելի են մեզ թարգմանությունների շնորհիվ. այն կրում էր ուժեղ ազդեցությունը, շատ ավելի ուժեղ, քան հարևան ազդեցությունները, իր հայրենի պոեզիայի, նույն իր Նարեկացու ազդեցությունը։

Նարեկացին պետք է հոգեկան խոովք հաղորդեր իր հայրենակիցներին։ Նրա բանաստեղծությունների պատգամը կարող էր շատ ավելի հեռուն գնալ, քան նրա բուն իսկ մտադրությունները։ Աստծուն հղած իր խոսքերի մեջ, ինչպես անվանել է իր ներբողները Նարեկացին, եկեղեցին, որպես միջնորդ հավատացյալի և աստծու միջև, մի կողմ է մղված։ Մարդն իր բաց վերքերով գալիս կանգնում է աստծու առաջ երես առ երես։ Այսինքն, քան էության ինքն իր առաջ, որովհետև աստծու կողմից ոչինչ չէր լսվում։ Այն լուծումները, որ տվել է եկեղեցին, այն եղանակները, որոնք նա գտել է խաղաղեցնելու և համոզելու համար, տապալվում են լոկ այն իրողությունից խսկ, որ հավատացյալը, ամբողջ հինգ դար եկեղեցուն ծառայելուց հետո, անհրաժեշտ է զգում խոսել ուղղակի աստծու հետ։ Այնուհետև, այն ոգևորությունը, որով ինքնախարազանվում է, բոլորովին անսովոր հոգեկան մակարդակները, որոնք նա շոշափում է իր սոսկալի խոստովանություններով, դրան գումարած նաև հուսահատության խոր զգացումը, որ ունի, համենայն դեպս, այս աշխարհին վերաբերող ամեն ինչի հանդեպ, այս ամենը հաղորդում են ողբերգական մի լարում, որն ի վիճակի է փոթորկելու և հոգեկան անունդ տալու ամբողջ սերունդների, ինչպես կատարվել է այս գրքի հետ, որն այժմ էլ չի կորցրել իր արժեքն ու հետաքրքրությունը որպես հոգևոր ֆենոմեն։

Առաջին իսկ ներբողում, դեռ շատ չներթափանցած, պատահում ենք մի քանի տողերի, որոնք ցույց են տալիս, թե Նարեկացին ինչքան ողբերգականորեն ինքն իրեն մեջ ապրում է աստծուն հղած իր ուղերձները։ Նա ասում է.

«Այժմ իսկ զգում եմ արդեն աճձիս մեջ
Տագնապախռով ալեկոծումներ ներհակ ուժերի,
Եվ չար ու բարի խորհուրդներն աճա խմրված բազմությամբ,

Սպառազինված զենք ու սուսերով՝
Բախվում են իրար ոսոխների պես,
Դարձնելով ճամակ իմ մաճվան գերի»։

Դոստոևսկու մոտ ևս ունենք համանման մի արտահայտություն, երբ Իվան Կարամազովն ասում է. «Աստված կովում է Սատանայի հետ, և մարտադաշտը մարդու հոգին է»։

Նարեկացին իր պարբերությունն ավարտում է այսպես.

«Ըստ ինձ դիպվածի, երբ շնորհը Ֆո դեռ ինձ չէր հասել»։

Այս տողերը ապշեցուցիչ են։ Անմիջական ցուցմունք այն մասին, թե եկեղեցին մի կողմ էր արված Մարդու և Աստծու միջև կատարվող զրույցից։ Ամեն ինչի վերանայում այս բնագավառում։

Հավասարակշռման ջանքերն սկսել են հենց սկզբից։ Այժմ, կարդալով այդ հին բանաստեղծներին, հավաքված մի անթոլոգիայում

դիայում, այն տպավորությունն ենք ունենում, որ նրանք բոլորն էլ նա են դառնում, սկսում են նորից դիտել աշխարհը այն կետից, որ նրանց ցույց է տվել իրենց այս մեծ հայրենակիցը: Նայում են նրանք, ասես առաջին անգամ են տեսնում աշխարհի տարօրինակությունները, կատարվող անարդարությունները, բախտի անակնկալ շրջադարձերը, կյանքում եղած այն ամեն գեղեցիկը, որ մարդիկ չեն վայելում, մահվան պրոբլեմը. տեսնում են այդ ամենը և ջանում զրուցել աստծու հետ առանձին, իբրև մարդիկ, զարմանալով, թե այս ամենը ինչպե՞ս է հաշտեցվում արդարության զգացմունքի հետ, հենց իր իսկ գերագույն արարիչ էակի գոյության հետ. էակ, որն ինքն է ստեղծել այս ամենը, և ինչո՞ւ է այդպես ստեղծել:

Այդ մասին փիլիսոփաները գրել են նաև նախկինում, բայց 12-րդ և 13-րդ դարից հետո դրանք արդեն որոշում են պոեզիայի շեշտը: Այս անմեկնելի զարմանքներով էր սկզբնավորվում Հայաստանի միջնադարյան քնարական պոեզիան: Հովհաննես Երզնկացու, որը միաժամանակ և բարեպաշտ էր, այսինքն՝ առաջինը ուսուցիչների մեջ, և Ֆրիկի (13-րդ դար) բանաստեղծություններր նվիրված էին ճակատագրի ձախորդություններին և բուն իսկ կյանքում տեղ գտած տարօրինակ երևույթներին, վերջինս նույնիսկ իր բանաստեղծության մեջ («Բախտի անիվը») շատ առաջ գնաց աստծու հետ ունեցած իր վեճերի մեջ, մինչդեռ իր մյուս բանաստեղծությունների մեջ նա, թվում է, թե դղջացել է իր այդ հանդգնության համար: Քիչ ավելի ուշ հանդես է եկել Կոստանդին Երզնկացին: Նա գրել է հիասքանչ քնարական մի բանաստեղծություն, նվիրված գարնան, ինչպես նաև այլ բանաստեղծություններ, որոնք կարող են համարվել նույնիսկ սիրային, թեև նրանց արտահայտությունը մնում է հին համակարգի շրջանակներում:

Այս երեք բանաստեղծների հանդես գալը հայտանշում էր նոր արտամտությունները և դրանց դրդապատճառները, նոր թեմանները, այսինքն՝ փիլիսոփայությունը կյանքի և մահվան վրայից աստիճանաբար տեղափոխվում էր մահից դեպի կյանք, բյուրեղանալու համար մաքուր քնարական զգացողության և ազատ երգի մեջ: Երկու քայլ անդին արաբները, պարսիկները այդ հարցերն արդեն լուծել էին: Նրանք գովերգում էին գինին ու սերը (Ռուդակին, Օմար Խայամը և շատ ուրիշներ), նրանք ունեին իրենց ավանդությունը: Բայց և նրանց կրոնի

փիլիսոփայությունը այդ ամենի տակ բաց էր մնում, ինչ-որ հեռվից մահվան մասին միտքը պարտադրելով որպես տոնախմբության շրջանակ, որպես անխուսափելի կենսաբանական երևույթ և այլն: Սակայն հայերը, ինչպես և մյուս քրիստոնյաները, որպեսզի դուրս գային իրենց միջնադարից, անհրաժեշտ էր, որ այդ ամենի տառապանքը կրեին, պատճառաբանեին իրենց քայլերը և դրանք նվաճեին մեկ առ մեկ: Անշուշտ այս դժվար, երկչոտ քայլերը, ինչպիսիք թերևս մի ժամանակ կատարել էին նաև նախաստեղծները իրենց դրախտում, արձանագրել է նրանց քնարական բանաստեղծությունը միջնադարից դեպի վերածնունդ կատարած դանդաղ անցման մեջ: Սակայն այս բոլորի մեջ, այս երկյուղների, անհամարձակությունների, կասկածանքների մեջ դնում ենք նաև նրանց պոեզիայի մի առանձին հմայքը, երբեմն նույնիսկ տեսնում ենք նրանց երկչոտ ժեստերը արտակարգ կերպով դրոշմված նրանց հին մանրանկարներում, երբ, օրինակի համար, մի հայ Գաբրիել հրեշտակապետ ոտնամանների ծայրերին քայլելով, մոտենում է մատուցելու ձեռքի ծաղիկը իրենից էլ ավելի երկչոտ հայուհի Աստվածածնին: Այդ մանրանկարներում ակնառու է համապատասխանությունը քնարական առաջին բանաստեղծություններին, պոեզիայի մեջ սիրային զգացման և ամեն տեսակ զվարթ, երկրային փորձի առաջին քայլերին: Նկատում ենք նաև հետևյալը: Բոլոր բանաստեղծություններում, հատկապես սկզբնական շրջանում, մինչև 15-րդ, նույնիսկ 16-րդ դարը, անպակաս է, անգամ եթե կարդում ենք քնարական դեղեցիկ նկարագրություններ կամ խոստովանություններ, երկխոսություն ձևը: Բանաստեղծները խոսում են իրենք իրենց հետ այն ամենի մասին, ինչ համարձակվում են նկատել և արտահայտել: Համարյա ամեն բանաստեղծության մեջ վերջում կամ այլուր կա մի քառյակ, որտեղ բանաստեղծը, հիշատակելով նաև իր անունը, ինչ-որ եզրակացություն է անում և տալիս է գործնական խրատ, սովորաբար այս նոր ոգիներից պահպանելու համար: «Ով Կոստանդին, վերցրու քո այս լսածները և դրանք դիր ճշմարտության հետ մի շարքի վրա: Փակիր բերդի նման քո հոգին, երբ լսես, որ քո դուռն են թակում: Շատերին կյանքի հորձանուտը վերցրեց իր ալիքների մեջ, և նրանք հետո ծանր կապարի նման սուզվեցին և վաղուց է արդեն ընկած մնում են այնտեղ հատակում»:

Այս բանաստեղծներից առավել շատերը հոգևորականներ

էին։ Շատ անգամ, արտահայտելու ձգտումով տարված, նրանք ազատություն էին տալիս իրենց քնարական արգասավորությանը։ Այդպիսով նրանք գրեցին քնարական գեղեցիկ բանաստեղծություններ։ Զանց չէին առնում, սակայն, այդ ամենից հետո մնալ պժգանքով, ինչպես վերոհիշյալ տողերում, և կամ մեկնություններով, որ շռայլում էին տալ իրենց խորհրդանիշներին։ Սիրային երկխոսությունների համար շատերի կողմից օգտագործված եղանակներից մեկն էր Սոխակի զրույցը վարդի հետ։ Կան գեղեցիկ բանաստեղծություններ՝ գրված 14-րդ և 15-րդ, նույնիսկ 16-րդ դարում։ Դրանցից մեկը գրել է Պոլսի անկման մասին «Ողբի» հեղինակ Առաքել Բաղիշեցին։ Լավագույնը գրել է բոլորից առավել քնարական Գրիգորը, որը եղել է նաև արքեպիսկոպոս Վանում։ Բայց նրա ժամանակ (16-րդ դար), վարդի փոխարեն սկսում են օգտագործել խնձորը, որը դրախտի հին պատմությունից իր անցյալով, այլև իր նյութական էությամբ, ուրիշ մի որակ էր սիրային պոեզիայի կյանքում, առավել ևս, որ այժմ արդեն Սոխակն էլ թռել էր, տեղը զիջելով իրեն՝ բանաստեղծին, որը այլ կերպ էր տեսնում կյանքի հմայքները, գինին, բնությունը, դրանք փնտրում արդեն իր սեփական փորձով ու ծարավով։

Քո գունովն գինի պիտեր, խմեի ու հարբենայի.
Քո ծոցդ Ադամա դրախտ, մտնեի խնձոր ճաղեի.
Քո երկու ծծամիջին պտակեի ու ուռն լինեի.
Այն ժամն ես հոգի պատո՛ի գոռոիմ, լուկ թող գա տանի։

Սա Նահապետ Քուչակն է։ Այս արտակարգ երգիչով միջնադարի բանաստեղծությունն ազատագրվեց միջնադարյան պայմանականություններից, խոսեց մի լեզվով, որը ձգտում էր ուղղագծվել իրերի իսկական հատկությունների հետ և, առանց քողարկելու, արտահայտել մարդու կյանքում դրանց ունեցած արժեքը։ Քուչակի բանաստեղծությունները հավասարապես պատկանում են մտավորականի և ժողովրդական երգչի, բայց նա առավելապես ժողովրդական է։ Այն բանաստեղծն է, որը բոլորից շատ է սիրվել, նրա անունը ապրում է հայերի հիշողության մեջ։ Նրա բանաստեղծությունների առավել մեծ մասը սիրային են։ Նա սերը երգել է ուրախ և տաղամարդավարի, առանց

հառաչանքների, առանց նվնվոցի։ Մինչև իսկ գերնզմանից անդին նա հրավիրում էր սիրային հանդիպումների, և եթե նրա հրավերը լսելի չէր լինում, նա վճռականորեն փակում էր այդ գլուխը և մի ուրիշ տեղ բացում էր մի ուրիշ գլուխ։ Իր այդ երգերից մեկում նա ասում է.

«Թե գան ու զքեզ ջուր ասեն, կամ ջրին ճարակն ի քենե,— Տարեկ մի ծարաված կենամ,— չի խմեմ կաթիկ մ'ի քենե»։ Այսպիսի շատ բանաստեղծություններ ունի նա, 15 վանկանի քառյակներ (հայրեններ)*։ Սակայն սովորաբար նրա թեման ուրախ է, սիրո հրավեր, նկարագրություններ, հույսեր, հաջողություններ.

Քանի մարե գիս բերեր, հաճաճի չեմ խոստովաներ.
Ուրտեղ հաճաճա տեսեր, նա ծոներ ճամփուս ու ելեր.
Ուրտեղ մեկ աղվոր տեսեր, գիրկ ու ծոց՝ ի դեմ գնացեր.
Մոցիկն եմ ժամտուն արել, ծծերուն եմ խոստովաներ։

Ել, եկ դու ի Ֆո տաներն, գինչ ելներ արևն ի մորեն.
Մագե լույս ի Ֆո ծոցեդ, գինչ գարնան կայծակն ի համպեն.
Շատ երեց ու արեղա իջուցեր Ֆո սերն ի բեմեն,
Ջիս այլ սիրու տեր արիր, ու հանիր իմ հոգն ի տաներն։

Նրա մյուս բանաստեղծությունները զանազան խրատներ են կամ տխուր երգեր պանդուխտների մասին, որոնք լքում էին հայրենիքը և բռնում հեռու երկրներ տանող ճանապարհներ։ Այդ բանաստեղծությունները սովորաբար կոչվում են «Կռունկ»*։ Բառը նշանակում է չվող թռչուն։

Նահապետ Քուչակի ժամանակ էլ սկիզբ է առնում հայերի պատմության այս ողբերգական գլուխը՝ պանդխտությունը։ Իրենց երկիրը ազատ տեսնելու հույսը կորցրած, երկիր, որը թուրքերն ու պարսիկները վերածել էին պատերազմների մշտական թատերաբեմի, մարդիկ հեռանում էին ուր աչքերը կարեր, ոմանք գնում էին Արևմուտք, մյուսները՝ Արևելք, Հնդկաստան։ Սկսվում է այդ անվերջանալի պանդխտությունը։

Ճիշտ այդ տարիներին էլ կորվում է գեղեցիկ բանաստեղծական հեքիաթը։ Հաջորդ դարում ևս հիշատակվում են մի քանի

անուններ, բայց պատմությունը, ըստ էության, արդեն ավարտվել էր։ Փոխվեց նաև պոեզիայի բնույթը։ Բանաստեղծները լքեցին վանքերը և իրենք նույնպես դուրս եկան փողոց դափ ու քյամանչայով իրենց ապրուստը հայթայթելու, դարձան քափառական երգիչներ, վերածնելով հին ռապսոդների, գուսանների հին ավանդությունը։ Սրանք այժմ կոչվում են աշուղ. բառը մուսուլմանական աշըգ (սիրահարված բանաստեղծ-երգիչ) բառի հայերեն արտահայտությունն է։ Դրանց մեջ առաջիններից էր վանական, սրբապատկերների նկարիչ Նաղաշը։ Հիշատակվում է նաև Ստեփանոսը, որին վերագրվում են մի քանի շատ գեղեցիկ սիրային երգեր, ավելի ուշ՝ Դունկիանոսը, շատ ճանապարհորդած և զարգացած մի հայ, որը եղել է Եգիպտոսում Իբրահիմ փաշայի գրագիրը։ Նրանցից լավագույնը Սայաթ-Նովան է, որը դեռևս փոքր տղա, դարձել է աշուղ և վերցրել այդ կեղծանունը, որը հնդկերենի բարբառներից մեկում նշանակում է երգիչների վարպետ։ Համարվում է միջնադարի վերջին շրջանի ամենախոշոր բանաստեղծը, արաբա-պարսկական մեծ քնարերգուներին հավասար։ Նրա տարերքը սիրային վշտակոծ երգն է։ Ապրել է բավական երկար (1712—1795), հյուսելով երգեր, մասնակցելով առնախմբություններ և բանաստեղծական մրցույթյունների, որոնցում միշտ հաղթել է։ Նրանից լավագույնը երևան չի եկել, որպեսզի կարողանար նրան հետ մղել, ոչ հայերի, ոչ վրացիների, ոչ էլ թուրքալեզու ադրբեջանցիների մեջ։ Նա այս երեք լեզուներն էլ լավ գիտեր. այդ երեք լեզուներով էլ գրել է երգեր, և Կովկասում բոլորը նրան համարում են իրենց բանաստեղծը։ Բայց, անկասկածորեն, հայ էր։ Երբ դեռ երիտասարդ էր, նրան իր պալատը տարավ վրաց Հերակլ Բ թագավորը և դարձրեց գլխավոր երգիչ։ Այստեղ, սակայն, Սայաթ-Նովան սիրահարվում է թագավորի աղջկան կամ մեկ ուրիշ իշխանուհու և հեռանում քաշվում է հայկական վանքերից մեկը։ Թագավորի բարեհաճության շնորհիվ նրան դարձրին վանական։ Բայց այդ հանգամանքը չէր խանգարում, որ թախծելիս հանի կրոնական սքեմը և, հագնելով ժողովրդական հին զգեստը, դուրս գա երգելու։ Նա այդպես էր անում և ծեր հասակում, երբ լսում է, որ հանդես է եկել մի երիտասարդ երգիչ ու մեծ հռչակ ձեռք բերել, այնքան, որ արդեն դերազանցելու է Սայաթ-Նովայի համբավը։ Կայացած մրցակցության ժամանակ Սայաթ-Նովան նրան ևս հաղթում է և մինչև կյանքի վերջը պահում է առաջին երգչի

տիտղոսը։ Նրան սպանեցին պարսիկները, Թիֆլիս կատարած արշավանքներից մեկի ժամանակ։ Նրա ընկած վայրում հուշարձան կանգնեցրին և վրան փորագրեցին երգի հետևյալ տողերը.

«Ամեն մարթ չի կանա խրմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրեն է,
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրն ուրիշ գրեն է։
Ռունիաթրս ավազ չիմանաս՝ բառափ է, բառուկրեն է...»։

Ովքեր նրան լավ գիտեն, ուսումնասիրել են նրա ստեղծագործությունը և կարդում են նրա գրած լեզուներով, միաբերան համաձայնում են, որ այս բանաստեղծը անկրկնելի է բանաստեղծություն և երգ ստեղծելու իր ձևերով։ Առանձնապես նա հարուստ գույներով և անհամար նրբերանգներով նկարում է անբախտ սիրո խաղերը, խոսելով միշտ միևնույն բանի մասին, իր մեծ հայրենակցի նման, երբ վերջինս պատկերում էր իր հոգու անհատնում տվայտանքն ու տառապանքը, գտնելով մշտապես իրերի և զգացումների նոր համադրումներ, հաղորդելու և ցրելու համար իր սիրային տագնապները։ Նա տարաշխարհիկ է իր նկարագրությունների մեջ, օգտագործում է ուրիշ երկրներ իր անուններ, բառեր, նկարագրություններ. նրա քաղաքները փոքրիկ գորգեր են, որոնց վրա, արևելյան երևակայությամբ, հյուսում է պատկերներ, որոնք աչքին պարգևում են անհայտ ուրախություններ, բայց առանձնապես ախորժելի են ականջին իրենց անհավատալի երաժշտությամբ։

Լավ աշուղի լեզուն նույն ինքը սոխակն է։ Սոխակի համար, երբ զարթնել է նրա երգելու ցանկությունը, սուլթաններ, դահիճներ, դատավորներ, արգելքներ, կանոններ չկան։ Ամեն ինչ անում է իր ուզածի համաձայն. ոչ ոքից չի վախենում, ոչ մեկի կարիքը չի զգում։ Ընդհակառակը, նա կարող է բոլորին փրկել չարիքից, հարություն տալ նույնիսկ մեռյալներին։ Միայն Սայաթ-Նովային, երբ գարուն հասնի նրան, աշխարհի ոչ մի սոխակ չի կարող փրկել։

Շատ բանաստեղծություններում Սայաթ-Նովան խոսում է իր արվեստի գաղտնիքների մասին.

Հիռու տիղացեն գալիս իմ—խիլիի դարար շան իմ բերի,
Հուշրես լիճն ի անգին լալով, ջավահիրչուն աի իմ բերի,
Հընդու միչեմեն դուս եկած դիմեթով մարաի իմ բերի,

Տեսնողըն բաւերըն չի գիդի՝ մե ճեսաի բարգաճ իմ բերի,
Հեստի տիղ դուման բաց աճիմ՝ զարբս մուճար չը բաչե:

Թարգմանութիւնների մեջ, սակայն, այս առավելութիւններից ամենակարևորներն արդեն, Սայաթ-Նովայի երգերի երաժշտական համայքը, կորած պատմութիւն է: Լավագույն դեպքում կարող ենք մի փոքր երևակայութեամբ ինչ-որ գաղափար կազմել այն առանձնահատուկ հակումի մասին՝ գովերգելու այն հազար-հազար լավ բանները, որ աշխարհի բոլոր կողմերից բերում են նրա տողերի քարավանները:

Մարդ կարող է պատկերացնել, թե ի՞նչ կարևոր նշանակութիւն պետք է ունեցած լինեն Սայաթ-Նովայի բանաստեղծութիւնները տողի մշակման և լեզվի հարստացման ու զարգացման համար:

Այս բոլորի հետ միասին, նրա բանաստեղծական արվեստը, ինչպես մեզ հավաստիացնում են նաև այս հարցերի լավագույն գիտակները, հայերի հին հայրենիքում և հին լեզվի մեջ ձեռք բերված բանաստեղծական խոսքի բարձրագույն չափանիշն է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Նորագույն շրջանի ամենաականավոր հայ բանաստեղծներից մեկն է: Արդեն մենք 19-րդ դարում ենք, ավելի ճիշտ, 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում: Հայաստանում չպատահեցի գնի մի մարդու, որը չիմանար Թումանյանին: Նրան գիտեն նույնիսկ անգրագետները: Եվ ոչ թե պարզապես նրա անունը, այլ գիտեն, թե ի՞նչ մարդ էր նա, ի՞նչ գործեր է գրել. շատ բան նրա գրածներից գիտեն բոլորը: Եվ եթե ինչ-որ տեղ չեն կարողանում հիշողությամբ ձեզ անգիր արտասանել Թումանյանի որևէ պոեմը, ապա նրանք գիտեն նրա հեքիաթներից որևէ մեկը և, առանց կասկածի՝ նրա «Գիքորը» պատմվածքը ծայրից ծայր: Դա պատմությունն է մի աղքատ գյուղացու տղայի, որին հայրը գյուղից տանում է քաղաք, խանութպանի մոտ աշկերտության տալու: Աշխարհի բոլոր աղքատների և բոլոր գյուղերի սովորական մի պատմություն: Կարող է կարդացած լինես այդպիսի և համանման հազարավոր պատմություններ, կարող է կյանքում գիտենաս, իմանաս բազմաթիվ առավել դրամատիկ կամ այլ տեսա-

կներից հետաքրքիր պատմություններ, կարող ես նույնիսկ չնենալ ոչ մի տրամադրություն այսօր այդպիսի բաներ կարդալու կամ նույնիսկ այդպիսի գրականության նկատմամբ ինչ-որ հակակրանք ունենաս: Սակայն Թումանյանի այս պատմվածքը, եթե անգամ քո ձեռքն ընկնի ինչ-որ վատ թարգմանությամբ, չես կարող չնստել և մինչև վերջ չկարդալ, թեկուզև մոտավորապես գիտես, թե հայկական այս պատմության մեջ ես դեպքերն ինչպես պետք է զարգանան:

Այնուհետև, շատ հաճախ Հայաստանում, եթե տեսնեն, որ հետաքրքրություն ես դրսևորում այն ամենի համար, ինչ այս երկրում պատահեց 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների ներում, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ապա քեզ կասեն. «Կարդա Թումանյանի հոդվածներին»: Եթե գրականության մեջ որևէ նշանակություն ունի անձնական խոսքի հավասարակշռումը ժողովրդի խոսքի հետ, ապա այս հայ բանաստեղծը նման օրինակներից մեկն է: Այսօր, իհարկե, Հայաստանում գրականության լեզուն Թումանյանի լեզուն չէ, և այդ շատ բնական է. այլ կերպ են գրում բանաստեղծները, այլ կերպ է խոսում նաև ժողովուրդը: Այդ մասին մի լավ բանաստեղծություն ունի Եղիշե Չարենցը.

Մեր լեզուն ճկուն է ու բարբառոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դարերում հին:—

Եվ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր, որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,—
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ—
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոսերի վրա ժանգ չչոքի:—

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն
Այլևս չի կարող լինել պատյան

Ոչ Տեր յանի բարբառը ևվազուն,
Ոչ Նաբեկի մռմուճըր մագաղաթյա:—

Եվ ոչ անգամ Լոռու պայծառ երգիչ
Թումանյանի բարբառը գեղչկական,
Բայց նա կզա— լեզուն այս երկաթյա բերի
Եվ խոհերի այս խոր ու երկրական:—

Ինչպես երևում է, Թումանյանն իր լեզվի համար արեց այն, ինչ անում են մեծ բանաստեղծները՝ ամբարեց այն ամեն կենսունակը, ինչ կար անհատական ստեղծագործության ու ժողովրդի խոսակցական լեզվում, այս երկու տարրերը ի մի բերեց գործողության մեջ, իր ժամանակի համար լուծեց ու սպառեց այդ մեծ հարցը և հաջորդների համար հնարավորություն ստեղծեց նայելու արդեն ոչ թե դեպի ետ, այլ դեպի առաջ: Ընդհանուր առմամբ, նախանձելի է այն եղանակը, որով 19-րդ դարի հայ բանաստեղծները մշակեցին իրենց լեզուն, հատկապես, երբ մարդ այդ ամենը տեսնում է այնպիսի խճճված և տակավին անվերջանալի արկածների միջից, ինչպիսին մեր լեզվի հարցն է:

Հայաստանում ևս չպակասեցին, հատկապես կղերականության կողմից կազմակերպված, ջանքեր՝ պահպանել մեռած մի լեզու և դարձնել գրավոր լեզվի մենաշնորհը: Բայց Հայաստանում գոյություն ունեցավ մի հիանալի շարունակություն: Այն բանաստեղծությունը, որի մասին խոսեցինք նախորդ գլխում, արդեն չի կարդացվում այսօրվա ընթերցողի կողմից, նրա լեզուն հնացել է: Այնուհանդերձ, դա իր ժամանակին եղել էր կենդանի լեզու, շատ ավելի առաջ էր գնացել եկեղեցական գրքերում պահածոյացված գրաբարից, հետևելով վերանորոգման բնական ճանապարհին: Այդ նույնը շարունակեց նաև նորագույն բանաստեղծությունը:

Լինելով ավելի շեշտված անհատական, քան հնագույն պոեզիան, նոր բանաստեղծությունը չկորցրեց իր շփումները մեծ ժամբի հետ, չօտարացավ: Ճանապարհներն այն աստիճանի չբաժանվեցին, որ ստեղծվեր անջրպետ, որից հետո, ի հաշիվ բուն իսկ ստեղծագործության, անհրաժեշտ լիներ լուրջ ջանքեր թափել, անհրաժեշտ հավասարակշռությունը վերահաստատելու համար: Ժողովրդական տեսակետը, թող մեզ թույլ տրվի

մի խոսքով այդպես անվանել, չկորցրեց իր նշանակությունը անգամ ամենաանձնական պահերին, այսինքն՝ ոչ միայն էպիկական պոեզիայում, այլև քնարական բանաստեղծական խոսքի առավել մեղմ դրսևորումներում: Այս հարցում կարևոր դեր խաղացին հայերի ազգային արկածները, ազգային ցավի այդքան խոշոր կուտակումը, որը, բացի հավերժացնող հիշողությունից, շարունակում էր մնալ որպես բաց մի վերք: Փոքր չէ նաև ավանդության նշանակությունը, նրա գեղագիտական հրապույրը և շարունակության գիտակցումը, որը թվում է, թե հայերին չլքեց անգամ մյուս աշխարհի առաջադիմական հոսանքների հետ ունեցած ինտենսիվ շփումների և առնչությունների ժամանակ:

Թումանյանի թիկունքում կան մի ամբողջ հույլ բանաստեղծներ, ինչպես նաև նշանակալից արձակագիրներ, հատկապես պատմավիպասաններ: Բայց գլխավորապես կա պոեզիա: Հայաստանը ևս առավելապես բանաստեղծների երկիր է: Եվ նրանք բոլորը գոնվեցին հայրենիքից դուրս:

Աշխարհասփյուռ հայերի կարևորագույն հոգևոր կենտրոնները գտնվում էին Կոստանդնուպոլսում, Թիֆլիսում և Վենետիկում:

16-րդ դարի սկզբներին (1512 թ.) Վենետիկում տպվեց առաջին հայերեն գիրքը: Հայ գրքի տպագրության պատմությունը շարունակվեց Պոլսում և Ամստերդամում, ավելի ուշ՝ Հնդկաստանում (Մադրաս, Կալկաթա. Մադրասում լույս տեսավ նաև հայկական առաջին պարբերականը), Պարսկաստանում (Իսպահան), նաև բուն Հայաստանում (էջմիածին, 18-րդ դարի սկիզբը), այնուհետև դարձյալ Վենետիկում, որտեղ Մխիթար Սեբաստացին հաստատեց հայ կաթոլիկական միաբանությունը (18-րդ դար), որը դարձավ հոգևոր նշանավոր կենտրոն և գործում է մինչև օրս: Այս Մխիթարյանների միջավայրից էլ, որոնք մեկ ուրիշ միաբանություն ևս հիմնեցին Վիեննայում, դուրս եկան նոր ժամանակների առաջին բանաստեղծները, ինչպիսիք էին Ղևոնդ Ալիշանը, որը նաև ականավոր պատմաբան էր, հնագետ ու աշխարհագրագետ, և նրա աշակերտ Պեշիկթաշլյանը: Թիֆլիսում գտնվում էր հոգևոր մյուս օջախը, որն առաջացել էր Ներսես կաթողիկոսի՝ 19-րդ դարի սկզբին հիմնադրած Ներսիսյան դպրոցի շուրջ: Այս դպրոցում են սովորել Արևելյան Հայաստանի առավել հայտնի մտավորականները. մինչդեռ Պոլսում, որտեղ այդ նույն ժամանակ ապրում էին մոտավորապես 200 հազար

հայեր, գործում էին տարբեր դպրոցներ, որոնցից ամենագլխավորը Կեդրոնական վարժարանն էր, նրանց ազգային մեծ դպրոցը։ Հիշատակության արժանի մտավորական շարժում գոյություն է ունեցել նաև Մոսկվայում։ Մեծահարուստ առևտրական Լազարյանը այնտեղ հիմնեց բարձրագույն ուսումնական հաստատություն։ Ռուսաստանի հարավում 18-րդ դարի վերջերին եկատերինա կայսրուհին հայերին Ղրիմից տեղափոխեց և հիմնեց նոր Նախիջևան քաղաքը, որը նույնպես դարձավ Ռուսաստանի հայերի մշակութային կենտրոնը։ Նույն այդ տարիներին Ղրիմի հույները կենտրոնանում էին հարևան Մարիուպոլիսում, «Զուգակշիռք»։ Հատկապես թուրքահպատության տարիներին մարդ կարող է գտնել շատ անձնավորությունների, նշել շատ դեպքեր, իրադարձություններ, զուգահեռ մի պատմություն, որ այս երկու ժողովուրդները գրում են, ոգորելով վերապրելու, պահպանելու իրենց ազգային գիտակցությունը, աղատագրվելու։ Ընդհանուր իրավիճակներ, բազմաթիվ ընդհանուր դառնություններ։ Մարդ միշտ էլ կարող է մի հայ բանաստեղծի առնչել Ռիգաս Ֆեռեոսի[1] հետ, և հայերեն բանաստեղծությունների օվկիանոսում ինչ-որ տեղ կարող ենք կանգնել այնպիսի տողերի առջև, ինչպիսիք նույն այդ ժամանակ գրել է Սոլոմոսը[2] այն օտար դռների մասին, որոնք հեշտ չեն բացվում, երբ դրանք բախում են օգնության խնդրանքով։ Բուն Հայաստանում ևս այդ տարիներին չպակասեց մի Սուլի, մի Մանի[3], Հայերը նույնպես ունեն ոտք չկոխած իրենց վայրերը և իրենց հայդուկներն ու Զավեխներ, ինչպես, օրինակ, 18-րդ դարում լեգենդար Դավիթ Բեկը, որը հաստատեց իր ազատ իշխանապետությունը Սյունիքի լեռներում։

Պետրոս Դուրյանը եղել է հանճարեղ մի երիտասարդ։ Մահացել է 1872 թվականին քսան տարեկան հասակում, Կոստանդնուպոլսում։

---

1 Ռիգաս Ֆեռեոս—18-րդ դարի հույն ազատամարտիկ բանաստեղծ (Ծ. Բ.)։

2 Դիոնիսիոս Սոլոմոս—19-րդ դարի հույն խոշորագույն բանաստեղծ. Հունաստանի ազգային հիմնի հեղինակ (Ծ. Բ.)։

3 Սուլի, Մանի—Հունաստանում ազատագրական պայքարի օջախներ (Ծ. Բ.)։

Իր պատմական ողբերգություններից բացի (նա եղել է դիրասան հայկական թատրոնում), թողել է նաև մի շարք քնարական բանաստեղծություններ, և հայրենակիցները նրան համարում են իրենց լավագույն քնարերգուներից մեկը։ Այդ բանաստեղծությունները գանգատներ են աշխարհից իր այնքան հապճեպ անցման վերաբերյալ (մահացավ թոքախտից)։ Նա իր բանաստեղծություններից մեկը վերնագրել է՝ «Տրտունջք»։ Դա մի տեսակ մեղադրական է աստծու դեմ։ Բնությունը, սերը, իր քսան տարիները։ Աստված խաղ է անում այդ ամենի հետ. «աշխարհն էլ աստծո ծաղրն է արդեն»։

Բանաստեղծական Հայաստանն այդ տարիներին նույնքան խիտ էր բնակեցված Արևմուտքում, ինչքան և ռուսական ու Կովկասյան երկրներում։ Ռաֆայել Պատկանյանը համարվում է ազատության բոցաշունչ երգիչներից մեկը, ինչպես հետագայում Հակոբ Հակոբյանը, որն ապրեց մինչև սովետական տարիները և սկզբնավորեց հեղափոխական պոեզիան։ Արևմտյան հայերը, կոստանդնուպոլսեցիները, որոնք առավել մոտ գտնվեցին Եվրոպայի պոետական անցուդարձերին, թվում է, թե մի առանձին տուրք են մատուցում տողի մոդեռն վերանորոգմանը, այնտեղ նկատելի են եվրոպական դպրոցների առավել անմիջական ազդեցությունները։ Սակայն սա չի նշանակում, թե այդ բանաստեղծները ետ մնացին ազգային հայրենասիրական թեմային բերած իրենց նպաստով։ Մանավանդ, որ նրանք դրեթե բոլորը հետագայում զոհ գնացին ցեղասպանությանը։ Եվ նրանց մեջ կան փայլուն բանաստեղծներ։

Ինչպես կարելի է զգալ նույնիսկ թարգմանությունից, թե՛ էպիկական և թե՛ քնարական մեծ ուժով առանձնանում է արևմտահայ բանաստեղծ Դանիել Վարուժանը, հատկապես այն շարքում, որն ինքն անվանել է «Հեթանոս երգեր»։ Նա վերադառնում է ետ, հիշողությանը, երբեմն առավել հնօրյա, երբեմն փոքրասիական Հայաստանին, որտեղ իր ծննդավայր գյուղն էր։ Հիշում ու երգում է կյանքի կուսական տարերքը, այն ժամանակը, երբ մարդիկ դեռևս իրենց կյանքի մեջ չէին մտցրել ապականող, քայքայող բաներ, ինչպիսին նույնիսկ եկեղեցին և այլ նման պայմանականություններ, որոնք մարդուն օտարացնում են բնությունից և նրան եղծում։ Վարուժանի բանաստեղծությունները

կարդալիս մարդ մտաբերում է Սիկելիանոսի[1] էպիկուրիրիկական պոռթկումը, բանաստեղծական այդ ոճի առնական շունչն ու պատկերը։ Վարուժանի բանաստեղծությունները, երևի, գաղափարական և քնարական հակասրսկում էին այն ամենի դեմ, ինչ հայերը քաշում էին իրենց դահիճների ձեռքից Կոստանդնուպոլսում և ամենուր, նրանց տառապանքների, այն հալածանքների ու ջարդերի դեմ, որոնք իբրև նախերաան նախորդեցին 1915 թվականի մեծ աղետին, որին էլ զոհ գնաց ինքը բանաստեղծը։ Նման երգեր գրում էր նաև Սիամանթոն, նույնպես ցեղասպանության զոհերից մեկը։ Նա իր երկարաշունչ բանաստեղծություններից մեկում գրում է.

«Դեռ վճի՞ռ են արդյոք սա ջուրերդ հին օրերու,
Եվ հու ձայնդ դեռ ե՞րգ մըն է, թե աղաղակ մը վրեժի...
Եվ չեկա՞ն արդյոք, ըսե, չեկա՞ն, մեր արհավիրքի օրերուն մեջ,
Դառնացնելու հու պայծառությունդ աղամանդե,
Իմիններուս անմեղ արյունեն՝ ֆաքի մը կաթիլ արյուն,
Որոնց հոսանքներեն, ավաղ, ավաղ, իմ մտածումս պարտվածի,
Սուգե ու սարսուռե ու սարսափե անբուժելիորեն խեթացավ...

Բոլորից առավել զայրացկոտ է, երբ այդ աղետների համար պատասխանատուներ է փնտրում և նրանց գտնում է քրիստոնեության հեղ քարոզի մեջ գայլերի այս աշխարհում, բանաստեղծ Ռուբեն Սևակը։ Անթոլոգիաներում մեր կարդացած նրա բանաստեղծություններից երևում է, որ նրա գլխավոր թեման էր՝ հպատակության քարոզին հակադրել ուժային ոգին։ Նրա «Զանգակներ, զանգակներ» բանաստեղծությունը, գրված 1909-ին, կարելի է համարել մարտակոչ, ներքող՝ հպատակություն չհանդուրժող ուժին, կոչ՝ ուղղված հեղեղիչների զանգերին, որպեսզի նրանք ասպատամբական ղողանջներ սփռեն զինաթափված հայ քրիստոնեականության մեռած գլխավերևում։ Նույն այս թեմայով նա ունի նաև մի գեղեցիկ էլեգիական բանաստեղծություն, ձոնված իր ծերունի հորը, գուցեև քահանայի։ Իրական կամ խորհրդանշական մի կերպար, Հեզ, բայց անընկճելի մի քարոզիչ։ Այժմ բանաստեղծը նրան կրում է իր ուսերին, ինչպես ծանր մի ժառանգություն։ Գնում է նրան թաղելու, համոզված լինելով, որ այս անգամ ևս պիտի անկարող լինի թոթափելու նման հնօրյա պատմությունը, և նոր օրը նրան կգտնի գարձյալ իր հայրերի այս ողբերգական բեռը ուսերին կրելիս։ Բանաստեղծը նույնպես ցեղասպանության զոհ դարձավ։

Երևում է, որ Կոստանդնուպոլսի հայ մտավորականները, որոնք ապրում էին գայլի երախում, առանձնապես մշակել են այս թեման, ազդված նաև նիջշեականությունից և համապատասխան եվրոպական գրականությունից։ Ես հնարավորություն ունեցա կարդալու նաև մի հին, շատ լավ թատերական գործ՝ Լևոն Շանթի «Հին աստվածները», գրված մոտ 1910 թվականին։ Գրույցը տեղադրվում է ավելի հին ժամանակներում, Արևելյան Հայաստանի լեռներում և Սևանա լճի վրա։ Քրիստոնեական գաղափարախոսության բախումը հին կռապաշտության հետ։ Առաջինը ղինաթափում է մարդուն, դարձնում նրան անկարող դիմադրելու և պատերազմելու այնպես, ինչպես գիտեին պատերազմել անցյալի մարդիկ և իրենց ձեռքով նվաճել այն, ինչ ուզում էին և ինչը համապատասխանում էր իրենց։ Իր հերոսների շրթներին դրամատուրգը կրկին ու կրկին դնում է արտահայտություններ, որոնք հնչում են ինչպես Ռուբեն Սևակի «Զանգակներ, զանգակներ» բանաստեղծության տողերը.

Ու կիյնա այն, որ կրծնկե աճով,
Չի թուրն ավելի արդար է խաչեն,
Չի կյանքն աճոնց է միայն, որ հաչ են,
Աճոնց, որ կապրին ուրիշի մահով...

1908 թվականին Կոստանդնուպոլսում 22 տարեկան հասակում մահացավ Միսաք Մեծարենցը, Հայաստանի ամենաքնարական բանաստեղծներից մեկը, երգիչ, պատանեկության և իր այդքան կարճ երիտասարդության, իր կյանքի գեղեցիկ պահերի ամբողջ քնքշությամբ։ Իր լավագույն բանաստեղծություններից մեկը նա վերնագրել է՝ «Ինչ արբեցությամբ...».

Ինչ արբեցությամբ տատրակն հառսեցի,
Առագաստ բրած ծառի հովանին՝
Կը սպասե տարփոտ իր վարուժանին...

[1] Անգելոս Սիկելիանոս—20-րդ դարի հույն ականավոր բանաստեղծ (Ծ. Բ.)։

Ինչ արբեցությամբ ծիրանի դաշտին
Շեկ ծաղիկներուն կը վազե մեղուն
Սրծել իգայի պակուճներեն հեշտին...

Այս պահերն է նա ծաղկաքաղում իր բանաստեղծություններում, որպեսզի դրանք պահի հավերժորեն գեղեցիկ։

Թումանյանից հետո ինձ համար ամենամեծ հայտնությունը եղավ Վահան Տերյանը, խոշորագույն բանաստեղծ։ Մեկ հատորում ես գտա ամփոփված նրա բոլոր բանաստեղծությունները։ Երբ Նահապետն ինձ տեսնում էր ձեռքս բռնած այս կապտագույն հատորը, միշտ ինչ-որ բան մոթմոթում էր թարգմանությունների մասին։ Ես նրան հարցնում էի. «Բայց իմ կարդացած թարգմանություններով ես կարողանո՞ւմ եմ ճիշտ բնորոշել ձեր բանաստեղծներին»։ —«Առավել կամ պակաս չափով»։ —«Է, դա էլ բավական է»։ —«Բայց ամեն ինչ չեն արտահայտում»։— «Ոչ էլ երբևէ կարտահայտեն»։ «Նույնիսկ 70 տոկոսը չեն հաղորդում»։ —«Եվ դա ինչո՞ւ է քեզ մտահոգում»։ Այս վերջին խոսքով նրան հիշեցնում էի Գորկու մի գեղեցիկ նամակը Լեոնիդ Անդրեևին։ Ինքը Նահապետը ևս, լինելով գերազանց արձակագիր և, ինչպես ասել եմ, փիլիսոփայական մտածողությամբ ու հումորով մի հայ, հիանալի գիտե նաև գրականության պատմությունը, և մեր բոլոր տարաձայնությունները լուծում էինք տեղում։ Թարգմանությունների հարցում նա իրավացի է։ Հաճախ համաձայնեցի նրա հետ և ավելացրի, որ այսօր բոլորից լավն այն է, ինչ անում են ֆրանսիացիները։ Արձակ, բայց հնարավորին չափ բնագրին հարազատ փոխադրություն այն ամենի, ինչ հնարավոր է փոխադրել, իսկ մնացածը պետք է վստահել ընթերցողին, պոեզիայի այսօրվա ընթերցողին, զգայուն և շատ կարդացած ընթերցողին (էլ ուրիշ ովքե՞ր են այսօր պոեզիա կարդում), որը թարգմանությամբ մի օտար բանաստեղծություն կարդալուց առաջ, հնթագրվում է, որ իր լեզվով բանաստեղծություններ կարդացել է և ի վիճակի է քո ճշգրտորեն հաղորդածների շրջանակներում զգալ մթնոլորտը։ Այնուհետև ինքը, որպես թարգմանակից, թող աշխատի իր հաշվին։

Վահան Տերյանն այն բանաստեղծն է, որին հիշատակում է Եղիշե Չարենցը լեզվի մասին դրած իր բանաստեղծության մեջ։ Չարենցը նրան համարում է բազմափող սրինգ, բազմաթիվ

հնչյուններով։ Երաժշտական այս գործիքի մի տեսակը կոչվում է բլբուլ։ Բառն ունի հայ-պարսկական ծագում և նշանակում է՝ սոխակ (հունարեն՝ ահդոնի, ծ. թ.)։ Այդ բառն օգտագործվում էր հայկական պոեզիայում սոխակի ու վարդի երկխոսության ձևով գրված բանաստեղծություններում, որոնց մասին խոսել ենք վերևում։ Ինչ-որ ժամանակ բլբուլ բառը փոխարինվեց իադոն բառով։ Հնքիաթը պատմում է, որ այս թռչունը, իադոնը, թռել ու եկել է օտար երկրներից, այնտեղից բերելով լավագույն երգեր։ Այդ երգերով պահպանվեց Վարդը, և Բլբուլը դուրս մղվեց։ Հայ միջնադարյան բանաստեղծության հետազոտողները հայ միջնադարյան հոգևոր մշակույթի պատմության մեջ նկատում են արևմտյան և արևելյան ազդեցությունների մի շղթա, և նշված հեքիաթը առնչում են այն փուլերի հետ, երբ տոն էին տալիս արևմտյան, այսինքն՝ հունական աղբյուրները։ Որովհետև իադոն բառը հունարեն ահդոն (սոխակ) բառի տառափոխված ձևն է։

Արտակարգ Տերյանի բանաստեղծությունները երաժշտական փոքրիկ կտորներ են։ Այդ բանը մարդ հասկանում է նույնիսկ հեռվից, հենց իր իսկ լսած բառերից՝ Մթնշաղի անուրջներ, Գիշեր և հուշեր, Ոսկի հեքիաթ, Վերադարձ, Փշե պսակ, Երկիր Նաիրի։ Այս ամենը նրա բանաստեղծությունների ժողովածուների ուշարքերի վերնագրերն են, գործեր, որոնք նա հրատարակել է իր կարճատև կյանքի ընթացքում։ Նա ապրել է ընդամենը 35 տարի։ Եղել է շատ կարդացած ու զարգացած։ Առանձնապես ուսումնասիրել է կովկասյան լեզուները։ Հայրը եղել է փիլիսոփա հոգևորական։ Հորից և հին Հայաստանից ստացած հոգևոր ժառանգությունը և այն ամենը, ինչ կարդացել է ու երազել, խաչաձևվում են մերթ այս և մերթ այն ձևով Տերյանի բոլոր բանաստեղծություններում և հորինում դրանց երաժշտությունը։ Դրանք անպակաս են նրա բոլոր բանաստեղծություններից։ Ինչպես որ Շագալի կտավներից անպակաս է Բելոռուսիայում գտնվող նրա ծննդավայրը հիշեցնող ինչ-որ բան, ինչ-որ լուսամուտի մի անկյուն, մի կատու, մի կատու, մի ճանապարհ, մի աքլոր, ծառի մի ճյուղ։ Այդպես էլ հայկական այս բանաստեղծություններից անպակաս է հայրենի հողի, բանաստեղծի ծնված տան, հայկական լեռների համը։ Այդ ամենը մրմունջներ մնացին ծաղկաթերթերի վրա, առավել գեղեցիկ կյանքի երազներում։ Տերյանն իր պոետական դպրոցն անցել է սիմվոլիզմի գեղագիտության մեջ։ Երաժշտական հըն-

չյունը նրա բանաստեղծական փիլիսոփայության բջիջն է։ Իրերի այս առավել խորունկ ձայնը, իրեր, որոնք իրենց ճշմարտությունը պարտադրում են ոչ թե նրանով, ինչ երևում ու ասվում է, այլ նրանով, թե ի՞նչ են բացահայտում նրանց ներքին ձայները, որով և օգնում են, որպեսզի գաղափարը ավելի շուտ զգացվի որպես հոգեկան տրամադրություն, ներքին զգացողություն, ներքին տեսիլ։ Դեղարվեստական այս հարցերին է առնչվում նրա նպատակը հայ բանաստեղծական տողի զարգացման և հասկացությունների ու զգացումների նոր սահմանների, որ ձեռք էին բերում բառերը արտահայտչական շատ ավելի տարբեր մի միջավայրում, քան այն, որ մինչ այդ գիտեր հայ բանաստեղծությունը։ Մեկ այլ բանաստեղծական աշխարհ։

Պոետական արտահայտության իր նոր գաղափարներով Տերյանը համադրում էր նաև ազգային և սոցիալական երազները։ Նա լցված էր ազատ մի հայրենիքի ծարավով։ Նրա երազը հասարակական նոր բարքն ու կարգն էր, որը եկել էր ավետելու սոցիալիզմը։ Եվ խոսքից անցավ գործի։ Հեղափոխական իրադարձությունների ժամանակ միացավ ռուս սոցիալ-դեմոկրատներին, դարձավ Լենինի գործակիցը։ Հեղափոխական կոմիտեի հանձնարարությամբ Միջին Ասիա ուղևորվելիս, 1920 թվականին, ճանապարհին հիվանդանում է ու մահանում։ Գիտնական, սոցիալիստ, եվրոպացի մտավորական, առաջավոր տեսանող։ Այդ բոլորով հանդերձ, նրան ոչ մի պահ չեն լքում հնամենի, ինչպես իր հազարամյա հոգին, վերքերը Հայաստանի, իր ակորդի մշտական մոտիվը. բարձր սարերը և այդ սարերի նման անմահ հովիվները, որոնք, ինչ էլ որ կատարվի մնացած աշխարհում, ամեն իրիկուն պիտի վառեն իրենց խարույկները և պիտի կանչեն ընկերներին մյուս սարալանջից, իրենց հերթապահությունը անքուն կատարած լավ պինվորների նման։

«Կարդացեք Թումանյանի հոդվածները»։ Այս մարդը (Տերյանից գրեթե քսան տարով մեծ, մահացավ նրանից երեք տարի հետո) ապրել է իր հայրենիքի պատմության ամենափոթորկալից ժամանակահատվածներից մեկում։ Անցյալ դարից սկսած Աբդուլ Համիդի իրարահաջորդ հալածանքները. աքսորներ, բանտարկություններ, հալածանքներ ցարական իշխանությունների կողմից. նրան ևս ձերբակալեցին ու բանտարկեցին Մոսկվայում,

կարծեմ 1910 թվականին։ Այնուհետև Առաջին համաշխարհային պատերազմը, ցեղասպանությունը, հեղափոխությունը Ռուսաստանում։ Կովկասյան երկրների ահռելի խառնաշփոթ վիճակը այդ մեծ ընդհարումների ժամանակ. ռուսական զորքերի նահանջը. այս երկրամասում ստեղծված նոր պետականությունները. Թուրքերի ներխուժումները. Սովետական Հայաստանը...

Հոգեկան մեծագույն հարստության մի պոետ էր։ Ինչպես որ մեկ ուրիշն իր ավազանում մինչև բերանը լիքը ոսկիներ ունի, և բավական է, որ ձեռքը մեկնի, վերցնի ինչքան ափը կարող է տեղավորել և նվիրի քեզ։ Ահա այսպիսի տպավորություն ես ունենում նրա արգասաբեր բանաստեղծական խոսքից, ինչ էլ որ լինի քո կարդացածը՝ քնարական փոքր կտորներ, առավել մեծ երգեր, բալլադներ, շատ ավելի մեծ էպիկական և փիլիսոփայական պոեմներ կամ չափածո հեքիաթներ։ Նույնը նաև, երբ նա թողնում է չափածոն ու գրում է պատմվածքներ ու հեքիաթներ։ Նրա կատարած գործը շատ մեծ է։ Եվ այս հարուստ արտադրանքի հետ միասին նա մասնակցում էր Հայաստանի ազատագրության համար իր հայրենակիցների թափած բոլոր ջանքերին։

Անզուգական է այն հստակությունը, որով նա հոդվածներում խոսում է այնքան խճճված հայկական հարցերի մասին։ Եվ ցույց է տալիս նաև իր քաղաքական իմաստնությունը։ Հազվադեպ կարողություն կողմնորոշվելու գաղափարների և քաղաքական դիրքորոշումների իսկական խառնարանում և երկու խոսքով այդ բոլորի իրական պատգամը ձևակերպելու։ Հատկապես այն դեպքում, երբ նրա խոսքը ջերմանում է առանձնապես արտակարգ մի իրադարձությամբ, պատմական ինչ-որ պահով, որը կարող էր վճռականորեն ազդել իր ժողովրդի բախտի վրա, նրա գրվածքը շատ հաճախ ստանում է ազդեցիկ ու առինքնող մի ուժ և հիշեցնում է ոգեշնչված քաջալերիչ դրույթյան դասական օրինակները։ Ինձ մոտ պահել եմ նրա մի կոչը, ուղղված իր համազգուշացիներին, երբ Թուրքերը 1918 թվականին մտել էին հայկական հողը և հասել մինչև Լոռվա կիրճը, այնտեղ, ուր գտնվում է գրողին ծնած գյուղը, հայոց պատմության մի փառահեղ Սուլի։ Ինքը Թումանյանը, սպիտակ ձի նստած, ոգորելով հաշտեցնել տեղի բորբոքված զանազան ցեղերին, գնում էր առաջից։ Դիմելով նրանց, գրում էր.

«Ոտքի ելեք մեր խիտ անտառների նման, անառիկ կանգնեք մեր լեռների նման, վերցրեք ձեր զենքերը և խփեք, ինչպես խփում են կայծակները մեր գեղի ժայռերին: Թող մեր թշնամիները տեսնեն, թող ամբողջ աշխարհը տեսնի, որ կարող է անցած լինեն էրզրումով ու Կարսով, բայց չեն կարող անցնել Լոռվա ձորով: Սպասում եմ ձեզ»:

Դա 1918 թվականի մայիսն էր: Այդ օրերին հայերը դարձյալ մղում էին իրենց կենաց մարտերից մեկը, սկզբնավորելով Սարդարապատ փոքրիկ գյուղում իրենց նոր պատմությունը:

Այստեղ համարձակվում եմ դիմել մի ասույթի:

Որևէ ժողովրդի պատմությունը այն բոլոր դեպքերի շղթան է, որոնք ինչ-որ նշանակություն են ունեցել և այդ շղթայի շնորհիվ պահպանել են դրանց հիշատակը: Այդ ժողովրդի դպրության պատմությունը հենց իր իսկ պատմության պատմությունն է: Հենց այդ դպրության ներսում էլ իր իսկ ժողովրդի ձայնն է, այնպես, ինչպես այն պահպանվում է երգերի մեջ: Բայց այդ բոլորը՝ պատմություններ, դպրություն և երգեր, շարունակվում են ու չեն մեռնում, քանի որ ամեն օր, լավ թե վատ, չի պակասում հացը, հացը մեր հանապազօրյա:

Նահապետի մի լավ բարեկամը, անզուգական վահեն, մի օր, երբ երկուսով կանգնած էինք մայթի վրա, «Արմենիա» հյուրանոցի մուտքի առաջ, պատմում էր, որ մի քանի տարի առաջ սպասում էր այստեղ, որպեսզի վերևից իջնի Սարոյանը:

Հենց որ իջավ, կանգնեց մի պահ, նայեց շուրջը և, ցույց տալով այնտեղ հավաքված մարդկանց մի խումբ, հարցրեց Վահեին.

— Ովքե՞ր են այնտեղ:

— Հայեր:

— Բոլորը հայե՞ր են:

— Այո:

— Այնտեղ կանգնածնե՞րն ալ:

— Այո, նրանք էլ հայեր են:

— Մյուսնե՞րն ալ, որ թատրոնի առաջ կանգնած են։

Նրանք էլ հայեր էին, նաև մյուսները, որոնք թափառում էին ցայտաղբյուրի շուրջ, և բոլոր, բոլոր նրանք, ովքեր գնում էին ու գալիս այդ մեծ բանուկ փողոցի երկայնքով...

Սարոյանը խաչակնքեց.

— Ջեմ հավատար... Այսքան շատ հայեր միասին մեկ տեղ հավաքված...

Նախանցյալ տարի մահացավ Սարոյանը։ Հենց այդ օրերին էլ Վարդգես Պետրոսյանը, Հայաստանի գրողների միության նախագահը, գնացել էր Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ բացվելու էր Սարոյանի կտակը։ Կտակում նշված էր մի պայման՝ Սարոյանի աճյունի մի մասը տանել և թաղել Հայաստանում։ Վերջին տարիներս նա մի քանի անգամ այցելից իր հայրենիքը, մոտիկից ծանոթացավ։ Գուցե հենց ինքն էլ ընտրեց իր աճյունը թաղելու վայրը։ Համենայն դեպս, նրա գերեզմանը պետք է լինի Երևանում։ Մի օր, ավտոմեքենայով անցնելիս, վահեն ինձ ցույց տվեց ծառերի մեջ ինչ-որ տեղ. «Այ, այնտեղ»։ Այդ վայրը գտնվում է քաղաքի կենտրոնում։ Սարոյանը կհագենա Հայաստանով։

Նահապետը երբեմն ճանապարհորդում է արտասահմանում։ Նրա հայրենակիցները, որոնք ապրում են այնտեղ, պատահում է, որ այդ մասին իմանում են և գնում են նրան տեսնելու, հրավիրում նրան իրենց տուն, իրենց ակումբ կամ որևէ մեկ այլ տեղ հանդիպմանն։

Նահապետը նստելուց առաջ, դիմելով բոլորին հայերեն, ասում է.

— Մենք ամեն ինչի մասին կխոսենք։ Ես կլսեմ ձեր բոլոր ասածները, դուք էլ կլսեք իմ բոլոր ասածները։ Բայց մեկ պայմանով, որ այն փոքրիկ մեր անկյունը, մեր տունը Անդրկովկասում, որ այսօր ունենք և պահում ենք բաց, միայն իմը չէ, այլ նաև ձեր հայրենիքն է։ Եվ նրա մասին ցավում եք դուք ևս նույնքան, ինչքան և մենք։ Հակառակ դեպքում այստեղ չնըստեմ։

Նա այդպես ասելու իր պատճառներն ունի։

Ահա մի հատված Հայաստանի մասին նրա գրած գրքից.

«Հիշում եմ մի հանդիպում, որ եղավ այս տարի Երևանի

բանկի ընդհանուր սրահում, ապակե պատուհաններից մեկի մոտ։ Հալեպից հյուր էր եկել, իմ ծանոթն էր, խնդրեց, որ միասին բանկ գնանք, սիրիական դրամը մերով փոխելու։ Բանկի աշխատակցուհին և իմ ծանոթը խոսում էին, երբ նույն պատուհանին մոտեցավ հիսուն-հիսունհինգ տարեկան մի մարդ։ Նա մեր դրամն էր փոխում դոլարների։

— Ամերիկա՞ եք մեկնում,— հարցրի։

— Թուրքիա։

— Ե՞րբ։

— Առավոտ կանուխ։

— Գեղեցիկ քաղաք է Ստամբուլը, մի քանի ամիս առաջ այնտեղ էի։

Մարդը նայեց մատանեո ու, ինձ թվաց, կասկածանքով։

— Շրջելու՞ եք գնում, թե՞ ազգական ունեք,— հարցրի։

— Մշտապես։

— Մշտապե՞ս...

— Այո. կբավե, երկու տարի ապրեցանք ձեր երկրում, կըշտացանք...

Կշտացա՞նք։ Մարդն ինձ էր նայում հանգիստ ու չար։ Կշտացանք։ Այսինքն, Հայրենիքից կշտացանք, Երևանից, Մասիսից, Միծեռնակաբերդից, որտեղ հուշարձան են սարքում երկու միլիոնի հիշատակին։ Կշտացանք. կարծես թե հայրենիքը խորոված է, գարեջուր կամ երգ, որ լսում ես հազար անգամ։

Ես չկարողացա գտնել պատասխան խոսք։ Ստիպված ծխախոտ վառեցի, լռեցի։ Նա ինձ էր նայում ուղիղ ու անաչառբեր։

Ես գիտեի, որ եթե հարցնեմ Թուրքիա վերադառնալու պատճառը, այդ մարդը կասի, թե իր նոր ստացած բնակարանում դռները ոչ բացվում են, ոչ փակվում, թե Երևանի շուկայում դժվար է թարմ միս ճարել շաբաթ օրերին, թե արամվայները առավոտյան լիքն են լինում կամ որ իրենց հարևաններից մեկը երկու օր առաջ ծեծում էր սեփական կնոջը։ Երևի նա ուրիշ շատ բաներ կասի, և ասածների մեջ հնարավոր է և ճշմարիտ բաներ լինեն։ Ի՞նչ անեմ այդ դեպքում. վիճե՞մ նրա հետ, ապացուցեմ հակառակը կամ արդարացումնե՞ր հորինեմ...

Ոչ, ես ոչինչ չասացի նրան, չփորձեցի ոչինչ բացատրել։ Ուզեցի միայն, որ այդ մարդը այնտեղ, Բոսֆորի ափին, երբեք չերգի «Անտունին», չտա Մեսրոպ Մաշտոցի անունը, մոռանա, որ Կոմիտասը Երևանում է, իր տան պատից չկախի Արարատ-

ների գունավոր լուսանկարը։ Ես երկար նայեցի այդ մարդուն և մտածեցի, որ երբեք չեմ կարող նրան ներել։ Բայց դուցե հայրենի՞քը կների, ասում են՝ հայրենիքը մայր է, ներում է։ Ես վանում եմ այդ միտքը. սուտ է, հայրենիքը չի ներում երբեք, այդ մարդիկ է, որ պիտի ներեն իրենց Հայրենիքին, եթե ինչ-որ բան կա ներելու։ Մարդիկ, մենք ամենքս, ապրում ենք հազիվ մի քանի տասնամյակ և ժամանակ չենք ունենա Հայրենիքի ներումն ապահովելու, իսկ Հայրենիքը հավիտենական է։

Ես պատկերացրի, որ մեկ-երկու շաբաթ հետո այդ մարդը Սառամբուլի որևէ հայկական եկեղեցում կիսախուփ աչքերով կնայի խաչված Քրիստոսին, կմրմնջա Կոմիտասի «Տեր ողորմյան», և Կոմիտասը հանկարծ կլսի ու նորից կխելագարվի։ Նորից, արդեն քանի՞երորդ անգամ...

Ես լավ նայեցի մարդուն, որ չմոռանամ դիմագծերը, իսկ Ֆա ասաց.

— Ի՞նչ է, դուք ա՛լ չեք քաջալերեր իմ որոշումը։

— Ձեր հերթն է,— ասացի ես»։

Այն օրը, երբ գնում էինք տեսնելու Մաշտոցի գերեզմանը և հին եկեղեցին, ավտոմեքենան վարում էր մի շատ լավ տղա Երևանից, երիտասարդ մի արվեստագետ։ Ջառիվեր փոված գյուղում նա մոլորվեց և գնաց սխալ նեղլիկ ճանապարհով. քիչ հետո վրձնահարվածի նման շատ դժվար մի շրջադարձ կատարեց, և մեքենան կանգնեց ուղղահայաց, եռևի ակների վրա, գրեթե իննսուն աստիճան և գամվեց տեղում։ Քիչ էր մնացել պորվեինք ու ջարդվեինք։

Ուրիշ անգամներ ես նման և տարբեր առիթներով մտածել եմ, թե արդյոք մարդ ի՞նչ է լսում, ինչպե՞ս են մեր ականջին հասնում մեր լսած ամենավերջին ձայները և ինչպե՞ս են երևում ամենավերջին պատկերները, որ տեսնում են մեր աչքերը։ Այնտեղ, հայկական գյուղում, լավագույն ուղեկցողներն էին, որ կարող էր մարդ փափագել. հայորդիների մի ամբողջ խումբ կարմիր փոշու ամպի նման բարձրանում էր դեպի վեր։

Մեկ-մեկ մեքենայից դուրս սահեցինք։ Էժան պրծանք։ Ինչ-որ տեղից դուրս ցատկեց նաև մի տղամարդ, ջահել մի գյուղացի։

Մեզ օգնեց, և մենք, բոլորս միասին, արեցինք անհրաժեշտ ամեն ինչ։

Երբ արդեն ամեն ինչ վերջացրել էինք, կանգնած լսում էի այդ մարդուն, որը խնդրում էր մեզ և ասում.

— Հիմա էլ գնանք մեր տուն, հաց ուտենք։

Շատ էր փափագում։ Կարծես թե ինքը քաղցած էր և խընդրում էր, որ մենք իրեն հաց տանք։ Ուրիշ բան չէր ավելացնում։ Միայն ասում էր՝ հաց։ Ինչ գեղեցիկ էր այդ բառն արտասանում։ Ոչ թե այն մարդու նման, որ ասում է քեզ՝ անցնք մեր տուն, միասին թեյենք։ Եվ իր հրավիրած սեղանին թեյը գուցեև բոլորովին չերևա ամանների և մրգահյութի առատության կողքին, երբեմն նաև շշերի կույտերի հետ։ Այս մարդը խոսում էր իր կնոջ հունցած և իրենց տանը թխած հացի մասին։ Եվ նկատի ուներ միայն այն, ինչ ասում էր.

— Գնանք հաց ուտենք։

Եվ մենք չգնացինք։

Մեծագույն վիշտը այս ուղևորության ընթացքում։

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Սարդարապատ նույնպես չգնացինք։ Ուղևորությանդ ընթացքում քո մեջ առավել խոր տպավորվում է այն, ինչը անփութացար տեսնելու։

Մեզ ասացին, որ հայերն այժմ Սարդարապատում կառուցել են հիանալի մի հուշարձան-համալիր, նվիրված 1918 թվականի գարնանը իրենց մայրերի ու հայրերի կատարած մեծ սխրանքին։

Սարդարապատը նախկինում եղել է երկաթուղային փոքրիկ մի կայարան, Արաքսի հովտով դեպի Երևան գնացող և այստեղից էլ մինչև Իրան ձգվող երկաթգծի վրա։ Տարածությունը մինչև Երևան մեծ չէ, մի քանի տասնյակ կիլոմետր։ Թուրքերը գրավել էին կայարանը, մինչդեռ ավելի արևելքում մեկ ուրիշ թուրքական զորամաս առաջանում էր Սևանա լճի բարձունքներից դուրս գալու և Ադրբեջան մտնելու համար։ Ավելի այն կողմ գտնվում էր Բաքուն իր նավթով։ Այնտեղ դեռևս պահպանվում էր Կոմունան, Շահումյանի գլխավորությամբ, որին անվանում էին Կովկասի Լենին։

Կովկասն այդ պահին ապրում էր մի ժամանակաշրջան, որը պետք է հիշեցներ այդ երկրամասի հարաբերությունները՝ աշխարհաստեղծման ժամանակներում։ Անդրկովկասի երեք կուսակցությունները թեև կազմել էին իրենց մի քանի ընդհանուր մարմինները՝ Կոմիսարիատը և, քիչ ավելի ուշ, Անդրկովկասի Սեյմը, սակայն իրականում նրանք իրար նկատմամբ գտնվում էին թշնամական հարաբերությունների մեջ, քանի որ անմիջապես երևան էին եկել լուրջ տարաձայնություններ սահմանների վերաբերյալ։ Նրանց զեկավարները, բացի թողնելով այդ ռազմաճակատը, յուրաքանչյուրը փորձում էր իր համար սիրախաղեր խաղալ թուրքերի և գերմանացիների հետ, որոնց դաշինքը Կովկասի պատճառով լուրջ փորձություն էր անցնում։ Մյուս կողմից, նրանք գաղտնի սիրախաղեր էին անում Անտանտայի ուժերի և ռուսական հակահեղափոխության հետ։ Եվ բոլորի համար գոյություն ուներ այն հարցը, որ առաջադրել էր, և այն էլ այնքան մոտիկից, կոմունիստական հեղափոխությունը Ռուսաստանում։

Վրաց մենշևիկներն, ըստ էության, դրվել էին գերմանացիների հովանավորության տակ, մինչդեռ մուսավաթականներն սպասում էին իրենց դավանակից և համալեզու թուրքերի գալուն։ Էնվերի զորքերն այդ շրջանը հասնելով, անմիջապես կապեր էին հաստատում Կովկասի մուսուլման զեկավարների հետ և, շարունակության մեջ, Միջին Ասիայի դավանակից ռեակցիայի հետ, մինչև չինական սահմանները, որով վերջապես գործողության էր դառնում պանթուրանիզմի մեծ նրաքը, մի հրապ, որին թուրքական Փոքր Ասիան պատրաստվում էր իր ամբողջ գոյության ընթացքում։ Թուրքական այս հեղեղի մեջ փոքրիկ Հայաստանն այս անգամ ևս, ինչպես շատ հաճախ իր պատմության ընթացքում, գարձել էր մի կղզյակ, ջրասույզ Արարատից մնացած մի փոքրիկ մասնիկ։ Այն բանից, թե ինչպես թուրքերը, խախտելով նույնիսկ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, շտապեցին առաջ շարժվել, երևում է, թե նրանց նպատակն էր այստեղ նույնպես կիրառել ցեղասպանության ծրագիրը։ Այդ մասին մնացել են նաև մի շարք կարևոր վկայություններ։

Այս մեծ դրվագը շահեցին հայերը Սարդարապատի ճակատամարտով։ Իրենց ճակատամարտը նրանք մղեցին բոլորովին մենակ։ Ամբողջ ժողովուրդը միահամուռ, ազգային և մարդկային այն միասնական ոգով, որը չեն կարող ընկճել շատ ավելի հզոր թշնամիներ։ Դա նրանց պատմության ամենաճակատագրական իրադարձություններից մեկն է։ Այդ կարող ես եզրակացնել թեկուզև լսելով, թե ինչպես են այստեղ խոսում Սարդարապատի մասին։

Ետ վերցնելով իրենց փոքրիկ կայարանը, հայերը կարողացան փրկել փոքրիկ մի պետություն, տարածությամբ երեք անգամ փոքր, քան այն, ինչ նրանք այսօր ունեն։

Պիտի հետևեն գերմանացիների պարտությունները եվրոպական ռազմաճակատներում, թուրքական ռազմաճակատի գծի քայքայումը ամբողջ երկարությամբ՝ Թրակիայից մինչև Սիրիա, Մուդրոսի զինադադարը, դաշնակիցների մուտքը Կոստանդնուպոլիս, Բրեստ-Լիտովսկի դաշնագրի անվավեր հայտարարվելը. և այս ամենը 1918 թվականի մի քանի ամիսների ընթացքում։ Երբեք հայերը այսքան մոտիկ չեն եղել իրենց հին երազին՝ ստեղծել մի մեծ պետություն։ Քիչ անց այդ բանը նրանց պիտի խաբելով խոստանան Սեվրի դաշնագրով (1920 թ. օգոստոս). երեք անգամ ավելի մեծ, քան այսօրվա Հայաստանը։ Հանդես եկավ Քեմալը. հայերը այնքան պիտի ստանան վանա լիճն ու Տրապիզոնը, ինչքան մենք, հույներս, Զմյուռնիան և էգեյանի ափերը։ Հայկական այն պետությունը, որ այսօր գոյություն ունի, այն ամենն է, ինչ հայերը կարողացան վերջին պահին պաշտպանել Քեմալի զորքերից։ Սահմանագիծը որոշվեց 1921 թվականի գարնանը, Մոսկվայի դաշնագրով։ Դեռ դրանից մեկ տարի առաջ, երբ արդեն հաջողվել էր ամրապնդել իր դիրքերը, Աթաթուրքն սկսեց մաքրագործել իր բիկունքը՝ Արևմտյան Հայաստանը, նախքան մեր զորքերի դեմ դուրս գալը։ Այստեղ մեծ թիրախը հայերն էին։ Ըստ էության, Քեմալը շարունակեց զարհուրելի ցեղասպանության գիծը։ Նախ, նա կոտորեց այն, ինչ հայկական տարրից մնացել էր Կիլիկիայում։ Այս շրջանը օկուպացրել էր Անգլիան։ Շարունակության մեջ, թուրքական հողերի բաժանման շուրջ կազմվող ընդհանուր ծրագրերի համաձայն, անգլիացիներին փոխարինեցին ֆրանսիական զորքերը։ Կիլիկիայում հրաշքով փրկվել էին շուրջ 150 հազար հայեր։ 1920 թվականի սկզբներին՝ քեմալական առաջին իսկ հարձակումից հետո, ֆրանսիացիները քաշվեցին Սիրիա։ Գարնանից մինչև աշուն թուրքերը ոչնչացրին բոլոր այն հայերին, որոնք չէին կարողացել ապաստանել Սիրիայում։ Այնուհետև հասավ Անատոլուի հերթը։

1920 թվականի սեպտեմբերին, Սեվրի դաշնագրի ստորագրումից մեկ ամիս հետո, դաշնագիրը, որը նախատեսում էր հայկական համեմատաբար մեծ պետության ստեղծումը (այն պետք է հասներ մինչև ծով, ընդգրկելով Տրապիզոնը), Քեմալի ղորքերը գրավեցին Էրզրումն ու Կարսը, անցան նաև նախկին սահմանը, Ախուրյան գետը, և գրավեցին Ալեքսանդրապոլը, երևանին պարտադրելով մի զինադադար, որը նշանակում էր հայերի հրաժարումը Սեվրի դաշնագրից։ Այդ զինադադարով Քեմալը հայկական պետությունը սեղմեց այն սահմանների մեջ, ինչ հայերը կարողացել էին փրկել Սարդարապատի հաղթանակով, այսինքն՝ եռապատիկ փոքր, քան այսօրվա հայկական պետությունը։ Այս պահին կարմիր բանակը, հայ հեղափոխականների հետ, Բաքվից անցավ արևելյան սահմանը։ Հայ աշխատավորությունը իշխանությունը վերցրեց իր ձեռքը և կազմեց սովետական հանրապետություն։ 1921 թվականին, գարնանը, Մոսկվայի ժողովում, կարգավորվեցին սովետա-թուրքական սահմանները իրենց այսօրվա գծով...

Ի՞նչ բան էր Սեվրի դաշնագիրը Արևելքի համար,— շարունակեց Նահապետը։— Երբ երիտթուրքերը հեռացան իշխանությունից, Կոստանդնուպոլսում կառավարություն կազմեց Իզեթ փաշան, և աշխարհը կարծեց, որ թուրքերի ոճիրները պիտի հատուցվեին ըստ արժանվույն, թե Թուրքիան ևս պիտի հատուցեր պատերազմին ունեցած իր մասնակցության համար։ Մենք հայերս նույնպես հավատացինք, որ այժմ դաշնակիցները պիտի խրախուսեին հայկական միացյալ պետության կազմավորումը։ ...Բայց ոչինչ տեղի չունեցավ։ Մինչև իսկ այդ ոճիրների համար ամենապատասխանատուները, երիտթուրքերի պարագլուխները, չպատժվեցին։ Դատավարություն եղավ։ Մի քանիսը մահվան դատապարտվեցին, բայց Էնվերը, Ջեմալն ու Թալեաթը, այդ ժամանակվա պետության գլուխ կանգնածները և երիտթուրքերի պարագլուխները, փախել էին արտասահման։ Այդ դատավարությունը թուրքերն օգտագործեցին աշխարհին համոզելու, որ իբր բոլոր ոճիրները, ինչպես նաև թուրքերի մասնակցությունը պատերազմին, այդ երեք մարդկանց գործն էր։ Անկասկած է, որ եթե Ռուսաստանը շարունակեր լինել հաղթող երկիր դաշնակիցների բլոկի մեջ, եվրոպացիները պիտի բավականանային թուրքական նոր կառավարության այս բացատրություններով և թուրքերին լրջորեն չէին անհանգստացնելու։ Այն նույն պատճառնե-

րով, որոնք արևելյան հարցում սկզբից ևեթ նրանց դրդում էի քաղաքականության մեջ հետևել թուրքասեր գործելակերպին։ Բայց այստեղ շատ բան փոխվել էր։ Ամենակարևորը, որ չկար հին Ռուսաստանը։ Այն իրավիճակը, որ գոյություն ուներ Ռուսաստանում 1920 թվականին, կարծում էին, որ երկար չէի շարունակվելու։ Ուրեմն, եզակի առիթ էր Թուրքիան իրար միջև բաժանելու և Ռուսաստանին խաղից դուրս թողնելու համար։ Այդ ոգով էլ սկսեցին կատարել բաժանումը։ Այդ ժամանակ դուք, հույներդ ևս պատերազմին, ինչպես նաև Սովետական Ռուսաստանի դեմ կատարած ինտերվենցիային ձեր բերած մասնակցության դիմաց պիտի ստանայիք Արևելյան Թրակիան Ադրիանուպոլսով, մինչև Դարդանել ընկած առափնյա երիզը։ Մնացած բոլորը՝ Պաղեստին, Իրաք, Սիրիա, մինչև Եգիպտոս, որպես խնամակալներ իրար միջև բաժանեցին անգլիացիներն ու ֆրանսիացիները...

Մի երեկո էջմիածնի ակեղեցիներից վերադառնում էինք Երևան։ Հորիզոնի խորքում, թուրքական կողմում, տեսնում էինք հայկական լեռների պարը, որն աստիճանաբար բարձրանալով, հանգում էր Արարատի երկու տպավորիչ գագաթներին։

— Անհավատալիորեն տարօրինակ է այս պատմությունը,— ասում էր Նահապետը։— Հետագայում, Լոզանից սկսած, թուրքերը շարունակեցին այն դերը, որ ամբողջ 19-րդ դարում խաղում էին եվրոպական երկրների հակառուսական ծրագրերում։ Ըստ էության, նրանք դարձյալ, 1923-ից սկսած, մատուցեցին իրենց ծառայությունները եվրոպացիին. նրանք այդ քո տեսած լեռները, Սև ծովի կեսը և նեղուցները գնացին ու ձախեցին Լոզանում։ Այժմ էլ դրանք ձախում են Ամերիկային... Այնտեղ, այդ սարերի թիկունքում ՆԱՏՕ-ն իր ռազմական բազաներն ունի։ Դա գաղտնիք չէ։ Բոլորը գիտեն։ Մի քանի ժամանակ առաջ մինչև իսկ ինչ-որ սկանդալ եղավ։ Եվրոպական թերթերում ինչ-որ բաներ գրեցին այդ լեռների մասին։ Ով գիտե ի՞նչ նոր տեղադրումներ արեցին այնտեղ ամերիկացիները Իրանում կրած իրենց վերջին ձախորդություններից հետո։ Այդ մասին իմացել էին լրագրողները, որոնք և մի շարք հրապարակումներ կատարեցին։ Թուրքերը փորձեցին ինչ-որ հերքել։ Թուրքական գործակալությունը հաղորդեց, որ գիտական մեծ մի արշավախումբ այն կողմից բարձրացել է Արարատի գագաթը, գիտե՞ս ինչու.

նկուղ տապանի բեկորները գտնելու համար։ ...Ահա քեզ, ինչպես դուք ասում եք, այնտեղ կարգին պարում են...

ԵՐԵՎԱՆԸ

Այն օրը, երբ գնալու էինք Սարդարապատ, հնարավորություն ներկայացավ Հայաստանի մայրաքաղաքը ավելի լավ տեսնելու։ Այսօր Երևանում ապրում են, այսինքն դեռևս կան, առաջին սերնդի մարդիկ, նրանցից, որոնք 1920 թվականին դեռևս տղաներ էին, և նրանց հայրերը սպանվել են, ասենք, Սարդարապատում, կամ նրանց հայրն ու մայրը Արևմտյան Հայաստանում ինչ-որ տեղ անհետ կորել են, և այդ տղաներն իրենց կյանքն սկսել են այստեղ, այս քաղաքի հետ։ Ահա, ուրեմն, այս մարդիկ այժմ նմանվում են թանգարանների պահակների, բանալիներն իրենց գոտիներից կախած։ Ինչ բան որ հարցնես, նրանք իրենց ձեռքը տանում են և վերցնում այն բանալին, որն այդ պահին հարկավոր է։

Երևանը, հակառակ իր այդքան խոր հնության, նորագույն քաղաք է։ Այսօրվա քաղաքում կա երկու բլուր՝ Արին-բերդը և Կարմիր-բլուրը։ Վերջին աշխարհամարտից քիչ առաջ և հետո այդ բլուրների վրա պեղումներ կատարվեցին և հայտնաբերվեցին աստուրաբաբելական ժամանակաշրջանին վերաբերող հնագույն ամրությունների և բնակավայրերի ավերակները։ Դա այն ժամանակն էր, երբ այս երկրամասում ծաղկում էր հնագույն Ուրարտու թագավորությունը։ Արին-բերդ բլրի վրա հայտնաբերված արձանագրությունը հայտարարում է, որ ամայի այս վայրում թագավորը կատարել է մեծ շինություններ։ Այս արձանագրությունն էլ ավել է Երևանի հիմնադրման ճշգրիտ թվականը՝ մ. թ. ա. 782 թիվը։ Բայց այդ ժամանակվանից մինչև 1920 թվականը պատմություն այստեղ հոսել է, ինչպես Զանգու գետի ջրերը, որոնք իջնում են Սևանա լճից ու գնում կորչում են Արաքս գետում ու կասպից ծովում։ Կան մի քանի հին եկեղեցիներ և հին կամուրջներ։ Դեռևս մնացել են նաև անցյալ դարից մեծ թվով ցածր տներ, նրանցից, որ գավառական քաղաքներում կառուցում էին առևտրականները։ Ինչպես երևում է այս տներից, նրանց առևտրական գործարքները Հղել են մանր ձեռնարկումներ և ունեցել են տեղական նշանակություն։ Ուստի և Երևանը այսօրվա Հայաստանի ծնունդն է. այդ է ասում նրա ճարտարապետական անձնագիրը։

Եվ նա իր դեմքն ունեցող քաղաք է։ Դա չես կարող անմիջապես հայտնաբերել։ Շփումը Երևանի առանձնահատուկ նկարագրի հետ վրա է հասնում ավելի ուշ, երբ արդեն անցած են լինում քո առաջին տպավորությունները այն ամենից, ինչ կարող ես տեսնել ամեն մի խոշոր քաղաքում, ցեմենտե փողոցներով ու ցեմենտե խոշոր տուփերով, հատկապես երբ ամռանը հայտնվում ես դրանց մեջ և վերևից էլ զգում ես կիզիչ արևի այրելը, ասես այն ևս ցեմենտից լինի։ Բայց այստեղ, քաղաքում խորանալուն զուգընթաց, աչքդ սկսում է բնկալել առաջին առանձնահատկությունները։ Ցեմենտները տարածվում են և նոսրանում, մի կողմ են քաշվում և ինչ-որ տեղ արագորեն անհետանում, քեզ ուրախություն պատճառելով։ Իսկապես շունչ ես քաշում, երբ աչքդ շոյում է կանաչ մի ձորակ, մի հինգ տնակ այստեղ, մի երեքն էլ քիչ այն կողմ, գեղեցիկ դյուղական ժամանակների հին, ցածրիկ տներ, մագլցած այս ձորակի կողերին։ Հետո, մինչ կծկվել ես ողնու նման և անցնում ես ցեմենտե մեկ այլ թունելով, դարձյալ հայկական բնություն, որը բոլորովին չգիտեիր, բայց այդպես մի կերպ պատկերացրել էիր, հայտնվում է քո առաջ իր վայրենի ժայռով, քարե լանջով կամ էլ մի քանի հնամենի ծառերով, ու մի կողմ է ջրում ցեմենտները։ Երբեմն ծառերը շատ են, գրավում են ամբողջ բլրալանջերը։ Հրճվում ես դրանցով, անգամ եթե լանջը միակառուց ժայռ է, ինչպես մեր գեղեցիկ Թուրքովունիան։ Հրճվում ես և ուզում ես պոռալ՝ թողնք այս ամենն ինչպես կա, մի կառուցեք և ոչ մի տուն, ոչ հիվանդանոց, ոչ իսկ դպրոց, թողնք այս ձորակները, այս գետափներն ու լանջերը, որ նրանք շնչեն ինչպես որ կան, և մի փորձեք դրանք ծածկել նույնիսկ։ Ուզում ես ասել այդպես, որովհետև այն ամենից, ինչ տեսնում ես, հասկանում ես, որ այստեղ ևս հասել են վտանգավոր մի կետի. Երևանը ևս ժամանակակից մի հեղեղ է շենքերի. նրա բնակչության թիվը արդեն միլիոն է՝ Հայաստանի ազգաբնակչության 1/3-րդը. և մենք տեսանք, թե ինչպես նրանք ևս իրենց ավտոմեքենաներով շաբաթ-կիրակի սլանում են դուրս, դեպի բնություն։

Ես շատ խոսեցի ցեմենտի մասին։ Բայց դա ճշտորեն այդպես չէ։ Հայերը ունեն շինարարական առատ ու լավ քար, գրանիտ, որձաքար և, հատկապես, տուֆ։ Վերջինս փափուկ քար է, հեշտ տաշվող, և երբ այն վերցնում են գետնից, դեռևս տաք է, թարմ հացի նման գոլորշի է արձակում։ Երևանը գլխավորապես կառուցված է այդ քարով։ Տուֆը բազմերանգ է՝ վարդագույն, դորշ, սևավուն, գույներ, որոնք արևի տակ և ժամերի հետ խաղում են, քաղաքին պարգևելով հազվադեպ գունային մի նկարագիր։ Առանձնապես տպավորիչ է Երևանն իր գույներով։ Հայաստանի քարերն ունեն հարուստ երբեմն գունախաղերի համար, հատկապես երբ դրանց մերձենում են ուրիշ գույներ, մանավանդ ծառերի ու խոտի կանաչը, ինչպես նաև գիշեր կամ ցերեկ ժամանակ լուսավորության փոփոխվելը։ Հայկական քարերն էլ ունեն զարմանալի մի կենդանություն, ինչպես և նրանց խոսքի կարծր հնչունները, բազաձայները, համարյա բոլորն էլ զինված նույնակ լարերով, որոնք հաղորդում են առանձնահատուկ մի ճկունություն հայկական քյամանչային։

Ուրեմն, Երևանում ևս կան գեղեցիկ շենքեր, որոնք արժանի են մասիկից դիտվելու։ Քաղաքը բարեբախտությունն ունեցավ, որ այն իրենց ձեռքը վերցրին տաղանդավոր մարդիկ, որոնք, երբ վերջապես տեսան, որ իրենց հայրենակիցները մի տեղ են հավաքվում կառուցելու համար իրենց տունը, շտապեցին ու աշխատեցին այս վայրում, որպեսզի վերակենդանացնեն, զարձնեն քաղաք, երկիր և պետություն։ Եվ, ինչպես բոլոր գաղթականները, այստեղ էին բերում նաև իրենց սրբությունները։ Կառուցում էին տներ, տնկում էին ծառեր. նրանք հաստատեցին նաև իրենց հիշատակները։ «Նոր» բառը գերակշռում է Երևանի տեղանունների մեջ. այդ նույնը նկատելի է նաև ամբողջ Հայաստանում։ Նոր Սևբաստիա, Նոր Զեյթուն, Նոր Բութանիա, Նորագյուղ։ Դրանք անհաշիվ են։ Ինչպես մեզ մոտ՝ Նեա Իոնիա, Նեա Զմիռնի, Նեա Իրակլիա. նույն երևույթը։ Եվ այն նույն մարդիկ, որոնք 1920—1930 թթ. տասնամյակում մտահղանում, ծրագրում էին այս ամենը, շատերն արդեն քաղաքի այս կամ այն մասում հաստատված հիշատակներ են դարձել։ Շատերն էլ կան, որոնք բոլորովին էլ չեն անցել Երևանից, բայց այստեղից անցել է նրանց համբավը և նրանց գործը, որով շատ են օգնել

իրենց հայրենակիցներին այստեղ իրենց կյանքը վերստեղծելու համար։ Պատերազմից առաջ Փարիզից բերեցին ու Երևանում թաղեցին իրենց մեծ երաժիշտին, Կոմիտասին, կանգնեցրին նրա հուշարձանը և մի խոշոր այգի անկեցին, նրա անունը կրող զբոսայգին։ Կոմիտասը մեծատաղանդ մարդ էր։ Իր հայրենիքին ավեց հոգևոր հաց, որպեսզի հայերն այն ունենան մշտապես։

Օպերայի թատրոնի առաջ կանգնեցված է հայերի մեկ ուրիշ երաժշտապետի՝ Սպենդիարյանի արձանը, իսկ քիչ անդին, զբոսայգում գտնվում է նրա գերեզմանը։ Նրա կողքին բանաստեղծ Թումանյանն է։ Եվ այլուր՝ ուրիշներ։ Այդ անունները, սովորաբար, մեզ ոչինչ չեն ասում։ Շատ անգամ նույնիսկ չես կարողանում դրանք իրարից տարբերել՝ Թումանյան, Թոմանյան, Թորամանյան։

Երևանի հուշարձանների մասին, որպես ընդհանուր տպավորություն, նշել եմ հետևյալը։ Խոշոր քաղաքներում կան հուշարձաններ, որոնք, թվում է, թե մարդիկ կանգնեցրել են հենց այնպես, ձևի համար։ Ինչ-որ հոբելյանի առիթով։ Կարծես թե ինչ-որ մարդիկ, այս տեղի պատմության ինչ-որ փուլում, մտածել են, քանի որ առիթը ներկայացել է, կանգնեցնել այդ հուշարձանը։ Մի արձան, մի հուշասյուն։ Ու թեև դրանք գտնվում են դեռևս նույն այդ վայրում, ուր կանգնեցված են եղել և դրանցից շատերը կարող են բարձր կանգնած հենձյալներ լինել, իրականում այդ հուշարձանները հուշարձաններ չեն, ոչինչ չեն հավերժացրել, կորել են աշխույժ շարժման, փոշու և մեծ աղմուկի մեջ, չեն ապրում տեղի հիշողության մեջ և անգամ բոլորովին չեն աղդում այն տեղանքի արտաքին նկարագրի վրա, ուր կանգնեցված են։ Ամեն անգամ անցնում ես և ամեն անգամ չես տեսնում դրանք։ Նրանք իրենց վրա կրում են ինչ-որ բան, որը դեռ հեռվից քեզ զգուշացնում է մի կատարյալ անհայտության մասին։ Ես չեմ խոսում այն անձնավորություններին մասին, որոնց գիտես, բայց չես գնահատում, այն հիշատակների մասին, որոնք, քո կարծիքով, ոչ մի հիշատակության արժանի չեն։ Դա այլ բան է։ Դրանք էլ հենց դու տեսնում ես։ Ես նկատի ունեմ տպավորություններ օտար երկրներից, որոնց պատմության մասին գաղափար չունես, բայց արվեստը,

Եթե այն ճշմարիտ է, եթե այն թելադրված է մեծ զգացումից, նեռի նման գալիս ու գոռում է քեզ, ու դու կանգ ես առնում։ Հակառակ դեպքում ոչինչ քեզ չի կանգնեցնում, ոչինչ քեզ չի հասնում. այնպես, ինչպես կանգնեցված է այդ հուշարձանը, չի կարողանում դիմադրել այսօրվա քաղաքի շարժմանը։ Անվերջ բնկնում է այնտեղ, ինչպես ջուրը՝ ծովում, և մարում։ Այն չունի հասակ և շունչ, այսինքն՝ հուշարձանութիւն։ Դա ինչ-որ ընտանեկան հարց է, նրանցից, որ հանդիպում են բարեկեցիկ քաղքենիների միջավայրում, և ինչքան էլ մեծ լինի նրա զանգվածը, ծանրութիւն չկա, օպերետա է։ Կան այդպիսի շատ հուշարձաններ, ես կասեի, նաև վայրեր, որտեղ հուշարձանային արվեստը կրում է օպերետային նկարագիր։

Երևանի հուշարձանները, այն ամենը, ինչ կարողացանք տեսնել, տպավորիչ են և արժանի հարգանքի։ Ունեն մթնոլորտ, հուշարձանային առնականութիւն, բոլորն էլ ուժեղ անձնավորութիւններ են։ Հակառակ, որ դրանք թվով շատ են, դրանցից յուրաքանչյուրը կանգնեցնում է քեզ և խոսում քեզ հետ, լինի նա մտախոհ բանաստեղծ, հին թե նոր դինվորական, երկար ու ճաղատ գլխով մի մտավորական, ռազմական կոմիսար կամ պատերազմի հայ զորապետ։ Եվ դա առավել հիացութիւն արժանի է, երբ մարդ նկատի առնի, որ հայ քանդակագործական արվեստը չի ունեցել պլաստիկայի ավանդութիւ, որովհետև ներծծվել է զարդաքանդակից, նուրբ ընկալման համառ և արդյունավետ կիրառմամբ ու ասեղնագործով։

Հիանում ես նաև տեսնելով, որ դրանք կանգնեցված են այնպիսի մի տեղանքում, որը քանդակն ընդունում է իր նկարագրի մեջ և պարտադրում է որպես իր համոզիչ ժեստը։ Արձանին հաղորդում է մթնոլորտ և հասակ։ Այդպիսով ստեղծվել է սեր ու հարգանք այդ գրանիտների և բրոնզների հանդեպ ու, բնական է, որ դրանց ուղեկցում է ազգային հպարտութիւնը։ Դրա համար հայը, իր բարեկամի ձեռքից բռնած, կտանի հուշարձանի մոտ և ցույց կտա նրան։ Եթե ոչ բոլորը, գոնե մի քանիսը։

Բայց այստեղ մի գլխից անցնում ենք մյուսին։

Երևանում դեռևս լիովին կենդանի է մնում Քարտարապետ Թամանյանի անունը։ Նա Երևանի վարպետաց վարպետն է։

Քաղաքը բարեբախտութիւնն ունեցավ սկզբիցեվէ ընկնելու մի լավ վարպետի ձեռքը, իսկ վերջինս էլ, իր հերթին, բախտավոր էր, որ իրեն հանձնարարեցին իր հայրենիքի մայրաքաղաքի կառուցումը։ Այլ կերպ ո՞վ այսօր կիմանար, թե եղել է նշանավոր մի հայ ճարտարապետ, որը Մոսկվայում ու Յարսկոյե Սելոյում կառուցել է իշխանական այսինչ տունը և 35 տարեկան հասակում դարձել է Պետերբուրգում ակադեմիկոս և Ռուսական Գեղարվեստի ակադեմիայի փոխնախագահը։

Այն ամենից, ինչ տեսնում և լսում ես Երևանում, հասկանում ես, որ այս մարդը այրվել է իր ծրագրերով։ Նա սկսեց մի հիդրոէլեկտրակայանից, ինչպես հմուտ վարպետն ամենից առաջ պատրաստում է իր հնոցը և գուրգը։ Այս առաջին աշխատանքի ճարտարապետական դրվածքն իսկ ցույց է տալիս այն ուղղությունը, որ գծեց Թամանյանը, զուգակցելով գիտութիւն ժամանակակից ըմբռնումը ազգային հակումների, կառուցելու և զարդարելու հայերի ավանդութիւնների հետ։ Նրա ձեռքով ստեղծվեց քաղաքի ընդհանուր հատակագիծը, ինքը կառուցեց առաջին խոշոր շենքերը՝ կառավարական պալատը, աստղադիտարանը, հանրային գրադարանը, Երևանի օպերայի և բալետի թատրոնը։ Ցուցակում նշված են նաև ուրիշ շենքեր, բայց մենք դրանք չկարողացանք տեսնել։ Թատրոնը շատ գեղեցիկ ու խոշոր շենք է. այն մրցանակի է արժանացել 1937 թ. Փարիզում և 1940 թ. Մոսկվայում։ Շենքն ավարտեցին նրա մահից հետո։ Թատրոնից ոչ հեռու կանգնեցրել են նաև նրա հուշարձանը։ Այստեղ նա պատկերված է իր արվեստանոցում աշխատելիս. հակառակ արտաքին ինչ-որ թատերայնութեան, ուրախանում ես տեսնելով, թե ինչպես իրար են կապվում հուշարձան և կյանք, թե ինչքան են այս քարերը խոսուն դառնում փողոցում և հրապարակում։

Հետաքրքրական է, որ նրանք չեն ափսոսում, չեն խնայում վայրը։ Հատկացնում են առատաձեռն՝ փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ, նրան, ում առանց այն էլ պատկանում են այս ամենը այն աշխարհում, որտեղ նա ապրում է։ Այս տեսակետից Երևանը գտնվում է խիստ բարենպաստ պայմաններում։ Գուցե այն ամենը, ինչ փորձում եմ հիմա այստեղ ասել, արտահայտելու համար այն, ինչ զգացինք Երևանի փողոցներով քայլելիս, լավագույն հուշարձանը լինի անհանավոր վարպետաց վարպետի համար, որը սկզբիցեվէ չափեց ամեն

ինչ և միաժամանակ կանխամտածեց, որ մարդիկ իրենց հանգիստ զգան և ունենան ազատ տարածության ինչ-որ զգացում։ Որպեսզի մարդը չխեղդվի։

Բայց այնպիսի մի ժամանակաշրջանում, ինչպիսին մերն է, ի՞նչ կարող է կանխատեսել գիտնականը, եթե նույնիսկ նրանք, որոնք աշխատել են միայն իրենց երևակայությամբ, շատ անգամ չեն կարողանում տեսնել շատ հեռուն։ Այս քաղաքում զգալի է առնվազն երկու ոճ։ Մեկը՝ դանդաղ քայվող դիծն է, որը ձգտում է ինչ-որ տեղ կրկնել շրջապատի լեռները, տեղանքի, որպես կանոն, կորագծերը, ներդաշնակել այժմ կատարվողը հնում կատարվածի հետ. սա այն ոճն է, որը ավելի շատ օգտագործում է կարկինը, իսկ ավելի պակաս՝ գծաքաշը. իսկ մյուս ոճը գծաքաշն է իր մեծ դյուրություններով ու արագ լուծումներով։ Թամանյանը, ասում են ճանաչողները, նախագծում էր մի քաղաք՝ 150—200 հազար բնակչությամբ։ Այժմ Երևանն արդեն միլիոնն անցել է։ Այս արագ աճը տեղի ունեցավ հետպատերազմյան տարիներին։ Ճարտարապետի արձանը դանվում է մի մեծ շրջանակի գագաթին, որը ներառնում է քաղաքի կենտրոնը։ Դեմքը դարձրած դեպի ներս, այնտեղ ուր ապրեց և կառուցեց, նա իր թիկունքը դարձրել է շենքերի հետպատերազմյան հեղեղին. մինչև այստեղ, կարծես ասում է նա, էլ առաջ չգաս. այնտեղ հանում արա ինչ ուզում ես...

. . . . . .

Մեր փորձառությունների համար Երևանը դեռևս շատ անմեղ դեպք է։ Այսուհանդերձ տեղանքի նկարագիրը, անգամ գեղեցիկ գունավոր քարը վերքեր է ստացել ուղղափառ, հարթ, երբեմն և բազմահարկ շենքերից, որոնք այս տարիներին շտապ կառուցեցին, և համեմատությունը Աթենքի հետ ոչինչ չի հուշելու հային, ոչնչով չի մխիթարելու նրան։ Մեկ միլիոնն արդեն երկրի բնակչության մեկ երրորդն է։ Այդ պատճառով էլ մեր բարեկամ Վանիկը (նա, որի հետ ջիպով լեռներում ընկել էինք վարազի հետևից), երբ մեր որսն ավարտել էինք և շրջունակեցինք մեքենայով առաջ շարժվել ու պատահեցինք հովիվների յայլաղներին, որտեղ թարմ մածուն կերանք և նոր թխած հաց ու պանիր, ասաց, որ այլևս չի իջնելու այնտեղ, Երևան։ Գերադասում է ամառ-ձմեռ այստեղ մնալ, հատկապես ձմեռ ժամանակ, երբ ձյունը ամիսներով փակում է մեքենաների ճանապարհը, և արդեն ոչ ոք վերև չի բարձրանում, բացի

նրանցից, որոնք միջոցներ և համարձակություն կունենան գալու մինչև ներքևի գյուղը, կմտնեն երկաթե զամբյուղի մեջ և երկու եղբայրները, Վանիկն ու Վալիկը, մետաղե ճոպաններով նրանց մեկ-մեկ կքաշեն վերև, իրենց Արծվաբույնը, Մեհեորան...

ԱՐԱԳԱԾ

Արագածը մի մեծաքանչ զանգված է Արարատի դիմաց, Հայաստանի սրտում։ Ամենատպավորիչ լեռներից, որ մարդ երբևէ կարող է տեսնել։ Նրա ամենաբարձր դագաթը անցնում է չորս հազար մետրից։ Բարձր սարի տպավորություն չի գործում։ Հանդարտ սկսվում է ցածից, խաղալով իր լեռնային խաղերը, լիակատար հանգստությամբ բարձրանում է վեր և նույն կերպ իջնում է մյուս կողմը, իր հետ թողնելով հսկայական մի գմբեթ, համարյա ինչպիսին երկնքի գմբեթն է։ Առնականորեն անխռով մի սար, առանց ցնցումների։ Այստեղի բոլոր լեռների նման սա ևս հնում հրաբուխ է եղել։ Ովքեր բարձրացել են վերև, գիտեն, թե ինչքան խաբուսիկ է հեռվից պրոսպեկտների այս տպավորությունը։ Գագաթին մոտենալիս, բաժանվում է չորս խոշոր լեռնակատարների։ Մի քանի կետերում պահպանվել են նաև սառցադաշտերի ինչ-որ մնացորդներ, մամոնտների և բրդոտ ռնգեղջյուրների ժամանակներից։

Երբ դուրս եկանք Երևանից և ուղղություն վերցրինք դեպի լեռները, հյուսիս-արևմտյան ուղղությամբ, ճանապարհը մեզ տարավ այնպիսի մի վայր, որը նման էր լուսնի և անապատի բնությանը։ Քարեր, մուգ և կարմրավուն երկաթահող, սրածայր ցածր խոտի ծածկույթ, օշինդր, տատասկ ու փշեր։ Այստեղից սկսվում է Արագածի մոխրագույն սիրույթը՝ ութ հազար քառակուսի կիլոմետր, ամբողջ Հանրապետության երեսուն հազար քառակուսի կիլոմետրից։ Իսկ ավելի այն կողմ ուրիշ լեռներ, ուրիշ քնած Արագածներ. աչքդ ուր որ դարձնես, մոխրագույն և կարծր հող։

Տեսնես, ինչպե՞ս են մարդիկ ապրում այստեղ, ինչպե՞ս են յոլա գնում։

Եթե հային հարցնես, թե ի՞նչ է արտադրում իր հողը, նա դառն հումորով քեզ կասի՝ քարեր։ Եվ այդպես էլ կա։ Անգամ քեզ կասեն, որ Հայաստանի անվանումներից մեկն էլ այդ է՝ Քարաստան, քարերի թագավորություն։

Մեկ ուրիշ անգամ էլ մենք խոսել ենք Հայաստանի քարերի մասին։ Դրանց մասին չես կարող միայն մեկ անգամ խոսել ու վերջացնել։ Ուր էլ գնաս, դրանք քո առաջ են։ Այս երկիրն այսօր իր քարերով, իր ցեմենտով և կրաքարերով, իր ալյումինով, պղինձով և մոլիբդենով և այն ամենով, ինչ նրա համար թրծել են իր հրաբուխները, զարգացրել է մի շատ լուրջ մետաղամշակություն։ Նրա տնտեսությունը առնվազն 70 տոկոսով արդյունաբերական է։ Հողի մշակման մասնակցությունը երկրի տնտեսությանը՝ 10—12 տոկոս է։ Հող չկա։ Իսկ եղածի համար էլ՝ շուրջ 450 հազար հեկտար, ջուր ճարելը հեշտ չէ։ Անձրևները, որ թափվում են ներքևում, Արաքսի հովտում, ինչպես նաև այս ստեպներում, ամայի վայրերում, որտեղով անցնում է Արագած տանող ճանապարհը, հերիք չեն արևին հագեցնելու համար։ Ջրի մեծ մասը բարձրադիր վայրերում պահում են լեռնադաշտերն իրենց ալպյան բուսականությամբ։ Ահա թե ինչու դեռևս Արգիշտի թագավորի ժամանակներից այստեղ կառուցվել են ջրամբարներ, փորվել են առուներ, որոնցից մեկը, փորված գրանիտի և կարծր սև քարերի միջով, մինչև օրս էլ կա և իր ջուրը տանում է, ինչպես այն ժամանակ։ Առանց ջրի այդ հողերը մեռյալ են։ Անգամ Արաքսի հովիտը չի կարող ապրել առանց ջրի։ Մշակվող հողի երեք քառորդը ոռոգելի է։ Օգտագործեցին Սևանա լճի ջրերը, որպեսզի ոռոգեն և, միաժամանակ, Հրազդան գետի երկայնքով կառուցված արհեստական ջրվեժներից էլեկտրական էներգիա ստանան։ Բայց ջրի պաշարները համարյա երեսուն տարվա ինտենսիվ օգտագործումից հետո վտանգավոր աստիճանի պակասեցին. 1500 հեկտար տարածության վրա լճի մակերեսն իջավ գրեթե քսան մետր։ Եթե այդպես շարունակվեր, դա կնշանակեր ազգային աղետ։ Անհրաժեշտ եղավ սահմանափակել ջրի հեղքը լճից և, երևանից արևելք, լեռների միջով բացած ստորգետնյա ջրատարով, գետերից մեկի ջուրը դարձրել են, որպեսզի ոռոգեն լիճը։ Հսկայական խնդիրներ փոքրիկ հանրապետության համար։ Հայաստանի տնտեսությունը, անշուշտ, զարգանում է Սովետական Միության միասնական համակարգի մեջ։ Այսօր Հայաստանն

ունի նշանակալից չափով զարգացած արդյունաբերություն, որն արտադրում է նաև էլեկտրոնային նուրբ սարքեր։ Հայաստանում ծախսվող էլեկտրաէներգիայի մի մասը ծածկում է հին Սարդարապատի մոտ կառուցված ատոմային էլեկտրակայանը։ Բայց էլեկտրաէներգիայի ասպարեզում ևս կարիքները շատ մեծ են, հատկապես այժմ, երբ Հայաստանում փորձում են նոր եղանակով լուծել իրենց ագրարային հարցը։ Հողը, որը չի մշակվում բերք տալու համար, դարձյալ դառնում է քար։

Քարերի վերածվելու ճանապարհին են նաև Հայաստանի լեռնային գյուղերը։ Ինչպես մոխրագույն այս ստեպները սկսեցին ծծել լճի ջուրը և այն կանգնեցրին ցամաքելու վտանգի առաջ, այդպես էլ քարակերտ Երևանը դեպի իրեն ձգեց հայ առաջ, այդպես էլ քարակերտ Երևանը դեպի իրեն ձգեց հայ գյուղը և այն ցամաքեցրեց։ Եվ դա այսօր նրանց ամենամեծ պրոբլեմն է՝ վերակենդանացնել գյուղը։ Քարը ահավոր տարերք է։ Այն բոլորովին էլ անշարժ ու մեռյալ չէ, ինչպես մենք պատկերացնում ենք։ Շատ ավելի հեշտ է այն բուսնում, քան մարդ կարողանում է արմատահան անել։

Գյուղի ամայացումը, ինչպես մենք ևս գիտենք, միայն տնտեսական հարց չէ։ Ի՞նչ է լինելու գյուղը, ի՞նչ է լինելու լիճը։ Այդ մասին այստեղ, տնտեսական մինիստրություններից բացի, մտածում են նաև շատ ուրիշ մարդիկ։ Ամեն անգամ, երբ լինենք լճի մոտ, մեզ կպատմեն, թե նախկինում ինչպիսի՞ն է եղել, իսկ հիմա ի՞նչ է մնացել։ Հայաստանի բանաստեղծները Սևանա լճի մասին գրել են նույնքան, ինչքան և Արարատի մասին։ Գուցեև ավելի։ Այդ լիճն այսօր շատ բան է նշանակում։ Այն իր մեջ կրում է և Արարատը, և մյուս՝ Վանա լիճը և շատ ուրիշ բաներ։ Նրան նվիրված ձոներն անհաշիվ են։ Նույնքան և ավելի շատ նրա մասին գրում են Հայաստան այցելող օտարերկրացիները։ Երկու հազարից տասը մետր պակաս բարձրության վրա է լիճը ալիքվում. «ավելի մոտ երկնքին, քան երկրին»,— ասում են այստեղ։ Լիճը պահպանող լեռները չեն ձգվում ավելի բարձր, քան անհրաժեշտ է, որպեսզի ջրերը դուրս չվազեն. դրանք կազմում են ինչ-որ մի պսակ, կապտավուն մի շրջանակ։ Լիճը, լեռների այդ պսակը և երկինքը։ Զգացմունքային անհավատալի մի հեղեղ երկնքի ու ջրի այսքան մոտիկ ներկայությունից, նրանց փոխադարձ ընդարձակությունից, նրանց լույսից, նրանց մեղմ ու լուսավոր գույներից։ Միշտ էլ ինչ-որ առնչություն պետք

է որ ունեցած լինի այս ամենի հետ լճի այն անվանումը, որը հանդիպում է մեր հնագույն հունական աղբյուրներում՝ Լիխնիտիս լիճ (լիխնոս, լիխնիա՝ ջահ, լիխնիտիս՝ լուսավորող ծ. Թ.)։

Սևանը երկրի ջահն է, նաև հոգու ջահը հայերի համար։

Հավակնություն չունեմ նոր բան ավելացնելու այն ամենին, ինչ այնքան գեղեցիկ կերպով լճի մասին ասել են ուրիշներ՝ արիներ և անարիներ, ինչպես կասեին հնում։ Պարզապես փորձում եմ նրա մաքուր լույսով նույնպես լուսաբանել վերևում նշածս խնդիրը։ Որովհետև գյուղը նույնպես, ինձ թվում է, մի ջահ է, և մարդը չի ուզում թողնել, որ այն մարի նույնիսկ այսօրվա քաղաքակրթության ամենաժամանակակից, առավել առաջ ընթացած և ոգու հնարավորությունների մեջ խճճված իր կյանքում։ Եթե հանգցնենք այդ ջահերը, մարդու հոգում ևս կհանգչեն ինչ-որ գեղեցիկ ու պետքական բաներ։ Աղքատանում է մարդու երկիրը ոչ թե այն պատճառով, որ չի ապրում այդ ամենով, այլ որովհետև դադարել է դրանք ճանաչելուց, դրանց մասին մտածելուց։ Կյանքի այն երևույթները, որոնք հանգչել են առավել ուժեղ ինչ-որ ճնշման տակ, ինչպիսին այսօրվա կյանքի թափն է, գուցեև ետ վերադարձնելու կարիքը մարդիկ չունեն, գուցեև չի կարելի մեռելներին հարություն տալ։ Բայց այդ երևույթներին ուղեկցում է հոգեկան մի աշխարհ, որից մարդ պետք չէ զրկվի իբրև իմացություն և զգացմունք, ինչպես պետք չէ զրկվի իր պատմությունից։ Այն, ինչ մահացել է կյանքում, իր հետևից թողնում է մի լույս, որը պիտանի է ոչ թե պատմությանը, այլ նրանց համար, ովքեր ապրում են։ Ինչքանով որ ես հայ չեմ, ոչ էլ տնտեսագետ, չեմ կարող ասել, թե ինչքանո՞վ գյուղի տնտեսական վերակենդանացումը մի երևույթ է, որը անհրաժեշտ է և հնարավոր է իրագործել։ Սրանի թե այդպես լինի։ Սակայն այսօրվա մայրաքաղաքացու մեջ վերակենդանացնելը հոգեկան այն աշխարհի, որը ներկայացնում է գյուղը, այսինքն՝ Բնությունը, մարդու հարաբերությունները բնության հետ, մարդու հարաբերությունները բնության միջից, ամենախոշոր հարցերից մեկն է բոլոր մայրաքաղաքների համար, աշխարհի բոլոր գլխավոր քաղաքների համար, որոնք, երբ կորցնում են իրենց միջից գյուղը, մնում են նրանց գլուխները միայն՝ անթափանց, գերաճած։

Ուստի ջատ է ինձ հուզել այն եղանակը, որով այսօրվա հայ արձակագիրները բարձրացնում են իրենց համար շատ կարևոր, մեզ համար ևս շատ կարևոր, այս թեմաները։

Արդեն երկար տարիներ է, ինչ Մոսկվայում լույս է տեսնում «Դրուժբա նարոդով» (Ժողովուրդների բարեկամություն) գրական-գեղարվեստական ամսագիրը։ Քանի որ ոչ ռուսական սովետական հանրապետություններում խոսվող լեզուներից ոչ մեկը ես չգիտեմ, ուստի պարբերականի միջոցով որոշ չափով իրազեկ եմ դառնում այդ երկրների ընթացիկ գրական արտադրանքին։ Այնպես է ստացվել, որ Հայաստանում ևս ունեմ երկու բարեկամ, ճանաչում եմ նաև Մոսկվայում թարգմանություններ կատարող նրանց հայրենակիցներից մի քանիսին։

Այս տարի հայկական երկու հրապարակումներ եղան, երկուսն էլ նվիրված վերևում մեր ասածներին։

Վարդգես Պետրոսյանի «Մենավոր ընկուզենին» վեպ է այսօրվա լքված գյուղի մասին։ Գրողը առինքնող պատմող է, զինված հայկական սուր դիտողականությամբ, ցավում է իր երկրի համար, բայց և հրճվում է նրանով և հպարտանում։ Իր ընթերցողներին փոխադրում է նրանց դալար հասակի տարիները, դրան համապատասխան են նաև իր՝ հեղինակի նուրբ զգացումները, այն կտրվածքները, որ ձեռնարկում է իր թեմաների մեջ, այն ջերմ եղանակը, որով պատմվածքներում անդրադառնում է այդ թեմաներին։ Գյուղը, որը կանգնած է ամայանալու վտանգի առաջ, խորհրդանշվում է այս մենավոր ծառով։ Մի ժամանակ ծաղկում էր, պտղաբերում, իր շուրջն էր հավաքում ամբողջ գյուղը, նրա տնքը գեղեցիկ էր, ծաղկուն։ Այժմ իր միայնությամբ խորհրդանշում է մեռած գյուղը։ Ինքը ևս շուտով կդառնա քարե մի ծառ։ Մարդիկ ցրվել են, եվ քչերը ևս, որոնք մնացել և դեռևս ապրում են ամայացած բնակարաններում, տարբեր պատճառներով մեկ առ մեկ լքում են գյուղը և հեռանում։ Տեսնում ենք մարդկանց հեռանալիս, հասկանում ենք, թե ի՞նչն է նրանց ստիպում հեռանալ, հետևում ենք, թե ի՞նչն է նրանց ստիպում հեռանալ, հետևում ենք նաև ինչ-որ հուզարկավորության, մի հարսանիքի, որը գուցեև վերջինն է այս գյուղի հազարամյա պատմության մեջ։ Բանն այնպես է

գնում, որ այն տպավորությունն ենք կազմում, թե Պետրոսյանի արած պատմությունը ամենավերջին էջն է, վերջաբանը, տխուր, ինչպես վեպերից շատերի վերջաբանը։ Բայց վիպասանը ուրիշ բաներ է ուզում մեզ ասել։ Գյուղում կա մի ուսուցիչ։ Նա ծեր է։ Ու թեև նույնպես կարող էր թոշակի անցած լինել և ինքն էլ այստեղից հեռանալ (դրանով իսկ կվերանար գյուղի մահացմանը դիմակայող վերջին կենդանի տարրը), նստում է, աշխատում, ջանում է կենդանի պահել դպրոցը, տները, անգամ գերեզմանոցը։ Թող այդ էլ գոյություն ունենա և շարունակի իր գործը։ Բախման մեջ է մտնում նրանց հետ, ովքեր շտապում են մի կերպ վերջ տալ պատմությանը, ովքեր ուզում են, որ գադարի գյուղը գոյություն ունենալուց, ուզում են ջնջել քարտեզից, իրենց հոգսերից, իրենց ծախսերի հաշվեկշռից։ Դրանք շրջանի իշխանություններն են։ Ըստ էության այդ գյուղը նրանք գուրս են գրել և նրանց գանգատները ուսուցչի հասցեին շատ մեծ են։ Այնքան, որ ի վերջո նրան բռնում ու բանտ են նետում։

Պետրոսյանը շարունակում է իր պատմությունը առաջ տանել, մինչև որ սկսում է հաստատվել դրա հակադարձ շարժումը...

Նա բավական սուր է, երբ խոսում է այս հարցերի մասին։ Նրան հետաքրքրում է պատմությունը, նաև՝ ներկան։ Մարդկանց ապրած կյանքը, կենցաղը, մտածել և զգալ սովորելու նրանց եղանակը, տնտեսությունը, բարոյականությունը, քաղաքականությունը, ամեն ինչ։ Եվ քանի որ ամեն ինչ չէ, որ հեշտ է ասվում, նա դիմում է առավել խտացրած կերպարների, իր պատմության մեջ ներմուծում է առակներ ու զրույցներ, օգտագործում խորհրդանիշեր, ինչպիսին է մեհնավոր ծառը գյուղից վերև՝ ժայռի վրա, մի ծերունի մարգարե, որը մի ժամանակ ապրել է այնտեղ վերևում և այժմ արդեն նրա ձայնը լռել է և այլն։ Այս բոլորի միջից և իր հեքիաթի ընթացքում նա ջանում է պարտադրել այդ անտեսված աշխարհի վերածնման գաղափարը։ Նա անշուշտ իրապաշտ է։ Տեսնում է, թե կյանքը դեպի ուր է քաշում։ Երկու քայլ այն կողմ մարդիկ կառուցում են բազմահարկ շենքեր և էլեկտրաշարժ գործարաններ, անգամ և ատոմային էլեկտրակայաններ։ Ապրում են մեկ ուրիշ կյանքով։ Գրողը այս ամենին «ոչ» չի ասում, քանի որ ինքը ևս այստեղ է ապրում, գրում իր գրքերը, մեծացնում երեխաներին. քաղաքում, այն էլ երկրի մայրաքաղաք Երևանում։ Բայց ուզում է հայրենակիցներին հիշեցնել, որ իր երկիրը միայն հումք չէ, որ արտադրում է Երևանի համար. արտադրում է հաց և գինի, քարերի փոխարեն սարալանջերը կարող են ծածկվել ընկուզենիներով, բայց տարածությունը, բնությունը, ինչ էլ ասես, չի հանգչի, չի մահանա, և մարդն էլ այս ամենը իր մեջ թող չսպանի, անուշադրության թող չմատնի։ Երևանը գլուխն է, սակայն չի կարող գլուխը մարմնից ավելի մեծ, ավելի ծանր լինել, որովհետև կգա ժամանակ, երբ չեն լինի նաև ոտքեր, որպեսզի պահեն այդ գլուխը։ Եվ հետո, լքված գյուղերում թաղվում է երկրի պատմությունը, կամաց-կամաց ծածկվում է քարերով ու մոռացվում. և այս ամենի հետևանքով երկրորդ անգամ խեղաթյուրվում է Կոմիտասը...

Ավելի շուտ կարդացել էի Վարդգես Պետրոսյանի մեկ ուրիշ գիրքը, փոքր պրվագների մի շարք։ Դիտողություններ, խորհրդածություններ, որոնց նյութը Հայաստանն է։ Նրա այդ գիրքը կոչվում է «Հայկական էսքիզներ»։

Այստեղ ևս նրան շատ է զբաղեցնում Մենավոր ընկուզենու թեման, որին անդրադառնում է բազմապիսի եղանակներով, նշելով դրա տարբեր ծալքերը, մերթ հայկական գյուղում, մերթ քաղաքում, երբեմն նույնիսկ Հայաստանից դուրս, Կոստանդնուպոլսում, Ամերիկայում, Փարիզում, անգամ Արարատից այն կողմ, Թուրքահայաստանում, որտեղ ճանապարհորդել է։ Ինչպես նշել եմ, նա ուժեղ դիտողականություն ունի և շատ խիստ է, ու երբ տեղն ընկավ, երբեք չամիչ չի բաժանում։ Մի առիթով նա գրում է.

«Ես գիտեմ, եթե ձյուր լինեի Զորափ գյուղի ղեկավարներին, նրանք սեղան կբացեն, մի բանի բաժակ օղի կամ գինի խմելով կտխրեն և, հայելով Մասիսի կողմը, կառաջարկեն ոտի կանգնած դատարկել հայ ժողովրդի կենաց-բաժակը։ Չխմեի նրանց հետ, իսկ եթե նրանք զարմանան, ցույց ավեի բազավորական դամբարանը և հետո պատմեի սա բան ինչ. «Տարիներ առաջ, երբ փորվում էր գյուղական խանութի հիմքը, շինարարները դեմ առան սրբատաշ պատի մնացորդների։ Պարզից պարզ էր, որ հին տաճարի հիմքն է։ Աշխատեկը կանչեց գյուղի ղեկավարներին, ցույց ավեց պատը, առաջարկեց խանութը փոխ-ինչ հետացնել։ — Ինչու՞,— ասացին գյուղի

դեկավարները,— ճենց այդ հիմքի վրա էլ դրեք պատը, ամուր կլինի, էթե այսման տարի դիմացել է: Եվ գյուղական խանութի պատը շարեցին բազավորական դամբարանի հիմքի վրա»:

Վերջին ժամանակներս սովետական գրականության մեջ կազմավորվել է մի նոր հոսանք՝ գյուղի գրականությունը, ինչպես այն անվանում են: Դրան ծառայեցին և դեռ ծառայում են մի քանի շատ լավ հայտնի անուններ: Այս գրականությունն սկզբնավորվեց այնպիսի ընդհանուր մի միջավայրում, որը արտացոլում էր ռեակցիան բյուրոկրատիզմի դեմ՝ սխալներ, վատ, աննպատակ գործողություններ, տնտեսական և այլ պրոբլեմներ: Գրողները հաճախ հասնում էին այնտեղ, որ կատարում էին շատ շոշափելի դիտողություններ և ցուցումներ և երբեմն դրանք պատճառաբանում նույնիսկ թվերով և իրենց ունեցած մասնագիտական գիտելիքներով: Սակայն, ինչպես միշտ պատահում է, որևէ տեղ փորփրելիս, մարդ ինչքան խորն է փորում, այնքան առաջանում է դեպի առավել էական բաները և ուշ կամ կանուխ հասնում է այնտեղ, ուր մակերեսը, կոնկրետ սկզբնաղբիւրը, արդեն դեր չի խաղում. շատ ավելի կարևոր են այն հայտնագործումները, որ կատարվում են հողում, որտեղ, ինչպես Պետրոսյանից վերևում արածս մեջբերման, հայ գյուղացիների նման, մի փոքրիկ խանութ կառուցելու համար հողը փորելիս, հայտնաբերում են բազավորական հին մի դամբարանի հիմնապատերը:

Կամաց-կամաց, ինչպես ամեն մի ձեռնարկման ժամանակ, կուտակվում են այդպիսի շատ գաղափարներ: Գյուղի գրականությունը Սովետական Միության մեջ սկզբնավորվեց սովետական կամ օտար որևէ գրական հոսանքի հետ առանց որևէ ընդհանուր առնչություն ունենալու: Եվ ահա, ինչ-որ մի պահ առնչությունները վերականգնվեցին, ինչպես աստիճանաբար իրար մոտենում են, երբեմն մինչև իսկ իրար են խառնվում գետերը, ասենք իսկ այդ մասին իրենց տարած ջրերի կասկածը հարուցելու, և իրենց միակ հոգսը՝ ինչպես օվկիանոս հասնելն է, որտեղ կմարի թափը: Գրական այս հոսանքի շոշափած խնդիրները ընդհանուրի պատմության մեջ առաջ քաշվեցին որպես մարդկանց հոգեկան խնդիրներ: Եվ դրան զուգահեռ, արտահայտչականությունը ունեցավ շատ դինամիկ մի աճ, յուրացնելով առավել խտացրած ձևեր, շատ հաճախ պոեզիան և արձակը բերելով նոր առնչություններ, երբեմն վերակենդանացնելով նույնիսկ շատ հին ձևեր, ժամանակակից պատմողական խոսքին նոր կյանք հաղորդելու համար:

Մյուս հայ արձակագիրը, Հրանտ Մաթևոսյանը, ներկայացուցիչն է արդի արձակագրության հենց այս հատվածների, իր հայացքը հառած հայկական գյուղաշխարհին: Հայկական գյուղն այն վայրն է, ուր վերադառնում է ապրելու համար այն, ինչը քաղաքում խեղդվում է: Հեղինակի տեսողության մեջ մեծ քաղաքը հենց քարերի կույտ է և ճշմարիտ կյանքը այդ տեղից դուրս է, հեռու քաղաքի ցեմենտից, նրա ծխից, մարդկանց խճողումից իր բոլոր քայքայիչ հետևանքներով, որ այդ ամենն ունենում են մարդու հոգեկան արգասավորության վրա:

«Մենք ենք, մեր սարերը»: Սա վերնագիրն է նրա վիպակներից մեկի, որը գեղեցիկ թարգմանել է Անահիտը: Մաթևոսյանը նման է սերմնացանի, որի տոպրակը լիքն է սերմերով, և նա ամեն տեղ սերմանում է հիշատակներ: Հիշատակներով խիտ բնակեցված են նրա պատմությունները: Ինչպես որ քաղաքը հեղեղում են շենքերը, իրենց միջև թողնելով նեղ անցումներ, որտեղով մարդը շարժվում է ահավոր դժվարությամբ: Շենքերը խեղդվում են, հիշատակները հմայում են հեռվից, հրավիրում են դեպի իրենց ջինջ երկինքը, ելք են մատուցում, փրկություն: Մաթևոսյանն իր տարածությունը բնակեցնում է շատ խիտ, իր պատմությունները տարածում ուղղահայաց և հորիզոնական, շատ հաճախ խաչաձևում է այդ մակերեսները: Այս խաչերով ու խաչքարերով լցված նրա աշխարհի քայլվածքը մի տեսակ դժվար է: Բայց զգում ես, որ դա վարպետի խոսք է և միաժամանակ բանաստեղծի, և ունի վարպետի օժտվածություն ու պոետի խտություն: Առաջին իսկ պատմվածքը գրավեց իմ ուշադրությունը, երբ կարդացի Երևանում և նրա հերոսին ընկալեցի մի տեսակ ավելի անմիջական, ավելի մոտիկ: Այդ տղան սարերի որդի է: Մեծացել է իր հայրենակից հովիվների կողքին և հիմա իջել է Երևան, սովորելու: Ուժեղ և ամրապինդ երիտասարդ տղա էր, նրան գերել էր քաղաքը, որտեղ վերջին ժամանակներս այդքան հաճախ թռչում գալիս էին զբոսաշրջիկների ինքնաթիռներ: Իսկ դրանց մեջ աղջիկների փունջներ: Դրանք գեղեցիկ լեհուհիներ են

և արևի ու հարավային ուժեղ հուզումների ծարավ շվեդուհիներ։ Մինչդեռ, եթե նա իրենց գյուղում մնացած լիներ, սուլելով մագլցելու էր սար ու ձոր, իսկ այստեղ նրան փակել են տուփի մեջ և խճճվում է նեղ ու երկար փողոցներում, գնում ու գալիս է որպես սկյուռ։

«Դուրս եկա Աբովյան, մտա Թումանյան, կրեցի Թումանյանի ու Նալբանդյանի խաչմերուկը և կանգ առա»։ Գյուղի և մարդկանց տեսիլքը, մարդկանց, որոնց ճանաչել և սիրել էր այնտեղ, դուրս չի գալիս իր հոգուց։ Տարբեր առիթներով այն պատրաստ է արտահայտվելու ինքնաբուխ արարքների մեջ։ Բայց ինքը ևս աստիճանաբար արդեն սովորել է և պատրաստ է ուրանալու այդ տեսիլքը։ Եվ այսպես, մի երեկո, շվեդուհուն հյուրանոց ուղեկցելիս, հիվանդանոցի ճաղերից դուրս նկատեց սարերի իր հին ընկերներից երկուսին։ Սրևի ինչ-որ բան նրան մատնեց։ Շվեդուհին ինչ-որ բան կռահեց, զգալով, որ նա հանկարծ քաշեց իր թևը և տարավ ուրիշ ուղղությամբ, որպեսզի գյուղացիներին չհանդիպեն։

Շվեդուհին հարցրեց, ինչպես հռոմայեցի զինվորները՝ Քրիստոսի առաքյալներին.

— Դու գյուղի՞ց ես։

— Նո, ասացի, ոչ։

— Երևանի՞ց ես։

— Այո, ասացի, Երևանից։

Մաթևոսյանը շատ լավ է տիրապետում իր հերոսներին երևութապես անտարբեր մանրամասներով գունավորելու արվեստին, կամ էլ ստիպում է, որ հերոսներն իրենք գունավորվեն իրենց խոսքերով, թեկուզև խոսում են ուրիշների կամ տվյալ իրադրությանը չառնչվող բաների մասին։ Հիշատակներով հարուստ, հումորով հարուստ, դրանցով էլ հարուցում է ծանր, հաճախ տխուր զգացմունքներ, ինչպես կատարվում է այս պատմության մեջ, որն ավարտվում է երիտասարդի հին ընկերներից մեկի մահով։ Մահանում է սարի իր հին ընկերը, կատակասեր հովիվը, որին նրա երկու մյուս ընկերները իջեցրել էին Երևան, հիվանդանոց։ Բայց արդեն ուշ էր։ Նրա ներսում զարթնել էր գազանը, որը կուլ էր տալիս թե՛ սրսկումները, թե՛ դեղերը և թե՛ այն ամենը, ինչ անում էին բժիշկները։ Ու վերջում կուլ տվեց նաև նախկին ընկերոջը։ Հաղիվ հասցրին նրան վերցնել և նորից գյուղ տանել։

Մաթևոսյանի մեկ ուրիշ պատմվածքը, որ տվեցին ինձ և կարդացի, կոչվում է «Գոմեշը»։ Ապշեցուցիչ արձակ, հատկապես շնորհիվ այն մթնոլորտի, որը կարողանում է պատմվածքափրը կենդանացնել, երբ հետևում ենք էգ գոմեշին, որի ժամանակը եկել է և արու գոմեշին է ցանկանում։ Բայց այդ կողմերում արու գոմեշ չկա։ Բոլոր արու գոմեշները, ասես դիտմամբ, ինչ-որ հեռուներում են։ Էգ գոմեշը լքում է իր տանտիրուհուն, մի պառավ կնոջ, որի հետ արդեն տարիներով ապրում են (սա էլ այդպես մեն-մենակ է մնացել պատերազմի տարիներից ի վեր) և ընկնում է սարուձորեր, փնտրելով այն, ինչ ուզում է գտնել։ Նա էլ իր տեսիլքն ունի։ Երբեմն թվում է, որ գոմեշը ինչ-որ տեղ բառաչում է և կանչում իրեն։ Ու գնում է դեպի այնտեղ։ Մեկ ուրիշ անգամ գոմեշի ամբողջ մարմինը նկատում է բլրի գագաթին։ Եվ դարձյալ նրան չի գտնում։ Շատ ու շատ թափառեց։ Մի անգամ մտնում է նույնիսկ քաղաք և հենց ուղիղ գնում է սպանդանոց, որտեղ քիչ էր մնացել բռնեին նրան և կիլո-կիլո ծախեին։ Այս անասունի շուրջ Մաթևոսյանը հյուսում է մի պոեմ, նվիրված Բնության և Բնականության, կյանքի անմահ օրենքին, որին մարդիկ քաղաքներում նույնպես վերածել են խեղճության, նրան կեղծել են իրենց սարսափելի լաբիրինթոսներում։ Դրա համար էլ ժամանակ առ ժամանակ պետք է որ մի քամի փչի, նույնիսկ, եթե հնարավոր է, այնտեղ շուռ տրվի մի գետ, նույնիսկ երկու գետ միասին, որոնք իրենց մաքուր ջրերով մաքրեին այս փողոցները, արթնացնելով բնության և կյանքի իսկական զգացումը։

Այդ է ուզում անել իր ձևով նաև ապշեցուցիչ Գոմեշի հեղինակը...

ՎԱՐՊԵՏ

Այս գին բառը օգտագործում են արվեստագետների միջավայրում, այնտեղ, ուր այլապես պիտի ասեին՝ ուսուցիչ, մետր։ Բառն անհրաժեշտ է, շեշտելու համար տվյալ արվեստագետի ստեղծագործության ազգային գույնը։ Եթե խոսքը վերաբերում է ինչ-որ մի նկարչի, որը թեև ականավոր է, բայց գործ ունի առավելապես համաշխարհային որոնումների հետ և ունի պա-

ման ազգային բնավորություն, նրան չեն անվաննելու վարպետ, այլ կատաղի մեկ ուրիշ անվանում։

Բայց սովորաբար հայ նկարիչը ապրում է իր ազգային ավանդությամբ և շարունակում է այն։ Հայը, ինչպես մեկ ուրիշ առիթով ասել եմ, գտնվում է այնպիսի մի վայրում, որը մագնիսացնում է իր պատմությամբ և բնությամբ։ Երկրի գույները լուսավոր են ու մեղմ, թեև իրենց վրա կրում են այնպիսի մի արև, ինչպես համարյա մեր արևն է, այնտեղ, մեծ բարձրությունների պատճառով, գուցեև ինչ-որ մի ուրիշ պատճառով, գույներն ապրում են ավելի մեղմ և ալիքվող մի կյանք, կտրուկ կերպով չեն բաժանվում, այստեղ՝ սովոր, այնտեղ՝ լույս։ Մեր աչքի նման աչքերի համար Հայաստանում գույներն ապրում են մի տեսակ ավելի հյուսիսային, ավելի իրիկնային կյանք։

Առաջին նկարիչը, որի մասին այժմ մտածում է ժողովրդի մեծ մասը, երբ խոսք է բացվում հայ նկարչության և ազգային գույների մասին, Մարտիրոս Սարյանն է։ Վախճանվել է սրանից մի տասը տարի առաջ մեծ տարիքում, ինչպես սովորաբար խոշոր նկարիչները։ Նրա գործը շատ մեծ պիտի լինի։ Չգիտեմ, ճե՞ քանի՞ տարի է լավում նրա անունը և պատկերասրահներում, ցուցահանդեսներում ու տարբեր հրատարակություններում տեսնում ենք նրա կտավները՝ բնանկարներ ու դիմանկարներ։ Նրա գործերը ճանաչում ես դեռ հեռվից. դժվար է դրանք շփոթել մեկ ուրիշի գործերի հետ։ Ինչպես որ փոքր-ինչ ընտելանալուց հետո, եթե լավ գիտենք երաժիշտին և նրա երաժշտությունը կրում ենք մեր մեջ, կարողանում ենք տարբերել ազգային մեղեդին կամ երաժշտական որևէ կտոր։ Սարյանը երգիչ է քնարական և փիլիսոփայականացած։ Նա պատկանում է հայրենիքին և միաժամանակ եվրոպացի նկարիչների երջանիկ սերնդին, որոնք ծնվեցին 1880 թվականի մոտերքը և սնվեցին գվարթ ու պայծառ գույների տեսիլքներով։ Նրանք այդ ժամանակ տեսիլքները բռնեցին, շոշափեցին իրենց ձեռքերով, հրճվեցին դրանցով, համոզվեցին, որ դրանց հմայքները իրական են և մատչելի։ Դրական և հուսաբեր իմաստները, որ պարփակում են իրենց մեջ գվարթ պահերը, ջերմացրին նրանց հոգեկան և դպացական արգասավորությունը։ Այս ամենով նրանք իմաստվեցին որպես բնավորություններ և փիլիսոփայություններ։

Սարյանի ստեղծագործությունը ամբողջ մի դարաշրջանի այդ տրամադրությունների գեղեցիկ հանդիպումն է իր հայրենիքի մեղմ, բայց և միաժամանակ հնչեղ գույների հետ։ Շատ հաճախ, եթե մարդ չի ճանաչում Հայաստանը, կարող է այս նկարչին պարզապես դնել եվրոպական խոշոր հոսանքներից մեկի շրջանակների մեջ և նրան տալ այս կամ այն գնահատականը։ Բացահայտ է, որ նա աշակերտել է դարասկզբի եվրոպական ու ռուսական դպրոցին։ Այնտեղից վերցրել է հանդիսավորության տարրը, վառ և մաքուր մակերեսները, առանց կիսատոների։ Դրանցով նա աշխատեց, պահպանելով զվարթ, կարող ես ասել՝ մոգական մի երանգ, բայց և չես կարող ասել, որ գործ ունես մի իրապաշտ արվեստագետի հետ, որը նկարում է ինչ որ տեսնում է և պատկերում է կատարյալ։ Նրա ընկալման վրա ներգործում են բազմաթիվ մանրամասներ, առանց սակայն որևէ տեղ երևալու։ Այդ մանրամասները ինչ-որ տեղ գոյություն ունեն և իրերը դարձնում են ճանաչելի։ Բայց և ակնհայտ է, որ արվեստագետը չի նպատակադրվել հասնելու արտաքին նմանությունների։ Իրերն ընկալվում են իրենց ինչ-որ շարժման մեջ, կերպարները քայլում են, նրա կտավները ներուժ են, բայց բոլորովին ոչ ճշան։ Սակայն նա հափշտակող է։ Նրա կերպարները, պահպանելով գլխավոր հատկանիշները, ներկայացվում են իրենց փոփոխման, փոխակերպման պահերից մեկում։

Երևանում նրա ապրած տունը այժմ թանգարան է։ Այնտեղ մարդ նորից ծանոթանում է ականավոր նկարչի ստեղծագործությանը։ Տեսնում է շատ հին գործերի մի շարք, որոնք, ինչպես ճիշտ ընտրել են, հնարավորություն են տալիս հետևելու նրա քայլերին մեր դարի առաջին տարիներից սկսած մինչև 1972 թվականը, երբ նա վախճանվել է այստեղ, շարունակելով ապրել։ Այն, ինչի մասին մեկ անգամ ևս հավատիանում է մարդ այստեղ, դա Սարյանի փիլիսոփայությունն է, նրա ուշադիր նայվածքը մարդկանց, իրերի, բնության վրա, փիլիսոփայությունը հայի, արևելքցի նկարչի, որի համար Արևելքն իր վառ գույներով, իր ուղտերով, իր ֆարաջաներով, իր մինարեթներով ու բուրգերով տարաշխարհիկ հայտնագործությունների վայր չէր, այլ ամենօրյա կյանք էր, ինչպես ամենուր, լուսավոր մի դադար անէության և մահվան միջև, և այս մտածումները, այս տրամադրությունները բոլորովին մեկ ուրիշ համ են

աղորդում զարդարվեստային շեշտված տարրերին, անգամ բա վազ գործերի տարաշխարհիկ նկարագրին։ Մահը եղել է նեզանից առաջ, կլինի նաև մեզանից հետո։ Բայց այն մեր ներսում չէ։ Մեր ներսում կյանքն է։ Նայեցեք կյանքին և հիացեք դրանով, ապրեցեք։ Թվում է, թե փիլիսոփայությունն այսպիսին է։ Ինչ վերաբերում է տեխնիկայի փիլիսոփայությանը, այն շատ է հարակից կյանքի այս փիլիսոփայությանը։ Տեսնում ենք, թե սկզբիցեւեթ ինչքան ակնառու է այն դերը, որ խաղում է լույսը նրա գունահամադրումների, նրա՝ արևով ու լույսով ողողված գույների մեջ։ Այստեղ մարդ ավելի լավ է տեսնում դպրոցը, վարժանքը լույսի վրա։ Տարվա և օրվա բոլոր արևները դարձել են ուշադիր ուսումնասիրության, ինչ-որ մշտական վարժանքի առարկա։ Սարյանը ուներ արևներ և գույներ չհորինելու առանձնաշնորհում։ Այդ բոլորը նա հանում էր իր ներսից, նա դրանցով էր սնվել, հասակ առել։ Այս աղբյուրային բնույթը դրոշմում է նրա ստեղծագործությունը, դարձնում այդքան հմայիչ։ Նրա կտավներում չկան դրվագներ, պատումներ։ Ամեն ինչ ասվում է լույսով, գույնով, ձևերով, գեղանկարչության այդ ամենազոր միջոցներով։ Բնապատկերներ, ծաղիկներ, ծառեր, տներ, մարդկանց և կենդանիների ուրվագծեր ու մեծ թվով դիմանկարներ։ Փիլիսոփայական դիմանկարի մեծ վարպետ է։ Համարյա միշտ իր նկարած դեմքերը մի տեսակ կառչած են ավելի բարձր, փիլիսոփայական մտքի, անկախ տվյալ որոշակի մարդու դիմագծերից։ Սակայն միտք, որը մեծապես առնչվում է նրա մարդկային բնույթին և վիճակին։ Այդ նպատակի համար նա օգտագործում է զանազան ձևեր, բնությունից կամ պատմությունից վերցրած առարկաներ ու դրանք պատկերում է դեմքին մոտիկ ինչ-որ տեղ, ավելի բարձր կամ ետևում։ Դա սովորաբար մի սար է, մի դաշտ, մի դիմակ՝ որպես հավերժության խորհրդանիշ, մի հականիշ անհատի ժամանակավորության և անմահության հիշեցում։ Սարյանը դիմակը օգտագործել է նաև իր ինքնադիմանկարներում, ինչպես նաև բանաստեղծ Չարենցի հրաշալի մի դիմանկարում, սովետական գեղանկարչության լավագույն դիմանկարներից մեկում։ Դիմակ է նաև կանացի շատ գեղեցիկ դեմքերից մեկը, որ կարելի է տեսնել Սարյանի «Պարսկուհին» կտավում, նկարած 1910 թվականին։

Բայց տեխնիկական ու գեղարվեստական արժանիքներից

դենը Սարյանի կտավներում կա մեկ ուրիշ հմայք ևս. փչում է հայրենասիրական մի հով հենց այդ քնքուշ բանաստեղծական գույների և պարզ, գեղեցիկ աշխարհի վրա կայծակնային նայվածքների նման, ընկալումների միջից։ Սարյանն, այսինքն, առանց այդ մասին որևէ տեղ ասելու, առաջին իսկ պահից, երբ որոշեց իր գործերը ներկայացնել, մտքում ասում էր. «Աշխարհում կա մի երկիր ևս, Հայաստանը, բոլորից մոռացված։ Գեղեցիկ երկիր է, նրան էլ տեսնեք ու հիացեք, նրան էլ մոցրեք ձեր աշխարհի մեջ, ձեր տեսիլքի մեջ և ձեր երաժշտության մեջ...»։ Իր գործերը նա անց է կացրել հայրենասիրական իր այդ ձգտման միջով. և անգամ այն ժամանակ, երբ նույնիսկ մի բիզ հայկական ազատ հող չկար, Սարյան արվեստագետն ստեղծում էր ազատ հայրենիքը իր բազմաթիվ կտավներում։ Այս խոր և անպատմելի խորհուրդը մասնակից է նրա գործին այն անկրկնելի եղանակով, որը արվեստին հաղորդում է մեկ ուրիշ չափում, կապում է ավելի լայն ձգտումների և ջանքերի հետ և մոտեցնում ազգային սխրանքի հասկացությանը։

Երբ Սարյանն սկսում էր իր գործերով պարտադրել իրեն, հայ գեղանկարչությունն արդեն պատմություն ուներ։ Մաղկել էր ավանդական գեղանկարչությունը, իր մեծաթիվ ու լավ արվեստագետներով, որոնք գլխավորապես աշխատում էին Թիֆլիսում։ Նրանց գործերը այժմ կենտրոնացված են Երևանի Ազգային պատկերասրահում։ Սարյանի փոքր-ինչ կրտսեր ժամանակակիցն էր նկարիչների մեկ ուրիշ համաստեղություն. Երվանդ Քոչարը, որի մասին խոսել ենք սկզբում, արտակարգ ժանրային նկարիչ Հովսեփ Կարալյանը, մարդկային դեմքի հիանալի բանաստեղծ Գրիգորյանը, որն իր անվանը ավելացրել էր Ջոտոյի անունը, ինչպես նաև Բաժբեյուկ-Մելիքյանը, իրապաշտ և տարաշխարհիկ նկարչության ուժեղ և ինքնատիպ մի համադրում։ Սրանց պետք է ավելացնենք նաև մի քանի հայ նկարիչների, որոնք ապրել են Հայաստանից դուրս, ինչպես փորագրիչ Էդգար Շահինը և քանդակագործ Գյուրջյանը (Փարիզ), երկուսն էլ մեծ, և լրջորեն ներկայացված են Երևանի պատկերասրահում։

Ես չեմ անում հայ գեղանկարչության պատմությունը։ Գուցեև եղել են հազարումեկ ուրիշ պայծառ անուններ ևս,

որոնց չդիտեմ։ Ես առանձնացնում եմ այն, ինչ հատկապես տպավորություն գործեց ինձ վրա Երևանի պատկերասրահում, և փորձում եմ շարադրել իմ տպավորությունները։

Այս Պատկերասրահը պետք է որ երկրի պարծանքը կազմի։ Գեղեցիկ, շատ խոշոր շենք Երևանի կենտրոնում։ Անհավատալի մի հավաքածու, կտավներ ու քանդակներ, բայց գլխավորապես գեղանկարչություն։ Ինչքան էլ մարդ նախապատրաստված լինի, իր անցած ամեն մի սրահում անակնկալի է հանդիպում։ Հայկական հին դիմանկարներ, գործ նկարիչների մի գերազանցիկ՝ Հովնաթանյանների (17-րդ մինչև 19-րդ դարը)։ Չեմ հիշում, մե՞կ, թե՞ երկու սրահ են զբաղեցնում այդ հին վարպետների գործերը։ Հիշողությանս մեջ պահում եմ պատին շարված նոճիների անվերջանալի շարքը՝ թիկնեղ հայորդիներ և նրբագեղ հայուհիներ իրենց հին ազգային զույներով ու տարազներով։ Կան օտար հայտնի նկարիչների գործեր՝ Ռուբենս, Վան Դեյկ, Դելակրուա, Կուրբե և 18-րդ դարի ռուսական հիանալի դիմանկարների մի ամբողջ շարք։ Դուցե այստեղ են դասվում ռուսական լավագույն դիմանկարներից մի քանիսը, ինչպիսիք՝ Արգունովի Պետրոս Մեծը, Եկատերինա կայսրուհու մի ուժեղ դիմանկարը և մեկ ուրիշը՝ Ալեքսանդր Ա-ն պատանի հասակում։ Ռուսական գեղանկարչությունը ներկայացված է լավ վարպետներով։ Մեծ թվով գործեր առավել հներից մինչև վերջին տարիների նկարիչները։ Հատկապես 20-րդ դարի առաջին տասնամյակների նկարիչներից, ինձ թվում է, ոչ մեկը չի բացակայում։ Նրանցից ոմանք, ինչպիսին Ֆալկը, առանձին են ներկայացված։

Այսուհանդերձ, բոլորից առավել հետաքրքիրը հայ նկարիչների կտավներն են, որոնք միայն այստեղ կարող ես տեսնել։

Ահա մի քանի անուններ (բաց ենք թողնում Այվազովսկուն, որն իր օվկիանոսներով ու ծովերով զբաղեցնում է մի հսկայական սրահ). Սուրենյանցի պատմական թեմաներով նկարները, Բաշինջաղյանի և Թադևոսյանի բնանկարները, Աղաջանյանի դիմանկարները և, այստեղ նույնպես պիտի գրեմ, Գյուրջյանի բացառիկ քանդակներն ու Շահինի եվերային փորագրությունները... Այս հզոր վարպետները շրջանակված են այնտեղ իրենց ուրիշ հայրենակիցներով ու կազմում են գեղարվեստական նշանակալից մի շարունակություն։

Այսքան հին և դրամատիկ պատմություն, ինչքան Հայաս-

տանինն է, չէր կարող հայ նկարիչներին չներշնչել, անելով նրանց բազմաթիվ պատմական դրվագներով ու գրգիռներով։ Վարդգես Սուրենյանցը ներկայացնում է այս ժանրը, երբեմն շատ խոշոր կտավներով։ Բայց այստեղ ևս տեսնում ես, որ մեծ գործը լավ ու հոյակերտ դարձնում են ոչ թե չափերը, այլ անհրաժեշտ է ուժեղ ընկալում, հստակ գաղափար և պարզ լեզու, որոնք թույլատրում են արագ հայեցողական դիտում և հասկանալիություն։ Այս առավելություններով հոյակերտ գործ կարող է լինել նաև մի մանրանկար։ «Ոտնահարված սրբություններ» կտավը մեծ ծավալի գործ է։ Քանդակվում է քո հիշողության մեջ իր գեղեցիկ խնայողությամբ այսքան խոշոր մի տարածքում։ Տաճարի սրբապղծված ներսը. հայոց պատմության անհամար դրվագներից մեկը։ Ոչ մի տեղ սարսափ, վայրենություններ, կարված գլուխներ չկան, ոչ իսկ արյան հետք։ Տաճարը դատարկ է, դռները բաց, ասես հենց այդ պահին են այնտեղից դուրս եկել մոնղոլները, արաբները, պարսիկները կամ թուրքերը, հատակին նրանց թողած հետքերը և պատին՝ այստեղ կատարվածի միակ վկան, պատին նկարած սուրբը շանթահար այն ամենից, ինչ քիչ առաջ տեսան նրա խոշոր աչքերը... Դիմացի պատին այդ նույն նկարչի մեկ ուրիշ կտավը՝ «Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը»։ Ազգի հայրապետը, տարեց մի մարդ, նստած իր գահին։ Գորգի վրա, ոտների առաջ, նետված մի գրություն։ Թվականը՝ 1906։ Համարյա նույնը, ինչ և նախորդ կտավում։ Գրությունը եկել է ռուսական ցարից այնպիսի մի ժամանակ, երբ ցարական քաղաքականությունը սպառնում էր՝ «Հայաստանն առանց հայերի»։ Եվ ահա ցարական այս հրամանագիրը հայրապետին նմանատիպ մի բոթ է գուժում։ Ներսունին կարդացել է այդ վերջնագիրը։ Եվ մերժել է։ Դեն է շպրտել և սպասում է, որ գան։ Նրա արտահայտությունը խորունկ վիշտ է կրում։ Բայց և միաժամանակ դեմքին դրոշմված է հպարտություն և անսասան կամք։ Կարծես թե նա ասում է՝ «Եկ և տար», ինչպես իրենից առաջ շատերն էին այդ բառերն արտասանել անխռով ու վստահ, թե փոթորիկ է և կանցնի։ Բայց նրա դեմքին կարդացվում է նաև խորունկ մի վիշտ...

Պատկերասրահում տիրապետում են ավանդական արվեստի ոգին, հույզը, ուրախությունը, հիացմունքը, որը հետևում է պատմությունից, բնությունից, մարդկային հոգեբանությունից

քացահայտած քո հայտնագործումներին, և այն վերաբերմունքը, որ ղգում ես, երբ քեզ այստեղ ինչ-որ բան են պատմում։ Եզրակացնում ես, որ հին ժամանակի հայ նկարիչները մշակել են այս ասպարեզը և թողել գերազանց գործեր։

Բայց պատմությունը շարունակվում է...

Պատկերասրահից Երևանի ժամանակակից արվեստի թանգարանը գնալու համար պետք է դարձյալ անցնենք Սարյանի մոտով։ Նա բաց արեց ճանապարհը, և մենք, մտնելով թանգարան, իսկույն ղգում ենք, որ դարձյալ մտել ենք նրա աշխարհը։ Պատկերասրահ կատարած այցելությունից հետո արդեն ի վիճակի ես լինում արժեքավորելու հայ գեղանկարչության զարգացման գործին այս արվեստագետի բերած նպաստը։ Բայց պետք է հավատանք, որ նրա արևը արդեն անցած մի փուլ է, մի բան, որը նախորդել է։

Ուզում եմ այս թանգարանի մասին մի քանի հետաքրքիր տեղեկություններ հաղորդել. այն իրենց՝ արվեստագետների գործն է։ Կառուցելու համար նրանք չեն ֆինանսավորվել պետությունից, այլ թանգարանը հիմնել են իրենք։ Պետությունը, երևի, իրենց տրամադրեց վայրը, քանի որ այստեղ տներն առք ու վաճառքի ենթակա չեն։ Բավական խոշոր շենքի գետնահարկ է։ Այստեղ ցուցադրված կտավներն ու քանդակները թանգարանին արված կամավոր նվիրատվություններ են։ Երևի արդեն բավական տարիներ է, ինչ գործում է. տարածությունն արդեն չի բավականացնում։ Ճիշտ կողքին նոր հատվածներ են կառուցում։ Նախատեսվում է ստեղծել մի համալիր, որտեղ պետք է տեղավորվի թանգարանը։ Այս բոլորի մասին խոսելիս, հաճախ լսում ենք թանգարանի այժմյան տնօրենի անունը (Իգիթյան)։ Այս ամենը կատարվել է նրա նախաձեռնությամբ ու հոգսերով։ Նրա գործն է նաև մանկական նկարների մշտական ցուցահանդեսը, ամբողջ աշխարհից հավաքված մանկական նկարների մի թանգարան. այստեղ կա նաև հունական բաժին և, շատ ավելի հետաքրքիր՝ կիպրական բաժին։ Թանգարանը, մանկականը, գտնվում է մեկ ուրիշ բարձրահարկ շենքի գետնահարկում և նկուղում, և արագ վարդով առաջանում է, նվաճելու համար ամբողջ մի թաղամասի գետնահարկերը։ Ամենանշանակալից բաներից մեկը, որ կարելի է այսօր տեսնել Երևանում։ Նկարներ, ձեռագործներ, գործվածքներ և շատ ուրիշ յուրօրինակ գործեր, շինվածքներ այն ամենից, ինչ կարող է երեխայել մարդկային, առավել ևս մանկական միտքը։ Շատ բան է մարդ այստեղ նկատում և սովորում, անցնելով հազարավոր ապրագրերի, նկարների, ձեռագործների և այդ շատ գեղեցիկ թանգարանի մյուս ցուցադրանքների առաջով...

Ինձ մոտ նշել եմ մի քանի անուններ, որոնք առավել տպավորություն են գործել ժամանակակից արվեստի թանգարան կատարած իմ երկու այցելությունների ժամանակ։ Այստեղ կան ավելի հին սերնդին պատկանող նկարիչների գործեր։ Երվանդ Քոչարը հատկացրել է իր մի խոշոր կտավը՝ «Պատերազմի արհավիրքները», հայկական մի Գեռնիկա. խոշտանգված մարմիններ, գլուխներ, ձիերի աչքեր, ոսկորներ, գժվար մի կոմպոզիցիա։ Այս ու այնտեղ նրա մասերը դուրս են գալիս շատ քնքուշ գույների ամբողջության միջից։ Հեռվից թողնում է քնարական մի մեծ կտավի տպավորություն, բայց քանի մոտենում ես, գալիս ու կանգ ես առնում ահռելի մի իրականության առաջ, ինչպիսին է պատերազմի իրականությունը, որը հազար կտոր է անում կյանքի երաժշտական կախարդանքը։ Այստեղ կան Կարալյանի վրձնին պատկանող մի քանի փոքր, բայց շատ շնորհալի նկարներ, հին Թիֆլիսի և Հայաստանի կենցաղային պատկերներ, սովորաբար թաղամասերի բացօթյա կյանքից, ժողովրդական շուկայից, նկարներ, որոնք պատկերում են ընտանիքը՝ հիշարժան մի պահի, երբ ամբողջ ընտանիքը հավաքվում է և մեկը մյուսի կողքին կանգնում են լուսանկարվելու։ Սովորականի պես պատկերվողները լիազեմ դարձել են դեպի դիտողը և ինչ-որ բան են ասում, որպեսզի մեզ ցույց տան և մենք նկատենք, ինչ-որ բան, որը ուզում են թողնել որպես հուզիչ հիշատակ։

Մյուս նկարիչները երիտասարդ են։ Բոլորն էլ ինչ-որ առնչություն ունեն Սարյանի նկարչական արվեստի հետ. շարունակում են այն, դրանից առաջ անցնում, գուցեև գիտակցաբար մերժում այն։ Մինաս Ավետիսյանի մասին խոսել եմ։ Այստեղ տեսնում ենք նրա շատ կտավներ։ Երևում է, ինչ-որ ձևով նա Սարյանի ժառանգորդն է։ Գայանե Խաչատրյանը աշխատում է շատ խիտ գույներով, դեղին, մուգ կապույտ, կարմիր, և դրանք հակակշռելով սպիտակի հետ, հասնում է պլաստիկ

տպավորիչ արդյունքների։ Ինձ մոտ նշել եմ Հովհաննես Միհնաստյանի մի գեղեցիկ բյուզանդական դեմքը։ Հակոբ Անանիկյանը Լենինականից է, նախկին Ալեքսանդրապոլից։ Այդ քաղաքը հռչակված է իր սրախոսություններով և զվարճալի պատմություններով. Անանիկյանի նկարները, որը թվում է, թե ինքնածին արվեստագետ է, այստեղ են փոխադրում այդ արթուն ոգին։ Մեկ ուրիշ նման երևույթ է Խարազյանը։ Սա ևս իր թեմաները քաղում է հին հայկական սրամիտ և իմաստուն հեքիաթներից։ Բավական հնարամիտ է, նրա պատկերումները հիշեցնում են Հերոնիմոս Բոսին և Բրեյգելին։ Էլիբեկյան եղբայրները, Արտաշես Հունանյանը, Վալենտին Պոդպոմոգովը, Աշոտ Հովհաննիսյանը նշանակալից տաղանդներ են։ Այստեղ ցուցադրված նկարներում մենք նրանց տեսնում ենք ձևաբանական համարձակ որոնումների վրա հակված, ամեն մեկն իր ճանապարհով։ Բայց կա ընդհանուր մի ձգտում. աշխատանքի այսօրվա փորձը անհատապես ներդաշնակել հին, իրենց ազգային գույների և ավանդների հետ։ Սա էլ, երևի, բնութագրում է նրանց փիլիսոփայությունը. բոլորն էլ շեշտված ձևով փիլիսոփայականացած են։ Իրենց գործերում նրանք ներդնում են առավել խոր գաղափարներ, որոնք մեկ ուրիշ արդարացում են հաղորդում կերպավորման համար օգտագործած նրանց գեղազարդական վառ տարրերին և գույներին։ Նրանցից շատերը, թեև շրջունակում են առաջին պլանի գեղանկարչությունը, հրաժարվել են գունային խոշոր կտորներից։ Գույներ-տեսաբաններ փոխարեն նրանք օգտագործում են գույներ-մոթեր, եթե կարելի է այդպես ասել, մի բան, որ համապատասխանում է նրանց ստեղծագործության բնույթին։ Որովհետև երիտասարդ նկարիչները չեն բավականանում կյանքի ընկալումները ներկայացնել ձևերով ու գույներով և չեն ուզում այդ ընկալումը պայմանավորել որոշակի ինչ-որ իրի հետ, որը աշխատել են մի կերպ պահել իրենց նկարներում։ Նրանք ավելի խոր են թափանցում, անմիջական տպավորությունից և այդ տպավորության աղբյուրից գնում են դեպի խոսքի ինտելեկտուալ ընկալումը։ Ուզում են ցույց տալ դրա առավել խոր բնույթը, մտորել այդ մասին կամ շարադրել իրենց տպավորությունները այդ ծանոթացումից։ Հետևաբար, նրանք գտնվում են այսօրվա առավել ընդհանուր ընկալման ոգու մեջ, առավել ազատագրված են իրական տվյալներից, առավել դժվար են և

առավել անհատական։ Բայց այստեղ դարձյալ պիտի ասեմ, որ իրենց երկրի ձգողական ուժը, ազգային ավանդությունը, թե՛ պատմական, թե՛ գեղանկարչական, վճռական է նրանց պրոբլեմատիկայի, ինչպես նաև ստեղծագործության մեջ։

Այսպիսով, Սարյանի պայծառ և ամբողջական արևը այժմ հաղթահարված է կամ շրջանցված։ Այն գոյություն ունի երկնակամարում, բայց նրա ներքո կատարվում են ուրիշ պրպտումներ, կանգնեցվում են ուրիշ մարմարներ։ Մի շարք նկարներում հակակշիռը ակնհայտ է։ Այս տեսակետից ամենաբնորոշ պարագան Հակոբ Հակոբյանինն է։ Այստեղ նրա նկարները բռնում են սրահի մի ամբողջ կողմը։ Մեկ ուրիշ գունային աշխարհ և փիլիսոփայություն։ Հակոբյանը թե՛ իր բնանկարներում և թե՛ իր մոդեռն պատկերավորումների մեջ, որտեղ մարդուն փոխարինում է նրա գլխարկը, անգլուխ կոստյումը, ձեռնոցը, նրա ձեռնափայտը և այլն. դաշտի ոսկուն ու կանաչին փոխարինել է լուսնի և անապատի գորշն ու սրճագույնը, ձեռք է մեկնում շատ անհանգիստ, դրամատիկ ու ողբերգական կացությունների։ Այստեղ մեր տեսած բոլոր կտավները պատկերում են մարդու, բնության պահերը ինչ-որ սահմանագծում, երբ նրանք գնում են դեպի գարուն կամ դեպի ձմեռ, ինչ-որ բան են ակնկալում և կամ արդեն հրաժեշտ են տալիս դրան։ Այս արվեստագետն ունի իր դինամիկան, իր հավատամքը։ Մտածում ես մարդու ճակատագրի մասին, որը մինչև այստեղ հասել է իր գտածների և պատրաստածների օգնությամբ (նրա նկարներում տեսնում ենք մեծ թվով աքցաններ և ուրիշ գործիքներ), որոնք էլ ահա գալիս են նրան թաղելու այս դարշ հողում, որի վրա մարդն արդեն կանգնած է անկապ ու դատարկ։ Իր խոշոր մի կտավում, որն անվանել է «Ժամանակակից հասարակություն»,[1] նկարել է առանց մարմնի մարդկանց մի ամբոխ։ Միայն նրանց կոստյումները, մեկը մյուսից սրակաս ճմռթված, իրար կողքի, իրար հետ, իրար առաջ, իրար վրա, նրանց վզնոցները, փողկապները, գլխարկները։ Սա էլ

1 Նկարիչն իր նկարը անվանել է «նեյտրոնային ռումբին՝ ոչ»։ Այս երկրորդ՝ «ժամանակակից հասարակություն» անվանումը հեղինակի վերագրումն է (Ծ. Բ.)։

նրա Գեոնիկան է։ Այն աշխարհը, որը կառաջանա, ասենք, նեյտրոնային ռումբով կատարված ժամանակակից մարդասպանությունից հետո։ «Նեյտրոնային ռումբին՝ ոչ», այս է նրա նույն կտավի մեկ ուրիշ վերնագիրը։ Կամ էլ աշխարհը, որն արդեն ստեղծվել է, կա և որն ապրում է իր կյանքով, այն կյանքով, որ ապրում ենք մենք։ Առանց այդ ռումբի էլ...

Ճիշտ է, որ Հակոբյանի օգտագործած գույները նույնպես չեն պակասում իր երկրից։ Նվ շատ հավանական է, որ նա իր հայրենիքի նկարագիրը վերցնում է նրա այն պահերին, երբ դրանք ձգտում են ծնել կյանք և պատմություն։ Եթե, իհարկե, նպատակ չունի ինչ-որ բոլորովին տարբեր բան հայտնելու։

Այս ցուցահանդեսում կան նաև մի քանի քանդակներ։ Ինձ վրա առավել տպավորություն է թողել Սարոյանի կիսանդրին, գործ Արա Շիրազի։ Գեղեցիկ աշխատանք, այդ գլխի հպարտ կեցվածքը հիշեցնում է հզոր Բալզակին, և քանի որ ճանաչում և սիրում ենք Սարոյանին, որպես մեր ժամանակի ամենալավ (ամենաքնքուշ, ամենաքնարական և արթուն) արձակագիրներից մեկի, ընդունում ենք նրա այդ կեցվածքը և հասկանում ենք նրա հայրենակից վարպետին։ Առավել ևս, որ Սարոյանը վերջին տարիներին հաճախակի այցելել էր հայրենիք, ապրել էր վերածնված օջախի և հայրենիքի այս հրճվանքը, և, անկասկած, քանդակագործը այս զգացումը ևս ներդրել է իր գործառնց ստեղծագործության մեջ։

ՋՈՒԳԱԿՅՈՒՔ

Մի ժամանակ Հայաստանը մեր կողքին էր։ Այժմ տարածությունները, դեպի այն կողմ, մեծացել են, և շատ բաներ այդ երկրի մասին մենք արդեն չգիտենք։ Համենայն դեպս, հայերի հանդեպ պահպանում ենք ինչ-որ հուշեր և ինչ-որ համակրանք, և մեր համակրանքի պատճառներից մեկն էլ այն է, որ պատմության մեջ շատ անգամ պատահել է, որ նրանց հետ միասին մենք տառապել ենք։ Ինչպես արդեն ասել ենք, շատ հարցերում Հայաստանի հետ զուգահեռ ընթացք ենք ունեցել։

Երևանի պատկերասրահում կա Այվազովսկու մի կտավը։ Այս նկարիչը հայ է։ Բայց եթե կա մեկը, որը հավակնություն պետք է ունենա Այվազովսկու նկատմամբ, դա ծովն է, որը նա շատ է սիրել և նկարել է այնքան շատ և այնքան լավ, ինչքան քչերը։ Սակայն ծովը Հայաստանի բնությունից դուրս է, նրա առօրյայից դուրս։ Ինքը նկարիչը նույնպես ծնվեց և ապրեց իր հին հայրենիքից հեռու։ Շատ հին ժամանակներում նրա նախնիները, որպեսզի փրկվեն ով իմանա ինչ ագետներից և վտանգներից, լքեցին իրենց երկիրը և բարբարոսական ավելի հյուսիս, հաստատվեցին Լեհաստանում։ Այնտեղ Հայվազյանը կամ Այվազյանը դարձավ Գայվազովսկի և այդ անունը մնաց ընտանիքի վրա մինչև նկարիչը։ Գալիցիայից, որտեղ ապրում էին Այվազովսկիները, նրա հայրը իջնում է Մոլդավիա և այնտեղից՝ Ղրիմ, Թեոդոսիա (Կաֆա)։ Այստեղ էլ ծնվել է նկարիչը։

Քաղաքում հույներ շատ կային, և Այվազովսկին, երբ աչքերը բաց արեց շրջապատող աշխարհին նայելու, այն, ինչ նրա վրա առանձին ապավորություն գործեց և նկարիչը հիշում էր իր ամբողջ կյանքում, հույն հայդուկներ Կոլոկոտրոնիսի, Բուբուլինայի, Կանարիսի և մյուսների նկարներն էին, որ Կաֆայի տղաները նկարում էին տների պատերին։ Հետագայում ինքը ևս հունական ապստամբությունից շատ դրվագներ պետք է նկարի և մինչև իր կյանքի վերջը ջերմորեն պաշտպանի հույներին։

Երբ դեռևս երևխա էին, հայրը նրա մեծ եղբորը՝ Գարիկին (Գաբրիելին), մի հայ վաճառականի հանձնեց, որպեսզի նրան տանի Վենետիկի ս. Ղազար (Սան Լազարո դելլի Արմենի) կղզու հայկական վարժարանում սովորելու։ Այսինքն՝ Գարիկը դարձավ կաթոլիկ վանական, մոլեռանդ բենեդիկտին, և այլևս տուն չվերադարձավ։ Տարիներ հետո, երբ նկարիչը, ռուսական ակադեմիայից գործուղված, գնաց Իտալիա վերապատրաստման, իր եղբորը հանդիպեց հայկական վանքում, նրան գտավ վանախցում, գրքերի ու հին ձեռագրերի հետ մեկ մարմին դարձած։ Գաբրիելը նրան քիչ բաներ հարցրեց Թեոդոսիայի մասին։ Նրա միտքը զբաղված էր դավանաբանական հարցերով և կրոնի պատմությամբ։ Վարժարանի հայերը մեծ հույսեր էին կապում երիտասարդ վանականի հետ։ Եվ նրանք չսխալվեցին։ Գաբրիել Այվազյանը դարձավ հայագի աստվածաբան և գլխավոր դերակատարը հին լեզվի պաշտպանության գործում. իր կարևորությամբ նա առաջին պաշտպանն էր գրա-

բարի։ Նա էր 19-րդ դարում մղված լեզվական պայքարի ժամանակ Միքայել Նալբանդյանի, որի մասին խոսել ենք նախորդ գլուխներից մեկում, գլխավոր հակառակորդը։ Իմիջիայլոց նրան զբաղեցրել էր նաև իրենց ընտանեկան պատմությունը։ Հին գրքերի և առավել հին ձեռագրերի միջոցով փորձեց հասնել մինչև սկզբնական արմատները։ Այդ ամենը նա պատմեց եղբորը, երբ նրանք հանդիպեցին վանքում, գուցե նաև փորձեց նրան համոզել վերադառնալու իրենց նախկին՝ Այվազյան մականվան։ Համենայն դեպս, այդ ժամանակվանից նկարիչը իր անունից հանեց անբարեհունչ «Գ» սկզբնատառը և այնուհետև արդեն իր գործերը ստորագրում էր որպես Այվազովսկի։ Պետք է ավելացնեմ, որ հենց Իտալիայում գտնված օրերին էլ նրա համբավը որպես հիանալի ծովանկարչի արագ բարձրանում էր։ Նա ներկայացրեց տեղում նկարած իր մի քանի կտավները (ապշեցուցիչ արագությամբ էր նկարում), որոնք մեծ տպավորություն գործեցին։ Նրա նկարներից գնեց նույնիսկ Հռոմի Պապը։ Մենք Տաոներից ունենք շատ ջերմ նամակներ, գրված Այվազովսկու գործերի, նրա ծովանկարների մասին։

Ուրեմն տարօրինակ չէ, որ այնտեղ, վանքում, նրան մի մեծ պատիվ արեցին. քնելու համար անկողինը փռեցին այն նույն խցում, որտեղ վանականները երկու տասնամյակ առաջ հյուրընկալել էին Բայրոնին։ Իրոք, ի՞նչ պատիվ Այվազովսկու համար, որը դեռ այնքան երիտասարդ էր և մի քանի տարի առաջ մոտիկից ծանոթացել էր նաև հենց Պուշկինի հետ։

Երբ Բայրոնը գտնվում էր Իտալիայում, շատ էր համակրել հայերին։ Նա մեծ հետաքրքրություն դրսևորեց նրանց պատմության նկատմամբ։ Այստեղ, այս խցում, գալիս էր տեսնելու հայկական հին ձեռագրերն ու գրքերը և վանականների օգնությամբ սովորում էր հայերեն, մեկը տասնհինգ լեզուներից, որ, իր ասելով, տիրապետում էր։ Նա փորձեց նույնիսկ կազմել անգլո-հայերեն բառարան։ Ապահովաբար, այստեղ հայ հայրենասերների հետ զրուցել էին նաև իրենց սարկացված հայրենիքի մասին, քաղաքակիրթ քրիստոնյա աշխարհի սահմանները հարևան Հունաստանից տեղափոխելով այնտեղ, հետու, մինչև Կովկաս և Արարատ։ Հետաքրքիր և անծանոթ այդ երկիրը, շատ հավանական է, Բայրոնի այդ ժամանակվա որոնումներին տալիս էր զգայական ուրիշ լիցքեր։

Հայերի հետ Բայրոնի ունեցած հարաբերությունների մասին ավելին մենք չգիտենք։

Միայն Այվազովսկու այս նկարը, որն այժմ գտնվում է Երևանի պատկերասրահում. «Բայրոնի այցելությունը Վենետիկի ս. Ղազար կղզին»։

Ուշադրության արժանի գործ է։

«Մեծերի ամբողջ խորհուրդը
Նավամատույցին հավաքված...»

Նկարը բաժանվում է երկու մասի։ Մի մասում ամբողջ Հայաստանը։ Զգացվում է, որ այս մարդիկ դուրս են եկել հազվադեպ մի ընդունելության համար։ Այսպես է մի ժողովուրդ դուրս գալիս աղերսանքի։ Բոլորը հագել են իրենց տոնական զգեստը։ Մեծ մի շքախումբ հոգևորականներից և աշխարհիկ մարդկանցից, որոնք ներկայացնում են բոլոր կարգի զբաղմունքները։ Բայց առավելապես ծերունիներ են ու հոգևորականներ։ Սրանք են կանգնած առջևում և տոն են տալիս։

Նկարի մյուս մասը գրեթե դատարկ է. ծովը, խորքում Վենետիկը (եթե լավ եմ հիշում), փոքրիկ նավամատույցին կպած մի մակույկ և նիհար ու երկարուկ մի կերպարանք, որը մակույկից դուրս է գալիս ցամաք։

Ավելի ուշադիր նայում ենք այդ կերպարանքին։

Սեթ ներքևում չգրեր, որ սա Բայրոնն է, երբեք դա մեր մտքով չէր անցնի։ Չէինք կարողանա կռահել, թե ի՞նչ է ասում նկարը։ Նկարիչը ոչինչ չի հաղորդել Բայրոնին այն ամենից, ինչ կարող էր դնել ազատության պաշտպանի դեմքին ու կեցվածքին, երիտասարդ ու գեղեցիկ մի բանաստեղծի, ինչպիսին էր «Չայլդ Հարոլդի» և «Դոն Ժուանի» ստեղծողը։

«Մոխիր եմ դառել, միևչդեռ անցյալում ես կրակ էի,
Մեռավ իմ կրծքում պահակը անմուռ,
Սպիտակեց սիրտս, ինչպես գլուխս է սպիտակել ադեն...»

Կտավը նկարելիս, Այվազովսկին, ասես, նկատի է ունեցել այս տողերը, որ Բայրոնը գրել է վերջին անգամ Հունաստան ճամփորդելուց քիչ առաջ։

Անցյալ դարի ամենանշանավոր ռուս գրականագետներից մեկի՝ Ալեքսանդր Վեսելովսկու (նրա մի քանի գրքեր նվիրված են հին իտալական գրականության) գործերը կարդալիս, պա-

տահլեի ինչ-որ քաղվածքների, որոնք վերաբերում էին 1816—1823 թթ. Բայրոնի Իտալիայում անցկացրած տարիներին։ Մոտս չեմ նշել, թե այդ հատվածները իրականում ի՞նչ էին։ Դուցեև իր՝ Վևսելովսկու գրածները։

Ճակատը ալաբաստրի նման սպիտակ, մաշկը այնքան նուրբ, փափուկ և թափանցիկ, որ նրա քունքերին նկատելի էին կապույտ երակները, փոքր թելերի նման։ ...Այսպիսի շատ մանրամասներ հաղորդում է նաև ինքը Բայրոնը իր նամակներում։ Դրանցից մեկում, այն օրերին, երբ նա գնում էր այցելելու հայերին ս. Ղազարում, գրում է. «Ապրեցի արատավորությամբ, հաճույքներ ստացա։ 31 տարեկան եմ և ինձ մնացել են այնքան քիչ տարիներ, ամիսներ, օրեր, ժամեր։ «Ամեն օր ապրիրը» բավական չէ։ Պետք է քաղեմ նույնիսկ վայրկյանները, որովհետև ինչպե՞ս կվստահես վաղվան։ Ասացի վաղվա՞ն։ Այս ժամին, այս րոպեին»։

Կարծես այս բոլորն, ահա, տեսել ու լսել էր Այվազովսկին։

Հայաստան ճանապարհորդությունը գուցե իմ մտքով անցել էր։ Բայց երբեք ոչ՝ Հայաստանի մասին գիրք գրելը։ Այն ինքնաբերաբար եկավ, եկավ ուղևորության ընթացքում և այն էլ բոլորովին անսպասելի։

Բայց առավել անսպասելի էր ինձ համար Հայաստանի մասին գրված մի գիրք ավարտել, խոսելով լորդ Բայրոնի և 1821 թվականին նրա կատարած դերի մասին։

Այդ էլ ընթացքում եղավ։ Ճանապարհորդությանս վերջում, վերադարձի ժամանակ։

Այվազովսկու կապվի վերաբերյալ մանրամասներ չեմ պահել։ Նկարչին ինչ-որ չափով ավելի լավ գիտենք, քան նրա մյուս ժամանակակիցներին։ Եվ շատ է նկարել, նրա գործերը կարելի է տեսնել թանգարաններում։ Երևանի պատկերասրահի այն դահլիճից, որտեղ ցուցադրված են նրա նկարները, մենք շատ արագ անցանք։ Բայց այս մի նկարը իջավ ու կանգնեց մեր առաջ ինքնաբերաբար։ Դա այն երևույթներից է, որոնց վրա մի հայացք ես նետում, և նրանք գալիս, ինքնաբերաբար մանում ու նշվում են քո տեսարերում։ Հետագայում ինչ-որ առիթ դրանք վեր է հանում, քեզ զարձյալ ցույց է տալիս,

շրջում այս ու այն կողմ, դարձյալ դրանք դիտում ես, խորհրդածում դրանց մասին։

Կա հրաշալի հայ մի բանաստեղծ։ Նրա մասին նահապետն ինձ ասել էր։ Մահացավ մի քանի տարի առաջ, հիսունը չբոլորած։ Անունը՝ Պարույր Սևակ։ Անշուշտ, քանի տարի է լսել էինք Պարույրի մասին.

Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Սնկարող են ապրել առանց բթվածնի։
Սակայն նրանք
Ամեն վայրկյան նախ այրվում են աննքվածնի,
Հետո միայն նրդեհվում են՝ բառածխի պես։

Հրաշալի տողեր, նվիրված բանաստեղծներին, աստծու քարտուղարներին, ինչպիսին է պոետական ստեղծագործությանը նվիրված նրա բանաստեղծությունների մի շարքը։ Դրանց մեջ կա նաև մի փոքրիկ բանաստեղծություն՝ «Բանաստեղծի ծնունդը», որը, երևի, ներշնչվել է որպես իր ձայնակցումը Վահագնի ծնունդի մասին եղած հնագույն երգի.

Այն օրն են միայն բանաստեղծ դառնում,
Երբ հասկանում են,
Հանկարծ ըմբռնում,
Որ իրենց գործը այն շիշն է միայն,
Որ ծով է նետում նավորդը մեռնող՝
Փրկություն հայցող տողով մի բանի։
Եվ ժամանակի ծովը խմահաճ
Շիշն այդ երբևէ ծովափ կհանի՞։

Հայրենակիցները ողբացին նրա մահը որպես ազգային սուգ...

Մեզ պատմել էին Պարույրի մի մեծ պոեմի մասին, «Անլռելի զանգակատուն» վերնագրով, որը Հայաստանում համարում են խոշոր ստեղծագործություն։ Նահապետը, ինչպես միշտ, գանգատվելով թարգմանություններից, խոստացել էր, որ կգտնի լավագույնը և կտա ինձ կարդալու։ Վերջին պահին, օդանավակայանում, նա եկավ ռուսերեն հրատարակվող «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի երեք համարները ձեռքին, որոնցում շարունակաբար տպվել էին հատվածներ պոեմից։

Ինչքան մենք դատում ենք այդ հատվածներից, բանաստեղծը պոեմն ընկալել է որպես զանգերի շարունակական մի ղողանջ։ Ղողանջ առ ղողանջ դրանք կազմում են առանձին կտորներ, ինչպես միացված աղոթքները Նարեկացու «Ողբի» մեջ։ Այստեղ ևս այդ ղողանջները իրար հաջորդող փոքր սիմֆոնիաներ են՝ Ղողանջ որբության, Ղողանջ հուսո, Ղողանջ արթնության, Ղողանջ մեղսական, և այդ ղողանջների միջով պատմվում է կյանքն ու սխրանքը մի մեծ ժամհարի, երաժիշտ Կոմիտասի, Հայաստանի հոգևոր պատմության ամենաօժտված և ողբերգական դեմքերից մեկի։ Այս մարդը, որ իր անունը փոխ է առել 7-րդ դարի մեծ երգաստեղծ ու շինարար կաթողիկոս Կոմիտասից, սովորել է էջմիածնի հոգևոր ճեմարանում։ Դարձել է վանական, ապրել է Պոլսում, շատ է աշխատել իր հայրենիքի երաժշտական հարստությունը հավաքելու և մշակելու ուղղությամբ։ Ցեղասպանության տարիներին նրան ևս բռնում են ու տանում են այնտեղ, ուր տարել էին նաև մյուսներին, բայց ինչ-որ մեկը նրան ետ է վերադարձնում։ Կոմիտասը խելագարվում է։ Այնուհետև հիվանդ ապրել է Փարիզում։ Մահացել է 1935 թվականին։ Սևակի «Անլռելի զանգակատունը», անշուշտ, մի խորհրդանիշ է, որը մարմնավորում է Անպարտելի Հայաստանը։

Ու երկրագնդի այն ծանոթ մասում,
Որին Հայաստան, Հայք էին ասում
Փառավոններից միշ Պուանկարեն,
Հիմա Օսմանի բոռները բուի
Վիլհելմ կայսեր հետ ուզեցին բերել
Պարերով ճնշող «Հայաստան» բառի
Բոլոր տառերը,
Նրա ապագան,
Մշահոտ ներկան
Եվ միշև անգամ
Անցած դարերը:
Եվ ճամարյա թե իրոք բերեցին:

Հայոց աշխարհի հաստատումից հետո նման շատ դեպքեր են հիշատակվում. Սևակը ստիպում է զանգերին անընդհատ ղողանջել։ Ահա հայկական պատմության այս հերոսական, բայց և սգալի երգն էր ճանապարհին մեզ ուղեկցում, Երևանից Մոսկվա վերադառնալիս, 1981 թվականի օգոստոսին։

Սուլթան Համիդը, ի փառս ալլահի,
Ի նշան աճի
Ամեն մի հայի
Եվ ի գիտություն
Իր երկար էթով ամեն տեղ մտնող
Այդ եվրոպայի...

Հնում ուրիշ աղետներ էլ են եղել։ Բայց սկսած 18-րդ դարից հայոց պատմությունն ստանում է առանձին լարում, որովհետև այդ շրջանից սկսած եվրոպական տերությունները հավակնում են աշխույժ դեր խաղալ Արևելքում, այսինքն՝ այնտեղ ձեռք բերել դաշնակիցներ և շահեր, որով և Հայկական հարցը ստանում է առանձին մի նշանակություն, ճիշտ այնպես, ինչպես և Հունական հարցը։

Երեք կենտրոններ՝ Եվրոպան, ցարական Ռուսաստանը և Թուրքիան, առաջին երկուսը իրենց մահացու հակասություններով, իսկ երրորդը՝ իր մահացու յաթաղանով, հետայնու սկսում են որոշել հայերի ճակատագիրը։ Եվրոպայի արևելյան քաղաքականությունը իր առանձնահիվների մեջ առավ հայկական հարցը նույն ձևով, ինչպես և մեզ՝ հույներիս։

Գերմարդկայնորեն լարված ինքնաթիռը միալար հոնդում է, թռչելով Կովկասի՝ ասես դանակներով կտրտված գագաթների վրայով, իսկ ես նստած հետևում եմ Պարույր Սևակի զանգերին և իրապես վայելում եմ ճշմարիտ ժամհարի արվեստը մի ժամանակաշրջանում, ինչպիսին մերն է։ Հիանում եմ, որ հիմա էլ եկեղեցու հին զանգը արժանի վարպետի ձեռքով կարող է մտնել այս խելագար դարի երգի մեջ, երբ կարողանում ենք բանաստեղծություններ կարդալ ինը հազար մետր բարձրության վրա։ Հիանում եմ այս բանաստեղծի արվեստով, որը կարողանում է միահյուսել իր մեծ ու փոքր հնչյունները՝ իր հերոսի քայլերը ժողովրդի քայլերի մեջ՝ իր պատմության սկզբից ևեթ հնչեցնելով զանգերը տեղապին, այլև իմացությամբ, արվեստով։ Ավելի մեծ չափով, սակայն, առինքնում է այն ցավը, որից ծնվել է այս նշանակալից պոեմը, Հայրենիքի ցավը, մի ժամանակ այնքան փոքր, որ գնեին ինչ-որ

արտի նման և արգելքին ինչ-որ արտի նման։ Զեռքի մի շարժում, ինչպես հանկարծակի տալիս են մեկի գլխին.

Շրխկ՝
«Հայաստան» բառը աւգելեց—
Լեզվից, բառեզից, գրքերից բերեց.
— Ջնջում եմ, չկա,
Ալլաճը վկա։
Եվ չի էլ եղել,
Եվ չի լինելու։

Այսպես Սուլթանը, հետո այսպես երիտթուրքերը, Վիլհելմ կայսրը, ռուսական ցարը...

Սուրենյանցի գեղեցիկ կտավում այն նամակը, որ հատակին, գորգի վրա նետել է Խրիմյան կաթողիկոսը... Հայրենասիրության համար հայերը նրան անվանեցին Հայրիկ։ Մերունի կաթողիկոսի արտահայտությունը, ժպտուն ու դառն, մնում է անմոռաց...

Այնտեղ բարձրում, կարդալով Սևակի պոեմը, վերհիշեցի Այվազովսկուն և այնքան տխրեցի, որ լավ ուշադրություն չէի դարձրել նկարի մի քանի մանրամասների վրա, և հիմա արդեն անհնարին էր դուրը բաց անել և մեզ գցել դիմացի Պատկերասրահ։ Այսուհանդերձ, ինքը Բայրոնը շատ լավ էր տպավորվել, ինչպես նաև Վենետիկի հայ մեծերի դեմքերի լարումը։

Նշել եմ նաև ամենախելոք Նալբանդյանի մի միտքը.

Եվրոպայի տերություններն չեն դադարում Թուրքիային օգնելուց, ոչ մի կերպ չեն ուզում, որ Թուրքիան ջնջվի. այնպես, որ Թուրքերից ստրկացված հայերը, սլավոնները, հույները չկորցնեն այդ քաղաքակիրթ կառավարությունների հովանավորությունը...

Նալբանդյանը ականավոր հայ աշխարհաբարագետն է, լեզվի հարցերում Գաբրիել Այվազովսկու հակառակորդը։

Նկարիչ Այվազովսկուն համարում ենք ռոմանտիկ նկարիչ, բայց խոսելով ռոմանտիկների մասին, մենք հազվադեպ ենք մտածում, որ բարձրից էլ մարդ կարող է իրերն ավելի լավ տեսնել, քան երբ գտնվում են աչքերի առաջ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

ՆԱՀԱՊԵՏԸ

(Ռ՛վ է ով)

Հայերը, լինելով հիանալի գորգագործներ, եթե իմ գիրքն ընկնի նրանց ձեռքը, պիտի հասկանան, թե կարերը որտեղո՞վ են անցնում, ի՞նչը պատկանում է այս մեկին, ի՞նչը՝ մյուսին, և նեղություն չեն քաշի իրենց շուրջը նայելու, որպեսզի գտնեն մի Նահապետի, որին ես պնդում եմ, որ գտել եմ Երևանում։

Իմ աղբյուրները շատ են։ Եթե փորձեի այդ ամենը թվարկել, պետք էր սկսեի անցյալ և այս դարի ականավոր գրականագետ Մանուկ Աբեղյանից, այդ իմաստուն գիտնականից։ Նրան ես կանվանեի Հայաստանի ժամանակակից Խորենացի։ Մի ամբողջ սար ձեռագրեր է ուսումնասիրել, առանձնապես բազմաթիվ հայ պատմիչների, որոնց գործերը անտիպ են և, քիչ բացառությամբ, օտար լեզուներով չթարգմանված։ Ինձ համար դրանք անմատչելի կլինեին առանց Աբեղյանի գրականության պատմության։ Այս մարդու խոսքը հստակ է, տրամաբանությունը՝ համակողմանի, գիտելիքները՝ գետի նման։ Բայց այն, ինչ նա ընտրելու է մեզ մատուցելու համար, իր գետից վերցրած մի բաժակ մաքուր ջուր է։

Հետո ես պետք է գրքերի և արվեստի աշխարհից շատ ուրիշների ևս հիշատակեի։

Թողնելով այդ ամենը, դրանցից մի քանիսի մասին խոսել եմ իմ գրքի տարբեր հատվածներում, ես կսահմանափակվեմ մի քանի կենդանի դեպքերով։ Եվ սկսում եմ Մովսեսից։

Մովսեսը, երբ առավոտյան զարթնում էր սարում գտնվող այն տանը, որտեղ իջևանել էինք, իսկույն մտածում էր, թե ի՞նչ է մեզ պետք և վազում էր հայթայթելու ու բերելու։ Սարում նա էր անում մեր հոգին և մարմինը։ Նրան շատ եմ պարտական։ Նա պոետ չէ, ոչ էլ քննադատ կամ արձակագիր։ Աշխատասեր երիտասարդ է, ծնված լեռնային գյուղում, պատվախնդիր, սիրելի, բնության անմեղ հոգի, լավ կոմունիստ։ Այս ամենը մեզ պարզապես համակրելի կլիներ, եթե նույնիսկ նա օժտված չլիներ նաև մի կարևոր առաքինությամբ՝ մեծ սերը գրքի նկատմամբ։ Այս տղան ուրիշ ժամանակներում ուղիղ պիտի գնար մոտակա վանք, պիտի հոգևորական սքեմ հագներ, պիտի աշխատեր ուր որ ասեին, այգիներում ու դաշտերում, բայց բոլորից առավել պիտի կռանար իր հոգու դաշտի վրա, ավելի շատ էր սովորելու և հետո փնտրելու էր մի խուց, այնտեղ մտնելու և մինչև դարի վերջը այնտեղ մնալու համար, դանդաղ ու մաքուր գրերով գրելու վանքի, գուցեև Հայաստանի պատմությունը։ Թաքուն, անձնական օգտագործման համար, առավոտյան կանուխ գրելու էր նաև ինչ-որ սիրային բանաստեղծություն։ Նախ նա շալակեց բերեց իր տան բոլոր գրքերը, հետո էլ՝ գյուղի գրքերը։ Իմ գրքում Նահապետի պատմածների կեսից ավելին նրան եմ պարտական։

Մի օր Վարդգես Պետրոսյանը ինձ ծանոթացրեց հայրենակիցներից համակրելի տարեց մի մարդու, մանկավարժ Գալուստ Ռուբենի Ստեփանյանի հետ։ Հետագայում Գալուստը, մտավորական և հերոսական հայ հայրենասերի գերազանց մի տիպար, ինձ ծանոթացրեց Հայաստանի կեսին։

Մնացածը պարտական եմ Կարպիս Սուրենյանին։

Կարպիսը, երբ ինձ ծանոթացնում էր իր ընկերների հետ, ավելացնում էր. «Մանկական ընկեր։ Միասին, նույն փողոցում ենք մեծացել, Քոքինիայում. ֆուտբոլ ենք խաղացել, շատ անգամ կռվել և հիմա, ահա հիսուն տարի հետո, նորից հանդիպեցինք և, ինչպես տեսնում եք, նորից դարձել ենք բարեկամներ»։ Նրան ճանաչողները չեն կասկածում ասածներին։ Նա արձակագիր-փիլիսոփա է։ Նրա համար իրերը և մարդիկ սիմվոլներ են, ներկայացնում են առավել ընդհանուր արժեքներ, իրավիճակներ, տեսիլներ։ Հունարեն գիտե։ Մայրենու հետ

հունարենը նրա մանկական առաջին տարիների լեզուն է եղել։ Լավ գիտե ռուսերենն ու անգլերենը։ Հայերեն է թարգմանել հսկայական սագան Ֆորսայթների մասին, ինչպես նաև «Կարամազով եղբայրները»։ Կյանքի գործեր։ Այժմ նա պրում է մի ուսումնասիրություն՝ «Գովք և հրաժեշտ թարգմանությանն»։ Ամեն ինչով հայ, բայց երախտագիտությամբ է հիշում Հունաստանը։ Համապատասխան վերագրումներում իմ գրքի Նահապետը համարյա ամբողջովին պատկերում է նրան։

....Վարդգես Պետրոսյանի մասին նույնպես խոսել եմ մանակակից հայ արձակագիրներին նվիրված գլխում։ Այնտեղ, ուր Նահապետը իմ գրքում ներկայանում է որպես արձակագիր, օգտագործածս հատվածները, առանց հիշատակվելու, պատկանում են Վարդգեսին։

Ի վերջո, իմ աղբյուրները շատ են։ Ամբողջ Հայաստանը, ինչքան որ աչքերս, մտածողությունս, սրտիս ծալքերը կարողացան ընդգրկել։ Ամբողջ նյութս նրանցն է, հայկական։

Նյութը՝ իրենց, կարերը՝ ամբողջապես իմը։ Սայաթ-Նովան ասել է.

Մե բիորս Փռանգի ատլաս է, տալիս է շովդ ու շափադաթ.
Մե բիորն զար-ղալամքարի, տիղ ունի վուցցոր մաճադաթ.
Մե բիորս Չինումաչինին կու առնե բամամ՝ փաւաղաթ.
Մե բիորն ենգիդուցյա է, մե բիորն՝ փաչայի խալաթ,—
Վուցց ձևիլ գուզե, վուցց կըտարիլ՝ կարբս մուճաթ չի ճաշե։

Աբենք, սեպտեմբեր—դեկտեմբեր, 1981

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՉՄԻՑ

Հույն առաջադեմ գրող, գրականագետ Միցոս Ալեքսանդրոպուլոսը այսօրվա Հունաստանի ճանաչված հեղինակներից է: Դեռևս երիտասարդ տարիներին իր կյանքի իմաստը նա տեսել է իր ժողովրդի սոցիալական ազատագրության համար մղված պայքարում:

Վերջին աշխարհամարտին, երբ Հունաստանը զավթել էին գերմանաֆաշիստական օկուպանտները, Աթենքի համալսարանի ուսանող Միցոսը բարձրացել է Հունաստանի լեռներն ու գետը ձեռքին մասնակցել հույն պարտիզանների մղած ազգային-ազատագրական պայքարին: Օտար զավթիչների չախչախումից հետո ևս Միցոսը շարունակում է պայքարը եռապատերազմյան տարիներին Հունաստանում հաստատված հետադեմ կարգերի դեմ՝ հանուն լիակատար ազատության: Նա գետը վոխում է գրչով: Իրար հետևից լույս են տեսնում արձակագրի «Ձինված տարիներ» (1954), «Թարմ պատմություն» (1956), «Սպիտակ ափ» (1966) և այլ պատմվածքների ժողովածուները, «Քաղաքը» (1961), «Լեռները» (1963) վեպերը, որոնք ունեցել են մի քանի հրատարակություն, և այլ գործեր: Նրա ստեղծագործությունները կազմում են հույն ժողովրդի դիմադրական շարժման ծավալուն համայնապատկերը:

Միցոս Ալեքսանդրոպուլոսի գրչին են պատկանում Մաքսիմ Գորկուն («Հացը և Գիրքը») և Անտոն Չեխովին («Ավելի շատ ազատություն») նվիրված կենսագրական վեպերը: Ալեքսանդրոպուլոսը հեղինակել է նաև, գրականագիտական ուսումնասիրություններ՝ նվիրված Պուշկինին, Գոգոլին, Բելինսկուն, Դոստոևսկուն, Լ. Տոլստոյին, որոնք հրատարակվել են «Հինգ ռուս

դասականներ» վերնագրով (1975 և 1979): Ուշագրավ է նրա հեղինակած «Ռուս գրականություն» եռահատոր երկասիրությունը, որը լույս է տեսել 1978—1979 թթ.:

Այս ամենին զուգընթաց Միցոս Ալեքսանդրոպուլոսը ծավալել է բարգմանական լայն գործունեություն: Նա հունարեն թարգմանել և հրատարակել է Է. Կազակևիչի «Կապույտ տետրակը» (1965), «Աստ Իգորի գնդի մասին» ռուսական էպոսը (1976) և այլ գործեր:

Միցոս Ալեքսանդրոպուլոսը 1981 թ. այցելեց Հայաստան և շուրջ երկու ամիս ապրելով մեր հանրապետությունում, ծանոթացավ մեր ժողովրդի առօրյայի, նրա պատմության, անցյալի մշակույթի ու ներկայի ձեռքբերումների հետ: Նրան հետաքրքրել են առանձնապես հայ և հույն մշակութային կապերը, մեր լեզվի ու գրականության զարգացման խնդիրները, հայ և հույն ժողովուրդների մշակութային համագործակցության հեռանկարները:

Ոգևորված այս դիտումներով, նա իր տպավորությունները նախ թերթերի ձևով հրատարակել է Աթենքի ընթացիկ մամուլում, իսկ 1982 թ. այդ ամենը գրի վերածելով, հրատարակեց «Հայերը» վերնագրով:

Այս վերջին գիրքն էլ, բնագրից թարգմանելով, ներկայացնում ենք հայ ընթերցողի ուշադրությանը: Թարգմանությունը կատարված է ոչ էական, աննշան հապավումներով: Կրճատված են այն հատվածները, որոնք կարող են հետաքրքրել սոսկ հույն ընթերցողին, իսկ հայ ընթերցողի համար առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նահապետը 7
Արարատ 19
Խաչքար 24

Հիշողությունը

Մատրում 36
Նաիրի 43
Քերթողահայր 57
Ավարայր 65
Մարիկ 74
Շինող 82
Գրիգոր Մագիստրոս 87
Սիսվան 98

Դպրություն և երգ

Մեսրոպ Մաշտոց 110
Սպիսկոպոսապետ 116
Մատենադարան 123
Գրաբար և աշխարհաբար 135
Տաղ 143
Նարեկ 154
Սայաթ-Նովա 165
Հովհաննես Թումանյան 174
Հայը 187
Սարգարապատ 191
Երևանը 196
Արագած 203
Վարպետ 213
Ջուդակշիռք 224

Հիշատակարան

Նահապետը 238

Միքոս Ալեքսանդրոպուլոս

ՀԱՅԵՐԸ

(Ուղևորություն նրանց երկրում և պատմության մեջ)

Микос Александропуло

АРМЯНЕ

(Путешествие в их страну и историю)

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1984

Խմբագիր՝ Ն. Ս. Զարեհյան
Նկարիչ՝ Ա. Ի. Ճարալյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերատեսող սրբագրիչ՝ Է. Ա. Սեդրակյան